ԹՈՎՄԱ ԳԵՄԲԱՑԻ

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ



Թովմա Գեմբացի - Նմանություն Հիսուս Քրիստոսի
Thomas à Kempis - De Imitatione Christi

Թարգմանեց՝ ՄԱՇՏՈՑ ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

«Շատ բան ունեմ ասելիք, բայց չունեմ մեկը, ում ասեմ»:

Ավանդաբար Հիսուսին վերագրված խոսք

ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԻՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Այս զարմանահրաշ գիրքը, որ բոլոր դարերում և բոլոր ժողովուրդների մոտ գտնում է նույնիսկ Ավետարանի հետ համեմատելի ընդունելություն (Բոսսուեն, իրոք, որակավորեց այն իբրև «հինգերորդ Ավետարան»), իր ճակատին երբեմն չի կրում իր շարադրողի անունը: Բանասերների համար դժվար է առանց որևէ վարանումի նշել հեղինակի ինքնությունը: Հավանական թեկնածուները երկուսն են. իտալացի Ջովաննի Ջերսենիոն (1180-1240) *և ֆյամինգ Թովմա Գեմբացին* (1380-1471)*: Մենք հետևում ենք ավանդությանը և որպես հեղինակ ընդունում Թովմա Գեմբացուն. և կփափաքեինք ավելացնել նրա անվանը նաև «Սուրբ» ածականը, չվարանելով սրբության հարցում նրա, ով դարերի ընթացքում կրթեց և մարդկությանը պարգևեց Եկեղեցու կողմից սրբադասված արդարների բազում սերունդներ, այսօր ևս շարունակելով իր այդ վեհագույն գործի ընթացքը: Բայց ով էլ լինի հեղինակը, այս գլուխգործոցը ոչինչ չի կորցնում իր հետապնդած նպատակից. հրավիրել մարդկանց կապվելու կյանքի էական (որով և՝ իրական) արժեքներին, մերժելով աշխարհի պատրանք-հմայքը: Եվ իսկապես, եթե Ավետարանում Հիսուսը ներկայանում է որպես Ճշմարտություն, իսկ Ամենասուրբ Հաղորդության մեջ՝ իբրև Կյանք, այս գրքում Նա ներկայանում է որպես Ճանապարհ: Եվ հետո, այն հանգամանքը, որ հեղինակն անհայտ է թողել իր անունը, այնքան էլ զարմանալի չէ, եթե հաշվի առնենք ժամանակաշրջանը, որում նա ապրել է: Ինչպիսի՜ ժառանգություն է ավանդել մեզ Միջնադարը. և սակայն, քանի՜ քանի՜ գլուխգործոցներ – սրբազան երաժշտության մեղեդիներից մինչև գեղազարդ խճանկարներն ու հսկայակերտ արձանները մեծամեծ եկեղեցիների – սրբազան լոության*

մեջ են հարգում իրենց ստեղծողի անունը: Այդ տաղանդավոր մտքերը բոցավառված էին ա՛յլ գաղափարներով, քան իրենց անունը հաջորդներին հասցնելու խղճուկ նպատակի հետապնդումը: Աշխատում էին Աստծո փառքի համար, իրենց եղբայրների հոգևոր օգուտի համար, գեղեցիկը ստեղծելու համար, իրենք էլ Արարիչ Աստծուն նմանվելով. հասնելով այդ նպատակին, չէին ցանկանում ուրիշ ոչինչ իրենց համար: Ահա՛ Նմանության գրքի հեղինակի ստորագրությունը. «Սիրիր անծանոթ մնալ և ոչինչ համարվել» *(Գիրք* Ա, Բ 3*):*

Մի բան ապահով է. Նմանության գիրքը գրվել է մի վանականի կողմից, ուրիշ վանականների համար: Այդ միջավայրի ցայտուն արտահայտություններն են գրքի բառապաշարը, ասելու ձևերը, մտահոգությունները, զուտ հոգևոր ձայներանգը: Շուտով, սակայն, գիրքը դուրս է եկել վանքերից ու մենաստաններից, ընդառաջ բոլոր նրանց, ովքեր կրոնավորներ չլինելով հանդերձ՝ զգում են կարիքը ունկնդրելու խոսքեր ճշմարտության ու կյանքի, ընդմեջ այն ժխորի, խաբեությունների ու դատարկության, որոնք տիրում են աշխարհին:

ԸՆԴԴԵՄ ՄՏՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ

Գրքի ընթերցման ժամանակ դժվար չէ հանդիպել մի քանի ջատագովական արտահայտությունների ընդդեմ անվերջանալի վիճաբանություններում կորող որոշ աստվածաբանների խրթին մտազննումների, որոնք թեև հաճելի ու գրգռիչ են բանականության համար, այնուամենայնիվ թողնում են հոգևոր չքավորության զգացում: Հետևաբար այն աղեղները, որոնք մեր հեղինակը երբեմն արձակում է աստվածաբանական և իմաստասիրական ուսումների դեմ, բացատրվում են նրանով, որ շատ շատերի համար Աստծո կողմից հայտնված ճշմարտությունները հանդիսանում են նյութ ցամաք վիճաբանությունների, կարծես թե դրանք Տիրոջ կողմից հայտնվել են, որպեսզի ոմանք համալսարաններում քննարկեն դրանք, կոտորակեն, զննեն, տան իրենց կարծիքները և այլն: Գաղտնի թե բացահայտ, մեր հեղինակի անվստահությունն ու կասկածամտությունը իմաստասիրական (փիլիսոփայության) ուսումների հանդեպ պետք է բացատրվի ո՛չ միայն պատմական, և ո՛չ էլ միայն ասկետիկ տեսանկյուններից մեկնելով: Յուրաքանչյուր քրիստոնյայի, հատկապես քահանաների ու վանականների սերտ պարտականությունն է իրենց մտային կարողությունների խորացումը: Աշխարհում տիրող կրոնական ներկա անտարբերության ու հաճոյամետ գաղափարներով միայն խանդավառվելու գլխավոր պատճառներից մեկը հենց կրոնական տգիտությունն է, այսինքն՝ քրիստոնեական ուսմունքի ու սկզբունքների անգիտությունը, հավատքի ասպարեզում շատերի անհասունությունն ու մակերեսայնությունը: Սակայն, կա նաև հակառակ ծայրահեղությունը. վերոհիշյալ գիտություններին բուռն և բացարձակապես տեսական կերպով մոտեցումը: Աստվածային հայտնությունները կյանք են և ապրում, և տրված են մարդուն, որպեսզի հավատա ու ապրի, ո՛չ թե՝ որպեսզի ձևափոխի դրանք իր կարճլիկ մտքի պատճառաբանումներով: Այդպիսով, այն թանկարժեք գիտությունը, որ պետք է ուղղեր մարդուն առ Աստված, ի վերջո հեռացնում է մարդուն Նրանից, որովհետև դառնում է մի տեսակ կռապաշտություն: Սեփական մշակույթի բարձրության ամուլ գիտակցությունն ու գոռոզ գերագնահատումն, իրոք, սնուցում է հպարտությունը. մտքի ապօրինի (նպատակաշեղ) գործածումն ամլացնում է մեր զգայական (հատկապես՝ հիանալու և հուզվելու) կարողությունները, որոնք այնքա՜ն կարևոր են Աստծուն և մերձավորին սիրելու գործում:

ՄԱՐԻԱՄԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նկատելի է նաև, որ այս գեղեցիկ գիրքը միայն մի անգամ է հիշում – և այն էլ՝ անցողիկ կերպով – Ամենասուրբ Կույսին: Անբացատրելի բացակայություն, որ ցավ է պատճառում բարեպաշտների սրտին: Ապշեցուցիչ է, թե ինչպես Եկեղեցու Հայրերի ուսմունքից և ապրումներից այսքա՞ն խորը կերպով ներշնչված հեղինակը – այն աստիճան, որ գրեթե բառ առ բառ արձագանքում է Աստվածամոր առաքինություններին սիրահար հեղինակի՝ Սուրբ Բեռնարդոսի արտահայտությունները – չի ձոնել գովքի և ո՛չ իսկ մի գլուխ, ո՛չ իսկ մի էջ կամ գոնե մի պարբերություն Տիրամորը:

Որևէ բացատրություն տալը դժվարին առաջադրանք է: Մեր հեղինակին արդարացնելու համար – եթե անշուշտ դրա կարիքը կա – հիշեցնում ենք, որ Ավետարանում նույնպես Մարիամին տրամադրված տարածքը փոքրագույն է. նրա ասելու և գործելու կերպերը, նրա կյանքն ամբողջ, անհավատալիորեն պարուրված են մի խորհրդավոր քողով: Եվ սակայն, ամբողջ Աստվածաշունչը խոսում է Մարիամի մասին, գիտի Մարիամի մասին ամեն բան: Այս գիրքը նույնպես, շարունակ, առանց դադարի խոսում է Մարիամի մասին, չնշելով պարզապես անունը, այո՛, որովհետև յուրաքանչյուր էջը լի է նրա համեստ, աղոթանվեր ու սիրալի հոգիով, նրա կողմից գերադասված պարզ առաքինությունների գովասանքով, ինչպիսիք են պարզունակ կենսաձև վարելը, լինելը ծածկված, անփառասեր, աշխատասեր, ապրելը աստվածային ներկայության գիտակցությամբ, և այլն: Գրքի ձայներանգն, այս առումով, բացարձակապես մարեմական է:

ԸՆԴԴԵՄ ՉԱՓԱԶԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Երբեմն նաև թվում է, թե այս գիրքը դուրս է գալիս կյանքի բոլոր տեսակ գործունեությունների դեմ, դատապարտելով դրանք որպես մտացրումի աղբյուրներ, որոնք հեռացնում են հոգին լռությունից և վերին իրականությունների շուրջ խորհրդածումից: Արդեն նշեցինք, որ գիրքը հասցեագրված է եղել նրանց, ովքեր կամովին հեռանում են աշխարհից, փակվելու համար ինչ որ մի վանքի մենության մեջ, նվիրվելով բացարձակապես աղոթքին և քրիստոնեական կյանքի արմատականությանը: Բայց եթե ընթերցում ենք գիրքն ուշադրությամբ և միմյանց համեմատելով նրա զանազան մասերը, տեսնում ենք, որ նրա բացասական տրամադրվածությունը աշխարհի հանդեպ չի կամենում վերածվել այսպես ասած արհամարհանքի առաքինության ընդդեմ այն ամենի, ինչը որ ուղղակիորեն աղոթք չէ կամ ապաշխարություն: Զարաչար կսխալվենք այդպես մտածելով: Որովհետև եթե կամենում ենք նմանվել Հիսուսին, չենք կարող մոռանալ, որ Նա Իր կյանքի մեծ մասն անցկացրեց զբաղվելով հյուսնի ոչ այնքան հեշտ արհեստով, սկզբում որպես աշակերտ հայրագիր Սուրբ Հովսեփին, ապա նաև որպես վարպետ, պահելու համար Իր և Իր Մոր մարմնեղեն գոյությունն իրենց աղքատիկ առօրյայում: Ինչպես նաև, ավելի լավ հասկանալու համար հեղինակի միտքը, հարկ է ճշտել, թե ի՞նչ են նշանակում իր համար «աշխարհ» և «բնություն» բառերը:

Քրիստոնեական աստվածաբանության համար «աշխարհ» բառը նշանակում է չորս բան. 1) *Սխալ սկզբունքներ, որոնց համաձայն ապրելով՝ մարդիկ շեղվում են բարեպաշտությունից.* 2) *Խոովություններ ու հալածանքներ քրիստոնյաների դեմ.* 3) *Հաճույքների ու զբվարճությունների անսանձ ու անհագ փնտրտուք.* 4)

Գայթակղություններ և չար օրինակներ, ներառյալ չար դաստիարակությունը: Մեր հեղինակի համար կարևոր են առաջին և երրորդ նշանակությունները:

Իսկ ինչ վերաբերվում է «բնություն» բառին, հարկ է իսկույն նշել, որ հեղինակն այս բառը օգտագործելով՝ անշուշտ չի հասկանում բուսական ու կենդանական աշխարհը, որ շրջապատում է մեզ: Չի հասկանում նաև մարդու մարմնեղեն կառուցվածքը, և երբ բացասական հատվածներում օգտագործում է այս բառը, չի ներկայանում իբրև մարդատյաց, ինչպես վարվում են արևելյան՝ հին և հնդիկ փիլիսոփաները: «Բնություն» բառը մեր հեղինակի համար ունի ամբողջովին հոգեբանական և բարոյական իմաստ, որպես հոմանիշ ունենալով «բնավորություն», «նկարագիր», «խառնվածք» բառերը: Մարդկային խառնվածքները հիմնականում չորսն են. տաքարյուն, ջղային, ցասկոտ և սառնարյուն կամ չհանդավառվող: Այս խմբերից որին էլ որ պատկանենք, հեղինակի փափաքն այն է, որ ուղղենք և դաստիարակենք մեր «բնության» բացասական կետերը, խնամելով դրական հատկությունները:

Գրքի նպատակն է մարդկանց ներկայացնել իրական (անվախճան) արժեքները, կրթել նրանց իրական սկզբունքներով: Բայց գրքի առանցքային նպատակը հոչակելն է, որ մարդիկ չեն կարող երջանկություն գտնել ստեղծելով իրենց սեփական աշխարհը, ընկղմվելով անսանձ հաճույքների ու զվարճությունների մեջ. նույնիսկ սիրելի աշխատանքը երբեմն դառնում է ձանձրալի: Վանականը չի հեռանում մարդկանցից, արվեստից, լուրերի ու նորությունների ժխորից (այսօր կարելի է ավելացնել նաև հեռուստացույցը, լրագրերն ու համացանցը), որովհետև արհամարհում է դրանք, որովհետև իրեն բարձր է դասում բոլորից և ամեն ինչից, համարելով իրեն սուրբ, իսկ մյուսներին՝ պիղծ: Ո՛չ: Իրական վանականը հեռանում է այդ ամենից, որովհետև չունի դրանց կարիքը, դրանք ոչնչով չեն կարող ավելացնել իր ճաշակած ներքին հոգևոր խաղաղությունն ու երանությունը. ավելին՝ կարող են խլել իրենից դրանք: Երբ ունես Աստծուն, որ Ինքնին Երանությունն է և Երանացնողը, ինքնաբերաբար չես կամենում ունենալ այլևս ուրիշ ոչինչ:

Այս գիրքը ահազանգ է ընդդեմ չափազանցված գործունեապաշտության (ակտիվիզմի), ընդդեմ այն աշխարհի, որը կամենում է կլանել մեզ մակերեսայնության մեջ, մի հորդոր է՝ անհոգ չգտնվելու մեր ներքին հոգևոր կյանքի նկատմամբ, այն չքմեղանքով, թե շատ ու շատ բաներ ունենք սովորելու, տեսնելու, անելու: «Աստծո Արքայությունը քո ներսում է: Միայն մի բան կա անհրաժեշտ»: *Ավետարանի այս խոսքերն են այն հիմքը, որի վրա կառուցված է այս գիրքը, առաջին տողից մինչև վերջինը: Հետևաբար, դատապարտությունն ուղղված չէ գործունեությանն ինքն իր մեջ, այլ՝ այն չափազանց ու խենթ մտահոգվելուն և խոովվելուն ընդմեջ հազար ու մի ձեռնարկների և ապագայակառույց ծրագրերի, – լինեն դրանք կարևոր, թե ոչ, – որոնցով վտանգի ենք ենթարկում մեր մտերիմ հարաբերություններն Աստծո և մարդկանց հետ: Բավական է, որ ընթերցենք գրքի սկզբունքներից միայն մեկը, ըմբռնելու համար հեղինակի մտքի հավասարակշռությունը.* «Ներանձնական կյանքին անձնատուր միտքը շուտով է ամփոփվում, որովհետև երբեք ամբողջովին չի տրվում արտաքին զբաղմունքներին: Արտաքին աշխատանքները կամ օգտակար զբաղմունքները նրան չեն խանգարում. նա հարմարվում է դրանց դեպքերի բերման համաձայն» *(Գիրք Բ, Ա 7): Մենք՝ երկրի բնակիչներս, կարիքը չունենք, որ ինչ որ մեկը հորդորի մեզ ապրելու ցրված, հետևելով մեր անձնական անթիվ ու անհամար շահերին, հաճույամոլությանը, իրերին ու անձերին: Արդեն իսկ ապրում ենք այդպես: Մինչդեռ կարիքն ունենք, որ ինչ որ մեկը անհոգնելի կերպով – երբեմն թերևս նաև խստությամբ և ապառնալով – ցնցի մեզ, որպեսզի չթմրենք այդ մտահոգությունների ներսում, որպեսզի*

չմթագնի մեր տեսողությունը և չմոռանանք, որ մեր կյանքի միակ նպատակը Աստված Ինքն է և այն ամենը, ինչը որ առաջնորդում է մեզ դեպի Նա և մոտեցնում մեզ Նրան. աղոթքը, առաքինությունը, արդարությունը, բարությունը, գութը, եղբայրսիրությունը, կամ ավելի ընդարձակ իմաստով՝ մարդասիրությունը, ինքնատիրապետումը կամ զսպվածությունը, մարմնի, հոգու և մտքի անկարգ ցանկությունների սանձումը, խոնարհությունը, համբերությունը, արթուն հսկումը հոգևոր և մտային խաբեությունների դեմ, և այլն, և այլն:

Սա՛ է այս գրքի «պատգամը», այս վեհ հորդորներում է կայանում նրա գեղեցկությունն ու մշտատև այժմեականությունը: «Վերադարձիր ինքդ քո մեջ». *ահա՛ ամբողջ գիրքը սնող ավիշը:*

ԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՑԸ, ՆՅՈՒԹԸ ԵՎ ՈՃԸ

Սա մի գիրք է, որի յուրաքանչյուր արտահայտությունը թվում է գրված նրա համար, ով ընթերցում է, և հենց այն պահի համար, որում ընթերցվում է: Բոլոր մտքերը հիմնված են Աստվածաշնչի վրա: Կրում է իրենում գաղտնիքը մի երիտասարդության – հոգու երիտասարդության – և ստիպում է զգալ նրա կարոտը բոլոր նրանց, ովքեր այն կորցրել են: Բաժանվելով տարբեր ծավալի չորս մասերի, կամ գրքերի, չի ներկայանում իբրև ճառախոսություն, այլ՝ մատուցում է հոգևոր ուսուցումներ վճռական (վերջնականապես լուծված, քննարկման կարիք այլևս չունեցող) ոճով: Եվ իրոք, գրքում շատ հազվադեպ կարելի է հանդիպել պատճառաբանումների, փաստարկների բերման (բացառությամբ աստվածաշնչյան հիմնավորումների): Ինչը որ ծանր է որոշ հոգիների համար, որոնք կուզենային, որ այսպես ասած ընկնեին իրենց եղևից, համոզեին, ճիգ գործադրեին իրենց դարձի բերելու համար և այլն: Այդպիսի անձանց սրտերում թաքնված են կայծեր հպարտության (թեև անգիտակից կերպով, բայց միշտ ներկա): Այս գիրքը ցույց է տալիս ճշմարտությանը հասնելու ճանապարհը, – միա՛կ ճանապարհը, – որից դուրս այլընտրանք չկա: Իսկ ճշմարտությունը գրեթե միշտ նույնանում է խոնարհության հետ և շատ դժվար է դրանք միմյանցից բաժանելը: Նաև իր այս ոճով (այսինքն՝ պարզապես ուսուցանելով, առանց վիճելու, առանց մտահոգվելու, թե ընթերցողը կընդունի իրեն կամ ոչ) գրքի հեղինակը հրավեր է ուղղում մեզ խոնարհության: Մարդը ծարավի է երջանկության, և Աստված հայտնում է միակ իրական երջանկությանը հասնելու միջոցները: Մեր ազատ կամքին է մնում որոշելը, թե կքայլե՞նք այդ մատնանշված ճանապարհով, թե՞ կհետևենք պատրանքների, որոնք մի օր ցիրուցան են լինելու, թողնելով մեզ ձեռնունայն … անհուսորեն ձեռնունայն:

Առաջին մասը (Գիրք Ա.), որ հաշվում է 25 *փոքրիկ գլուխներ, մի հավաքածու է գիտակից և անկեղծ քրիստոնեական կյանքի համար օգտակար մտքերի ու հորդորների: Երկրորդ*

մասը (Գիրք Բ.), ամենակարճը, որովհետև ներառում է իր մեջ հազիվ 12 *գլուխ, բոցավառ հրավեր է՝ տրվելու ներանձնական կյանքին, այսինքն՝ անհոգությամբ մոռացության չմատ-*

նելու ներքին հոգևոր կյանքը: Հաջորդում է երրորդ մասը (Գիրք Գ.), 59 *գլուխներով, և հետևաբար՝ ամենաընդարձակ մասն է: Նախորդ երկու մասերից տարբերվում է նրանով, որ ներկայանում է սիրալի երկխոսության ձևով ընդմեջ Աստծո և մարդու, մատուցելով*

խոսքեր միսիթարության և հորդորի՝ ճաշակելու ապրվածապաշտ կյանքի հեւրևանքը հանդիսացող ներքին խաղաղությունն ու հոգեզվարթությունը: Հեղինակն այստեղ բացահայտում է իր խորը ծանոթությունը մարդու հոգեբանության, նրա ձգտումների ու կարիքների, և հոգևոր կյանքի հետ: Չորրորդ մասը (Գիրք Դ.), որ տարածվում է 18 գլուխների վրա, մեծագույն բարեպաշտությամբ խոսում է Ամենասուրբ Հաղորդության զանազան տեսանկյունների, հատկապես՝ այն ներքին տրամադրությունների մասին, որոնք անհրաժեշտ են՝ պտղառատ կերպով հաղորդվելու համար:

****

«Ինքդ քեզնից դուրս մի՛ եկ, որովհետև ներքին մարդու մեջ է բնակվում ճշմարտությունը» *գրում է Սուրբ Օգոստինոսը:* «Երբ կբացահայտես անձնական ոչնչությունդ, այնժամ կգերազանցես ինքդ քեզ»: *Վերադառնալ մեր անձերից ներս, ապրումով և փորձառությամբ ճանաչելու համար մեր ամբողջական չնչինությունը, ոչնչությունը. ապա նաև հանդիպել Աստծուն, որ բնակվում է Իր փոքրիկ արարածների սրտում, կամենալով սիրվել և երախտագիտության ընծաներ ընդունել նրանցից: Ահա սա՛ է առանցքային նյութը այն գրքի, որ մեծագույն իրավացիությամբ է կոչվում* Նմանություն Հիսուս Քրիստոսի*: Այն առաջնորդ է դեպի ծածուկ ճշմարտությունը, դեպի քրիստոնյա կոչվելուն արժանի կյանքը, որը հյուսված է իրական իմաստության (ո՛չ իմաստակության), աղոթքի և բարու դերձաններով:*

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԽՐԱՏՆԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԳԼՈՒԽ Ա. ԱՇԽԱՐՀԻ ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

1. «Ով հետևում է ինձ, խավարի մեջ չի խարխափում», *ասում է Տերը (Հվի* 3, 19-20*):*

Հիսուսի խոսքերն են սրանք, որոնցով հորդորում է մեզ հետևել Իր վարքին ու կենսաձևին, եթե կամենում ենք իսկապես լուսավորվել և ազատվել սրտի կուրությունից: Մեր գլխավոր ջանքը, հետևաբար, թող լինի Հիսուսի կյանքի շուրջ անընդհատ մտածումը:

2.*Հիսուսի վարդապետությունը գերազանցում է բոլոր Սրբերի ուսուցումներին: Ով ունի Նրա հոգին, կգտնի այդ վարդապետության մեջ թաքնված մանանան: Բազմաթիվ անձեր հաճախակի են լսում Սուրբ Ավետարանը, բայց նրանց սրտերը չեն հուզվում, որովհետև չունեն Հիսուսի հոգին: Եթե ցանկանում եք լիովին հասկանալ և ճաշակել Հիսուս Փրկչի խոսքերը, ջանացեք ձեր կյանքը նույնպես հարևնման դարձնել Նրա կյանքին:*

3.*Ի՞նչ օգուտ քեզ, եթե խորիմաստ ճառեր ես արտասանում Երրորդության խորհրդի շուրջ, մինչ խոնարհությունից զուրկ ես և տիտա՝ Աստծուն: Վսեմ ճառերը չէ, որ արդարացնում են և արբացնում մարդուն: Մաքուր և սուրբ կյանքն է միայն նրան հաճելի դարձնում Աստծուն: Նախընտրում եմ սրտիս խորքում զգալ զղջման հուզումը, քան թե իմանալ նրա սահմանումը: Եթե հիշողությանդ մեջ ունենայիր ամբողջ Աստվածաշունչը և իմաստունների*
խոսքերը, ի՞նչ շահ կտային դրանք քեզ, եթե զուրկ լինեիր Աստծո շնորհից և սիրուց: «Ունայնություն ունայնությանց, ամեն ինչ ունայն է, բացի Աստծուն սիրելուց և Նրան ծառայելուց» *(Ժող* 1, 2*): Գերագույն իմաստություն է աշխարհն արհամարհելը և ձգտել ու բարձրանալը դեպի Երկնքի Արքայություն: Ունայնություն է կորստական հարստություններ դիզելը և նրանց հուսալը: Ունայնություն է պատիվներ ընդունել տենչալը և ճիգ գործադրելը՝ բարձրագույն դիրքերի հասնելու համար: Ունայնություն է մարմնի ցանկություններին հետևելն ու վայելքներ որոնելը, որոնց պատճառով խստագույն պատիժների ենք ենթարկվելու: Ունայնություն է երկար տարիներ ապրելու բաղձանքը, և հատկապես՝ անմաքուր վարքով: Ունայնություն է այս աշխարհի հոգսերով կլանվելը և ընդհանրապես չմտածելը գալիք կյանքի մասին: Ունայնություն է վաղանցուկ բարիքներին կառչելը և Երկնքի հավիտենական երանության մոռացու-*
թյան մատնումը: Հաճախ հիշիր իմաստունի խոսքը. «Աչքերը երբեք չեն հագենում տեսնելուց և ականջները՝ լսելուց» *(Ժող* 1, 8*): Աշխատիր անջատել սիրտդ արարածների սիրուց և այն*

ամբողջովին առ Աստված բարձրացնել: Որովհետև նրանք, ովքեր հետևում են զգայարաններին, ապականում են իրենց սրտերը և կորցնում Աստծո շնորհը:

ԳԼՈՒԽ Բ. ԽՈՆԱՐՀ ԿԱՐԾԻՔ ՄԵՐ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ

1. *Ամեն ոք բնականոն կերպով ձգտում է գիտության. ի՞նչ արժեք ունի, սակայն, գիտությունն առանց Աստծո երկյուղի: Աստծուն ծառայող խոնարհ և անուս գյուղացին ավելի բարձր է, քան հպարտ իմաստունը, որն անտեսում է իր հոգին և քննում է աստղերի ընթացքը: Ով իսկապես ճանաչում է ինքն իրեն, արհամարհում է իր անձը և հաճույք չի զգում մարդկանց գովասանքներից: Եթե ուղեղիս մեջ ամփոփված ունենայի աշխարհի բոլոր գիտությունները, բայց զուրկ լինեի սիրուց, ի՞նչ օգուտ կտային դրանք ինձ Աստծո առաջ, որ դատելու է ինձ գործերիս համաձայն: Չափավորիր գիտության հանդեպ ունեցած բուռն փափաքդ. հաճախ այն առիթ է ցրման և հուսախաբության: Գիտությունները ցանկանում են իրենք իրենց ցուցադրել և իմաստուն կոչվել: Շատ բաներ քիչ կամ ընդհանրապես օգուտ չունեն հոգու համար. անմիտ է նա, ով զբաղվում է այնպիսի գործերով, որոնք օգտակար չեն իր փրկությանը: Խոսքերի առատությունը գոհացում չի տալիս հոգուն, մինչդեռ սուրբ կյանքն ու մաքուր խիղճը խաղաղություն են պարգևում սրտին և վստահություն ներշնչում Աստծո հանդեպ: Որքան ավելի շատանա ու կատարելագործվի գիտությունդ, այնքան ավելի խստորեն կդատվես Աստծո առաջ, եթե սրբությամբ չապրես:*

2. *Մի՛ հպարտացիր ճարտարությանդ ու գիտությանդ ի տես, այլ՝ ավելի վախեցի՛ր ընդունածդ լույսերի համար: Եթե կարծում ես, թե շատ գիտես և շատ լավ, իմացիր նաև, որ ոչինչ են, եթե համեմատես այնքան բաների հետ, որոնց մասին ոչինչ չգիտես: Մի՛ հպարտացիր, այլ՝ խոստովանիր տգիտությունդ: Ինչպե՞ս ես հանդգնում ինքդ քեզ ուրիշներից գերադասել, երբ քեզնից ավելի զարգացածները կան և ավելի հմուտները՝ Աստծո օրենքներին:*

Կամենո՞ւմ ես սովորել հոգուդ համար օգտակար գիտությունը. սիրիր անծանոթ մնալ և ոչինչ համարվել: Ճանաչել իր անձը և արհամարհել այն. *ահա՛ ամենաբարձր ու ամենաօգտակար գիտությունը:*

Գերագույն իմաստություն և կատարելություն է սեփական անձը ոչինչ համարելը, ուրիշների մասին դրական կարծիք ունենալու հետ մեկտեղ: Երբ ականատես լինես ընկերոջդ կամ մերձավորիդ հանցանքին, մի՛ կարծիր, թե դու ավելի լավն ես, որովհետև չգիտես, թե որքան ժամանակ ես հարատևելու բարու մեջ: Բոլորս ենք տկար. բայց դու համոզվիր, որ քեզնից ավելի տկարը չկա:

ԳԼՈՒԽ Գ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

1. *Երանի՜ նրան, ում ուսուցիչը նույն ինքը Ճշմարտությունն է, որն ուսուցանում է ո՛չ թե պատկերներով ու անցավոր խոսքերով, այլ՝ ինքն իրեն հայտնելով, ինչպես որ է: Մեր միտքն ու զգայարանները տկար են տեսնում և հաճախ են մեզ մոլորեցնում: Ինչի՞ է ծառայում գաղտնախորհուրդ մթին խնդիրների շուրջ վեճեր ծավալելը, երբ դրանք անգիտանալը մեզ հանցանք չի համարվելու Աստծո ատյանի առաջ: Հիմարություն է*

օգտակար ու կարևոր բաներ անտեսելը և հետևելը հետաքրքրությունը սրող վնասակար բաներին: Աչք ունենք և չենք տեսնում: Ի՞նչ օգուտ մեզ դասակարգումների ու տեսակների շուրջ վեճերից: Ով լսում է խոսքերը հավիտենական Ճշմարտության (Հվի 14, 6*), զերծ է մնում կարծիքների հակամարտությունից: Ամեն ինչ իր սկիզբն առնում է հավիտենական Ճշմարտությունից. Նրանից են բխում բոլոր իմաստները, Նա է Արարիչը բոլոր արարածների, Նա է, որ խոսում է*

մեր սրտերում (Հվի 8, 25*): Առանց Նրա չկա ճանաչողություն, առանց Նրա չկա ուղղամիտ դատողություն: Անսասան է մնում նա, ասպվածային խաղաղության մեջ է խայտում սիրտը նրա, ում համար հավիտենական Ճշմարտությունն ամեն ինչ է, ով ամեն բան վերագրում է Նրան և տեսնում Նրա մեջ:*

Ո՜վ Ասպված իմ, ո՜վ անսխալական Ճշմարտություն, այնպես արա, որ Քո հետ մեկ լինեմ հավիտենական սիրույդ մեջ: Հաճախ եմ ձանձրանում կարդալուց և լսելուց, մինչդեռ Քո մեջ է իմ փնտրածը, ինչի փափաքը որ ունեմ: Թող պապանձվեն աշխարհի բոլոր իմաստունները, թող Քո առջև լռեն բոլոր արարածները. Դո՛ւ միայն խոսիր իմ հետ:

2.*Մարդ որքան ավելի մտամփոփ է և արարածներից հեռու, այնքան ավելի հեշտությամբ է բարձրանում և հասկանում վսեմ ճշմարտությունները, որովհետև իմաստության լույսն ընդունում է Երկնքից: Մաքուր, պարզ և բարու մեջ հաստատված հոգին նույնիսկ բազմաթիվ զբաղմունքների մեջ չի ցրվում, որովհետև ամեն բան անում է Աստծո փառքի համար, և խաղաղ սրտով աշխատում է հեռու մնալ անձնահաճությունից: Քեզ ամենից շատ հոգնեցնողներն ու վշտացնողները քո իսկ սրտի չսանձված և անզուսպ ցանկություններն են: Բարի ու ասպվածապաշտ մարդը նախ ներքուստ, իր սրտի խորքում է պատրաստում արտաքուստ կատարելիք գործերը: Գործի ընթացքում չի տարվում զանազան միտումներով, այլ ընդհակառակը՝ մտքի օրենքներին է հնազանդվում ուղիղ դատողությամբ: Կա՞ արդյոք առավել ուժգին պայքար մղող մեկը, քան նա, ով աշխատում է հաղթել իր իսկ անձին: Մեր միակ մտահոգությունը ինքներս մե՛զ հաղթելը պիտի լինի, օրեցօր ավելի հզոր լինելը մե՛ր անձի դեմ, ավելի առաջադիմելը բարու մեջ: Այս աշխարհում, յուրաքանչյուր կատարելության մի քիչ անկատարություն է խառնված, և մեր տեսածն անգամ քողարկված է սխվերներով: Մեր անձի շուրջ համեստ կարծիքը գիտության խորազնին հետազոտություններից ավելի ապահով ուղի է առ Աստված բարձրանալու համար: Բայց չպետք է դատապարտել գիտությունը, ո՛չ էլ որևիցէ հարցի շուրջ խորը տեղեկությունը, որովհետև ինքնըստինքյան բարի է իմանալը և համաձայն՝ Աստծո կողմից հաստատված կարգին: Մաքուր խիղճն ու առաքինի վարքը, սակայն, նախընտրելի են: Քանի որ շատերն ավելի գիտության են ձգտում, քան առաքինի կյանքի, հաճախ են մոլորվում, և իրենց աշխատանքի պտուղը կամ չնչին է լինում, կամ ոչինչ:*

3.*Եթե մարդիկ, փոխանակ ունայն հարցերով զբաղվելու, ավելի աշխատեին իրենց մոլություններն արմատախիլ անել և առաքինությունները մշակել, այսքան չարիք և գայթակղություններ ի հայտ չէին գա ժողովուրդների մեջ, և ո՛չ էլ այսքան մեղկություն՝ մենաստաններում: Դատաստանի օրը մեր ընթերցումների ու ճարտար խոսքերի մասին չէ, որ հարցաքննվելու ենք, այլ՝ վարքի ու ապրելակերպի: Ո՞ւր են այն ճարտար ուսուցիչներն ու գիտունները, որոնց ճանաչեցիր իրենց կենդանության օրոք, և որոնք փայլեցին իրենց գիտությամբ: Այժմ ուրիշներն են գրավել նրանց տեղերը, և չգիտեմ՝ հիշվո՞ւմ են նրանք արդյոք: Իրենց կյանքի ընթացքում հավակնում էին ինչ որ մի բան լինել, և սակայն, այժմ չի էլ խոսվում նրանց մասին: Որքա՜ն վաղանցուկ է աշխարհի փառքը.*

երանի՜ թե այդ իմաստունների կյանքը համապատասխաներ իրենց գիտությանը. այնժամ իրենց ընթերցումներն ու զարգացումը արդյունավետ կդառնային: Քանի՜ քանի՜ անձեր են աշխարհում զոհ գնում սին գիտությանը և մոռանում են ծառայել Աստծուն: Որովհետև ավելի մեծությունն են սիրում, քան խոնարհությունը, և կործանվում են, այսպես, իրենց ունայնամտության մեջ: Միակ ճշմարտապես մեծ մարդը նա է, ով երբեք սահման չի դնում իր եղբայրսիրությանը: *Նա է իսկապես մեծ մարդ, ով ինքն իրեն փոքր է համարում և արհամարհում է աշխարհի բոլոր պատիվներն ու մեծությունները միասին: Նա է միակ իմաստուն մարդը, ով Հիսուսին շահելու համար՝ հող ու մոխիր է սեպում այս աշխարհին կապված բոլո՛ր իրողությունները: Ճշմարիտ գիտություն ունի նա, ով կատարում է Աստծո կամքը և հրաժարվում է իր անձի կամքից:*

ԳԼՈՒԽ Դ. ԽՈՀԵՄՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ

1. *Ամեն խոսքի մի՛ հավատա և մի՛ հետևիր ներքին բոլոր մղումներիդ, այլ՝ քննիր ամեն բան զգուշությամբ, Աստծո կամքի համաձայն: Ավա՜ղ, հաճախ այնքա՜ն տկար ենք. ուրիշների մասին ավելի հեշտությամբ ենք խոսում – լավ կամ վատ – և այնքա՜ն շուտ ենք հավատում վատաբանող խոսքերին: Կատարյալ մարդիկ, մինչդեռ, հավատք չեն ընծայում իրենց բոլոր լսածներին, որովհետև լավ են ճանաչում մարդու թեթևամտությունը և նրա դեպի չարն ունեցած հակումը: Իմաստություն է աճապարանքով չգործելը, ինչպես նաև համառորեն չկառչելը մեր սեփական տեսակետներին: Իմաստություն է մարդկանց բոլոր խոսքերին անխտիր չհավատալը և լսածն առանց ստուգելու ուրիշներին չհաղորդելը: Խորհուրդ հարցրու խոհեմ ու խղճամիտ մարդուց. թույլ տուր, որ քեզնից ավելի կատարյալ մեկը առաջնորդի քեզ, և ո՛չ թե հետևես անձնական գաղափարներիդ: Առաքինի կյանքը մարդուն իմաստուն է դարձնում Աստծո կամքի համաձայն, և տալիս է նրան մեծ փորձառություն: Մարդ որքան ավելի խոնարհվի և հպատակվի Աստծո կամքին, այնքան ավելի* իմաստուն ու խաղաղասեր *կդառնա ամե՛ն բանի մեջ:*

ԳԼՈՒԽ Ե. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

1. *Աստվածաշնչի մեջ ճշմարտությունն է պետք փնտրել, ո՛չ թե ճարտասանությունը: Աստվածաշունչը կարդալ է պետք այն նույն հոգիով, որով որ գրվել է: Լեզվի նրբությունից ավելի՝ օգտակար դասեր է պետք նրանում փնտրել: Նրա խորիմաստ ու վսեմ գրքերը հարկավոր է կարդալ այն նույն հոժարությամբ, որով ընթերցվում են նրա պարզ ու բարեպաշտ մասերը: Չպետք է նախապաշարումներ ունենանք հեղինակների վերաբերյալ, ո՛չ էլ տարակուսենք նրանց առավել կամ նվազ գիտության վրա: Ճշմարտության հանդեպ անկեղծ սիրով է պետք կարդալ այն:*

Չփնտրենք, թե ո՛վ է խոսում, այլ՝ տեսնենք, թե ի՛նչ է ասում:

Մարդիկ անցնում են, իսկ Տիրոջ ճշմարտությունը մնում է հավիտյան *(Սղմ* 116, 2*): Աստված խոսում է մեզ զանազան եղանակներով, ինչպես նաև տարբեր անձերի միջոցով: Աստվածաշնչի ընթերցման ժամանակ հետաքրքրասիրությունը հաճախ է մնասում. կամենում ենք քննել ու ներթափանցել կարդացված խոսքերի էության մեջ, մինչդեռ բավական է պարզապես կարդալն ու անցնելը: Եթե ուզում ես օգուտ քաղել Աստվածաշնչի*

ընթերցումից, կարդա՛ այն խոնարհի պարզությամբ ու հավատքով: Գիտուն և ճարտար երևալու փորձեր մի՛ արա: Միրիր հարցնել: Լռության մեջ լսիր Սրբերի ասածները: Մի՛ արհամարհիր Հայրերի կողմից տրված վճիռները, որովհետև դրանք ըստ քմահաճույքի չեն արտասանվել:

ԳԼՈՒԽ Զ. ԱՆԿԱՐԳ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Ամեն անգամ, երբ մարդ անօրեն բաներ է ցանկանում, անմիջապես վրդովմունք և տագնապ է զգում սրտի խորքում: Հպարտն ու ագահը չգիտեն, թե ի՛նչ է սրտի խաղաղությունը, մինչ աղքատն ու խոնարհ հոգին այն վայելում են առատորեն: Քանի դեռ մարդ չի սանձել իր եսասիրությունը, հաճախ է փորձվում և ամենաթեթև առիթով անգամ սայթաքում: Հոգով տկարը, մարմնապաշտ ու զգայական միտումներ ունեցողը դժվարությամբ է ազատվում աշխարհիկ ցանկություններից: Ահա սա է պատճառը, որ երբ մերժում է հագուրդ տալ մարմնի ցանկություններին, տրտմության ստվերով է ծածկվում իսկույն: Իսկ երբ ընդդիմությունների է հանդիպում, անհամբեր է դառնում: Եթե կարողանում է ձեռքբերել ցանկացածը, խղճի խայթն իսկույն ճնշում է վրան, որովհետև այդ ձեռքբերումի մեջ չի տեսնում ոչ մի օգուտ՝ իր փնտրած խաղաղության համար: Սրտի ճշմարիտ խաղաղությունը մեր ցանկությունների դեմ պայքարելով ենք գտնում և ո՛չ թե նրանց գոհացում տալով: Մարմնապաշտ մարդու սրտի մեջ չկա խաղաղություն. խաղաղություն չկա նաև արտաքին զբաղմունքներով կլանված մարդու սրտում:* Խաղաղությունը հոգևոր կյանքը սիրող և ջերմեռանդ հոգիների վարձատրումն է:

ԳԼՈՒԽ Է. ՓԱԽՉԵԼ Է ՊԵՏՔ ՍԻՆ ՀՈՒՅՍԵՐԻՑ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

1.*Որքան հիմար է նա, ով իր հույսը դնում է մարդու կամ որևէ արարածի վրա: Մի՛ ամաչիր ուրիշին ծառայելուց, այս աշխարհում աղքատ երևալուց՝ Քրիստոսի սիրո համար: Երբեք մի՛ վստահիր ինքդ քեզ. ամբողջ հույսդ Աստծո վրա դիր միայն: Ուժերիդ ներածի չափով արա՛ ինչ կարող ես և Աստված զորավիգ կլինի բարի կամքիդ: Գիտությանդ մի՛ կլոթնիր, մի՛ ապավինիր արարածների ճարտասանությանը, այլ՝ Աստծո շնորհին, որն օգնում է խոնարհներին և խոնարհեցնում ինքնավստահ հավակնորդներին:*

2. *Հարստություններիդ համար, եթե ունես, մի՛ գոռոզացիր: Պարծենկոտությամբ մի՛ լցվիր նաև բարեկամներիդ պատճառով, եթե կարողություններ ունեն և ազդեցիկ են: Հպարտացիր միմիայն Աստծով, որ տալիս է ամեն բան և ամեն բանից ավելի կամենում է տալ Ինքն Իրեն: Մի՛ հիացիր մարմնիդ ուժով ու գեղեցկությամբ. թեթև հիվանդությունն անգամ քանդում ու նսեմացնում է այն: Հավակնոտ մի՛ եղիր խելացիությանդ ու ճարպկությանդ պատճառով, որպեսզի տհաճ չդառնաս Աստծո առաջ, որն Ինքն է օժտել քեզ զանազան ձիրքերով: Ինքդ քեզ ուրիշներից ավելի լավ մի՛ համարիր, որպեսզի ամենահետինը չդառնաս Աստծո աչքին, որը շա՜տ լավ է ճանաչում մարդկային սրտի բոլոր գաղտնիքները: Բարի գործերիդ համար մի՛ հպարտացիր, որովհետև Աստծո*

դատաստանը երբեմն տարբեր է մարդկանց դատաստանից: Ինչը որ հաճելի է մարդկանց, հաճախ տհաճ է Աստծուն: Եթե բնական ձիրքեր ունես, համոզվիր, որ ուրիշներն ավելին ունեն, և այդպիսով ինքդ քեզ խոնարհության մեջ պահիր: Ոչինչ չես կորցնում ինքդ քեզ ուրիշներից ստորադասելով: Մինչդեռ ամեն բան կորցնում ես ինքդ քեզ մի հոգուց անգամ վեր դասելով: Խոնարհ մարդն է վայելում անսասան խաղաղությունը, իսկ նախանձն ու բարկությունը ալեկոծում են սիրտը հպարտի:

ԳԼՈՒԽ Ը. ԶԳՈՒՇԱՆԱԼ Է ՊԵՏՔ ՉԱՓԱԶԱՆՑ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Սիրտդ մի՛ բացիր անխտիր բոլորի առաջ *(Սիր 9, 21), իսկ անձիդ վերաբերվող խնդիրները վստահիր իմաստուն ու աստվածավախ մարդկանց: Աշխարհիկ մարդկանց հետ մտերիմ հարաբերություններ մի՛ պահպանիր: Երիտասարդներին ու հարուստներին մի՛ շողոքորթիր և մի՛ երազիր տեսակցել աշխարհի մեծերի հետ: Բարեկամությունը փնտրիր խոնարհ ու պարզ հոգիների, աստվածապաշտ ու բարի վարք ունեցող անձերի, և խոսակցություններդ նրանց հետ թող միշտ հոգեշահ լինեն: Մի՛ մտերմացիր ոչ մի կնոջ հետ. Աստծո պաշտպանությանը հանձնիր առաքինազարդ կանանց: Միայն Աստծո և հրեշտակների մտերմությունը թող սիրելի լինի քեզ: Զգուշացիր պատահական անձանց հետ ծանոթանալուց: Բոլորի հանդեպ պարտավոր ենք եղբայրասեր լինել, բայց ո՛չ մտերիմ, որն անօգուտ է: Երբեմն մարդկանց գնահատում ենք առանց ճանաչելու, պարզապես նրանց համբավը լսելով, բայց երբ ծանոթանում ենք նրանց հետ, անմիջապես փոխում ենք մեր կարծիքը: Երբեմն կամենում ենք մտերմությամբ հաճելի լինել ուրիշներին, բայց ընդհակառակն՝ այնժամ է, որ կորցնում ենք նրանց դրական գնահատականը մեր հանդեպ, որովհետև տեսնում են մեր թերությունները և հասկանում:*

ԳԼՈՒԽ Թ. ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

1. *Չկա ավելի բարձր մեծություն, քան մեծավորների իշխանության տակ ապրելը, նրանց հնազանդվելը և երբեք անկախ ու ինքնիշխան չլինելը: Ավելի ապահով է հնազանդվելը, քան հրամայելը: Ոմանք, սակայն, հնազանդվում են ոչ թե սիրով, այլ՝ ստիպված: Այդպիսիները չարչարվում են և դժգոհ են միշտ: Նրանք երբեք էլ չեն հասնի մտքի ու սրտի ազատությանը, եթե իրենց հնազանդությունը չհիմնվի Աստծո սիրո վրա: Գնա՛ ուր ուզում ես. սրտիդ անդորրը մեծավորների հրահանգներին խոնարհաբար հնազանդվելով է միայն, որ կարող ես գտնել: Շա՜տ ու շա՜տ անձեր բնակավայր փոխելով էին փորձում բարելավել իրենց վիճակը, բայց տեղափոխությունն իրենց համար պատրանք եղավ:*

2. *Յուրաքանչյուր անձ համոզված է ի՛ր տեսակետներին և ավելի համակրանք ունի ի՛ր համախոհների հանդեպ: Բայց եթե Քրիստոսը մեր մեջ է, ավելի լավ է երբեմն հրաժարվել մեր անձնական կարծիքներից՝ ի սեր խաղաղության: Կա՞ արդյոք այնքան իմաստուն մարդ, որ մտքի բավարար լույս ունենա և ամեն բան կատարելապես հասկանա: Շատ մի՛ կառչիր տեսակետներիդ և աշխատիր հաճույքով լսել նաև ուրիշների*

կարծիքները: Եթե գաղափարներդ ճշմարիտ են, բայց ի սեր Աստծո թողնում ես դրանք և հետևում ուրիշներին, շահում ես առավելագույն չափով: Հաճախ եմ լսել, որ ավելի ապահով է կողքից դիտելն ու խորհուրդ ընդունելը, քան խորհուրդ տալը: Որովհետև երբեմն բոլորի տեսակետներն էլ արդարացի են, բայց մերժելն ու չզիջելը, երբ պարագաներն ու իմաստությունը դա են թելադրում, նշան է հպարտության ու համառության:

ԳԼՈՒԽ Ժ. ԽՈՒՍԱՓԵԼ Է ՊԵՏՔ ԱՆՕԳՈՒՏ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

1. *Որքան հնարավոր է, հեռու մնա աշխարհի ժխորից, որովհետև երկրավոր հոգսերի շուրջ զրուցելը վտանգավոր է, նույնիսկ երբ կատարվում է բարի դիտավորությամբ: Ինքնավստահությունը մեծ արագությամբ է ապականում հոգին և հրապուրում այն: Երանի՜ թե հաճախ լռած լինեի և խուսափած մարդկանց ընկերությունից: Ինչո՞ւ ենք այսքան սիրում խոսել ու շաղակրատել, երբ այնքա՜ն քիչ անգամներ ենք անմեղ գտնում մեր խիղճը, երբ ամփոփվում ենք լռության մեջ: Որովհետև այդ խոսակցություններով աշխատում ենք միմյանց մխիթարել և զանազան մտածումներով սփոփանք գտնել մեր հոգնած սրտերի համար: Եվ սիրում ենք խոսել ու զբաղեցնել մեր մտքերը մե՛ր իսկ սիրած նյութերով, մե՛ր երազանքներով և մե՛ր կրած հակառակություններով: Ավա՜ղ, իզուր սակայն, որովհետև դրսից եկող մխիթարությունը արգելք է Աստծուց բխող հոգևոր մխիթարության ընդունմանը: Պետք է հսկել ու աղոթել, որպեսզի ժամանակը ապարդյուն չանցնի: Եթե արտոնված է, եթե պատշաճ է խոսել, խոսիր հոգեշահ նյութերի մասին: Վատ սովորություններն ու առաջադիմության նկատմամբ անհոգությունն են մեր լեզուները սանձելու գլխավոր խոչընդոտները: Հոգևոր նյութերի շուրջ զրուցելով շատ են օգտվում նրանք, ովքեր մտերմացել և միևնույն գաղափարականով միաբանվել են ի սեր Աստծո:*

ԳԼՈՒԽ ԺԱ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

1. *Կարող էինք հոգևոր մեծ խաղաղություն վայելել, եթե չցանկանայինք զբաղվել ուրիշների խոսքերով ու գործերով, ինչպես նաև այն բոլոր անցուդարձերով, որոնք մեզ չեն վերաբերվում: Ինչպե՞ս կարող է տևական խաղաղության մեջ մնալ այն անձը, որ շարունակ միջամտում է ուրիշների գործերին, արտաքին զբաղմունքներ է փնտրում և սակավաթիվ րոպեներ միայն մնում մտամտիտ: Երանի՜ պարզ հոգիներին, որովհետև նրանցն է հոգևոր անխոով խաղաղության վայելքը: Սրբերից ոմանք ինչպե՞ս հասան այդպիսի կատարելության ու հայեցողական կյանքի բարձրության: Անդադար աշխատելով սանձել իրենց սրտերի աշխարհամետ ցանկությունները, նրանք կարողացան սրտի ամբողջ եռանդով միանալ ու մտերմանալ Աստծո հետ և ազատորեն զբաղվել իրենց հոգևոր կյանքով: Մինչդեռ մենք կաշկանդված ենք ցանկություններով և մեր շուրջը կատարվող գործերը մեզ շատ են մտահոգում: Քիչ անգամներ ենք հաղթում մեր ցանկություններին, չունենք կատարելության մեջ օրըստօրե ավելի առաջադիմելու եռանդը, և ա՛յս է պատճառը, որ մնում ենք սառը ու գաղջ:*

2. *Եթե ամբողջովին մեռած լինեինք մեր «ես»ի համար և ներքին կամ արտաքին մտահոգություններ չունենայինք, մենք նույնպես կկարողանայինք ճաշակել աստվածային խոսքերը և մեր աչքերն անդադար սևեռել երկնային երանավետ երջանկության վրա: Միակ ու մեծագույն արգելքն այն է, որ տակավին գերի ենք մեր կրքերին և ոչ մի ճիգ չենք*

գործադրում Սրբերի կատարելության արահետ մուտք գործելու համար: Փոքրիկ ընդդիմություններն անգամ վիատեցնում են մեզ և անմիջապես դիմում ենք մարդկային միջոցներին: Եթե քաջարի մարտիկների նման մնայինք պատերազմի դաշտում, կընդունեինք Տիրոջ երկնային օգնությունը: Որովհետև Աստված պատրաստ է օգնելու նրանց, ովքեր պայքարում են և իրենց հույսը դնում Իր շնորհի վրա: Ինքն է մեզ պայքարի առիթներ տալիս, որպեսզի հասնենք հաղթանակին: Եթե արտաքին հրահանգների մեջ միայն կայացնենք քրիստոնեական կյանքի կատարելությունը, մեր եռանդի բոցը շուտով պիտի հանգչի: Կացինը դնենք ծառի արմատին. հարվածենք կրքերին ու ազատվենք նրանցից, որպեսզի մեր հոգու տերը դառնանք խաղաղության մեջ:

3. *Եթե տարվա ընթացքում գոնե մի թերություն արմատախիլ անենք, շուտով կհասնենք կատարելությանը: Բայց ավա՜ղ, հաճախ հակառակն է. ավելի բարեսիրտ էինք, մեր կյանքն ավելի մաքուր էր, երբ թողեցինք աշխարհն ու քաշվեցինք վանք, քան այսօր, վանական կյանքի երկար տարիներից հետո: Օրեցօր ավելի պիտի աճեինք եռանդի ու առաքինության ասպարեզում, մինչ այժմ բավարար ենք համարում այն փոքրագույն եռանդը, որ տակավին առկայծում է մեր սրտերում: Եթե սկզբից ևեթ բռնանայինք մեր վրա, հետագայում ամեն բան առանց որևէ դժվարության և ուրախությամբ կկատարեինք: Դժվար է, այո՛, հրաժարվելը անձի սովորույթներից, և ավելի դժվար է մեր կամքի կոտրումը: Բայց եթե չես կարողանում հաղթել քեզ չնչին առիթներում, ինչպե՞ս ես կարողանալու ավելի դժնդակ պայքարներ մղել: Սկզբից իսկ դիմադրիր հակումներիդ. առանց ուշացնելու մի կողմ նետիր վատ սովորությունները, որպեսզի կամաց կամաց քեզ ավելի մեծ դժվարությունների առաջ չկանգնեցնեն: Ա՜հ, եթե իմանայիր, թե ինչպիսի՜ խաղաղություն էիր վայելելու և թե ինչպիսի՜ ուրախություն էին զգալու ուրիշները, կշտապեիր ապրել մաքուր և օրինակելի կյանքով: Այնժամ գերբնական առաջադիմությանդ եռանդն անգամ ավելի պայծառ կլիներ ու ավելի ջինջ:*

ԳԼՈՒԽ ԺԲ. ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Վշտերն ու հակառակությունները օգտակար են մեզ, որովհետև մղում են դեպի սրտի առանձնությունը, և հիշեցնում, որ աքսորի մեջ ենք և մեր հույսը չպետք է դնենք արարածների վրա: Օգտակար է երբեմն վշտեր ու գաղափարական հակառակություններ կրելը: Օգտակար է, որ մարդիկ երբեմն վատ ու անպատշաճ կարծիք ունենան մեր մասին, որքան էլ բարի լինեն մեր գործերը և ուղիղ՝ դիտավորությունը: Սա առիթ է խոնարհության և պաշտպանում է մեզ սնափառությունից: Այսպիսի իրավիճակներում ավելի ենք տրամադրվում փնտրելու Աստծուն, որին հայտնի են մեր սրտերի գաղտնիքները, և թույլատրում ենք, որ մարդիկ մեզ արհամարհեն կամ վատ կարծիք կազմեն մեր շուրջ:*

2. *Այս իսկ պատճառով, մարդ այնքան սերտորեն պետք է միանա Աստծուն, որ այլևս կարիք չունենա մարդկային միջոցների: Երբ բարի կամք ունեցող անձը վրդովվում է, փորձվում, անսուրբ մտածումների մեջ տառապում, ավելի ու ավելի է համոզվում, թե որքա՜ն անհրաժեշտ է իրեն Աստված, թե քանի՜ցս անհնարին է որևէ բարեգործության կատարումն առանց Աստծո օգնության: Այնժամ տխրում է, աղոթում կրած տառապանքների համար: Այնժամ երկար կյանքն իրեն ձանձրույթ է պատճառում, կարոտով է նա սպասում մահվանը,* որպեսզի ազատվի մարմնի կապանքներից ու Հիսուսին

միանա *(Փլպ* 1, 23*)*: *Այնժամ է միայն հասկանում, որ կատարյալ ապահովությունն ու հոգու անսասան խաղաղությունը այս աշխարհից չեն:*

ԳԼՈՒԽ ԺԳ. ԴԻՄԱԴՐԵԼ Է ՊԵՏՔ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1. *Քանի դեռ ապրում ենք այս աշխարհում, փորձություններն ու նեղությունները անպակաս են լինելու մեզնից: Այս մտքով է Հոբի գրքում գրված. «Համակ փորձություն է մարդու կյանքն այս երկրի վրա» (*7, 1*): Ամեն ոք շարունակ արթուն պետք է լինի փորձությունների դեմ, պետք է հսկի ու աղոթի, որպեսզի զոհ չգնա սատանայի խաբեություններին, քանի որ նա միշտ արթուն է և առյուծի նման մռնչալով շրջում է ու որոնում, թե որ մեկին կուլ տա (*1Պտ 5, 8*): Ոչ ոք այնքան սուրբ չէ ու կատարյալ, որ երբեմն փորձություններ չունենա: Անհնարին է նրանցից լիովին և մեկընդմիշտ ազատվելը: Չնայած որ տաղտկալի են ու դժդակ, երբեմն, սակայն, օգտակար են, որովհետև խոնարհեցնում են, մաքրում ու դաստիարակում: Բոլոր Սրբերն էլ անցան զանազան փորձությունների ու նեղությունների բովով, և այս ճանապարհով է, որ առաջադիմեցին: Իսկ նրանք, ովքեր չկարողացան դիմանալ այդ փորձություններին, մերժվեցին Աստծուց և շեղվեցին փրկության ճանապարհից: Չկա այնքան սուրբ վանական միաբանություն, ո՛չ էլ այնքան առանձնացած վայր, ուր չկարողանան հասնել փորձություններն ու նեղությունները:*

2.*Քանի դեռ մարդն ապրում է այս աշխարհում, բացարձակ կերպով ազատ չէ փորձություններից, որովհետև մեր ներսում են ցանկությունների սերմերը, նրանց մեջ ենք ծնվել, մեծացել (Սղմ* 50, 7*): Փորձությունը հաջորդում է փորձությանը, և մշտապես ունենալու ենք նեղություններ, որովհետև կորցրել ենք նախկին բարությունն ու երանությունը: Շատերն աշխատում են փախչել փորձություններից, բայց ավելի վատթարների մեջ են ընկնում: Փախուստը բավական չէ հաղթելու համար: Համբերությամբ ու ճշմարիտ խոնարհությամբ ավելի հզոր ենք դառնում, քան մեր բոլոր թշնամիները: Ով արտաքին առիթներից է միայն զգուշանում և չարի արմատները չի հանում իր սրտից, շատ չի առաջադիմում և չի էլ կարող, որովհետև փորձությունները վերադառնում են շուտով և ավելի մեծ մոլեգնությամբ: Համբերությամբ, կամաց կամաց և Տիրոջ օգնությամբ ավելի ապահով հաղթանակ կտոնենք, քան խստությամբ ու սրտի անձկությամբ: Փորձության պահին հաճախ խորհուրդ հարցրու: Եվ դու էլ փորձվողի հանդեպ խիստ մի՛ եղիր, այլ՝ մխիթարիր նրան, ինչպես որ կուզենայիր, որ քեզ մխիթարեին:*

3.*Բոլոր փորձությունների պատճառը փոփոխամտությունն է, ինչպես նաև Աստծո հանդեպ վստահության պակասը: Որովհետև ինչպես անդեկ նավակն է տատանվում ալիքների վրա, այնպես էլ՝ թուլակամ ու անհաստատամիտ մարդը. մոռանում է իր առջև դրած առաջադրանքները և տարուբերվում է զանազան փորձություններից: Երկաթը կրակով է փորձվում, արդարը՝ նեղություններով: Հաճախ չգիտենք անգամ, թե ինչ կարողություններ ունենք. փորձությունը հայտնում է մեր արժեքը: Բայց պետք է միշտ հսկել, հատկապես փորձությունների սկզբին, որովհետև թշնամուն ավելի հեշտ է հաղթել*

արգելելով նրա մուտքը մեր հոգուց ներս և վտարելով նրան, երբ առաջին անգամ ներկայանա: Հներից մեկն ասել է.
«Սկզբից ևեթ հակառակ կանգնիր չարին: Երկար հապաղումից հետո դեղամիջոցը ուշ է հասնում, իսկ չարը զորացած է լինում արդեն»: *Նախ մի պարզ մտածում է ներկայանում մտքին, ապա՝ վառ երևակայություն ու պատկերացում, հետո՝ հաճույքն ու շարժումը, վերջում՝ հավանությունը: Այսպես է թշնամին քայլ առ քայլ տիրում հոգուն, եթե սկզբից ևեթ չի գտնում դիմադրություն: Որքան ավելի ուշանանք և թշնամուն ետ մղելուց ծուլանանք, այնքան ավելի մենք կտկարանանք, իսկ հակառակորդը՝ կզորանա:*

4.*Ոմանք փորձությունների ենթարկվեցին կյանքի սկզբում, ուրիշներ՝ ավելի ուշ: Եղան նաև այնպիսիներ, որ իրենց ամբողջ կյանքի ընթացքում տառապեցին փորձությունների բովում: Ոմանք, աստվածային արդարության ու իմաստության համաձայն, մեղմիկ փորձությունների ենթարկվեցին միայն, որովհետև Աստված ճանաչում է մարդու կարողությունները և ամեն բան տնօրինում ընտրյալների փրկության համար: Ուրեմն չպետք է վհատվենք փորձության ժամին, այլ՝ ավելի մեծ եռանդով մեր պաղատանքները բարձրացնենք առ Աստված, որպեսզի մեզ օգնի, քանի որ Պողոս Առաքյալի խոսքերի համաձայն,* «Աստված փորձության հետ մեկտեղ հոգում է նաև ելքի մասին, որպեսզի կարողանանք հաղթել» *(*1Կր 10, 13*): Հետևաբար, ամեն տեսակ նեղությունների ու փորձությունների ժամանակ խոնարհեցնենք մեր սրտերը Աստծո ամենազոր բազուկների առաջ, որովհետև փրկելու և բարձրացնելու է սրտով խոնարհներին միայն:*

5.*Փորձությունների ու նեղությունների մեջ է ի հայտ գալիս մարդու առաջադիմությունը: Այնժամ արժանիքն ավելի մեծ է, իսկ առաքինությունն՝ առավել ակներև: Շատ հեշտ է եռանդուն ու ջերմեռանդ լինելը, երբ բացակայում են վիշտն ու նեղությունները: Բայց նա, ով դիմադրում է ընդդիմությանը համբերությամբ, առաջադիմելու մեծ հույս է ներշնչում: Ոմանք հաղթում են մեծ փորձություններին և սայթաքում փոքրերի մեջ, որպեսզի իրենց տկարությունը ճղճիմ առիթներում տեսնելով, խոնարհվեն և մեծ փորձությունների ժամին դրական կարծիք չկազմեն իրենց անձի շուրջ:*

ԳԼՈՒԽ ԺԴ. ՁԳՈՒՇԱՆԱԼ Է ՊԵՏՔ ՀԱՆԴՈՒԳՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1. *Աչքերդ քո վրա դարձրու և խուսափիր ուրիշների գործերը քննադատելուց: Մարդ իզուր ժամանակ է վատնում ուրիշներին դատելով: Հաճախ է սխալվում, երբեմն էլ՝ մեղանչում: Մինչդեռ ինքն իրեն քննելով ու դատելով՝ օգտակար գործ է կատարում: Իրողություններն արժևորում ենք մեր իսկ սրտերի միտումների համաձայն, քանի որ անձնասիրությունը հեշտորեն է ձախողում արդար դատողությունը մեր մեջ: Եթե մեր նպատակը միմիայն Աստված լիներ, իսկույն չէինք վրդովվի, երբ մարդիկ հակառակվեին մեր կարծիքներին: Բայց կարծես մեր մեջ, կամ մեզնից դուրս, կա թաքնված մի ուժ, որ քաշում է մեզ և տանում իր ետևից: Շատերն առանց իսկ անդրադառնալու՝ իրենց անձն են փնտրում իրենց գործերում: Եվ երբ ամեն բան իրենց կամքի համաձայն է ընթանում, կարծում են, թե հոգևոր խաղաղություն են գտել: Բայց հազիվ են վերսկսվում ընդդիմությունները, իսկույն վրդովվում են ու տրտմում: Կարծիքների տարբերությունը բաժանման պատճառ է դառնում բարեկամների, քաղաքացիների, նույնիսկ վանականների ու բարեպաշտ անձանց համար: Դժվարությամբ ենք հրաժարվում մեր*

վաղեմի սովորություններից, և ոչ ոք կամովին չի փոխում իր համոզումը: Եթե ավելի քո մտքին ու տրամաբանությանն ապավինես, քան Հիսուսի մեզ տված հնազանդության օրինակին, շատ ուշ և շատ քիչ կլուսավորվես հոգևոր կյանքում, որովհետև Աստված կամենում է, որ Իրեն ենթարկվենք ամբողջովին և բոցավառ սիրով բարձրանանք ամեն տրամաբանությունից գերիվեր:

ԳԼՈՒԽ ԺԵ. ՀԱՆՈՒՆ ՍԻՐՈ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԸ

1.*Ո՛չ մի մարդկային սեր, ոչի՛նչ աշխարհի վրա չպետք է մեզ չարագործության մղի: Երբեմն որևիցէ մի կարիքավորի օգնելու համար կարող ենք ուշացնել մեր ջերմեռանդական որոշ հրահանգների կատարումը, կամ՝* փոխարինել դրանք լավագույնով*: Որովհետև այդպիսով մեր հոգևոր հրահանգները չեն խափանվում, այլ՝ փոխարինվում են առավել կատարյալով: Ի՞նչ օգուտ ունի արտաքին գործն առանց սիրո (*1Կր 13, 1-3*): Իսկ սիրով կատարված գործերը, որքան էլ փոքր լինեն ու անարգ, արդյունավետ են: Որովհետև Աստված գործից ավելի մարդու դիտավորությանն է ուշադրություն դարձնում:*

2.*Ով շատ է սիրում, շատ է գործում: Լավագույն գործունեությունն է ծավալում նա, ով ավելի հասարակության օգտին է ծառայում, քան իր անձնական կամքի կատարմանը: Հաճախ սեր է կարծվում այն, ինչը որ մարմնապաշտությունն է, որովհետև մեր բնական միտումներն ու եսասիրական փափաքները, վարձատրության ակնկալություններն ու անձնական շահերը ազդում են մեր գործերի վրա:*

3.*Ով իր սրտում ունի ճշմարիտ ու կատարյալ սերը, ինքն իրեն չի փնտրում ոչ մի բանի մեջ. նրա միակ երազանքը Աստծո փառքն է ամենուր: Նա չի նախանձում ոչ ոքի, որովհետև չի կամենում վայելել ոչ մի յուրահատուկ հարգանք կամ պատիվ: Ուրախությունը չի փընտրում իր անձի մեջ, այլ՝ նյութական բոլոր բարիքներն արհամարհելով, միմիայն Աստծո մեջ է գտնում իր երջանկությունը: Ոչ մի բարիք չի վերագրում արարածներին, այլ՝ Աստծուն միայն, որովհետև Նրանից՝ իրենց ակունքից են բխում բոլոր բարիքները: Այսպես են նաև Սրբերը, որոնք իբրև մարդկության վերջին նպատակակետ՝ իրենց զմայլանքն ու երջանկությունը տեսնում են Աստծո մեջ: Որքա՜ն ունայն կթվային մեզ արարածները, եթե մեր սրտերում ճշմարիտ սիրո գեթ մի կայծ միայն ունենայինք:*

ԳԼՈՒԽ ԺԶ. ՀԱՄԲԵՐԵԼ Է ՊԵՏՔ ԱՅԼՈՑ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1. *Համբերությամբ պետք է կրենք այն, ինչը չենք կարող ուղղել մեզնում կամ ուրիշների մեջ, մինչև որ Աստված ա՛յլ կերպ կտնօրինի: Մտածիր, որ թերևս այս կերպը քո համար լավագույնն է, որպեսզի համբերությունդ փորձվի, քանի որ առանց համբերության՝ մեր արժանիքները ոչինչ են: Բայց նաև աղոթիր Տիրոջը, որպեսզի օժտի քեզ կարողություններով՝ հաղթելու այդ արգելքներին, կամ էլ՝ հոժար կամքով համբերելու: Եթե մի որևիցէ անձ մեկերկու նկատողությունից հետո չի զգաստանում, մի՛ վիճիր նրա հետ, այլ՝ ամեն բան հանձնիր Աստծուն, որը կարող է չարիքից անգամ բարիք դուրս հանել, որպեսզի Իր կամքը կատարվի և Ինքը փառավորվի Իր ծառաների մեջ: Աշխատիր սիրով*

հանդուրժել ուրիշների թերություններին ու փկարություններին, քանի որ դու նույնպես թերություններ ունես, որոնք համբերության պարտաճառ են ուրիշների համար: Եթե ինքդ քե՛զ չես կարողանում ուղղել ուզածիդ պես, ինչպե՞ս ես պահանջում, որ ուրիշներն ուղղվեն կամքիդ համաձայն: Ցանկանում ենք, որ ուրիշները թերություններ չունենան, իսկ մենք մե՛ր փկարություններն ուղղելու եռանդն անգամ չունենք: Կամենում ենք, որ ուրիշները խստությամբ հանդիմանվեն, իսկ մենք թեթև կշտամբանքներ անգամ լսել չենք ուզում: Ուրիշների չափազանց ազատությունը տհաճ է մեզ, բայց պայմանով, որ մեզ չմերժվի ոչինչ: Ուզում ենք, որ նրանք նեղվեն օրենքի զորությամբ, իսկ մենք չենք հանդուրժում փոքրիկ սեղմումներ անգամ: Այս բոլորից բացահայտ երևում է, որ միևնույն չափանիշը չենք գործածում մեր և ուրիշների համար:

Եթե բոլոր մարդիկ կատարյալ լինեին, կրելիք ի՞նչ վիշտ պիտի ունենայինք Աստծո սիրո համար:

Արդ, Ապրված այնպես է տնօրինել, որ սովորենք միմյանց բեռները կրել, քանի որ մեզնից յուրաքանչյուրն ունի իրենը: Ոչ ոք առանց թերության չէ, ոչ ոք բավական իմաստուն չէ՝ ինքնաբավ լինելու համար: Պետք է համբերենք միմյանց, մխիթարենք, օգնենք, ուսուցանենք ու խրատենք փոխադարձաբար: Նեղությունների ժամին է, որ ի հայտ են գալիս անձի առաքինությունները: Քանզի առիթը մարդուն չի փկարացնում, այլ՝ հայտնում է, թե նա ինչպիսին է իրականում:

ԳԼՈՒԽ ԺԷ. ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. *Եթե ուզում ես խաղաղ ու համերաշխ ապրել ուրիշների հետ, սովորիր կամքդ կոտրել շատ բաներում: Քիչ բան չէ վանքում կամ միաբանության մեջ ապրելն առանց գանգատի առիթներ տալու, հավատարմորեն հարատևելով մինչ ի մահ: Երանի՜ այնտեղ օրինակելի վարքով ապրողներին և իրենց ընթացքը երջանիկ մահով լրացնողներին: Եթե կամենում ես անսասան մնալ և հարատևել առաքինություններում, քեզ իբրև ճամբորդ կամ աքսորյալ նկատիր այս երկրի վրա:*

Եթե որպես վանական ուզում ես անթերի կյանք վարել, մի՛ վարանիր աշխարհի առաջ հիմար երևալ ի սեր Հիսուսի:

2. *Սքեմն ու մազերի կտրումը քիչ օգուտ ունեն. մարդ ճշմարիտ վանական է դառնում իր վարքն ուղղելով և կրքերը սանձելով: Ով Աստծուց և իր հոգու փրկությունից բացի ա՛յլ բան է փնտրում, նեղություններ ու վշտեր է միայն գտնում: Նմանապես, ով ինքն իրե՛ն որպես ամենահետևինը չի ճանաչում և չի հպատակվում բոլորին, չի կարող արտի խաղաղությունը պահել տևական կերպով:* Ծառայելու ես եկել, ո՛չ հրամայելու: Աշխատանքի ու վշտակրության ես կանչվել, ո՛չ թե շատախոսության ու պարապության: *Այստեղ մարդիկ փորձվում են ինչպես ոսկին կրակի մեջ: Ոչ ոք չի կարող այստեղ ապրել, եթե, ի սեր Աստծո, խոնարհվել չգիտի ամբողջ սրտով:*

ԳԼՈՒԽ ԺԸ. ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

1.*Սուրբ Հայրերի օրինակին հետևիր. նրանց մեջ է փայլում հոգևոր կյանքի ճշմարիտ կատարելությունը: Նրանց գործերի համեմատ՝ մեր արածն այնքա՞ն քիչ է, գրեթե ոչինչ: Ավա՜ղ, քանիցս նվաստ է մեր կյանքը՝ նրանց վարքի համեմատությամբ: Սրբերն ու սրբության ծարավն ունեցողները ծառայեցին Հիսուսին քաղցի ու ծարավի, ցրտի ու մերկության, աշխատանքների ու հոգնության, հսկումների ու ծոմապահության, աղոթքի ու խոկման, տեսակ տեսակ նախատինքների ու հալածանքների մեջ: Ինչպիսի՜ ծանրածանր նեղություններ կրեցին Առաքյալները, Մարտիրոսները, Խոստովանողները, խոնարհ Կույսերը և բոլոր նըրանք, ովքեր կամեցան հետևել Հիսուսին: Այս աշխարհում ատեցին իրենց անձը, այն հանդերձյալում պահելու համար: Ինչպիսի՜ խստակյաց և անձնուրաց կյանք վարեցին Անապատի Սուրբ Հայրերը: Քանի՜ցս երկար ու ծանր փորձություններ կրեցին, որքա՞ն չարչարվեցին թշնամուց: Ինչպիսի՜ եռանդագին աղոթքներ բարձրացրին առ Աստված և որքա՞ն խիստ ապաշխարանքներ կատարեցին: Ինչպիսի՜ եռանդ և բուռն ճիգ գործադրեցին իրենց հոգիների առաջադիմության համար, ի՜նչ անողոք պայքար մղեցին իրենց կրքերի դեմ, և Աստծո առաջ որքա՞ն մաքուր էր իրենց դիտավորությունը:*

2.*Իրենց ամբողջ ժամանակը գործածեցին օգտակար կերպով. կարճ էին համարում Աստծո ծառայությանը հատկացված ժամերը, և այնքան հմայք ու հրապույր էին գտնում ներանձնական կյանքում, որ մոռանում էին մարմնի կարիքները: Հրաժարվում էին հարբստություններից, պատիվներից, տիտղոսներից, բարեկամներից ու ծնողներից:* Չէին ուզում ոչ մի բան: *Մարմնին անհրաժեշտ սնունդն էին միայն հոգում, իսկ հարկավոր դեպքերում նրա հոգսն ու դարմանումը ծանր էր թվում նրանց և հառաչանքների պատճառ դառնում: Աղքատ էին երկրային բարիքներից, բայց հարուստ՝ շնորհով ու առաքինությամբ: Արտաքուստ զուրկ էին ամեն ինչից: Ներքուստ, սակայն, նրանց զորացնում էին աստվածային շնորհն ու միսիթարությունը: Օտար էին աշխարհին, բայց միացած՝ Աստծուն, բարեկամ էին Նրան ու մտերիմ: Իրենց անձի շուրջ չունեին ոչ մի կարծիք. աշխարհն արհամարհում էր նրանց, բայց Աստծո աչքին պատվական էին ու սիրելի: Ապրում էին անկեղծ խոնարհությամբ, միամիտ հնազանդությամբ, եղբայրսիրությամբ ու համբերությամբ: Այս իսկ պատճառով, հսկայաքայլ առաջադիմում էին առաքինության մեջ և օրեցօր ավելի հաճելի դառնում Աստծուն: Նրանք օրինակներ են մեր՝ քրիստոնյաներիս համար, և պետք է որ ներշնչեն մեզ ծարավ՝ հասնելու կատարելությանը: Միջակների բազմությունը մեզ մեղկության առիթ չպետք է հանդիսանա:*

3.*Որքա՞ն ջերմեռանդ էին այդ վանականներն իրենց միաբանությունների հիմնման ժամանակ: Ի՜նչ եռանդ աղոթքի, ի՜նչ մրցակցություն առաքինության, խիստ կարգապահություն և հպատակություն ու հարգանք իրենց Հիմնադրի հաստատած կանոնների հանդեպ: Ինչը որ տակավին մնում է միաբանություններից, վկայում է, թե որքա՞ն վեհանձնորեն են պայքարել այդ հոգիները և ոտնակոխ արել աշխարհը: Իսկ այսօր, ավա՜ղ, մեծ բան է համարվում, եթե վանականը զանց չի առնում իր օրենքը և համբերությամբ է կրում իրեն հանձնված բեռը: Որքա՞ն գաղջ ենք մենք ու անհոգ. այսքան շո՞ւտ հանգեց նախկին եռանդը: Այժմ մեր մեղկության պատճառով ձանձրույթ ենք զգում և կյանքն անգամ անտանելի*

համարում: Երանի՜ թե այդքան բարեպաշտ անձանց օրինակը տեսնելուց հետո, առաքինության շավիղներում առաջադիմելու բաղձանքն ու ծարավը լիովին չհանգեին արտիդ խորքում:

ԳԼՈՒԽ ԺԹ. ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1. *Ճշմարիտ վանականը պարտավոր է վարել ամեն տեսակ առաքինություններով լի կյանք, որպեսզի ներքուստ լինի այն, ինչ արտաքուստ է երևում մարդկանց: Եվ հատկապես ներքուստ պարտավոր է ավելի կատարյալ լինել, քան արտաքուստ, որովհետև Աստված տեսնում է մեզ, և ուր էլ գտնվենք, պարտավոր ենք պաշտել Նրան ամեն ինչից վեր և Իր առաջ մաքուր լինել ինչպես հրեշտակները: Ամեն օր պետք է նորոգենք մեր առաջադրանքները, բորբոքենք մեր եռանդն այնպես, որ կարծես թե այսօր է սկսվել մեր դարձը, և ասենք.*

Աստված իմ, օգնիր ինձ գործադրել բարի առաջադրանքներս և սրբությամբ ծառայել Քեզ: Տուր ինձ բոլոր գործերս լավ կատարելու շնորհը, որովհետև մինչ այժմ արածս ոչինչ էր:

2. *Մեր առաջադիմության չափանիշը մեր հաստատո՛ւն առաջադրանքներն են: Ով կամենում է առաջադիմել, պետք է ճիգ գործադրի: Եթե իր առջև հաստատուն առաջադրանքներ դնողը հաճախ է սայթաքում, ի՞նչ պետք է լինի այն մարդու վիճակը, որը քիչ կամ թեթև առաջադրանքներ է ընդունում: Բազում ձևերով ենք, սակայն, լքում մեր առաջադրանքները, և մեր պարտականությունների հանդեպ փոքրիկ զանցառումն անգամ առանց վատթար հետևանքների չի մնում: Արդարների ընդունած առաջադրանքները ավելի Աստծո շնորհի վրա են հիմնված, քան իրենց իմաստության. և ա՛յս է պատճառը, որ իրենց բոլոր գործերում միայն Աստծո վրա են դնում իրենց հույսը:* «Որովհետև մարդիկ ծրագրում են իրենց ճանապարհները, բայց Աստված է կարգադրում, և մարդն իր ճանապարհների տերը չէ» *(Առակ* 16, 9*):*

3. *Եթե երբեմն մի բարի գործի, կամ մեր ընկերոջ օգուտի համար զանց առնենք մեր ջերմեռանդական սովորույթ-հրահանգներից մեկը, շատ հեշտ կլինի հետո այդ պակասի լրացումը: Բայց եթե զանց առնենք ծուլության կամ անհոգության պատճառով, հանցավոր ենք, և դրա տխուր հետևանքները ապագայում կկրենք անպայման: Նույնիսկ եթե կատարենք մեր հնարավորությունների սահմաններում ամփոփված ամեն բան, շատ գործերում երբեմն հեշտորեն թերանալու ենք: Միշտ, սակայն, պետք է որևիցէ մի առաջադրանք ընդունենք, հատկապես այն թերությունների դեմ, որոնք մեր առաջադիմության գլխավոր արգելքն են հանդիսանում: Պետք է հավասարապես լավ քննենք ու կարգի դնենք մեր ներքինն ու արտաքինը, որովհետև երկուսն էլ անհրաժեշտ են հոգևոր առաջադիմության համար:*

4. *Եթե չես կարող միշտ ամփոփ մնալ, գոնե երբեմն ամփոփվիր, օրը մի անգամ, առավոտյան կամ երեկոյան: Առավոտյան ընդունիր առաջադրանքդ, երեկոյան քննիր ընթացքդ. տե՛ս, թե ի՞նչ արեցիր խոսքով, գործով և մտածումներով. թերևս հաճախ վշտացրեցիր Աստծուն և ընկերոջդ: Քաջարի մարտիկի նման զինվիր ընդդեմ սատանայի հարձակումների: Քսպիր անժուժկալությունդ և հեշտորեն կզսպվեն մարմնիդ մյուս բոլոր ցանկությունները: Անգործ մի՛ մնա երբեք. կարդա՛, գրի՛ր, աղոթի՛ր, մտածի՛ր, զբաղվի՛ր*

հասարակությանը օգտակար որևիցէ մի գործով: Բայց նյութական աշխատանքներիդ ընտրության հարցում չափավոր եղիր, որովհետև դրանք հավասարապես պատշաճ չեն բոլորին:

5.*Ինչը որ դուրս է հասարակությանը վերաբերվող հրահանգներից, հայտնապես բոլորի առաջ մի՛ կատարիր. ավելի արդյունավետ է անձնական ջերմեռանդությունների ծածուկ կատարումը: Խուսափիր հասարակության աղոթքների հանդեպ անհոգ գտնվելուց. նախասիրածդ աղոթքներին առաջնություն մի՛ տուր: Հավատարմությամբ ու անթերի կերպով նախ օրենքով հրամայվածները կատարիր, ապա ավելացած ժամանակդ հատկացրու անձնական ջերմեռանդություններին: Անհնարին է, որ միևնույն հրահանգը հարմար լինի բոլորին. մեկին սա՛ է պատշաճում, մյուսին մի ուրիշն է ավելի օգտակար: Սիրում ենք ժամանակի համաձայն փոփոխության ենթարկել դրանք. կան, որ տոնական օրերին են ավելի հաճելի, կան էլ՝ որ ավելի հարմար են սովորական օրերին: Ոմանք մեզ օգտակար են փորձության ժամին, ուրիշներ՝ խաղաղության ու հանգստի մեջ: Բազմատեսակ են նաև խորհրդածումները. կան, որ տխրության պահերին են սփոփում մեր հոգին, կան էլ՝ որ հոգեսփոփ են, երբ ցնծում ենք Աստծո սիրո մեջ: Մեծ տոներին հարկավոր է փոխել մեր ջերմեռանդական հրահանգները և սրտի առավել սաստիկ մղումով հայցել Սրբերի բարեխոսությունը: Պետք է որ առաջադրենք մի տոնից մինչև մյուսն ապրել այնպես, որ կարծես թե մեկնելու էինք այս աշխարհից և մտնելու հավիտենական ուրախության մեջ: Խնամքով և ուրախությամբ պետք է պատրաստվենք մեծ տոներին, առավել սիրավառ հոգիով և օրենքների հավատարիմ պահպանմամբ, կարծես թե մոտ ժամանակներս Տիրոջ ձեռքերից ընդունելու էինք մեր վարձը: Եթե այդ ժամն ուշանա, մեզ տակավին անպատրաստ ու անարժան համարենք այն անհուն փառքին, որ մեր առաջ պիտի հայտնվի, երբ հնչի ժամը. աշխատենք լավագույնս պատրաստվել այդ դեպքին.*
«Երանի՜ այն ծառային, որին արթուն կգտնի տերը, երբ գա. նրան իր ամբողջ ունեցվածքի վրա վերակացու կկարգի» *(Ղկս* 12, 37*):*

ԳԼՈՒԽ Ի. ԼՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆՈՒԹՅԱՆ ՍԵՐ

1.*Անձկությամբ փնտրիր հոգիովդ զբաղվելու հարմար ժամանակը և խորհրդածիր Աստծո պարգևած բարիքների շուրջ: Հրաժարվիր հետաքրքրասիրությունը գոհացնող ընթերցումներից. կարդա այն, ինչ հուզում է սիրտը և զմայլում միտքը: Խուսափիր ունայն ու ավելորդ խոսակցություններից, անօգուտ ժամանցներից: Ականջդ խլացրու աշխարհի անիմաստ ժիտորի դիմաց և հոգեանունդ ու սուրբ մտածումներով ամփոփվելու ժամանակ կունենաս: Ամենամեծ Սրբերն անգամ փախչում էին մարդկային անօգուտ մտերմությունից. նախընտրում էին առանձնության մեջ ապրել Աստծո հետ:*

2.*Հներից մեկն ասել է.* «Ամեն անգամ, երբ մարդկանց ընկերության մեջ եմ գտնվել, վերադարձել եմ
նվազ մարդ դարձած»*: Նույնն ենք զգում նաև մենք, երբ շաղակրատում ենք միմյանց հետ ժամեր շարունակ: Ավելի հեշտ է ընդհանրապես լռել, քան խոսել և ասվածին չափ դնել: Ավելի հեշտ է տանը մնալ, քան թե դրսում պաշտպանվել: Ով ձգտում է հասնել ներանձնական և հոգևոր կյանքին, պետք է Հիսուսի հետ խույս տա ամբոխից: Ոչ ոք զերծ*

չի մնում վտանգից, եթե չի սիրում քաշված ապրել: Ոչ ոք չի կարող չափավոր խոսել, եթե կամովին լռել չգիտի: Ոչ ոք չի կարող ապահով լինել առաջնակարգ դիրքերում, եթե չի սիրում ամենավերջին տեղը: Ոչ ոք չի կարող անվտանգ հրամայել, եթե չի սովորել լավ հնազանդվել: Ոչ ոք չի կարող անհաոն հրճվանք ապրել, եթե ներքուստ չստանա իր խղճի վկայությունը:

3.*Բայց Սրբերի վստահությունը միշտ լի էր Աստծո երկյուղով: Որքան էլ մեծ առաքինություններով փայլեցին նրանք, որքան էլ առատ շնորհներ ընդունեցին, նրանց խոնարհությունն ու մտքի արթնությունը չպակասեցին երբեք: Զարամիտների ինքնավստահությունը հպարտությունից ու հանդգնությունից է ծնվում և հանգեցնում է ինքնահաբեության: Քանի դեռ այս աշխարհում ես ապրում, ապահովություն մի՛ խոստացիր քեզ, նույնիսկ երբ քեզ լավ կրոնավոր կամ բարեպաշտ միայնակյաց կարծես: Հաճախ նրանք, ովքեր*
լավագույն են թվում մարդկանց աչքին, մեծամեծ վտանգների են ենթարկվում իրենց չափազանց ինքնավստահության պատճառով: Օգտակար է, ուրեմն, որ այդպիսիք փորձություններից զերծ չմնան և հաճախ ենթարկվեն հարձակումների, որպեսզի իրենց վայելած
խաղաղության համար չհպարտանան և շատ անձնատուր չլինեն արտաքին մխիթարություններին: Ա՜հ, եթե երբևէ չփնտրեինք վաղանցուկ ուրախություններ, եթե չզբաղվեինք նյութական իրողություններով, որքա՜ն մաքուր կմնար մեր խիղճը: Ինչպիսի՜ անդորր և խաղաղություն կվայելեր այն մարդը, որն ավելորդ մտահոգությունները մի կողմ թողած, իր փրկության մասին միայն կմտածեր և իր հույսն էլ Աստծո վրա միայն կհիմներ:

4.*Ոչ ոք արժանի չէ երկնային մխիթարությանը, եթե իրեն երկար ժամանակ չմարզի զղջման: Իսկ եթե սրտի իրական զղջում ես ուզում, առանձնացիր խցիդ ներսում, դադարեցրու աշխարհային ամեն տեսակ ժխոր, ինչպես գրված է Աստվածաշնչում.* «Անկողնուդ մեջ անգամ զղջումով լի պահիր սիրտդ» *(Սղմ* 4, 5*): Խցում կգտնես այն, ինչ հաճախ կորցնում ես դրսում: Որքա՜ն հրապուրիչ է մեր խուցը, երբ միշտ ներսում ենք. որքա՜ն տաղտկալի է այն, երբ հաճախ ենք դրսում թափառում: Երբ թողնես աշխարհը և նվիրվես վանական կյանքին, եթե սկսես հավատարմորեն բնակվել խցիդ ներսում, շուտով այն կդառնա ամենասիրելի ու ամենաքաղցր ափոփարարդ: Բարեպաշտ հոգին լռության ու անդորրի մեջ է առաջադիմում և այնտե՛ղ հասկանում Աստվածաշնչի վսեմ ու գաղտնի իմաստները: Այնտեղ է գտնում աղբյուրն արցունքների, որոնցով մաքրվում է ու սրբվում օրեցօր, և այնքան ավելի սերտորեն է միանում իր Արարչին, որքան ավելի է հեռու մնում աշխարհից ու նրա ժխորից: Արդ, ով հեռանում է բարեկամներից ու ծանոթներից, նրա՛ն է մոտենում Աստված, Իր սուրբ հրեշտակների հետ միասին: Նախընտրելի է առանձնության մեջ ծածկվել և սեփական հոգիով զբաղվել, քան հրաշքներ գործել՝ սեփական հոգին մոռանալով: Քանի՜ցս գովելի է այն վանականը, որը քիչ անգամներ է հեռանում իր խցից և չի կամենում ո՛չ տեսնել մարդկանց, ո՛չ էլ խոսել նրանց հետ:*

5.*Ինչո՞ւ ես ցանկանում տեսնել այն, ինչից որ կամովին հրաժարվել ես: Աշխարհն անցնում է. անցնում են նաև նրա ցանկությունները: Զգայարաններդ մղում են քեզ ամեն կողմ. քիչ անց սկսվում է խղճի խայթը և դատարկ սիրտ է քեզ մնում միայն: Հաճախ մեկնում ես ուրախությամբ, վերադառնում՝ տրտմալի: Երեկոյան զվարթ խնջույքին հաջորդում է տխուր առավոտը: Այսպիսով, զգայական բոլոր ուրախությունները քաղցրությամբ են մտնում հոգու դռներից ներս, բայց վերջում վիրավորում են ու սպանում:*

Ինչե՞ր տեսնելու հույսն ունես դրսում, որն արդեն իսկ չես տեսել ներսում. ահա՛ երկինքն ու երկիրը և այն բոլոր տարրերը, որոնցից է բաղկացած ամեն բան: Ի՞նչ կարող ես տեսնել, որ տևական լինի այս աշխարհում: Թերևս կամենում ես պարզապես հագեցնե՞լ աչքերդ. իզուր, սակայն, որովհետև
դրան չես կարող հասնել երբեք: Նույնիսկ եթե կարողանայիր տեսնել ամեն բան, ի՞նչ էր լինելու տեսածդ, եթե ոչ միայն՝ պատրանք, սին ու ապարդյուն: Աչքերդ առ Աստված բարձրացրու և Նրա գութն ու ողորմությունը հայցիր մեղքերիդ ու անհոգություններիդ վրա: Ունայնություններն ունայնամիտ մարդկանց թող. դու միայն ա՛յն արա, ինչ Աստված է քեզ հրամայում: Եփևիցդ փակիր սենյակիդ դռները և Հիսուսին կանչիր, հոգուդ Սիրելիին: Ընկերացիր Նրան, որովհետև Նրանից հեռու երբեք չես կարող գտնել այդքան խաղաղություն: Եթե չհեռանայիր սենյակից, եթե ականջներդ աշխարհի ժխորով չլցվեին, կմնայիր Հիսուսի խաղաղության մեջ: Բայց քանի որ նորություններ լսել ու տեսնել սիրեցիր, հարկ է, որ սրտի ալեկոծություններ զգաս նաև:

ԳԼՈՒԽ ԻԱ. ՍՐՏԻ ԶՂՋՈՒՄ

1. *Եթե կամենում ես գեթ մի քիչ առաջադիմել, քեզ միշտ Աստծո սուրբ երկյուղի մեջ պահիր և ազատություններ շատ մի՛ փնտրիր: Զսպիր զգայարաններդ և անձնատուր մի՛ եղիր ունայն ուրախություններին: Տրամադիր եղիր զղջմանը և այդպես կգտնես իրական բարեպաշտությունը: Զղջումն անթիվ ու անհամար բարիքներ ունի, որոնք կորցնում ենք սրտի ունայն կապվածությունների հետևանքով: Զարմանալի կլինի, եթե որևէ մեկն այս կյանքում կարողանա բացարձակապես խաղաղ և ուրախ ապրել, երբ մտածի, որ աքսորի մեջ է, և իր հոգին նույնպես ենթակա է այսքան բազմաթիվ վտանգների:*

2. *Շատ անհաստատ են մեր սրտերը և անհոգ ենք մեր թերությունների հանդեպ: Ահա սա է պատճառը, որ չենք զգում մեր հոգու ցավերը և ծիծաղում ենք, երբ պետք է արցունքներ հեղեինք: Ճշմարիտ ազատությունն ու անխառն ուրախությունը Աստծո երկյուղի և մաքուր խղճմտանքի մեջ են միայն գտնվում: Երանի՜ նրան, ով հեռացնում է ցրման առիթները, առաջադիմությանը խոչընդոտող ամեն տեսակ արգելքների հետ միասին, և ով սուրբ զղջումով է ամփոփում իր միտքը: Երանի՜ նրան, ով մերժում է ամեն բան, որ կարող է ծանրացնել կամ արատավորել իր խիղճը: Արիաբա՛ր պայքարիր. վատ սովորությունը հաղթվում*
է բարի սովորությամբ: Եթե կարողանաս անհրաժեշտության դեպքում մարդկանցից հեռանալ, մարդիկ էլ քեզնից կհեռանան և կթողնեն, որ պարտականություններդ կատարես:

3. *Ուրիշների գործերով մի՛ զբաղվիր և մի՛ խառնվիր մեծավորներիդ գործերին: Նախ քո՛ վրա հառիր հայացքդ. մերձավորներիդ հանդիմանելուց առաջ ինքդ քեզ հանդիմանիր: Մարդկանց համակրանքը չվայելելուդ համար մի՛ վշտացիր, երբե՛ք. բավական իմաստությամբ ու խոհեմությամբ չապրելուդ համար տրտմիր, որովհետև վարքդ վայել չէ Աստծո ծառային և բարեպաշտ վանականին: Հաճախ այս աշխարհում մխիթարություններ չունենալն է ավելի օգտակար ու ապահով, հատկապես՝ զգայական մխիթարություններ: Իսկ եթե զուրկ ենք աստվածային մխիթարություններից նույնպես, կամ շատ քիչ անգամներ ենք այն զգում, հանցանքը մերն է, որովհետև զղջում չունենք մեր սրտերում և չենք մերժում արտաքին մխիթարությունները: Ընդունիր, որ անարժան ես երկնային*

միսիթարությանը, և արժանի՝ միայն անձկությունների: Երբ մարդու սիրտը ճմլվի զղջման զգացումներով, այնժամ աշխարհը դառն ու անտանելի կդառնա իր համար: Արդարը միշտ էլ կգտնի բավարար պատճառներ զղջման ու հառաչանքի: Երբ նա մտածում է իր և ուրիշների մասին, տեսնում է, որ երկրի վրա ոչ ոք վերապահված չէ նեղություններից: Որքան ավելի խորն է քննում նա իր կյանքը, այնքան ավելի են խտանում իր վիշտն ու դառնությունը: Մեր վշտերի և հոգևոր մեծ տխրության պատճառը մե՛ր իսկ մեղքերն են ու մոլությունները, որոնց մեջ այնպես ենք մխրճվել, ընկղմվել ու խրվել, որ քիչ անգամներ ենք միայն հիանում երկնային գեղեցկություններով:

4. *Եթե ավելի հաճախ մահվանդ մասին մտածեիր, քան երկար կյանքիդ, անկասկած վարքդ ուղղելու ավելի բորբոք եռանդ կզգայիր քեզնում: Եթե ավելի մեծ լրջությամբ մտածեիր դժոխքի ու քավարանի տանջանքների շուրջ, կարծում եմ, որ ավելի մեծ սիրով կփարվեիր ծանրածանր աշխատանքին ու վշտակրությանը, և չէիր խուսափի խստակրոն կյանքից: Բայց քանի որ դեռ չենք հրդեհվել այս ճշմարտությունների բոցով, քանի որ տակավին սիրում ենք խաբեապատիր իրողությունները, այս իսկ է պատճառը, որ մնում ենք միջակ և ծույլ: Հաճախ սա հոգու հեղգությունից է բխում. այդպիսի դեպքերում խեղճ մարմինը նույնպես դժգոհում է ու տրտնջում: Խոնարհ աղոթքներդ առաքիր առ Աստված, որպեսզի զղջման տրամադրություն պարգևի քեզ: Եվ դու նույնպես կրկնիր Մարգարեի հետ. «Արցունքներով շաղված հացով կերակրիր ինձ և արտասուքի բաժակով հագեցրու իմ ծարավը» (Սղմ 79, 6):*

ԳԼՈՒԽ ԻԲ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒՄՆԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԵՂՃՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. *Թշվառ ես, ո՛ւր էլ գնաս, ո՛ր կողմ էլ դառնաս, եթե առ Աստված չուղղվես: Ինչո՞ւ ես վրդովվում, եթե ամեն բան կամքիդ ու բաղձանքներիդ համաձայն չի ընթանում: Ո՞վ է տեսնում իր փափաքների լիուլի կատարումը. ո՛չ ես, ո՛չ դու, ո՛չ էլ ուրիշ մեկն այս աշխարհում: Այս կյանքում ոչ ոք – թագավոր լինի, թե քահանայապետ – զերծ չէ տագնապներից ու նեղություններից: Ո՞վ է ամենաերջանիկը մարդկանց մեջ, եթե ոչ՝ նա, ով սիրով է կրում իր նեղությունները, հանուն աստվածային սիրո:*

2. *Տկարներն ու նախանձներն ասում են. «Որքա՜ն երջանիկ է այսինչ անուն մարդը, որքա՜ն հարուստ է, հզոր ու պատիվներով ճոխացած»: Բայց դու երկնային բարիքներին միայն հառիր քո հայացքը և շուտով կհամոզվես, որ աշխարհի վաղանցուկ բարիքները ոչինչ են ու անստույգ. դրանք հոգնություն են միայն պատճառում հոգուն, որովհետև իրենց հետ բերում են վախ ու մտահոգություն: Մարդու երջանկությունը նյութական բարիքների առատության մեջ չէ, քանի որ այդ բարիքների չափավոր քանակն արդեն բավական է:*

Իրոք որ մեծ թշվառություն է այս աշխարհում ապրելը: Մարդ որքան ավելի է ձգտում առաջադիմելու ներանձնական կյանքում, այնքան ավելի դառն է թվում նրան ներկա կյանքը, որովհետև ավելի հստակ է տեսնում և ավելի լավ զգում մարդկային անկյալ բնության տկարությունն ու ապականությունը: Ուտել, խմել, արթուն մնալ, քնել, հանգստանալ, աշխատել և ենթարկվել բնության բոլոր պահանջներին. սրանք իրական վիշտ ու տառապանք են բարեպաշտ մարդու համար, որը կամենում է շղթայազերծվել

երկրային կապանքներից և ազատագրվել մեղքից: Որովհետև մարմնի այս բոլոր կարիքները ծանրածանր բեռ են ներանձնական կյանքին նվիրվող մարդու համար: Այս էր ահա պատճառը, որից մղված՝ Մարգարեն անձկալի աղոթքներով խնդրում էր ազատվել, ասելով. «Տեր, ազատիր ինձ մարմնի կարիքներից» (Սղմ 24, 17): Վա՜յ նրանց, ովքեր գիտակից չեն իրենց թշվառությանը. բայց առավել ևս վա՜յ նրանց, ովքեր սիրում են այդ թշվառությունն ու ներկա անցողիկ կյանքը: Կան մարդիկ, որ թեև մուրալով ու աշխատելով միասին հազիվ են կարողանում գտնել օրվա հացը, և սակայն այնքա՜ն անհագորեն են կառչում այս կյանքին, որ եթե հնարավորությունն ունենային այս աշխարհում ցմիշտ ապրելու, չէին մտածի անգամ Աստծո Արքայության մասին:

3.*Որքա՜ն անմիտ են այդպիսի մարդիկ, ու անհավատ. այնքա՜ն խորն են թաղվել նյութական վայելքների մեջ, որ ի սպառ մոռացել են ճաշակը հոգևոր բարիքների: Թշվառականներ, ապագայում դառնությամբ տեսնելու են, թե քանիցս անարգ էր և ունայն իրենց այդքա՜ն սիրելի աշխարհը: Աստծո Սրբերն ու հավատարիմ բարեկամները, մինչդեռ, արհամարհեցին այն ամենն, ինչը հաճելի է մարմնին, ինչն անցողիկ տեսք ունի և հրապույր: Նրանց ամբողջ հույսն ու երազանքները դեպի հավիտենական բարիքները ձգտեցին միայն: Նրանց սրտերը պլացան դեպի անտեսանելին ու անկորնչելին. վախից դողում էին, որ միգուցե արարածների սերն իրենց դեպի վար՝ դեպի երկիր քաշի:*

4.*Մի՛ վհատվիր, եղբայր: Հոգևոր կյանքում առաջադիմելու դժվարությունների պատճառով հույսդ մի՛ կտրիր: Դեռ մի փոքրիկ ժամանակ ունես: Ինչո՞ւ ես հետաձգում առաջադրանքներիդ գործադրումը. վե՛ր կաց, ոտքի՛, գործի անցիր իսկո՛յն, և ասա՛. «Ահա՛ հարմար ժամանակն աշխատելու, պայքարելու և թերություններս ուղղելու»:*
Երբ կյանքը ծանր ու դաժան կթվա քեզ, այնժամ է, որ պատեհ առիթն ունես մտածելու:

Հարկ է կրակի ու ջրի միջով անցնել՝ հանգստավայր հասնելու համար (Սղմ 65, 12): Եթե մարմնդ բռնությամբ չճնշես, չես կարող հաղթել մոլություններիդ: Քանի դեռ այս տկար մարմինն ենք կրում, ենթակա ենք մեղանչումի, և չենք կարող ապրել առանց ձանձրույթի ու վշտի: Այո՛, քաղցր կլիներ վայելումն ամեն տեսակ թշվառություններից զերծ անդորրի. բայց քանի որ մեղքով կորստյան մատնեցինք մեր անմեղությունը, կորստյան մատնեցինք նաև մեր իրական երջանկությունը: Հարկ է, ուրեմն, համբերությամբ սպասել Աստծո ողորմությանը, մինչև «անցնի անօրենությունը և այս մահկանացու վիճակն ընկղմվի անանց կյանքի մեջ» *(2Կր 5, 4):*

5. *Ա՜հ, քանիցս անչափելի է մարդկային տկարությունը, որ միշտ դեպի չարն է հակված: Այսօր խոստովանում ենք մեր մեղքերը և վաղը կրկին ընկնում նույնի մեջ: Առաջադրում ենք զգուշանալ, և մի ժամ անց նորից բռնվում ենք նույն թակարդի մեջ, կարծես թե առաջադրած չլինեինք ոչինչ: Քանի՜ քանի՜ պատճառներ ունենք խոնարհվելու և երբեք չհանդգնելու բարձրանալ, քանի որ այսքա՜ն տկար ենք ու փոփոխամիտ: Մի ակնթարթում անհոգության պատճառով կորցնում ենք այն, ինչը դժվարությամբ էինք ձեռքբերել երկարատև ջանքերի գնով: Ի՞նչ ենք լինելու մեր կյանքի մայրամուտին, եթե արևածագին արդեն այսքան վատասիրտ ենք: Վա՜յ մեզ, եթե փորձենք հանգիստ վայելել, կարծես արդեն իսկ խաղաղության մեջ ենք ու ապահով, երբ մեր վարքը սրբության ստվերն անգամ չունի տրակավին: Դեռևս շատ բաներ ունենք սովորելու, հնազանդ աշակերտների նման՝ լավագույն կյանքին վարժվելու: Թերևս դեռ կան վարքի ուղղման ու առաքինության ասպարեզում առաջադիմելու գեթ փոքրիկ հույսեր:*

ԳԼՈՒԽ ԻԳ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒՄՆԵՐ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ

1. *Շուտով է գալու մահվանդ պահը. տես, թե ինչ վիճակում է հոգիդ: Այսօր կանք, վաղը կանհետանանք: Երբ անհետանանք, մեր հիշատակը նույնպես կջնջվի մարդկանց մտքից: Որքա՜ն հիմար ու կարծր է մարդկային սիրտը, որ ներկայի մասին է միայն մտածում և մոռացության է մատնում ապագան: Բոլոր գործերիդ ու մտածումներիդ մեջ այնպես վարվիր, որ կարծես այսօր իսկ մեկնելու ես:* Եթե խիղճդ մաքուր լիներ, մահից չէիր վախենա: *Նախընտրելի է մեղքից զգուշանալ, քան փախչել մահից:* Եթե այսօր պատրաստ չես, վաղն ինչպե՞ս ես պատրաստ լինելու: *Վաղվա օրը ստույգ չէ, և որտեղի՞ց քեզ այդքան վստահություն, թե ապրելու ես մինչև վաղը:*

2. *Ի՞նչ օգուտ ունի երկար կյանքը, երբ շատ քիչ ենք բարեփոխում մեր վարքը: Ավա՜ղ, միշտ չէ, որ երկարակեցությունը վարքի ուղղմանն է ծառայում. ընդհակառակն, երբեմն բազմապատկում է թիվը մեր հանցանքների: Երանի՜ թե գեթ մի օր սրբությամբ ապրեինք այս աշխարհում: Շատերը հաշվում են տարիներն իրենց դարձի, և սակայն այդ տարիներն ամուլ են եղել և շատ քիչ են փոխել նրանց:* Եթե մեռնելն ահավոր է, թերևս երկար ապրելն ավելի վրտանգավոր է: *Երանի՜ նրան, ով իր աչքերի առջև միշտ ունի իր մահվան ժամը և պատրաստվում է ամեն օր: Եթե մահամերձներ տեսնես, հիշիր, որ դու նույնպես անցնելու ես այդ նույն ճանապարհով: Առավոտյան մտածիր, որ կարող է չհասնես երեկոյին, իսկ երեկոյան քեզ մի՛ խոստացիր տեսնել առավոտը: Պատրաստ եղիր միշտ, որպեսզի մահը քեզ անակնկալի չմատնի: Շատերն անսպասելի ու հանկարծահաս մահով կնքեցին իրենց ընթացքը, որովհետև «Մարդու Որդին չկարծված ժամին է գալու» (Ղկս 12, 40): Երբ կհասնի այդ օրհասական պահը, ամբողջովին ա՛յլ կերպ կդատես անցյալդ և դառնակսկիծ կհառաչես գաղջությանդ ու անհոգությանդ համար:*

3. *Քանի՜ցս երջանիկ ու իմաստուն է նա, ով իր կյանքի ընթացքում ջանում է լինել այն, ինչ կամենում է լինել իր մահվան պահին: Որովհետև ոչ մի բան երջանիկ մահով մեռնելու մեծագույն վստահությունը չի տալիս մեզ այնքան, որքան աշխարհի կատարյալ ու ամբողջական արհամարհումը, առաքինության եռանդը, կանոնապահությունը, ապաշխարանքը, ինքնուրացումն ու Հիսուսի սիրո համար համբերությունը նեղությունների բովում: Կարող ես բազում բարեգործություններ կատարել մինչ առողջ ես, բայց անգիտանում եմ, թե ինչ կարող ես անել, երբ հիվանդանաս:* Քչերն են իրենց վարքը բարելավում հիվանդությունների ժամանակ, ինչպես նաև քչերն են սրբանում հաճախակի ուխտագնացություններով:

4. *Մի՛ հուսա բարեկամներիդ ու ծանոթներիդ. ապագային մի՛ թող փրկությանդ նրբին գործը, որովհետև կարծածիցդ ավելի շուտ են մոռանալու քեզ մարդիկ: Եթե դու այժմ չես մտահոգվում քեզնով, վաղը քո համար ո՞վ է մտահոգվելու: Ժամանակն, արդ, շատ թանկագին է.* ահավասիկ ընդունելի ժամանակը, ահա փրկության օրը (2Կր 6, 2): *Ավա՜ղ, սակայն, քանի որ օգտակար կերպով չես գործածում ժամանակդ, մինչ կարող էիր նրանով արդյունքներ շահել ու հավերժ ապրել: Ահա հասնում է օրը և դու խնդրելու ես ևս մեկ օր, կամ գեթ մեկ ժամ՝ հոգիդ մաքրելու համար. բայց չգիտեմ, կընդունե՞ս արդյոք: Ա՜հ, բարեկամ սիրելի, քեզ մեծ վրտանգից կարող ես ազատել, եթե երկնչես մահից ու մաքուր ապրես: Ապրիր այնպես, որ մահվանդ պահին ավելի զվարթության, քան սարսափի պատճառներ ունենաս: Այժմ իսկ սովորիր մեռնել աշխարհի համար, որպեսզի այնժամ*

ապրես Հիսուսի հետ: Այժմ իսկ սովորիր արհամարհել ամեն բան, որպեսզի այնժամ համարձակությամբ մոտենաս Նրան: Պատժիր մարմինդ ապաշխարությամբ, որպեսզի վերջին ժամին հաստատուն հույս, գեթ փոքրիկ ապահովություն ունենաս:

5. *Անմիտ, ինչի՞ վրա հիմնվելով ես ինքդ քեզ երկար կյանք խոստանում, երբ մի օրվա գոյությունդ անգամ ապահով չէ: Քանի՜ քանիներ խաբվեցին ու հանկարծամահ եղան, բաժանվեցին իրենց մարմիններից: Քանի՜ անգամներ ես լսել. այսինչ մարդը սպանվեց սրով, մեկ ուրիշը խեղդվեց, երրորդը բարձր տեղից ընկնելով ջախջախվեց: Մեկն ուտելիս մեռավ, մյուսը՝ խաղալիս, մեկը կրակին զոհ գնաց, ուրիշը՝ սրին, երրորդը՝ ժանտախտին, ուրիշ մեկն էլ սրախողխող եղավ ավազակներից:*

Եվ այսպես, բոլորի վերջը մահն է. մարդկանց կյանքն անցնում է ստվերի նման *(Հոբ* 14, 1-10*):*

6. *Ո՞վ է հիշելու քեզ մահիցդ հետո, կամ ո՞վ է աղոթելու քո համար: Ուրեմն, պատվական եղբայր, հիմա՛ է ժամանակը, արա՛ ինչ կարող ես, որովհետև մահվանդ ժամն անհայտ է և չգիտես, թե նրանից հետո ինչ է պատահելու քո հետ: Քանի դեռ ժամանակ ունես, հավաքիր անկորնչելի գանձեր: Փրկությանդ մասին միայն մտածիր, և միտքդ նույնպես՝ աստվածային մտածումներով միայն թող զբաղվի: Այժմ իսկ քո համար բարեկամներ գտիր՝ պատվելով Աստծո Սրբերին և հետևելով նրանց օրինակին, որպեսզի երբ հասնի կյանքիդ վախճանը,* երկնային հավիտենական հարկերի ներքո ընդունեն քեզ *(Ղկս* 16, 9*): Որպես պանդուխտ ապրիր այս աշխարհում, որպես հյուր, որի համար անարժեք են արարածները: Սիրտդ ազատ պահիր և այն առ Աստված միայն բարձրացրու,* որովհետև երկրի վրա մնայուն բնակարան չունես *(Եբր* 13, 14*): Ամեն օր հառաչանքներդ, արցունքներդ ու աղոթքներդ թող բարձրանան դեպի Երկինք, որպեսզի մահիցդ հետո էլ հոգիդ իր ընթացքն առնի ու դեպի Աստված սլանա:*

ԳԼՈՒԽ ԻԴ. ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

1. *Ամեն բանի վախճանն ունեցիր ուշադրությանդ կենտրոնում. մտքիդ առջև թող գծագրվի այն օրը, երբ կանգնելու ես ահեղ դատավորի առաջ, որի համար գաղտնիքներ չկան, որը չի կաշառվում դրամով, որը չքմեղանքներ չի ընդունում և դատում է արդարությամբ: Թշվառ ու անմիտ մեղավոր, դու, որ բարկացած մարդու կերպարանք տեսնելիս իսկ սարսափում ես, ի՞նչ ես պատասխանելու Աստծուն, որին հայտնի են բոլոր անօրենություններդ: Ինչո՞ւ չես պատրաստվում այդ ահավոր օրվան, որում ոչ ոք չի կարող պաշտպանվել կամ արդարանալ ուրիշի միջնորդությամբ, որում ամեն մարդ ինքն իր համար արդեն բեռ է ու ծանրություն: Այժմ ջանքերդ դեռ արդյունավետ են, արցունքներդ՝ ընդունելի, հառաչանքներդ՝ լսելի, վիշտդ գոհացում է տալիս երկնային արդարությանը և մաքրում հոգիդ:*

2. *Համբերությամբ զինված մարդու համար մեծ ու փրկարար քավարան է այս երկիրը: Նախատինք ստանալիս նա ավելի ընկերոջ չարության համար է ցավում, քան իր ընդունած վիրավորանքի: Անկեղծորեն աղոթում է իրեն տրտմություն պատճառողների համար և նրանց ներում է ամբողջ սրտով: Եթե ինքն է ակամա վշտացնում մեկին, պատրաստակամորեն շտապում է ներում հայցելու: Ավելի կարեկցելու է տրամադիր, քան բարկանալու: Բոնություն է բանեցնում իր անձի վրա, որպեսզի մարմինը հոգուն*

հպարակեցնի ամեն ինչում: Նախընտրելի է ա՛յժմ մաքրել մեղքերը, ա՛յժմ ջնջել մոլությունները, քան դրանց քավությունը թողնել հանդերձյալ կյանքին: Ա՞հ, որքան ենք մոլորվում՝ անկարգ սիրով սիրելով մեր մարմինը:

3. *Ի՞նչ է լափելու դժոխքի կրակը, եթե ոչ՝ մեր մեղքերը: Որքան դու քեզ խնայես, որքան փայփայես մարմինդ, այնքան ավելի հավաքած կլինես անշեջ կրակի համար: Ինչով որ մարդ մեղանչում է, նույնով էլ պատժվելու է՝ առավել մեծ խստությամբ: Ծույլերն այնտեղ խարանվելու են հրավառ խայթոցներով: Որկրամոլները տառապելու են քաղցից ու ցամաքելու են ծարավից: Այնտեղ անմաքուրներն ու հաճոյամոլները մխրճվելու են եռացող ձյութի ու ժանտահոտ ծծումբի մեջ, իսկ նախանձները կապաղած շների նման կաղկանձելու են մոլեգին ցավերից ստիպված: Յուրաքանչյուր մոլություն ունենալու է իրեն հատուկ պատիժը: Հպարտներն ամոթահար են մնալու, իսկ ագահները մատնվելու են հետին չքավորության: Այնտեղի չարչարանքների մի ժամն ավելի սարսափելի է, քան հարյուր տարվա ամենահիստ ապաշխարանքը երկրի վրա: Այստեղ աշխատանքը երբեմն դադարում է և բարեկամներն հանդիպում են միմյանց ու մխիթարում: Հավիտենության մեջ, դատապարտվածների համար դադար ու սփոփանք չկա: Ուրեմն, այժմ սոսկա՛ ու դողա՛ մեղքերիդ ի տես, որպեսզի դատաստանի օրը ապահովություն ունենաս երանելիների հետ: Որովհետև այդ օրը* «արդարները համարձակությամբ կանգնելու են նրանց առջև, ովքեր չարչարեցին իրենց ու արհամարհեցին» *(Իմ* 5, 1*): Այնժամ իբրև դատավոր է ներկայանալու նա, ով այժմ իրեն մեծ խոնարհությամբ ենթարկում է մարդկանց դատաստանին: Այնժամ խոնարհները և հոգով աղքատները վստահությամբ են լցվելու և սարսափն է պատելու հպարտներին:*

4.Այնժամ է միայն հստակ երևալու, որ աշխարհի վրա իմաստունը նա էր, ով սովորել էր արհամարհվել և անմիտ երևալ Քրիստոսի սիրո համար:

Այնժամ համբերությամբ կրված չարչարանքը հրճվանք է պատճառելու, իսկ հպարտությունը մնալու է համր (Սղմ 106, 42*): Այնժամ արդարները ցնծալու են բերկրալի խնդությամբ, իսկ ամբարիշտները ծածկվելու են տրտմության ստվերներով: Այնժամ իրենց զգայարանները սանձած մարմինները հրճվելու են այնպես, որ կարծես թե միշտ ապրել են փափկություններով շրջապատված: Այնժամ աղքատիկ հագուստները շողալու են, իսկ պերճափայլ բեհեզները՝ նսեմանալու: Այնժամ խարիսուլ խրճիթներն ավելի անգին են համարվելու, քան ոսկեզօծ պալատները: Այնժամ ավելի օգտակար է նկատվելու հարատև համբերությունը, քան աշխարհի ամբողջ զորությունը. և պարզ ու խոնարհ հնազանդությունն ավելի վեհ ու վսեմ է երևալու, քան աշխարհի ամբողջ գիտությունը: Այնժամ մաքուր ու հանգիստ խիղճը ավելի մեծ հրճվանք է պատճառելու, քան խոր իմաստությունը: Այնժամ հարստության արհամարհանքն ավելի ծանր է կշռելու նժարի վրա, քան աշխարհի բոլոր գանձերը: Այնժամ մեկ ջերմեռանդ աղոթքի հիշատակն անգամ ավելի մխիթարիչ է լինելու, քան հիշատակը ճոխ խնջույքների: Այնժամ ավելի քչախոսությանդ համար ես ուրախանալու, քան շատախոսությանդ: Այնժամ բարեգործություններն ավելի պատվական են երևալու մարդկանց աչքին, քան լավագույն ճառերը: Այնժամ նեղություններով ու խիստ ապաշխարանքներով անցկացված կյանքն ավելի հաճելի է թվալու, քան աշխարհի բոլոր բերկրանքներն ի միասին: Սովորիր այժմ սիրով համբերել ինչ ինչ փոքրիկ չարչարանքների, որպեսզի այնժամ է՛լ ավելի ծանրերից ազատվես: Այժմ իսկ փորձիր, թե ինչի կարող ես դիմանալ հետո: Եթե այժմ թեթև*

նեղությանն անգամ չես կարողանում դիմանալ, կամ չնչին ցավի, ինչպե՞ս ես, ուրեմն, կրելու հավիտենական տանջանքները: Եթե այժմ մի փոքրիկ վիշտ քեզ այդքան անհամբեր է դարձնում, դժոխքի չարչարանքներն ապա ի՞նչ են անելու: Չես կարող երկու ուրախությունները միասին ունենալ. այս աշխարհի փափկությունները վայելել և հետո էլ թագավորել Քրիստոսի հետ:

5. *Եթե հարկ լիներ մի քանի րոպեից մեռնել, ի՞նչ օգուտ պիտի ունենային մինչ այժմ ապրած ուրախությունն ու պատիվները: Հետևաբար,* ամեն բան ունայն է, բացի Աստծուն սիրելուց և Նրան ծառայելուց *(Ժող* 1, 2*): Ով սիրում է Աստծուն ամբողջ սրտով, չի վախենում ո՛չ մահից, ո՛չ դատաստանից, ո՛չ դժոխքից, և ո՛չ էլ չարչարանքներից, որովհետև կատարյալ սերն է առ Աստված բարձրանալու ամենաապահով ուղին: Իսկ մահից ու դատաստանից վախենում է նա, ով սիրում է մեղքը: Սրանով հանդերձ, եթե Աստծո սերն անգամ չի հեռացնում քեզ մեղքից, լավ է՝ եթե գեթ վախը քեզ զսպի ու հեռացնի: Ով իր սրտում չունի Աստծո երկյուղը, չի կարող հարատևել բարու մեջ, այլ՝ շուտով կբռնվի սատանայի վարմ որոգայթներում:*

ԳԼՈՒԽ ԻԵ. ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԲԱՐԵՆՈՐՈԳԵԼ ՄԵՐ ՎԱՐՔԸ

1. *Արթուն և եռանդուն եղիր Աստծո ծառայության մեջ: Այս հարցը հաճախ ուղղիր ինքդդ քեզ. «Ինչո՞ւ եկա այստեղ, ինչո՞ւ թողեցի աշխարհը»: Չէ՞ որ* Աստծո մեծագույն փառքի և հոգևոր կյանքում առաջադիմելու համար*: Ուրեմն լցրու սիրտդ կատարելագործվելու եռանդով, որովհետև շուտով է հասանելու աշխատանքիդ վարձը, և այնժամ չի մնա ո՛չ վախ և ո՛չ էլ վիշտ: Այժմ մի քիչ աշխատանք ունես, բայց հետո՝ հանգիստ, – ինչպե՞ս արտահայտվեմ – հավիտենական անվերջ զվարթություն: Եթե միշտ եռանդուն ու հավատարիմ աշխատես, Աստված նույնպես հավատարիմ ու առատաձեռն կգտնվի վարձատրելու գործում: Փառքի պսակին*
հասնելու հաստատուն և ապահով հույսն ունեցիր, բայց ինքդ քեզ բացարձակ կերպով աննկուն մի՛ կարծիր, որպեսզի գաղջության ու հպարտության մեջ չընկնես:

2. *Մի մարդ անդադար տատանվում էր վախի ու հույսի միջև: Մի օր, ծանր թախծից ընկճված, մտնում է եկեղեցի և խորանի առջև ծնրադրելով՝ աղոթում է ու ասում. «Ա՜հ, եթե իմանայի, թե արդյոք հարատևելո՞ւ եմ բարու մեջ»: Աստվածային ահա այս պատասխանն է իսկույն լսում իր հոգու խորքում. «Ինչ որ կամենում ես լինել միշտ, նույնը եղիր այժմ, այս պահիս, և հոգիդ խաղաղությամբ կողողվի»: Մարդն անմիջապես սփոփվում է, զորանում և անվերապահ անձնատուր լինում աստվածային կամքին. փարատվում են նաև իր վարանումները: Այլևս չի կամենում հետաքրքրությամբ զբաղվել ապագայով, այլ՝ ջանում է Աստծո կամքը հասկանալ, նաև այն ամենն՝ ինչ հաճելի է Նրան, որպեսզի բարի գործեր ձեռնարկի և դրանց հաջող ելքի համար աշխատի:*

3. «Վստահիր Աստծուն և բարեգործիր», *ասում է Մարգարեն,* «խաղաղությամբ ապրիր երկրի վրա և կհագենաս նրա հարստություններով» *(Սղմ* 36, 3*): Դժվարությունների վախն ու պայքարելու հեռանկարը շատերի սրտում են հանգցնում առաջադիմության ու վարքի բարելավման եռանդը: Մինչդեռ առաքինության մեջ ամենից շատ առաջադիմում են նրանք, ովքեր դժվարին, հատկապես իրենց մտածելակերպին հակառակ գործերում են*

քաջությամբ հաղթում իրենց անձին: Որովհետև ինչում որ հաղթում ենք մեր անձին և սանձում այն, նրանով ենք ավելի առաջադիմում և արդյունքներ շահում:

4.*Այո՛, յուրաքանչյուր մարդ սանձելիք նույնքան կիրք չունի, և ո՛չ էլ նույնքան կարիք՝ իր անձին հաղթելու: Բայց փութաջան ու եռանդուն մարդը, թեև բազում կրքեր ունենա, ավելի կառաջադիմի, քան սակավաթիվ կրքեր ունեցողը, որը սակայն միջակ է եռանդի հարցում: Արիաբար մերժիր անկյալ բնության պահանջներին և աշխատիր ա՛յն առաքինությանը տիրանալ, որի կարիքն ամենից ավելի ունես. այս երկուսն են վարքի ուղղման ամենաարդյունավետ օգնականները: Ձանա հատկապես այն թերություններից խուսափել, որոնք քեզ տհաճ են այլոց վարվելակերպում. շտապիր հաղթել դրանց:*

5.*Առաջադիմությանդ համար օգտագործիր ամեն բան. եթե բարի օրինակներ տեսնես կամ լսես, ջանա՛ նմանվել: Իսկ եթե նախատվելու արժանի բաներ ես տեսնում, խուսափիր նույն կերպ գործելուց: Եթե նույն սխալն արդեն իսկ գործել ես, շտապիր ուղղել այն: Ինչպես որ քո աչքերն են ուրիշներին դիտում, այնպես էլ ուրիշներինն են նայում քեզ: Որքա՜ն մխիթարական է ու հոգեսփոփ՝ տեսնելը վանականներ, որոնք եռանդուն են, աստվածապաշտ, ջերմեռանդ ու կանոնապահ: Եվ ընդհակառակն, քանի՜ցս տխուր է ու տհաճ՝ տեսնելը վանականներ, որոնք հավատարիմ չեն իրենց կանոններին և չեն կատարում իրենց պարտականությունները: Որքա՜ն վնասակար է անտարբերությունը կոչումի պարտականությունների հանդեպ, ինչպես նաև այնօրինակ գործերին տրվելը, որոնք մեզ չեն վերաբերվում:*

6.*Ուխտերդ հիշիր, և խաչված Հիսուսը թող շարունակ ներկա լինի աչքերիդ առաջ: Կարմրելու քանի՜ քանի՜ պատճառներ կպեղես, եթե ուշադրությամբ քննես Հիսուսի կյանքը: Որքան չնչին ճիգեր ես մինչ այժմ գործադրել վարքդ Իր կյանքին նմանեցնելու համար, չնայած որ վանական կյանքի երկար տարիներ ես ամբողջացրել: Այն վանականը, որը լրջությամբ ու բարեպաշտությամբ իր մտածումների ու խորհրդածումների միակ նյութն է դարձնում Ամենասուրբ Փրկչի Կյանքն ու Չարչարանքները, առատ ու օգտակար սնունդ է հայթայթում իր հոգու համար և կարիք չի ունենում Հիսուսից բացի ինչ որ մի բան փնտրելու: Ա՜հ, եթե խաչված Հիսուսը մտներ մեր սրտերից ներս, որքա՜ն սրընթաց կկրթվեինք, և ըստ բավականի: Եռանդուն վանականն ուրախությամբ է ընդունում իրեն տրված հրահանգները և առանց դժվարության է գործադրում դրանք: Իսկ զանցառու և միջակ վանականը նեղություններ է միայն կրում, որովհետև տհաճություններն են, որ հանդիպում են նրան ամեն քայլափոխի: Ահա թե ինչ են անում այն բազմաթիվ վանականները, որ խստակյաց կյանք են վարում մենաստաններում: Հազվադեպ են հեռանում վանքից, ապրում են առանձնացած, ուտում՝ աղքատիկ և հագնում՝ պարզունակ զգեստներ: Շատ են աշխատում և քիչ խոսում, հսկում*
են երկար ժամեր, արթնանում վաղ առավոտյան. շատ են աղոթում ու զբաղվում հոգեշահ ընթերցումներով, և ամեն ինչում կանոնապահ են: Ահավասիկ Կարդուսյանները, Կիստերսյաններն ու զանազան ա՛յլ միաբանությունների միանձներն ու միանձնուհիները, որ ամեն օր կեսգիշերին արթնանում են Տիրոջ գովքը երգելու համար: Մեր համար մեծ ամոթ է, քանի որ դանդաղում ենք և ծուլանում այսքա՜ն նվիրական գործի մեջ, երբ բազում վանականներ սկսում են Աստծուն փառաբանել:

7. *Երանի՜ թե ուրիշ գործ չունենայինք՝ Աստծուն խոսքով ու գործով փառաբանելուց բացի: Երանի՜ թե կարիքը չունենայինք ուտելու, խմելու և քնելու, երանի՜ թե կարողանայինք անընդհատ դարձնել այս փառաբանումներն ու հոգևոր հրահանգները. այնժամ է՛լ ավելի երջանիկ կլինեինք, քան այժմ, երբ ստիպված ենք ծառայել մարմնի կարիքներին: Երանի՜ թե գոյություն չունենային այս կարիքները և մեր հոգևոր սննդի մասին միայն մտածեինք, որն ավա՜ղ շատ քիչ անգամներ ենք ճաշակում: Երբ մարդիկ մի այնպիսի մակարդակի են հասնում, ուր այլևս չեն փնտրում արարածներից եկող մխիթարությունը, միայն այնժամ են սկսում համ առնել աստվածային իրողություններից և գոհ են լինում միշտ, ինչ էլ որ պատահի: Այնժամ առատությունն ու ճոխությունը չեն ուրախացնում, իսկ նեղությունները չեն տրտմեցնում նրանց: Բոլորանվեր վստահությամբ հանձնվում են Աստծուն, որն իրենց համար ամեն ինչ է՝ ամեն ինչում, որի համար չկա ոչինչ, որ կարող է կորչել կամ մեռնել, այլ՝ ամեն բան կենդանի է և Նրան է ենթարկվում անխոս հնազանդությամբ:*

8. *Միշտ հիշիր, որ վախճանդ մոտ է, իսկ կորցրածդ ժամանակը երբ չի վերադառնալու երբեք: Առաքինությունն առանց հարատև աշխատանքի ու հոգնության ձեռք չի բերվում: Հազիվ թե սկսես միջակությամբդ բավարարվել, տագնապն ու խոովքը իսկույն կմտնեն սրտիդ ներս: Մեծագույն խաղաղությամբ սակայն կողողվի հոգիդ, եթե եռանդով հարատևես: Աստվածային շնորհն ու առաքինության սերը աշխատանքդ շատ ավելի թեթև կդարձնեն քո համար: Ջերմեռանդ ու միշտ է՛լ ավելի կատարյալին ձգտող մարդիկ պատրաստ են ամեն ինչի: Ավելի դժվար է մոլություններին ու կրքերին դիմադրել, քան տոկալ մարմնի հոգնություններին:* «Ով չի խուսափում փոքր թերություններից, հետզհետե ավելի մեծերի մեջ է ընկնում» *(Սիր* 19, 1*): Երեկոյան կհրճվես, եթե օրդ արդյունավետ անցկացնես: Հսկիր անձիդ վրա, խրախուսիր ինքդ քեզ և հանդիմանիր: Եվ ինչպիսին էլ լինի պարագան ուրիշի, դու քո՛ առաջադիմությամբդ միայն մտահոգվիր: Որքան ավելի բռնանաս անձիդ վրա, այնքան ավելի կառաջադիմես առաքինության մեջ:*

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՀՐԱՎԵՐՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ

ԳԼՈՒԽ Ա. ՆԵՐԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. «Աստծո Արքայությունը ձեր հոգիներում է», *ասում է Տերը (Ղկս* 17, 21*):*

Հրաժարվիր ողորմելի աշխարհից, ամբողջ սրտով վերադարձիր Աստծուն և հոգիդ խաղաղություն կգտնի: Սովորիր արհամարհել արտաքինը, վերադարձիր հոգևոր արժեքներին և Աստծո Արքայությունը կամրապնդվի սրտիդ խորքում: Որովհետև Աստծո Արքայությունը խաղաղություն և խնդություն է Սուրբ Հոգու մեջ *(Հռմ* 14, 17*), մինչ ամբարիշտները զրկված են նրանից:*
Հիսուսը կգա հոգուդ մեջ և կտա քեզ Իր մխիթարությունները, եթե սրտիցդ ներս Իրեն արժանի բնակարան պատրաստես: Հոգու մեջ են Հիսուսի փառքն ու մեծվայելչությունը. այնտեղ է Նա գտնում Իր հանգիստը: Նա հաճախ է այցելում հոգևոր կյանքին նվիրված անձանց. քաղցր է Իր խոսակցությունը նրանց հետ, սփոփիչ՝ Իր մխիթարությունը, անպատմելի՝ Իր խաղաղությունը և անճառելի՝ Իր մտերմությունը:

2. *Ուրեմն հառա՛ջ, հավատացյալ հոգի, պատրաստիր սիրտդ երկնային Հյուրի ընդունելությանը, որպեսզի գա և այնտեղ բնակվի: Քանզի նույն Ինքն է ասել.* «Եթե մեկը սիրում է ինձ, կպահի իմ պատվիրանները, և իմ Հայրը նրան կսիրի. և նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք» *(Հվի* 14, 23*): Սրտիդ մուտքը փակիր, ուրեմն, բոլոր արարածների առաջ և այն Հիսուսին միայն վերապահիր: Հարուստ ես, եթե Հիսուսը սրտիդ մեջ է. և Ինքը միայն բավական է քեզ: Նա կինամի քեզ, կհոգա ամեն բան, և դու երբևէ հույսդ մարդկանց վրա դնելու կարիք չես ունենա: Մարդիկ փոփոխամիտ են, իսկ Հիսուսը կա ու կմնա հավիտյան և զորավիգ կլինի քեզ մինչև վերջ:*

3. *Հույսդ մարդկանց վրա մի՛ դիր, քանի որ տկար են ու մահկանացու, նույնիսկ եթե օգտակար են քեզ ու սիրելի. նաև մի՛ տրտմիր, եթե երբեմն հակառակվեն քեզ կամ ընդդիմանան: Ովքեր գաղափարակից են քեզ այսօր, վաղը կարող են հակընթաց լինել քեզ, որովհետև մարդիկ դյուրափոփոխ են քամու նման: Ամբողջ հույսդ Աստծո վրա դիր միայն. թող նա լինի քո սերն ու երկյուղը: Նա կպատասխանի քո փոխարեն և կանի այն, ինչ լավագույնն է քո համար: Տևական բնակավայր չունես այս երկրի վրա. ուր էլ գնաս, օտարական ես ու ճամփորդ, և սիրտդ Հիսուսի հետ սերտ միության մեջ միայն կարող է գտնել իր հանգիստը: Ի՞նչ ես փնտրում այս աշխարհում. այստեղ ներքևում հանգստավայր չունես: Բնակատեղիդ ու հայրենիքդ Երկնքում են, և դու անցնելով միայն նայիր արարածներին: Կանցնեն արարածները և դու էլ նրանց հետ. աշխատիր չկապվել նրանց,*

չկաշկանդվել նրանցով, որպեսզի կորստյանդ պատճառ չդառնան: Միտքդ ու մտածումներդ բարձրացրու առ Աստված և անդադար աղոթքներովդ Հիսուսին դիմիր: Եթե երկնային վսեմ ճշմարտությունների շուրջ խորհրդածել կա՛մ չգիտես, կա՛մ էլ չես կարողանում, մտքիդ հայացքը Հիսուսի չարչարանքների վրա գեթ սևեռիր և նրա վերքերի մեջ հաստատիր բնակությունդ: Որովհետև եթե Հիսուսի վերքերին ապավինես, նեղությանդ պահին մեծ ուժ կզգաս, կմոռանաս մարդկանց արհամարհանքը և հեշտությամբ կհամբերես նրանց չարախոսություններին:

4. *Հիսուսը արհամարհվեց մարդկանցից և տառապանքի ժամին Իր մերձավորներն անգամ ու բարեկամները լքեցին Իրեն ընդմեջ աննկարագրելի նախատինքների: Նա չարչարվել ու անարգվել կամեցավ, իսկ դու համարձակվում ես դժգոհե՞լ: Նա թշնամիներ ու զրպարտիչներ միայն ունեցավ, իսկ դու բոլոր մարդկանց իբրև բարեկամ ու բարերա՞ր ես ուզում ունենալ: Եթե վշտերից ու նեղություններից խուսափես, ո՞ւր է ուրեմն արտահայտվելու հաղթական համբերությունդ: Եթե չես կամենում նեղություններ կրել, ինչպե՞ս կարող ես Հիսուսին բարեկամ կոչվել: Եթե ուզում ես թագավորել Հիսուսի հետ, ի սեր նույն Հիսուսի համբերիր նեղություններին: Եթե գեթ մի անգամ ըմբռնեիր Հիսուսի սրտի գաղտնիքները և զգայիր ուժգնությունը Նրա սիրո, այնժամ չէիր խռովվի կրած վշտերիդ պատճառով և միայն հեշտություններ չէիր փնտրի. ընդհակառակն, կուրախանայիր կրածդ նախատինքների համար, որովհետև Հիսուսի սերը սովորեցնում է մարդուն արհամարհել սեփական անձը: Ով սիրում է Հիսուսին և ճշմարտությունը, ազատվում է անկարգ հակումներից և ապրում է ներանձնական կյանքով. կարողանում է Աստծուն փարվել առանց արգելքների, գերազանցել ինքն իրեն և երանավետ երջանկության մեջ վայելել Աստծուն:*

5. *Ով գնահատում է իրերն այնպես, ինչպես որ են, և ո՛չ ինչպես կարծվում են, իմաստուն է և իր իմաստությունն ընդունում է ո՛չ թե մարդկանցից, այլ՝ Աստծուց: Ով ներանձնացած ապրում է իր հոգու խորքում և չի մտահոգվում արտաքին աշխարհով, ամեն տեղ և ամեն ժամ հարմար է գտնում իր հոգևոր հրահանգների կատարման համար: Ներանձնական կյանքին անձնատուր միտքը շուտով է ամփոփվում, որովհետև երբեք ամբողջովին չի տրվում արտաքին գործերին: Արտաքին աշխատանքներն ու օգտակար զբաղմունքները նրան չեն խանգարում. նա հարմարվում է դրանց դեպքերի բերման համաձայն: Իր սրտում կարգուկանոն հաստատողը երբեք չի չարչարվում մարդկանց թյուր կամ անկանոն գործերը տեսնելիս: Որքան ավելի կապվենք արարածներին, այնքան ավելի կիսոչընդոտեն մեր հոգևոր կյանքին և ցրման առիթ կհանդիսանան մեր համար: Եթե դիտավորությունդ ուղիղ լիներ և խիղճդ մաքուր, այնժամ ամեն բան հոգևոր օգտիդ ու առաջադիմությանդ կծառայեր: Շատ բաներ քեզ տհաճ են, որովհետև դեռ ամբողջովին չես մահացել անձիդ համար և չես անջատվել երկրային իրողություններից: Ոչինչ այնքան չի արատավորում մարդկային սիրտը և արգելք հանդիսանում նրա առաջադիմությանը, որքան արարածների հանդեպ տածվող անմաքուր սերը: Երբ արտաքին մտահոգություններից հրաժարվես, այնժամ միայն կկարողանաս աչքերդ սևեռել երկնայինների վրա և հոգուդ հրճվանքը գտնել:*

ԳԼՈՒԽ Բ. ԽՈՆԱՐՀ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

1. *Շատ մի՛ մտահոգվիր, թե ո՛վ է քեզ կողմ և ո՛վ հակառակ: Բոլոր գործերիդ մեջ Աստծուն քեզ զորավիգ ունենալը թող լինի միակ հոգսդ ու երկյուղդ: Աստված կպաշտպանի*

քեզ, եթե խիղճդ մաքուր պահես: Մարդկանց չարությունն անզոր է նրա դեմ, ում պաշտպանում է Աստված: Եթե գիտես լռել ու չարչարվել, Աստված անպայման կօգնի քեզ: Նա գիտի քեզ ազատելու ձևն ու ժամանակը, դու ամեն բան Իրեն հանձնիր: Ինքն է, որ օգնության է հասնում և փարատում ամեն տեսակ խոովություն: Խոնարհ մնալու համար երբեմն օգտակար է, որ ուրիշները տեսնեն մեր թերությունները և հանդիմանեն մեզ:

2. *Երբ մարդը մտքով խոնարհվում է՝ իր թերությունների գիտակցությամբ, կարողանում է հեշտորեն խաղաղեցնել ուրիշների սրտերը և առանց դժվարության սիրով շահել նրանց, ովքեր զայրացած են իր դեմ: Աստված պաշտպանում ու ազատում, սիրում ու մխիթարում է խոնարհ հոգիներին, հակվում է դեպի այդպիսիք, մեծամեծ շնորհներ պարգևում նրանց, իսկ նվաստացումից հետո՝ բարձրացնում է փառքով: Խոնարհին է հայտնում Իր գաղտնիքները, քաղցրությամբ հրավիրում է նրան ու ձգում դեպի Ինքը: Արհամարհանքից անմիջապես հետո անգամ խոնարհ հոգին խայտում է խաղաղության մեջ, որովհետև ապավինել է Աստծուն, ո՛չ թե աշխարհին: Մի՛ կարծիր, թե առաջադիմել ես, քանի դեռ քեզ արարածներից ամենավերջինը չես համարում համոզումով:*

ԳԼՈՒԽ Գ. ԲԱՐԻ ՈՒ ԽԱՂԱՂԱՍԵՐ ՄԱՐԴԸ

1. *Նախ ինքդ քեզ խաղաղության մեջ պահիր, որպեսզի հետո այն ուրիշներին հաղորդել կարողանաս: Խաղաղասեր մարդիկ ավելի են բարեգործում, քան մտքով զարգացածները: Կրքոտ մարդիկ չարիքի են փոխում բարիքներն անգամ, և դեպի առաջինն են հակված ավելի, քան դեպի երկրորդը. իսկ խաղաղասերներն ամեն բան բարիքի են վերածում: Ով հաստատ է խաղաղության մեջ, կասկած չի սնուցում ոչ ոքի հանդեպ: Իսկ դժգոհ ու մտահոգ մարդիկ տարուբերվում են ընդմեջ կասկածների. իրենք չեն հանդարտվում և չեն թողնում, որ գեթ ուրիշները հանդարտվեն: Հաճախ ասում են այն, ինչ չպետք է ասեին, և հեշտորեն են զանցառնում իրենց պարտականությունները: Ուշադիր են այլոց պարտականությունների կատարմանը, մինչ իրենք իսկ զանցառու են իրենց պարտականություններում:*

2. *Նախ ինքդ քո հանդեպ եղիր նախանձախնդիր, որպեսզի արդարացի լինի ընկերոջդ հանդեպ ցուցաբերած նախանձախնդրությունդ: Հմուտ ես սխալներդ արդարացնելու և գունազարդելու գործում, սակայն չես կամենում ընդունել ուրիշների չքմեղանքները: Ավելի արդար կլինեիր, եթե ինքդ քեզ ամբաստանեիր և արդարացնել ջանայիր ընկերոջդ վարքը: Համբերիր ուրիշներին, եթե կամենում ես, որ ուրիշներն էլ քեզ համբերեն: Տե՛ս, թե դեռևս որքա՞ն հեռու ես ճշմարիտ սիրուց ու խոնարհությունից: Իրական աստվածասերն ու խոնարհը չի բարկանում ու չի զայրանում, եթե ոչ՝ իր անձի դեմ միայն: Մեծագույն առաքինություն չէ բարի ու հեզ մարդկանց հետ զրուցելը, որովհետև բոլորին էլ հաճելի է նման խոսակցությունը: Խաղաղությունը հաճելի է բոլորին և բոլորն էլ իրենց համախոհներին են փնտրում: Մինչդեռ խաղաղությամբ ապրել խիստ, չարամիտ ու կովազան մարդկանց հետ՝ մեծ շնորհ է, գովասանքի արժանի առաքինություն և առնական կորովին հատուկ գործ:*

3. *Կան մարդիկ, որ բնավորությամբ իսկ հեզաբարո են և այլոց հետ միշտ համերաշխ: Կան սակայն նաև այնպիսիները, որ խաղաղություն չունեն իրենց սրտերում և խանգարում*

են ուրիշների անդորրը նույնպես. այդպիսիք ծանր բեռ են թե՛ ուրիշների և թե՛ իրենք իրենց համար: Կան էլ ուրիշներ, որոնք խաղաղության մեջ են պահում իրենց հոգիները և աշխատում են փոխանցել այն իրենց շրջապատողներին: Եվ սակայն, այս վաղանցուկ կյանքի ընթացքում, մեր ամբողջ խաղաղությունն ավելի խոնարհ տառապանքի մեջ պետք է որ գըտնենք, քան անվիշտ կյանքի: Ով գիտի վիշտ ու նեղություն կրելու լավագույն ձևը, մեծագույն խաղաղություն կվայելի: Նա՛ է հաղթողն իր անձի, տերը երկրի, բարեկամը Հիսուսի և ժառանգորդը Երկնքի:

ԳԼՈՒԽ Դ. ՀՈԳՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Մարդիկ երկու թևերով են բարձրանում երկրից վեր. պարզությամբ ու մաքրությամբ: Պարզությունը դիտավորության մեջ, իսկ մաքրությունը՝ սիրտ: Պարզությունը փնտրում է Աստծուն, իսկ մաքրությունը՝ գտնում ու վայելում: Եթե սիրտդ ներքուստ ազատ է բոլոր անկարգ հակումներից, ոչ մի բարի գործ դժվար չի թվա քեզ: Եթե Աստծո կամքի կատարումը միայն փնտրես, նաև այն, ինչ օգտակար է մերձավորիդ, կվայելես ներքին ազատությունը: Եթե սիրտդ մաքուր լիներ, բոլոր արարածները կյանքի հայելի ու նվիրական ճշմարտությունների գիրք կդառնային քո համար: Արարածները, որքան էլ փոքր լինեն ու անարժեք, Աստծո բարությունն է, որ ցոլացնում են իրենց մեջ: Եթե սրտի բարություն ու մաքրություն ունենայիր, կտեսնեիր ու կհասկանայիր ամեն բան, որովհետև մաքուր սիրտը ներթափանցում է մինչև Երկնքի ու դժոխքի գաղտնիքներն անգամ: Մարդն աշխարհն արտաքուստ տեսնում է այնպես, ինչպես ինքն է, կամ էլ՝ ինչպես ինքն է ապրում ներքուստ: Եթե աշխարհում անհաճո ուրախություն կա, սրտով մաքուր անձն է միայն այն վայելում: Իսկ եթե կան վշտեր ու նեղություններ, դրանք բաժինն են արատավորված խղճով ապրող մարդկանց: Ինչպես հնոցի մեջ նետված երկաթն է կորցնում իր ժանգը և դառնում հրաշեկ, նույնպես ով Աստծուն նվիրվում է բոլորանվեր, թոթափում է իր մեղկությունն ու թմրությունը, և վերափոխվում է նոր մարդու: Երբ մեկը սկսում է բավարարվել իր միջակությամբ, թեթև աշխատանքից անգամ սոսկում է և անհագորեն ընդունում արտաքին մխիթարություններ: Իսկ երբ վերսկսում է կատարյալ կերպով հաղթել իր անձին, քաջությամբ քայլել Աստծո արահետներում, այնժամ շատ ավելի թեթև է սեպում այն, ինչը նախապես անտանելի էր թվում իրեն:*

ԳԼՈՒԽ Ե. ՃԱՆԱՉԵՆՔ ԻՆՔՆԵՐՍ ՄԵՋ

1. *Չպետք է շատ ապավինենք մեր ուժերին, որովհետև հաճախ են շնորհն ու իմաստությունը պակասում մեզ: Մի փոքրիկ լույս ունենք մեր մտքերում, այն էլ հեշտությամբ ենք կորցնում մեր անհոգության պատճառով: Ավա՜ղ, հաճախ չենք անդրադառնում անգամ, թե ներքուստ որքա՜ն կույր ենք: Մեր գործերը հաճախ են հոռի, և հոռեգույն՝ մեր ինքնարդարացման փորձերը: Հաճախ ենք կրքերից մղված գործում, կարծելով, թե դա է եռանդը: Նկատում ենք այլոց թեթև թերությունները, և անտեսում՝ մեր ծանր սխալները: Անմիջապես զգում ենք ու կշռում վիշտը, որ մեզ պատճառում են ուրիշները, և չենք մտածում երբեք, թե ինչեր են կրում նրանք մեր պատճառով: Ով արդարությամբ է դատում իրեն, տեսնում է, որ ուրիշներին խստությամբ դատելու իրավունք չունի:*

2. *Ներանձնական կյանքին նվիրված մարդն ամենից առաջ իր հոգու մասին է մտածում, ուշադիր է իր թերություններին և լռակյաց՝ ուրիշների պակասությունների դիմաց: Ներանձնական կյանքին ու բարեպաշտությանը չես կարող տիրանալ, եթե չսովորես լռել այլոց վարքի շուրջ և քո հոգիովդ միայն զբաղվել: Եթե աչքերդ քո անձի և Աստծո վրա միայն սևեռես, արտաքին աշխարհը քեզ շատ չի մտահոգի: Ո՞ւր ես թափառում, երբ միտքդ ցրումներին ես հանձնում. ի՞նչ օգուտ քեզ, եթե մտովին ամբողջ աշխարհով մեկ շրջագայես և մոռացության մատնես ինքդ քեզ: Եթե կամենում ես խաղաղություն և Աստծո հետ մտերմություն վայելել, պետք է հրաժարվես ամեն ինչից և հոգուդ փրկության մասին միայն մտածես:*

3. *Հոգևոր կյանքում բավական առաջադիմած կլինես, եթե ձերբազատվես առօրյա հոգսերից: Հոգիդ, մինչդեռ, շատ կտուժի, եթե արժեք ընծայես անցավոր արարածներին: Թող որ քո համար չլինի ոչինչ ավելի մեծ, ավելի վսեմ, ավելի հաճելի ու ընդունելի, քան Աստված և աստվածային բարիքները: Բացարձակապես ունայն սեպիր արարածներից բխող բոլոր հաճույքներն ու մտիթարությունները: Աստվածասեր հոգին արհամարհում է այն ամենն, ինչը ստորադաս է Աստծուն: Հավիտենական, անհուն ու ամենակարող Աստված Ինքն է խաղաղությունն իր հոգու և ճշմարիտ ուրախությունն իր սրտի:*

ԳԼՈՒԽ Զ. ՄԱՔՈՒՐ ԽՂՃԻ ԲԵՐԿՐԱՆՔԸ

1. «Բարի մարդու փառքն իր խղճի վկայությունն է» *(2Կր* 1, 12*): Խիղճդ մաքուր պահիր և զվարթությունը անպակաս կլինի սրտիցդ: Մաքուր խիղճը համբերում է ամեն ինչի և հակառակությունների մեջ անգամ ուրախ է: Իսկ արատավորված խիղճը միշտ տրտում է ու վրդովված: Անպատմելի խնդություն կվայելես, եթե խիղճդ չհանդիմանի քեզ: Բարի գործերիդ համար միայն ուրախացիր: Չարամիտներն անխառն ուրախություն և հոգևոր անդորր չունեն, որովհետև* «ամբարիշտների համար խաղաղություն չկա», *ասում է Տերը (Ես* 57, 21*): Եվ եթե այդ նույն անօրենները հայտարարեն անգամ, թե.* «Մենք խաղաղություն ունենք, մենք զերծ ենք դժբախտություններից և ո՞վ կարող է մեզ վնասել» *(Եր* 5, 12*), մի՛ հավատա, որովհետև Տիրոջ բարկությունն է ահա հասնելու նրանց, նրանց գործերն անհետանալու են, իսկ խորհուրդները՝ չքանալու:*

2. *Աստվածասեր հոգու համար դժվար չէ պարծենալ կրած նեղություններով, որովհետև այդ պարծանքը Հիսուսի Խաչից է տրվում իրեն: Վաղանցուկ է մարդկանց փոխադարձաբար միմյանց տված փառքը: Աշխարհի փառքին միշտ էլ դառնություններ ու տրտմություններ են խառնված: Արդարների փառքը ո՛չ թե մարդկանց բերանում է, այլ՝ իրենց խղճի վկայության: Արդարների բերկրանքը Աստծուց է և Աստծո մեջ, իսկ իրենց գոհունակությունը բխում է ճշմարտությունից: Ով կամենում է հասնել ճշմարիտ ու հավիտենական փառքին, անցավորի մասին չի մտածում անգամ: Իսկ ով անցողիկ մեծություններն է փնտրում և չի արհամարհում դրանք ամբողջ սրտով, հասկացնում է, թե չի սիրում հավիտենական փառքը: Սրտի վիթխարի անդորր է վայելում նա, ով միևնույն անտարբերությամբ է ընդունում և՛ գովասանքները, և՛ հանդիմանությունները:*

3. *Մաքուր խիղճ ունեցողը գոհանում է քչով և շատ շուտ խաղաղվում է: Ավելի սուրբ չես, երբ մարդիկ գովում են քեզ, և ո՛չ էլ ավելի ստոր, երբ նախատվում ես նրանցից: Մնում*

ես այն, ինչ որ ես, և արժանի չես ավելի մեծ համարվելու, քան ինչ որ ես Աստծո առաջ: Եթե ավելի այն քննեիր, թե ինչ ես ներքուստ սրտիդ մեջ, ոչ մի կարևորություն չէիր տա անձիդ շուրջ արտահայտված կարծիքներին: Մարդիկ երեսին են նայում, մինչ Աստված քննում է սրտերը *(1Թգ* 16, 7*): Մարդիկ ականատես են գործին, իսկ Աստված կշռում է դիտավորությունը: Խոնարհ հոգիներին է հատուկ շարունակ բարեգործելն առանց իրենց անձի շուրջ որևէ դրական կարծիք ունենալու: Արարածներից բխող միտթարություններից հրաժարվելը նշան է սրտի մեծ մաքրության և Աստծո վրա ունեցած անսասան վստահության: Ով արտաքին վկայություն չի փնտրում իր անձի համար, հայտնում է, թե Աստծուն է հանձնվել ամբողջովին: Որովհետև, ասում է Պողոս Առաքյալը,* «ո՛չ թե նա է ընտրյալը, ով ինքն իրեն է ընծայում, այլ՝ նա, ում ընծայում է Տերն Ինքը» *(2Կր* 10, 18*): Հոգևոր կյանքին նվիրված մարդկանց է հատուկ սրտով Աստծուն միացած ապրելն ու արտաքուստ չկապվելն արարածներին:*

ԳԼՈՒԽ Է. ՍԻՐԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ ԱՎԵԼԻ

1. *Երանի՜ նրան, ով հասկանում է, թե ինչ է նշանակում սիրել Հիսուսին և ի սեր Հիսուսի արհամարհել սեփական անձը: Պետք է մեր սիրտն անջատենք մյուս բոլոր սիրելիներից, որովհետև Հիսուսը կամենում է սիրվել առանձին և ամեն ինչից ավելի: Արարածների սերը խաբեական է ու փոփոխական, իսկ Հիսուսի սերը՝ հավատարիմ ու տևական: Ով կապվում է արարածներին, ընկնում է նրանց պես և նրանց հետ. իսկ ով փարվում է Հիսուսին, մնում է անսասան: Սիրիր և որպես ընկեր ունեցիր Նրան, ով քեզ չի լքում երբեք, նույնիսկ երբ հեռանում են քեզնից բոլորը. իսկ երբ հասնի վախճանդ, չի թողնելու, որ անվերադարձ կորըստյան մատնվես:*

Կամա թե ակամա, մի օր հարկ է լինելու բաժանվել ամենքից և ամեն ինչից:

Ողջ թե մահամերձ, մնա՛ Հիսուսի մոտ և ապավինիր Նրա հավատարմությանը. երբ բոլորը քեզ լքեն, միայն Ինքը կկարողանա օգնել քեզ: Ահա՛ ամենասիրելիդ. Նա չի կամենում մի ա՛յլ բաժնեկից ունենալ, պահանջում է սիրտդ ամբողջովին, որպեսզի միայն Ինքն այնտեղ թագավորի: Եթե լիովին հրաժարվեիր արարածների սիրուց, Հիսուսը սիրով կբնակվեր սրտիդ մեջ: Մի օր կորած ես որակավորելու այն ամենն, ինչն այժմ արարածներին ես տալիս Հիսուսի փոխարեն: Մի՛ հենվիր քամուց տարուբերվող եղեգին և մի՛ վստահիր նրան, որովհետև «ամեն մահկանացու մարմին խոտի պես է և նրա փառքն անցնում է դաշտի ծաղիկների նման» *(Ես* 40,

6*): Հաճախ կսխալվես, եթե մարդկանց շուրջ իրենց տեսքի համաձայն կարծիք կազմես. իսկ նրանցից ակնկալածդ շահի ու միտթարության փոխարեն վնասներ է միայն, որ կրելու ես: Ամեն իրողության մեջ Հիսուսին փնտրիր և կգտնես Նրան ամենուր. իսկ եթե անձդ փնտրես, այն այո՛ կգտնես, սակայն կործանմանդ համար միայն: Որովհետև Հիսուսին չհետևող մարդն ինքն իրեն ավելի շատ է վնասում, քան իր բոլոր թշնամիներն ի միասին:*

ԳԼՈՒԽ Ը. ՀՈԳԵՎՈՐ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՀԵՏ

1. *Երբ Հիսուսը մեր հետ է, ամեն բան քաղցր է և դժվար չի թվում ոչինչ. իսկ երբ Հիսուսը հեռանում է, ծանր է դառնում ամեն բան: Միսիթարություններն արժեքազուրկ են, երբ Հիսուսը լռում է հոգու խորքում. մինչ Հիսուսի միայն մի խոսքն արդեն բավական է մեզ քաղցրությամբ լցնելու համար: Մարիամ Մագդաղենացին մի՞թե իսկույն չհեռացավ այն տեղից, ուր նստած լալիս էր, երբ իր քույրը՝ Մարթան, ասաց իրեն.* «Վարդապետը կանչում է քեզ» *(Հվի* 11, 28*): Երջանի՜կ պահ, երբ Հիսուսը մեզ արցունքների միջից կանչում է դեպի ուրախությունը Սուրբ Հոգու: Որքա՜ն չոր ու անզգա է սիրտդ առանց Հիսուսի: Որքա՜ն հիմար ես ու անմիտ, երբ Հիսուսից բացի ինչ որ մի բան ես դեռ կամենում ունենալ. սա ավելի մեծ վնաս է, քան եթե ամբողջ աշխարհը կորցնեիր:*

2.*Ի՞նչ կարող է տալ քեզ աշխարհն առանց Հիսուսի. առանց Հիսուսի ապրելն անտանելի դժոխք է, իսկ Հիսուսի հետ ապրելը երջանկությունն է դրախտի: Թշնամիները չեն կարող վնասել քեզ, երբ Հիսուսի հետ ես: Հիսուսին գտնողը անհուն գանձ է գտնում, մի գերազանց բարիք: Իսկ ով կորցնում է Հիսուսին, կորցնում է ամեն բան. ավելի, քան եթե ամբողջ աշխարհը կորցրած լիներ: Առանց Հիսուսի ապրելը լրումն է չքավորության: Հիսուսի հետ ապրելն է ամենամեծ հարստությունը: Մեծ հմտություն է Հիսուսի հետ երկխոսել կարողանալը, նաև մեծ իմաստություն՝ Նրան մեր սրտերում հարատև անմեկնելի պահելու ձևն իմանալը: Եղիր խոնարհ ու խաղաղասեր, և Հիսուսը կբնակվի հոգուդ մեջ: Եղիր ասրվածապաշտ ու հեզաբարո, և Հիսուսը քո մոտ կմնա: Կարող ես հեռացնել Նրան անմիջապես և կորցնել Իր շնորհը, եթե արտաքին հրապույրներով տարվես: Եթե հեռանաս Հիսուսից, եթե կորցնես Նրան, այնժամ ո՞վ է լինելու ապավենդ ու ընկերդ: Առանց ընկերոջ չես կարող երջանիկ ապրել, բայց եթե ընկերդ Հիսուս Ինքը չէ, տխուր ես մնալու միշտ և հուսահաբ: Որքա՜ն անմիտ ես, երբ ուրիշին ես վստահում և նրանից ապասում ուրախությունդ: Նախընտրելի է, որ ամբողջ աշխարհը քեզ թշնամի դարձնես, քան տրտմեցնես Հիսուսին: Բոլոր սիրելիների մեջ թող որ Հիսուսը միայն լինի քո ամենասիրելին: Սիրիր մյուսներին հանուն Հիսուսի, իսկ Հիսուսին՝ Ինքն Իր համար: Իրե՛ն միայն սիրիր ամբողջ սրտով, որովհետև Ինքն է միակ բարի ու հավատարիմ ընկերը: Հիսուսի մեջ, Հիսուսի համար սիրիր ընկերներիդ ու թշնամիներիդ և աղոթիր բոլորի համար, որպեսզի բոլորն էլ սիրեն ու ճանաչեն Նրան: Մի՛ կամեցիր նախապատվություն ունենալ որևէ մեկի գնահատանքի ու սիրո մեջ, որովհետև նման գնահատանքն ու սերը միայն Աստծուն են վայելում, որին հավասար չէ ոչ ոք: Մի՛ կամեցիր, որ ինչ որ մեկն իր սրտի խորքում յուրահատուկ համակրանք ունենա քո հանդեպ, և դու նույնպես անձուկ սիրով մի՛ կապվիր ուրիշին, այլ՝ թող որ Հիսուսը միայն բնակվի քո և բարի կամք ունեցող բոլոր անձանց սրտերում:*

3.*Սրտով մաքուր եղիր ու ազատ, մի՛ կապվիր արարածներին: Պարտավոր ես հրաժարվել ամեն ինչից և անարատ սիրտ նվիրել Աստծուն, եթե անշուշտ կամենում ես տեսնել ու ճաշակել Իր քաղցրությունը: Բայց այս կատարելությանը չես կարող հասնել, եթե շնորհը չընկերակցի քեզ և չօգնի սիրտդ ազատ ու դատարկ պահել արարածների սիրուց, որպեսզի այն Հիսուսին միայն միանա: Որովհետև ասրվածային շնորհը հզորացնում է հոգին բարեգործությունների ասպարեզում, իսկ երբ այն հեռանում է, հոգին տնանկ, անկարող և կարծես թե դատապարտված է մնում: Սակայն նման դեպքերում անգամ չպետք է ընկճվես, այլ՝ հանդարտ սրտով համակերպվես Աստծո կամքին և ամեն*

բան կրես ի սեր Հիսուսի, որովհետև ամառն է հաջորդում ձմռանը, ցերեկը՝ գիշերվան, և անքույթ խաղաղությունն է տիրում փոթորիկից հետո:

ԳԼՈՒԽ Թ. ՀՐԱԺԱՐՈՒՄ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1.*Դժվար չէ մերժել մարդկային մխիթարությունները, երբ վայելում ենք աստվածայինը: Բայց մեծ, շատ մեծ հերոսություն է հրաժարվելը և՛ մարդկային, և՛ աստվածային մխիթարություններից, Աստծո փառքի համար սիրով ընդունելով ու կրելով մեր սրտերի աքսորը, չփնտրելով մեր անձը և կարևորություն չտալով մեր արժանիքներին: Զարմանալի չէ, որ ուրախ ես ու եռանդուն, երբ շնորհը ներկա է հոգուդ խորքում. բոլորն են կամենում վայելել այդ վիճակը: Անարգելք ու զվարթ է ընթանում նա, ում առաջ է մղում Աստծո շնորհը: Այդպիսին երբեք չի զգա բեռի ծանրությունը, որովհետև Ամենակարողն է նրան վերցրել Իր բազուկների մեջ, անսիալ ուղիներում առաջնորդելով:*

2.*Բնությանը հատուկ իրողություն է մխիթարությունների փնտրտուքը, և այնքան էլ դյուրին չէ սեփական անձից հրաժարվելը: Իր Եպիսկոպոսին հավատարիմ մնալով հանդերձ, Լավրենտիոս վկան հաղթեց աշխարհին, որովհետև արհամարհեց զգայական ամեն բան: Ի սեր Հիսուսի, հեզությամբ կրեց դառն բաժանումը Քսեստոս Քահանայապետից, որին կապված էր որդիական գողտր սիրով: Արարչի սիրով հաղթեց արարածի սիրույն և Աստծո կամքը գերադասեց մարդկային մխիթարությանը: Դու նույնպես, ամենասիրելի ու ամենամտերիմ ընկերներիցդ անգամ հեռանալ սովորիր ի սեր Աստծո: Մի՛ անհանգստացիր, եթե ընկերդ քեզ հանկարծ լքի, այլ՝ մտածիր, որ մի օր ակամա բաժանվելու էիք միմյանցից:*

3.*Իր սրտում երկարատև ու բուռն պայքարներ մղելուց հետո է միայն, որ մարդ սովորում է հաղթել իր անձին և բոլոր զգացումներն առ Աստված բարձրացնել: Երբ մարդիկ իրենց ուժերի վրա են հենվում, շուտով են կարիքն ունենում դիմելու մարդկային մխիթարություններին: Իսկ ով բորբոքված է Հիսուսի սիրով և ունի Նրա առաքինություններին հետևելու եռանդը, անձնատուր չի լինում արտաքին մխիթարություններին, այլ՝ դժվար առաջադրանքներ ու ծանր աշխատանքներ է հանձն առնում ի սեր Հիսուսի: Երբ Աստված հոգևոր մխիթարություններ է առաքում քեզ, ընդունիր դրանք երախտագիտությամբ, միշտ սակայն գիտակից, որ արժանիքներիդ արդյունքը չեն, այլ՝ ձրի պարգևն են Աստծո: Դրանց համար մի՛ հպարտացիր, շատ մի՛ ուրախացիր և անձնահաճությանը մի՛ տրվիր երբեք: Այդ շնորհներն ընդունելիս է՛լ ավելի խոնարհվիր, բոլոր գործերում է՛լ ավելի արթուն եղիր և երկյուղած, որովհետև այդ պահն անցնելու է և շուտով վրա են հասնելու փորձությունները: Իսկ երբ զրկվում ես մխիթարություններից, մի՛ վհատվիր, այլ՝ համբերությամբ ու խոնարհությամբ սպասիր Տիրոջ նորանոր այցելություններին. Նա ամենակարող է և կարող է առավել մեծ մխիթարություններով ափոփել հոգիդ: Աստծո այս վարվելակերպը նոր չէ, և ո՛չ էլ անծանոթ՝ Իր ճանապարհներին տեղյակ ու փորձառու անձանց. այս նույն ուղիով են քայլել բոլոր Սրբերն ու մարգարեները:*

4. *Շնորհի ներկայությունը զգալով, Դավիթ Մարգարեն գոչում էր.* «Առատությանս մեջ ասացի, թե՝ չեմ սասանվի երբեք», *իսկ երբ շնորհը հեռացավ, հառաչեց.* «Տեր, մի կողմ

շրջվեցիր ինձնից և հոգիս իսկույն խռովվեց»: *Այս վրդովմունքի մեջ, սակայն, նա չէր հուսալքվում, այլ՝ ավելի մեծ եռանդով աղոթում էր.* «Տեր, հառաչանքներս մինչև գահդ պիտի բարձրացնեմ և Քեզ պաղատեմ»: *Ապա ընդունում էր արդյունքն իր աղոթքների և վկայում, որ իր աղաչանքները լսվել էին.* «Տերը լսեց իմ աղոթքների ձայնը, գթաց ինձ և օգնեց»: «Սուգս ցնծության վերածեցիր և ուրախության հանդերձներով պատեցիր ինձ» *(Սղմ* 29, 7-12*): Քանի որ Աստված Սրբերի հետ այսպես է վարվում, ուրեմն մենք նույնպես, չնայած մեր տկարությանը, չպետք է վհատվենք, եթե երբեմն եռանդուն ենք, իսկ երբեմն էլ՝ ցամաք: Որովհետև Տիրոջ Հոգին գալիս է ու գնում Իր կամքի համաձայն: Ահա այս էր Հոբ Նահապետի հետևյալ խոսքերի իմաստը.* «Արշալույսին այցելում ես մեզ, իսկ երեկոյան՝ փորձություններն ուղարկում» *(Հոբ* 7, 18*):*

5. *Ո՞ւմ կարող եմ հուսալ, ո՞ւմ ապավինել, եթե ոչ՝ Աստծո անհուն գթությանն ու երկնային շնորհին: Որովհետև, այո՛, բարի մարդիկ, առաքինի միաբանակիցներ ու մտերիմ ընկերներ են ինձ շրջապատում. այո՛, հոգևոր գրքեր ու հոգեստիպ գրություններ եմ ընթերցում. այո՛, ախորժալուր մեղեդիներ եմ ունկնդրում. բայց նաև տեսնում եմ, որ այս բոլորը գրեթե անօգուտ է, եթե շնորհը չունենամ և լքվեմ տկարությանս մեջ: Այսպիսի դեպքերում խոնարհ համբերությունից և Աստծո ամենասուրբ կամքին համակերպվելուց ավելի արդյունավետ դեղամիջոց չկա: Չեմ տեսել մեկն այնքան աստվածապաշտ ու կատարյալ, որ երբևէ ենթարկված չլինի շնորհազրկման դառնությանն ու եռանդի նվազմանը: Չկա մի Սուրբ, որ դեպի երկնալաց բարձունքները սավառնած և մտքի բազում լուսավորումներով ճոխացած լինելով հանդերձ՝ կրած չլինի փորձություններ, վաղ թե ուշ: Որովհետև Աստծո տեսությանը բարձրանալու արժանի չէ նա, ով ի սեր նույն Աստծո չի կրել վիշտ ու նեղություն: Փորձությունները հաճախ գալիք քաղցր մխիթարություններն է, որ կանխանշում են: Երկնային մխիթարությունները փորձությունների դառնությունը զգացածների համար են.* «Հաղթողն է ճաշակելու», *ասում է Տերը,* «կյանքի ծառի պտուղներից» *(Հյտ* 2, 7*): Աստված մխիթարում է մեզ, որպեսզի նեղություններին դիմադրելու ուժեր ստանանք: Շուտով վրա են հասնում փորձությունները, որպեսզի չհպարտանանք: Որովհետև սատանան չի ննջում երբեք, և մարմնի ցանկությունները նույնպես մշտավառ են. մի՛ դադարիր պայքարի պատրաստվելուց, քանի դեռ զսպված չեն բոլոր թշնամիներդ:*

ԳԼՈՒԽ Ժ. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՐ

1.*Ինչո՞ւ ես հանգիստ կյանք փնտրում, երբ ծնվել ես աշխատելու համար: Ավելի համբերության վարժվիր, քան մխիթարության, ավելի խաչ կրելու, քան ուրախ վայելքների: Ո՞վ կմերժեր հոգևոր մխիթարություններն ու ուրախությունները, եթե ի վիճակի լիներ դրանք հարատևորեն վայելելու: Քանզի հոգևոր մխիթարությունները շատ ավելի գերազանց են, քան աշխարհի բոլոր զվարճություններն ու մարմնի բոլոր հեշտանքներն ի միասին: Աշխարհի վայելքներն ու զգվանքները միշտ ունայն են ու ամոթալի: Հոգևոր ուրախություններն են միայն բերկրալի ու վայելուչ, որովհետև առաքինություններից են բխում և մաքուր խղճին Աստծուց շնորհված պարգևներն են: Բայց ոչ ոք չի կարող երկարատև վայելել աստվածային մխիթարությունները, որովհետև փորձությունները երկար դադար չեն տալիս:* Մտքի թյուր ազատությունն ու չափն անցած ինքնավստահությունը արգելքներ են երկնային այցելության ճանապարհին:

Աստված մեծ բարեգործություն է կատարում մարդու հանդեպ, երբ ստիպում է նրան Իր մխիթարություններով. սակայն մարդն ապերախտ է, եթե ամեն բան Աստծուն չի վերագրում երախտագետ սրտով: Շնորհի բարիքները չեն հոսում մեր վրա, որովհետև ապերախտ գտնվեցինք դրանք պարգևողի հանդեպ և չբարձրացրեցինք դրանք մինչև իրենց սկզբնաղբյուրը: Շնորհին արժանի է նա, ով երախտագետ է Աստծո հանդեպ, որովհետև Աստված խոնարհին է տալիս այն, ինչ վերցնում է հպարտի ձեռքից:

2. *Աստված իմ, չեմ կամենում ունենալ այն միխթարությունները, որոնք զրկում են ինձ զղջման հուզմունքից. չեմ փափաքում հայեցողական այն կյանքը, որը կարող է ինձ հպարտության հասցնել: Որովհետև ինչ բարձր է, անպայման սուրբ չէ. ինչ քաղցր է, միշտ լավ չէ. ամեն բաղձանք մաքուր չէ և ինչը որ հարգված է մարդկանց կողմից, կարող է տհաճ լինել Քեզ: Սիրում եմ շնորհը, որն ինձ միշտ ավելի խոնարհ ու շրջահայաց է դարձնում և տրամադրում ինքնուրացման: Շնորհի պարգևով լուսավորված և նրանից զրկվելու պատժով փորձառու դարձած մարդը չի հանդգնում բարեգործություններն իր անձին վերագրել. ընդհակառակն, ավելի հստակ է տեսնում իր տկարությունն ու խեղճությունը: Տո՛ւր Աստծուն այն, ինչ Աստծուց ես ստացել, իսկ քոնը քեզ պահիր. պարգևած շնորհների համար շնորհակալ եղիր Աստծուն, իսկ քեզ վերագրիր հանցանքներդ և նրանց արժանի պատիժը: Միշտ վերջին տեղը գրավիր և քեզ կմատուցվի առաջինը, որովհետև բարձրը ցածրի վրա է հենվում: Մեծ Սրբերն Աստծո առաջ ամենաստորին մարդիկն էին իրենց համարում. այժմ նրանք այնքան ավելի մեծ են փառքով, որքան ավելի խոնարհ էին իրենց մտքում: Ճշմարտության լույսով ու երկնային փառքով լցված, նրանք այլևս չէին փնտրում աշխարհի սին փառքը: Աստծուն էին ապավինել, հետևաբար՝ չէին կարող հպարտության մեջ ընկնել: Ով իր ընդունած բոլոր բարիքները վերագրում է Աստծուն, չի փնտրում մարդկանց տված փառքը, այլ՝ երազում է այն փառքը, որն Աստված է տալիս իրեն (Հվհ 12, 43): Նրա միակ բաղձանքն այն է, որ իր և բոլոր մարդկանց սրտերում ամեն ինչից ավելի Աստված ճանաչվի ու փառաբանվի: Ամենափոքր պարգևն ամենամեծը համարիր, իսկ ամենահասարակը՝ առանձնաշնորհում: Եթե աչքիդ առջև ունենաս տվողի արժանապատվությունը, ամեն բան մեծ կտեսնես, որովհետև Աստծո բոլոր պարգևները վիթխարի են: Եթե նույնիսկ վշտեր ու նեղություններ ուղարկի քեզ, ընդունիր դրանք ուրախությամբ, որովհետև հոգուդ փրկության համար են: Եթե կամենում ես Աստծո շնորհը հոգուդ մեջ պահել, նախ երախտագիտությունդ հայտնիր արդեն իսկ տրվածների համար. իսկ եթե եր վերցնի պարգևը, համբերող եղիր: Աղոթիր, որ կրկին շնորհի այն. զգույշ և խոնարհ եղիր, որպեսզի նորից չկորցնես ստացածդ:*

ԳԼՈՒԽ ԺԱ. ՔՉԵՐՆ ԵՆ ՍԻՐՈՒՄ ՀԻՍՈՒՍԻ ԽԱՉԸ

1. *Շատերն են սիրում Հիսուսի երկնային Արքայությունը, բայց քչերն են կամենում կրել Նրա Խաչը: Շատերն են փափաքում վայելել Նրա միխթարությունները, բայց քչերն են սիրում Նրա Չարչարանքները: Շատերի բաղձանքն է Նրան սեղանակցելը, բայց քչերն են կամենում մասնակցել Նրա զրկանքներին: Շատերն են կամենում փառավորվել Հիսուսի հետ, բայց քչերն են հանձն առնում Նրա վշտակրությունը: Շատերն են հետևում Հիսուսին մինչև հացի բեկումը, բայց քչերը՝ մինչև ճաշակումը Չարչարանաց բաժակի: Շատերն են հիանում Նրա հրաշքներով, բայց քչերն են հետևում խաչի նախատինքներին: Շատերն են սիրում Հիսուսին, բայց քանի դեռ նեղություններ չեն կրում: Շատերն են օրհնում ու փառաբանում Նրան, քանի դեռ միխթարություններ են ընդունում Նրանից:*

Բայց հազիվ է Հիսուսը մի քիչ հեռանում կամ լքում իրենց, իսկույն փրփնջում են և հուսալքվում:

2.*Ովքեր Հիսուսին Հիսուսի համար են սիրում, և ո՛չ թե՝ անձնական մխիթարությունների ակնկալությամբ, օրհնում են Նրան նաև վշտերի բովում, սրտի անձկության մեջ, ինչպես որ սովոր են վարվել մեծ մխիթարությունների պահին: Եվ եթե չպար իրենց գեթ մի մխիթարություն անգամ, կշարունակեին օրհնել Նրան և երախտապարտ կմնային Նրա հանդեպ: Որքա՜ն հզոր է Հիսուսի հանդեպ մաքուր սերը, երբ զրված է անձնասիրությունից ու անձնական շահերից: Մի՞թե վարձկաններ կոչվելու արժանի չեն նրանք, ովքեր շարունակ մխիթարություններ են միայն ակնկալում ունենալ: Մի՞թե Հիսուսից ավելի իրենց անձը չեն սիրում նրանք, ովքեր իրենց անձնական շահի համար են աշխատում միայն: Որտե՞ղ կարելի է գտնել մի վեհանձն հոգի, որ Աստծուն սիրի ի սեր Աստծո միայն:*

3. *Հազվադեպ են այնպիսիք, որոնք այնքան են առաջադիմում հոգևոր կյանքում, որ ամբողջովին հրաժարվում են իրենց անձից: Ո՞վ կարող է գտնել հոգով ճշմարիտ աղքատին, որն ամբողջովին ձերբազատված կլինի արարածներից. նրան շա՜տ հեռվում է պետք փնտրել, մինչև աշխարհի ծայրը: Եթե մեկն իր ամբողջ ունեցվածքը տա, դեռ չի տվել ոչինչ: Եթե ծանրածանր ապաշխարանքներ հանձն առնի, տակավին քիչ է: Եթե յուրացնի բոլոր գիտություններն անգամ, հեռու է դեռ նպատակից: Եթե մեծամեծ առաքինություններ ունի և աստվածապաշտություն, շատ բաներ են դեռ պակասում իրեն, պակասում է կենսականը. հրաժարվելով բոլոր վայելքներից՝ ուրանա իր անձը և սիրտը ներքուստ դատարկի ամեն տեսակ անձնահաճությունից: Իսկ եթե կատարի այն ամենն, ինչ պետք է աներ, կրկին թող համոզվի, որ արածը ոչինչ է: Թող մեծ չհամարի այն, ինչ կարող է մեծ կարծվել, այլ՝ ամենայն անկեղծությամբ թող խոստովանի իր անպետքությունը, Հիսուսի հետևյալ խոսքի համաձայն. «Երբ կկատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե անպիտան ծառաներ ենք» (Ղկս 17, 10): Մարդ այդժամ է միայն հոգով աղքատ և անջատ բոլոր արարածներից, և հնարավորությունն ունի կրկնելու Մարգարեի հետ. «Աղքատ եմ ես և աշխարհում միայնակ» (Սղմ 24, 16): Բայց չկա ավելի հարուստ ու ավելի հզոր մեկը, քան նա, ով գիտի հրաժարվել իր անձից ու ամեն ինչից և խոնարհվել մինչև հետին նվաստություն:*

ԳԼՈՒԽ ԺԲ. ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՈՒՂԻՆ

1.*Շատերին խիստ է թվում այս խոսքը. ուրացի՛ր անձդ, ա՛ռ խաչդ և հետևիր Հիսուսին: Բայց շատ ավելի խիստ է լինելու դատաստանի օրը լսվելիք այս մյուսը. «Հեռացեք ինձնից, անիծյալներ, և հավիտենական կրակների մեջ գնացեք» (Մտթ 25, 41): Սակայն նրանք, ովքեր այժմ սիրով ընդունում են Խաչի հրավերը և փարվում են Խաչին, չեն վախենում հավիտենական դատավճռից: Խաչի նշանն է հայտնվելու երկնքում, երբ Հիսուսը գալու է դատելու: Այնժամ Խաչի ծառաները, որոնք խաչված Հիսուսի հետ խաչվեցին այս աշխարհում, անհուն վստահությամբ են մոտենալու Դատավորին:*

2.*Արդ, ինչո՞ւ ես վախենում Խաչին փարվելուց, երբ այն քեզ դեպի երկնային Արքայությունն է տանում: Խաչի մեջ է փրկությունը և պաշտպանությունը թշնամիներից, Խաչից է մեր հոգիների վրա հոսում երկնային բերկրանքը: Խաչի մեջ են մտքի ուժը, հոգու խնդությունը, առաքինության լրումն ու սրբության կատարելությունը: Առանց Խաչի՝ հոգու համար չկա ո՛չ փրկություն, ո՛չ էլ հույս փրկության: Ուրեմն, ա՛ռ խաչդ, հետևիր Հիսուսին*

և անվրեպ կհասնես հավիտենական կյանքին: Հիսուսը Խաչն ուսին քեզ օրինակ տվեց: Խաչի վրա մեռավ քո համար, որպեսզի դու նույնպես սիրով կրես խաչդ և զոհաբերվես նրա վրա: Եթե Հիսուսի հետ մեռնես, Հիսուսի հետ կապրես: Եթե մասնակցես Նրա չարչարանքներին, մասնակից կդարձնի քեզ Իր փառքին:

3. Ահա ամեն բան կախում ունի Խաչից և ամեն բան կայանում է լավ մեռնելու մեջ:

Խաչից և ամենօրյա հարատև զոհողությունից բացի, դեպի կյանք ու ներքին խաղաղություն տանող ա՛յլ ճանապարհ չկա: Գնա ո՛ւր ուզում ես, փնտրիր որքա՛ն որ ուզում ես. վերևում ավելի վսեմ, ներքևում ավելի ապահով ուղի չես գտնի, քան Խաչի ճանապարհը: Կարգադրիր ու տրամադրիր ամեն բան կամքիդ համաձայն, և դարձյալ, կամա թե ակամա, ունենալու ես վշտեր և Խաչը դիմավորելու է քեզ ամենուր: Որովհետև կամ ցավեր ես զգալու մարմնիդ մեջ, կամ անձկություններ՝ սրտումդ:

4. *Երբեմն Աստված Ինքն է թողնելու քեզ, երբեմն էլ բարեկամներդ են քեզ փորձելու, և վշտերիդ դարման կամ գեթ թեթևացում չես կարող գտնել, այլ՝ պետք է համբերությամբ կրես դրանք, մինչև որ Աստված կամենա վերցնել: Աստծո կամքն է, որ տառապենք առանց մխիթարություններ ակնկալելու: Կամենում է, որ համակերպվենք առանց վերապահության, և առավել մեծ խոնարհության հասնենք՝ վշտակրության գնով: Ոչ ոք իր սրտում ավելի վատ կերպով չի զգում Հիսուսի չարչարանքները, քան նա, ով կրում է նմանօրինակ տառապանքներ: Խաչդ, ուրեմն, միշտ պատրաստ է և քեզ է սպասում ամենուրեք:*

Ուր էլ գնաս, նրանից խուսափել չես կարող, որովհետև ամեն տեղ ինքդ քո համար արդեն իսկ ծանր խաչ ես:

Բարձրացիր դեպի վեր, մնա ներքևում, աչքերդ սևեռիր արտաքին կամ ներքին աշխարհների վրա. ամենուր Խաչ ես միայն տեսնելու: Հետևաբար, համբերիր Խաչին, եթե կամենում ես վայելել հոգուդ ուրախությունը և հասնել անթառամ պսակին:

5. *Եթե Խաչն ուրախությամբ կրես, նա փափաքածդ վախճանին կառաջնորդի քեզ, ուր չկա վիշտ ու տառապանք: Իսկ եթե այն տրտունջով կրես, ծանրածանր բեռ կդառնա քո համար, որի տակ կողբաս դառնակսկիծ: Եթե ինչ որ մի խաչ մերժես, իսկույն վրա կհասնի երկրորդը, առաջինից ավելի ծանր: Կարծում ես, թե կարող ես ազատվե՞լ Խաչից, որից ոչ մի մահկանացու չկարողացավ ազատվել: Ո՞ր Սուրբը երկրի վրա առանց խաչի ու նեղության ապրեց: Նույնիսկ մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր երկրային կյանքի ընթացքում մի ժամ անգամ չունեցավ առանց չարչարանքների ու վշտակրության:* «Պետք է որ Փրկիչը չարչարվեր ու հարություն առներ մեռելներից և այդպես մտներ Իր փառքի մեջ» *(Ղկս* 24, 26*): Ինչո՞ւ ես ուրեմն լքում Խաչի արքայական ուղին և փնտրում մեկ ուրիշը: Հիսուսի ամբողջ կյանքը խաչ ու մարտիրոսություն եղավ, իսկ դու հանգիստ և խաղաղություն ես փնտրում: Կսխալվես, որդյակ, չարաչա՛ր կսխալվես, եթե նեղություններից ու վշտերից բացի ա՛յլ բան ապասես այս կյանքից: Մեր այս մահկանացու պանդխտության ընթացքը լի է խեղճություններով, և շրջապատված՝ խաչերով: Մարդ որքան ավելի է առաջադիմում կատարելության մեջ, այնքան ավելի ծանր է գտնում իր խաչերը, որովհետև Աստծո սերը մեր սրտերում դառնացնում է աքսորի պատիժը:*

6.*Ով, սակայն, այսքան նեղություններ է կրում, զուրկ չի մնում նաև նրանց ընկերացող միխիթարություններից, որովհետև զգում է, որ խաչերը համբերությամբ կրելով բազմապատկում է իր արդյունքները: Երբ մեկը սիրով ու համբերությամբ է կրում Խաչը, արտաճմիկ վիշտը սփոփիչ ու քաղցր միխիթարության է փոխվում: Եվ որքան ավելի է վշտերով խոշտանգվում մարմինը, այնքան ավելի է հոգին զորանում ներքին շնորհներով: Հիսուսին նմանվելու նպատակով չարչարվելու բաղձանքը երբեմն այնքան հզոր է լինում, որ հոգին չի կամենում մնալ առանց վշտի ու նեղության: Որովհետև որքան ավելի ծանր վշտեր ու նեղություններ է կրում Աստծո սիրո համար, այնքան ավելի է սիրելի դառնում Աստծուն: Բայց սա ո՛չ թե մարդկային ուժերի, այլ՝ մեր անզոր մարմնում գործող Հիսուսի շնորհի արդյունքն է: Եվ ինչը որ մարմինը մերժում է ըստ բնության, ընդունում և սիրում է շնորհի ներգործությամբ:*

7.*Մարդկային բնությանը համաձայն չէ վշտակրությունը, նեղություններ սիրելը, մարմինը ձաղկելն ու ծառայության ենթարկելը, պատիվներից փախչելը, նախատիքներին սիրով համբերելը, սեփական անձն արհամարհելը և ուրիշներից նույնպես արհամարհվել կամենալը, ցավերին ու կորուստներին սիրով հանդուրժելը և աշխարհում հաջողություններ չփնտրելը: Եթե անձնական ուժերդ ի նկատի առնես, սրանք բոլորն էլ գերազանցում են քո կարողություններին: Իսկ եթե Տիրոջն ես ապավինել, Երկնքից զորություն կտրվի քեզ և խոսքիդ կհնազանդվեն աշխարհն ու մարմինդ: Եթե զինվել ես հավատքով, եթե հոգիդ պատսպարել ես Հիսուսի Խաչով, թշնամուցդ՝ սատանայից անգամ չես վախենա:*

8.*Որպես Հիսուսի բարի ու հավատարիմ ծառա՝ պատրաստ եղիր սիրով կրելու Տիրոջդ Խաչը: Նա քո սիրո համար հանձն առավ գամվել նրա վրա: Պատրաստվիր այս կյանքի ընթացքում հազարավոր վիշտ ու նեղություններ կրելու. սա՛ է կյանքի պայմանը, ո՛ւր էլ գնաս, ո՛ւմ էլ ապավինես: Պե՛տք է, որ այսպես լինի: Այս չարիքներին ու տառապանքներին ուրիշ դարման չկա, եթե ոչ՝ դրանք համբերությամբ կրելը: Ուրախությամբ խմիր Տիրոջ բաժակից, եթե կամենում ես Նրան բարեկամ լինել և մասնակցել Իր փառքին: Միխիթարությունները Աստծո կամքին հանձնիր. կպարգևի դրանք իրենց հարմար ժամանակին: Իսկ դու քեզ որպես բաժին ընտրիր չարչարանքը, և Նրանում գտիր անխառն միխիթարությունդ: Որովհետև երկրային վաղանցուկ տառապանքները, եթե նույնիսկ դրանք բոլորը միայն դու կրես, և ո՛չ իսկ նվազագույն համեմատությունն ունեն ապագա փառքի հետ, և ոչ էլ կարող են այն վաստակել (Հռմ 8, 18):*

9.*Երբ այնպիսի կատարելության կհասնես, որ ի սեր Հիսուսի նեղություններն անգամ քեզ քաղցր կթվան, համոզվիր, որ ամեն բան լավ է ընթանում և արդեն երկրում իսկ գտել ես Երկնքի Արքայությունը: Իսկ քանի դեռ տառապանքը ծանր է թվում քեզ և աշխատում ես խուսափել նրանից, դժբախտ կլինես և մերժածդ նեղությունն ամենուրեք կհալածի քեզ: Եթե համակերպվել ես ամեն ինչի, այսինքն՝ վշտի ու մահվան, ամեն բան լավ կընթանա քո համար և հոգիդ նույնպես կխաղաղվի: Նույնիսկ եթե Առաքյալի նման մինչև երրորդ Երկինք հափշտակվես, մի՛ մոռացիր, որ տակավին զերծ չես տառապանքներից. «Հայտնելու եմ նրան, թե որքա՜ն է չարչարվելու իմ անվան համար», ասում է Հիսուսը (Գործք 9, 16): Քեզ, հետևաբար, մնում է չարչարվել միայն, եթե Հիսուսի սերը քաղցր ես գտնում և Նրան ծառայել ես կամենում հավիտյան:*

10. Երանի՛ թե արժանի լինեիր Հիսուսի սիրո համար չարչարվելուն: *Ի՞նչ փառք պիտի ունենայիր, ի՞նչ հրճվանք պիտի պատճառեիր Սրբերին իրենց օրինակին հետևելով, ի՞նչ բարի օրինակ պիտի հանդիսանայիր մերձավորիդ համար: Մի հայացք նետիր շուրջբոլորդ. յուրաքանչյուր ոք համբերություն է քարոզում ու խրատում, բայց քչերն են կամենում վշտերի ենթարկվել: Ինչպիսի՜ ուրախությամբ պետք է նեղություններ կրես Հիսուսի սիրո համար, մինչ ուրիշներ բազում զրկանքներ են հանձն առնում աշխարհի համար: Իմացիր, որ անձիցդ շարունակ հրաժարվելով պիտի անցկացնես կյանքդ, և որքան ավելի մեռնես քո անձի համար, այնքան ավելի կապրես Աստծո համար: Ոչ ոք արժանի չէ երկնային բարիքների արժեքը հասկանալուն, եթե չի կամենում նեղություններ կրել ի սեր Հիսուսի: Աստծո համար ավելի հաճելի, հոգու համար ավելի օգտակար գործ չկա, քան վիշտն ու տառապանքը հանուն Հիսուսի սիրո: Եթե ընտրության հնարավորությունն ունենայիր, Հիսուսի համար տառապելը պետք է գերադասեիր բազում մխիթարությունների վայելքին, որովհետև խաչակրությամբ ավելի նման կլինեիր Փրկչին և ավելի կերպարանակից՝ Սրբերին: Մեր արժեքն ու առաքինություններում առաջընթացը չեն կայանում հոգևոր առատ մխիթարություններում, այլ՝ մեծագույն նեղություններին ու փորձանքներին համբերելու մեջ են գտնում իրենց արտահայտությունը:*

11. *Եթե մարդու փրկության համար տառապանքից ավելի լավ ու օգտակար ճանապարհ գոյություն ունենար, Հիսուսն անկասկած այդ ուղին կուսուցաներ մեզ Իր վարդապետությամբ և կյանքի օրինակով: Արդ, Հիսուսն Իր աշակերտներին ու հավատացյալներին հորդորում է Խաչը կրել.* «Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետևից» *(Մտթ* 16, 24*): Հետևաբար, ամեն բան կարդալուց և քննելուց հետո, սա է միակ եզրակացությունը.* «Բազում նեղությունների ու վշտերի բովից է պետք անցնել՝ Աստծո Արքայություն մտնելու համար» *(Գործք* 14, 21*):*

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՆԵՐՔԻՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա. ՀԻՍՈՒՍԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒ ՀԵՏ

1. *Հավատացյալը.* «Լսելու եմ այն ամենն, ինչ Տիրոջս ձայնն ասելու է սրտիս խորքում» *(Սղմ* 84, 9*):*

Երանի՜ այն հոգուն, որն իր սրտում ունկնդրում է Տիրոջ ձայնը և Նրա շուրթերից է ընդունում խոսքը քաղցրիկ մխիթարության: Երանի՜ այն ականջներին, որոնք հարատև ուշադիր են աստվածային մեղմիկ փսփսուքին, և որոնք մի կողմ են թողնում աշխարհի ժխորը: Երանի՜ նրան, ով դրսի աղմուկ աղաղակին անտարբեր, իր հոգու խորքում ականջ է դնում ճշմարտությունն ուսուցանող ձայնին: Երանի՜ այն աչքերին, որոնք իրենց հայացքը հառել են հոգևոր իրողությունների վրա, կամովին փակվելով ի տես արտաքին անցուդարձերի: Երանի՜ նրանց, ովքեր իջնում են դեպի խորքերն իրենց սրտերի, տևական ջանքերով նախապատրաստվելով ըմբռնմանը երկնային վեհ գաղտնիքների: Երանի՜ այն նվիրյալ հոգիներին, որոնք պատրաստակամությամբ են ծառայում Տիրոջը, իրենց հոգևոր վերելքի ճանապարհից հեռացնելով աշխարհային որևէ արգելք:

Քնիր այս բոլորը, հոգի իմ, և ամուր փակիր զգայարաններիդ դռները, որպեսզի կարողանաս ունկնդրել, թե ի՞նչ է ասում սրտիդ խորքում քո Տեր Աստվածը:

2. *Հիսուսը. Ահա իմ՝ Ամենասիրելիիդ խոսքերը. Ես եմ միակ փրկությունդ, խաղաղությունդ ու կյանքդ: Հաշտ ապրիր իմ հետ և կգտնես խաղաղությունը:*

Լքիր անցողիկ իրողությունները և փնտրիր այն, ինչն հավիտենական է: Ի՞նչ են ժամանակավոր վայելքները, եթե ոչ՝ սին պատրանք: Ինչի՞դ են պետք արարածները, եթե լքի քեզ Արարիչդ: Հրաժարվիր, ուրեմն, ամեն ինչից և ծառայիր Տիրոջդ, որպեսզի ժամանակավորին հաջորդի անանց իրական երանությունը:

ԳԼՈՒԽ Բ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՈՒՄ Է ԱՌԱՆՑ ԽՈՍՔԵՐԻ ԺԽՈՐԻ

1. *Հավատացյալը.* «Խոսիր, Տեր, ծառադ ահա լսում է Քեզ» *(1Թգ* 3, 10*): Ես Քո ծառան եմ, տո՛ւր ինձ պատվիրաններդ հասկանալու իմաստություն:* «Շուրթերիցդ բխած խոսքերով հմայիր ինձ, Աստված» *(Սղմ* 118, 38*):* «Խոսքերիդ ղողանջը թող արշալույսի ցողի նման հասնի ինձ» *(2Օր* 32, 2*):*

Իսրայելացիներն ասում էին Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեր հետ և մենք կլսենք քեզ. Աստված թող չխոսի, որովհետև կարող ենք մեռնել» *(Ել* 20, 19*): Ես, սակայն, այսպես չեմ աղոթում, Ասված իմ: Սամուել մարգարեի նման, խոնարհությամբ կարոտագին աղերսանքս առաքում եմ դեպի Քեզ.* «Խոսիր, Տեր, ծառադ ահա լսում է Քեզ»*: Ո՛չ Մովսեսը, ո՛չ էլ մարգարեները թող չխոսեն իմ հետ: Դո՛ւ միայն խոսիր իմ հետ, Տեր իմ, որովհետև Դո՛ւ ես ներշնչում ու լուսավորում մարգարեներին: Միայն Դո՛ւ կարող ես ողողել հոգիները ճշմարտության լույսով. մարգարեներն առանց Քեզ ի՞նչ կարող են անել:*

2. *Նրանք կարող են խոսքեր հնչեցնել, բայց լոկ խոսքերն ամուլ են: Վեհաշուք են մարգարեների պատգամները, բայց եթե Դու լուռ մնաս, նրանք ի զորու չեն լինի հուզելու սրտերը: Մարգարեներն ավանդում են մեզ գրություններ, բայց Դու ես բացահայտում դրանց գաղտնախորհուրդ իմաստները: Քարոզում են այլաբանորեն, մինչ Դու Ինքդ ես մեջտեղից վերցնում դրանք ծածկող քողը: Հոչակում են պատվիրաններդ, բայց Դու ես տալիս դրանք գործադրելու կարողությունը: Նրանք մատնանշում են ուղին, սակայն Դու ես պարգևում նրանով առաջ ընթանալու արիությունը: Նրանց գործն արտաքին է, մինչ Դու լուսավորում և կրթում ես սրտերը: Նրանք ջրում են, իսկ Դու՝ աճեցնում: Նրանք մեծաձայն աղաղակում են և հոչակում ճշմարտություններ, բայց Դու ես տալիս դրանք ըմբռնելու կարողությունը:*

3.*Թող ուրեմն Մովսեսը չխոսի իմ հետ, այլ միայն Դու, Տեր իմ, ճշմարտություն հավերժական, որպեսզի դժբախտությունը չունենամ մեռնելու նախքան որևէ բարի արդյունք տալս և խրատներդ անսեր կերպով լսելով՝ հոգիս չմնա կենսապարգև ջերմությունից զուրկ: Որպեսզի դատապարտության վճիռ չլինի իմ համար խոսքդ, ունկնդրված և չգործադրված, ճանաչված, բայց չսիրված, արժանահավատ ու հավատի, բայց արհամարհված:*

Խոսիր, ուրեմն, Տեր, որովհետև ծառադ լսում է Քեզ: «Ահա Դու խոսքեր ունես հավիտենական կյանքի» *(Հվի* 6, 69*): Խոսիր ու միխթարիր և օգնիր ուղղելու ընթացքս ի գովեստ, ի փառս և ի հավիտենական պատիվ Քո սուրբ Անվան:*

ԳԼՈՒԽ Գ. ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՀԱՐԿ Է ՈՒՆԿՆԴՐԵԼ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ

1. *Հիսուսը. Լսիր, որդյակ, իմ խոսքերը, խոսքերս մեղմ ու անուշ, որոնք գերազանցում են այս աշխարհի իմաստասերների ու գիտունների իմացականությանը:* «Իմ խոսքերը հոգի են և կյանք» *(Հվի* 6, 64*) և չեն ենթարկվում մարդկային չափանիշներին: Ուսուցումներս միտքդ մեծամտությամբ լցնելու համար չեն. հարկ է ունկնդրել դրանք լռությամբ, ընդունել՝ խոնարհությամբ ու սիրով:*

2. *Հավատացյալը.* «Երանի՜ նրան, Տեր, ում Դու Ինքդ ես դաստիարակում և կրթում ըստ Քո օրենքների, տալու համար անդորր դառնության օրերին» *(Սղմ* 93, 12-13*), այդպիսով լքված չթողնելով նրան երկրի վրա:*

3.*Հիսուսը. Սկզբից ևեթ ես կրթեցի Մարգարեներին և դեռ շարունակում եմ խոսել բոլորին. բայց շատերն են խուլ ձևանում ի լուր իմ ձայնի: Մարդկանց մեծամասնությունը*

նախընտրում է լսել ձայնն աշխարհի, քան իմ. ավելի սիրով հետևում են իրենց մարմինների քմահաճույքին, քան աստվածային կամքին: Աշխարհը խոստանում է բաներ ճղճիմ, և սակայն մարդիկ եռանդով են ծառայում նրան: Ես խոստանում եմ իրողություններ գերազանց ու հավիտենական, բայց նրանց սրտերը մնում են անզգա: Ո՞վ է այնպիսի պատրաստակամությամբ ծառայում ու հնազանդվում ինձ, ինչպիսի ջանասիրությամբ որ ստրկանում է աշխարհին ու նրա տերերին:

«Ամաչի՛ր, Սիդոն, գոչում է ծովը» *(Ես* 23, 4*): Ինչո՞ւ: Փոքրիկ շահի համար անգամ մարդիկ կատարում են երկարատև ուղևորություններ, մինչդեռ հավիտենական կյանքը ձեռքբերելու համար հրաժարվում են գեթ մի քայլ կատարել: Փոքրագույն շահն անգամ գրգռում է մարդկանց ախորժակը, ոչինչ գումարի համար ստորանում են ու կովում, մի անարժեք առարկայի կամ մի սին խոստման համար հանձն են առնում ծանր հոգնություններ օր ու գիշեր: Մինչ ավա՜ղ, անհամեմատելի բարիքի, անսպառելի վարձատրության, գերագույն պատվի ու անմայրամուտ փառքի ճանապարհին ծուլանում են և մանրիկ արգելքների առաջ անգամ ետ ընկրկում:*

4. *Ամաչի՛ր, ուրեմն, ծույլ ու դժգոհ ծառա, որովհետև նրանք ավելի պատրաստակամ են իրենց կորուստին, քան դու՝ փրկությանդ: Նրանց համար ունայնությունն ավելի շքեղ հրմայք ունի, քան քո համար՝ ճշմարտությունը: Եվ սակայն, քանի՜ցս անգամներ նրանք հուսահաբ են մնում իրենց ակնկալություններից, մինչ իմ խոստումն անխաբ է և երբեք չեմ մերժել և չեմ մերժի ինձ ապավինող հոգուն: Խոստացածս կտամ, ասածս կանեմ: Բավական է, որ մարդիկ մինչև վերջ հավատարիմ մնան սիրույս: Ես եմ վարձատրում բոլոր բարի գործերը, բայց նախ ծանր փորձությունների եմ ենթարկում աստվածասեր հոգուն:*

5. *Խոսքերս դրոշմիր սրտիդ խորքում և խորհրդածիր նրանց շուրջ, որովհետև նրանք քո համար անհրաժեշտություն են փորձության պահին: Ինչը որ չես հասկանում այժմ կարդալով, կըմբռնես, երբ այցելեմ քեզ: Երկու կերպերով եմ սովոր այցելելու իմ ընտրյալներին. փորձությամբ և մխիթարությամբ: Եվ յուրաքանչյուր օր կրկնում եմ այս երկու դասախոսություններս. առաջինով հանդիմանում եմ նրանց ախտերը, երկրորդով՝ քաջալերում եմ առաջադիմելու առաքինության ասպարեզում:*

Իսկ նա, ով լսում է իմ խոսքերը և արհամարհում դրանք, այդ իսկ նվաստ համարված խոսքերի համաձայն է դատվելու դատաստանի օրը:

6. *Հավատացյալը. Տեր իմ և Աստված իմ, Դու ես իմ միակ գանձը: Ո՞վ եմ ես, որ համարձակվում եմ խոսել Քո հետ: Ամենահետինն եմ ծառաներիդ մեջ, ողորմելի որդ եմ, և դե՛ռ ավելի խեղճ ու թշվառ, քան որքան գիտեմ կամ կարողանում եմ ասել: Հիշիր, ուրեմն, Տեր, որ ոչինչ եմ ես, արժեքավոր ոչինչ չունեմ և ընդունակ չեմ ոչ մի բարեգործության: Դու ես միակ բարին, արդարն ու սուրբը: Դու ես ամենակարողը, բաշխողը բոլոր շնորհների ու ձիրքերի, և բարության ձգտողներին կատարելության հասցնողը: Իրենց մեղքերի մեջ համառողներին ես միայն ձեռնունայն թողնում: Արդ, հիշիր ողորմություններդ, Տեր, և ճոխացրու այս խեղճ սիրտս շնորհներիդ զեղմամբ, Դու, որ չես կամենում կորուստը Քո արարածների:*

7.*Ինչպե՞ս կկարողանամ կրել այս թշվառ աքսորը, եթե ողորմությունդ ու շնորհդ չզորացնեն ինձ ու չմխիթարեն: Տեր, մի՛ թաքցրու ինձնից հայացքդ, մի՛ հեռաձգիր այնքա՞ն սպասված այցելությունդ. զովացրու հոգիս մխիթարությանդ ցողով, որպեսզի Քեզնից զրրկվելով՝ անջրդի հող չդառնա այն: Տեր, կամենում եմ կատարել Քո կամքը, կրթի՛ր ինձ: Ասա՛, ինչպե՞ս կարող եմ վարել մի կյանք, որ խոնարհ լինի ու Քեզ հաճելի: Որովհետև Դու ես ակունքն իմաստության, միայն Դու ես ճանաչում ինձ ամենայն ճշգրտությամբ: Աշխարհի ստեղծումից և իմ իսկ աշխարհի գալուց առաջ արդեն ճանաչում էիր ինձ:*

ԳԼՈՒԽ Դ. ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԱՊՐԵԼ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆԸ

1.*Հիսուսը. Որդյակ, ուղղամտությամբ ընթացիր, լի՛ ներկայությանս զգացումով, և սրտիդ պարզությամբ միշտ ինձ փնտրիր միայն: Ով ապրում է ճշմարտությունն ամեն ինչից վեր դասելով, նրան կպաշտպանեմ չար հանդիպումներից. ճշմարտությունը նրան կփրկի անօրենների խաբեություններից ու զրպարտություններից: Եթե քեզ որպես ազատագրող ունենաս ճշմարտությունը, ճշմարտապես ազատ կլինես և հաշվի չես առնի մարդկանց բամբասանքները և դրանց պատճառով չես մտահոգվի:*

2.*Հավատացյալը. Տեր, ճշմարիտ են խոսքերդ: Թող լինի ինձ, աղաչում եմ Քեզ, խոսքիդ համաձայն: Թող ճշմարտությունդ ինձ ուսուցանի, թող անշեղ պահի ու պահպանի ինձ ընդմեջ փրկության ուղու: Թող այն ազատի ինձ չարամետ ցանկություններից ու նպատակաշեղ կապվածություններից, որպեսզի կարող լինեմ սրտի աննկուն ազատությամբ ընթանալ Քո ընկերակցությամբ:*

3.*Հիսուսը. Ես կկրթեմ քեզ, – ասում եմ ե՛ս՝ Ճշմարտությունս, – կուսուցանեմ, թե ինչն է բարի և ինձ հաճելի: Ցավով, տհաճությամբ, զղջումով ու տրտմությամբ մտածիր մեղքերիդ շուրջ, և մի՛ կարծիր, թե քեզնից ինչ որ մի արժեքավոր բան ես ներկայացնում բարի գործերիդ պատճառով: Եվ իրոք, բազում կրքերի կապված և ենթակա մեղավոր մեկն ես: Քանի որ ոչնչից ես ստեղծված, ըստ բնությանդ իսկ ձգտում ես դեպի ոչինչը: Շուտով ես ընկնում, շուտով հաղթվում, շուտով խոովվում, շուտով կքվում հուսալքության բեռան ներքո: Ունեցածներիցդ ինչի՞ համար կարող ես հպարտանալ. մինչդեռ բազում պատճառներ ունես խոնարհվելու, որովհետև շատ տկար ես, կարծածիցդ և ըմբռնելու կարողությունիցդ շա՜տ ու շա՜տ ավելի տկար:*

4.*Թող, ուրեմն, կատարած գործերիցդ ոչ մեկը մեծ չթվա քեզ: Հավիտենական արժեքներից բացի, ուրիշ ոչինչ թող չթվա քեզ կարևոր, գնահատելի ու հիացման արժանի. ոչինչ մի՛ սեպիր մեծարելի, ոչինչ՝ բարձր, ոչինչ՝ իսկապես գովելի ու փափաքելի: Ամեն բանից ավելի՝ հավիտենական ճշմարտությունը սիրիր, և թող միշտ տհաճությանդ առարկան լինի բացարձակ նվաստությունդ: Ոչնչից այնքան մի՛ սարսափիր, ոչնչից այնքան մի՛ գարշիր ու խուսափիր, որքան մեղքերիցդ ու մոլություններիցդ, որոնք քեզ ավելի մեծ վնաս են հասցնում, քան որևիցէ ձախորդություն կամ սնանկացում գործարքներիդ մեջ:*

Ոմանք ընթանում են հոգևոր կյանքի արահետներում ո՛չ թե պարզությամբ, այլ՝ հետաքրքրությունից մղված, հանդգնաբար կամենում են հասու լինել գաղտնիքներիս, ուզում են քննել աստվածային խորհուրդներս, ... առանց գեթ մի փոքր մտածելու իրենց փրկության մասին: Բայց հազիվ թե երեսս մի կողմ եմ դարձնում այդպիսիներից, իսկույն փորձությունների ու մեղքերի մեջ են ընկնում, իրենց հետաքրքրասիրության ու հպարտության պատճառով:

5.*Որդյակ, վախեցիր Աստծո դատաստանից և սարսափիր Ամենակարողի ցասումից: Հետաքրքրությամբ մի՛ քննիր Բարձրյալի գործերը, այլ՝ ավելի անձիդ անօրենությունները զննիր, հազարավոր կերպերով գործված մեղքերդ և անհոգության մատնված բարեգործությունները, որոնք կարող էիր գործել: Ոմանք իրենց ջերմեռանդությունը ընթերցումների մեջ են լոկ կայացնում, ուրիշներ՝ պատկերների կամ արտաքին նշանների ու շարժումների: Շատերն անունս ունեն իրենց շուրթերի վրա, բայց շատ քիչ՝ իրենց սրտերում:*

Բայց կան նաև այնպիսիներ, որոնք մտքով ի վերուստ լուսավորված և իրենց միտումների մեջ մաքրագործված, շարունակ հավիտենական իրողություններին են ձգտում հասնել: Այդպիսիների համար մեծագույն տհաճություն է երկրային անցուդարձերի շուրջ սիրով զբաղելը, այդպիսիները ստիպված և չկամությամբ են բավարարում մարմնի կարիքները: Եվ այդպիսիներն են միայն, որ ի վիճակի են հասկանալու այն, ինչ իրենց ուսուցանում է ճշմարտության Հոգին: Որովհետև Հոգին է նրանց ուսուցանում երկրային իրողություններն արհամարհելու և երկնայինները սիրելու, աշխարհային արժեքներին չհետևելու և օր ու գիշեր Երկինքը փափաքելու գիտությունը:

ԳԼՈՒԽ Ե. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԻՐՈ ՋԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. *Հավատացյալը. Օրհնյալ ես Դու, Հայր երկնավոր, Հայր իմ Տիրոջ՝ Հիսուս Փրկչի, որովհետև հիշեցիր ինձ՝ անարժան ու խեղճ արարածիս: «Ո՛վ Հայր գթության և Աստված մխիթարության» (2Կր 1, 3), երախտագիտությունս եմ հայտնում Քեզ, որովհետև հակառակ լիակատար անարժանությանս, ժամանակ առ ժամանակ ափոփում ես ինձ անճառ մխիթարություններովդ: Օրհնում եմ Քեզ և փառավորում, Միածին Որդուդ և Մխիթարիչ Սուրբ Հոգուդ հետ, հավիտյանս հավիտենից: Տեր իմ և Աստված իմ, սիրույս միակ առարկան Դու ես, և երբ այցելում ես ինձ՝ գալով սրտիս մեջ, ամբողջ էությունս ցնծում է ներկայությանդ զգացումով: «Դու ես իմ փառքը, բերկրանքն իմ սրտի» (Սղմ 3, 4): Դու ես իմ հույսն ու ապավենը նեղության օրերին:*

2.*Բայց սիրույս տկավին տկար և առաքինությանս անհասուն լինելու պատճառով զգում եմ կարիքը Քեզնով զորանալու, մխիթարվելու: Արդ, այցելիր ինձ, առաջնորդիր և սովորեցրու սուրբ օրենքներդ: Ազատիր անձս չարամետ կրքերից և սրտիցս արտաքսիր անօրեն ցանկությունները, որպեսզի ներքուստ բժշկված և մաքրված՝ սիրեմ Քեզ, համբերությամբ կրեմ վշտերս և հարատևեմ անշեղ:*

3.*Հիսուսը. Մեծագույն արժեք է սերը, գերազանց բարիք: Չի կարոտում այլոց օգնությանը, ծանրակիր բեռները թեթևացնում է և անայլայլ հոգիով տանում կյանքի բոլոր անհավասարությունները: Սերը կրում է բեռներն առանց հոգնության և քաղցրացնում է*

ամեն տեսակ դառնությունները: Վեհ ու վսեմ է աստվածային սերը, սրբության ասպարեզում մղում է մեծագործությունների, խրախուսում է ձգտելու միշտ ավելի կատարյալին: Միրո անդադրում փափաքն է կատարելության ուղին, սերը չի շղթայվում երկրային ստորին իրողություններին: Սերը տենչում է ազատ լինել՝ զերծ մնալով երկրային կապերից, որպեսզի չմթագնի իր տեսողությունը, որպեսզի անցողիկ հարմարավետությունները չշեղեն իրեն ուղղության ճանապարհից, և որպեսզի չբեկվի վշտերի ծանրության ներքո:

Գոյություն չունի աստվածային սիրուց առավել քաղցրիկ իրողություն, առավել հզոր, առավել երկնասլաց ու վեհ, առավել սրտազեղ ու պանծալի, առավել զվարթ ու զվարթարար, առավել վեհանձն, առավել կատարյալ, լինի Երկնքում, թե երկրի վրա: Քանի որ սերը Աստծուց է բխում, չի կարող խաղաղություն գտնել ստեղծված իրողություններում, այլ միայն դրանց Արարչի մոտ:

4. *Միրող հոգին սլանում է, սավառնում, հրճվում. ազատ է և ոչ ոք չի կարող կասեցնել նրա ընթացքը: Տալիս է ամեն բան բոլորի համար, և իրեն հարկավոր ամեն բան գտնում է ամեն ինչում, որովհետև իր հանգիստը գտնում է այն Միակի մոտ, որը գերագույնն է ընդմեջ բոլոր բարիքների, և որից են սկիզբ առնում և բխում բոլոր բարիքները: Սերն ուշադրություն չի դարձնում պարգևին, այլ ամեն ինչից վեր՝ ուղղվում է դեպի Պարգևողը: Սերը սահման չի ճանաչում, բռնկում ու հրդեհում է առանց չափի զգացման: Սերը չի զգում բեռան ծանրությունը, կարևորություն չի ընծայում իր վշտակրություններին ու հոգնություններին. եթե հնարավոր լիներ, կուզենար կատարել նաև այն, ինչը գերազանցում է իր ուժային սահմաններին: Անկարելիության մասին չի մտածում, որովհետև ամեն բան թույլատրված և հնարավոր է համարում, քանի որ ինքը մաքուր է և դեպի սրբություններն է միայն ձգտում: Սերն իրեն ունակ է տեսնում սրբության ասպարեզից ներս որևէ մեծագործության, դրանցից շատերին է ձեռնարկում և նաև հաջողությամբ պսակում իր ընթացքը: Մինչդեռ ով չի այրվում Աստծո հանդեպ սիրով, ժամանակի ընթացքում նվաղում է և եր ընկրկում:*

5. *Սերն արթուն է և հսկում է միշտ, քնի մեջ անգամ ամբողջովին չի թմրում: Աշխատում է հոգնաշատ, բայց ուժասպառ չէ կամ ձանձրացած. նեղված է, բայց չի տագնապում. սպառնում են իրեն, բայց ինքը չի այլայլվում, այլ՝ հրաշեկ բոցի նման խոյանում է դեպի Երկինք, ճանապարհ բացելով ընդմեջ բազում արգելքների: Ով սիրում է, նա է ի վիճակի ըմբռնելու իմաստը սիրո կանչի: Միրով բորբոքված սրտի իղձերը հզոր ձայնի նման բարձրանում են մինչև ունկերն աստվածային և աղաղակում.* «Աստված իմ, Սեր իմ, Դու ամբողջովին իմն ես, իսկ ես՝ ամբողջովին Քոնը» *(Երգ* 2, 16*):*

6. *Հավատացյալը. Ընդարձակիր հոգիս սիրովդ, Տեր, որպեսզի սրտիս բերանով կարողանամ ճաշակել ու հասկանալ, թե քանի՞ցս քաղցր է Քեզ սիրելը, սիրույդ մեջ նետվելն ու ընկղմվելը: Թող որ սերդ իր սաստկությամբ ու հմայքով հափշտակի ինձ և աշխարհի քաղցրիկ մոռացության մեջ՝ վերացնի ինձ դեպի Երկինք: Թող ես սաղմոսեմ օրհներգը սիրո, և թող հեգքերովդ առաջնորդվելով՝ երկնաճեմ բարձունքներում հասնեմ Քեզ: Թող հոգուս ուժերը սպառվեն սիրույդ փաղերը երգելով, երանավետ հրճվանքով եղանակելով սիրույդ գովքը: Թող Քեզ ինձնից էլ ավելի սիրեմ, իսկ ինձ՝ միայն Քո համար, և թող Քեզնում սիրեմ բոլոր նրանց, ովքեր իրոք սիրում են Քեզ, համընթաց սիրույդ օրենքին, որը նույնպես ճառագայթում է Քեզնից:*

7.*Հիսուսը. Սերը սրբնթաց է ու անկեղծ, հեզ ու համեստ, խնդուն ու զվարթերես, հզոր, համբերատար, հավատարիմ, խոհեմ, հարատև, քաջարի: Սերն իր մասին չի մտածում երբեք:* Որովհետև երբ ինչ որ մեկը սկսում է փնտրել իր իսկ անձը, նույն պահին նեթ դադարում է սիրելուց: *Սերը զգույշ է ու շրջահայաց, խոնարհ և ուղղամիտ, սանձարձակ չէ և ո՛չ էլ թեթևամիտ: Ասպվածային սիրո շնորհիվ զտված հոգում անհնար է գտնել հակում դեպի ունայնությունները: Սերը զգաստ է, ջինջ ու ողջախոհ, աննկուն, հանդարտ, և մեծ տիրապետություն ունի զգայարանների վրա:*

Սերը ենթակա է ու հնազանդ մեծավորներին, նվաստ ու պահարակելի՝ ինքն իր աչքին, պարկեշտ է և երախտագետ Ասծո հանդեպ, որին է միայն վստահում և որի վրա է հաստատել իր հույսը, նաև երբ չի զգում Նրա քաղցրությունը, որովհետև առանց վշտակրության անհնար է ապրել սիրո մեջ:

8.*Ով տրամադիր չէ տառապանքին և Սիրեցյալի կամքի կատարմանը, արժանի չէ աստվածաստեր կոչվելուն: Ով սիրում է, պարտավոր է Ասծո սիրո համար համակամությամբ ընդունել նեղություններն ու դառնությունները, և պետք է հավատարիմ մնա Նրան ընդմեջ բոլոր հնարավոր հակառակությունների:*

ԳԼՈՒԽ Զ. ԻՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

1.*Հիսուսը. Որդյակ, սերդ տակավին խոր և հզոր չէ:*

2.*Հավատացյալը. Ինչո՞ւ, Տեր:*

3.*Հիսուսը. Որովհետև փոքր ընդդիմության պատճառով իսկ լքում ես սկսածդ գործը և մխիթարություններ փնտրում անհագ փափաքով: Հզոր սեր ունեցողը անտեղիտալի է մնում ընդդեմ փորձությունների և հավատք չի ընծայում թշնամու նենգ հրապույրներին: Ինձ սիրող սիրտը հավատարիմ է ինձ և՛ հաջողությունների, և՛ ձախորդությունների մեջ:*

4.*Գիտակից և խոհուն սեր ունեցողը պարգևատուի սիրույն է ուշադրություն դարձնում, ավելի՝ քան պարգևին: Պարգևից ավելի՝ հմայում է նրան սերը շնորհողի, և բոլոր բարիքները նրա համար ստորադաս են, քան իր Սիրելին: Ազնվական սեր ունեցողը չի գոհանում պարգևներովս, այլ նրանցից ավելի վեր՝ բարձրանում է մինչև ինձ: Ամեն բան կորած մի՛ համարիր, եթե իմ և Սրբերիս հանդեպ ունեցածդ ջերմ եռանդը երբեմն կամքիդ համաձայն կենդանի չէ: Այն գողտր ու քաղցրիկ սերը, որ երբեմն զգում ես, պտուղն է շնորհի ներկայության, և մի տեսակ համտես է երկնային հայրենիքի: Բայց նրան շատ մի՛ կապվիր, որովհետև գալիս է ու գնում: Մինչդեռ մեծ առաքինության նշան են հոգու չարամետ ցանկությունների դեմ մարտնչելը և մերժումն ու արհամարհանքը սատանայի թելադրանքների հանդեպ:*

5.*Մի՛ խոովվիր, հետևաբար, երևակայությունիցդ ներս խուժած օտարոտի ցնորքների պատճառով: Կյանքիդ իբրև միակ նպատակ ունեցիր Ասծուն և հաստատաքայլ ընթացիր դեպի այդ նպատակը: Պատրանք չէ, եթե երբեմն հանկարծահաս հափշտակություններ*

ունենաս, ապա իսկույն կրկին ընկնես միտքդ զբաղեցնող սովորական մտածումների մեջ: Որովհետև դու ինքդ չես փնտրում այդ վերջինները, այլ՝ կրում ակամա: Եվ քանի դեռ տհաճ են քեզ և դիմադրում ես դրանց, արժանիքի աղբյուր են քո համար, և ո՛չ թե՝ պատճառ կորըստյան:

6. *Իմացիր, որ հին թշնամին՝ սատանան, ճիգ ու ջանք չի խնայում բարի փափաքներդ խափանելու և բարեպաշտ հրահանգներից քեզ հեռացնելու համար. այսինքն՝ Սրբերի բարեխոսությունը հայցելուց և նրանց օրինակին հետևելուց, չարչարանքներիս ու մահվանս շուրջ խորհրդածելուց, մեղքերդ մտաբերելու օգտակար վերհիշումից, սրտիդ պահպանման գործում զգուշությունից, և առաքինության ասպարեզում առաջադիմելու հաստատուն որոշումից: Բազում այլանդակ ու գեղազուրկ մտածումներ է արթնացնում քեզնում՝ վախ ներշնչելու, բարկացնելու ու ձանձրացնելու, հուսահատության հասցնելու և վերջիվերջո աղոթքից ու հոգևոր ընթերցումներից քեզ կտրելու համար: Խոնարհ խոստովանանքը տհաճ է իրեն, և եթե կարողանար՝ կստիպեր քեզ հեռու մնալ նաև Հաղորդությունից: Մի՛ հավատա նրա ոչ մի խոսքին, մի՛ վախեցիր նրանից, նույնիսկ երբ կամենա համառությամբ քեզ որոգայթների մեջ բռնել: Իրեն վերագրիր այն բոլոր հրեշային և սուրբ սրտին նողկանք պատճառող մտածումները, որ հուզում են միտքդ, և ասա. «Հեռացի՛ր ինձնից, պիղծ ոգի, ամաչի՛ր, թշվառական: Քանի՞ցս անմաքուր ես, տականք, որ հանդգնում ես նմանօրինակ խոսքեր փսփսալ ականջիս: Հեռացի՛ր ինձնից, չար ու մոլորեցնող ոգի, դու ինձնից բաժին չունես, այլ՝ իմ հետ է Հիսուսը, որպես քաջ պատերազմող, իսկ դու մնալու ես պարտված: Նախընտրում եմ մեռնել կամ կրել որևէ տառապանք ու տվայտանք, քան խորհուրդներիդ տալ կամքիս հավանությունը: Համբացի՛ր և լո՛ւռ մնա, կեղծավոր խաբեբա, քեզ այլևս չեմ լսում, որքան էլ որ նեղություն պատճառես ինձ:* ”Տերն է իմ լույսն ու փրկությունը, ես ումի՞ց պիտի վախենամ: Եթե թշնամու բանակն անգամ պատերազմի իմ դեմ, դարձյալ չեմ վախենա, որովհետև Տերն է իմ փրկիչն ու օգնականը” *(Սղմ* 26, 1-3*)»:*

7. *Մարտնչիր արիասիրտ զինվորի նման: Եթե տկարությանդ պատճառով երբեմն ընկնես, հույսդ ապտվածային օգնության վրա դնելով՝ կրկին կորով առ, զգուշանալով հանդերձ հպարտությունից և սին անձնահաճությունից: Այս հպարտության պատճառով շատերն են մոլորվում կամ ընկնում անբուժելի կուրության մեջ: Թող որ իրենց ուժերին հիմարաբար ապավինող այս ամբարտավանների անկումը քո համար զգոնության և խոնարհության առիթ*
լինի:

ԳԼՈՒԽ Է. ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, քո համար ավելի օգտակար է և ավելի ապահով՝ թաքցնելը եռանդիդ սովորականից ավելի աստիճանը: Դա ձրի պարգև է, դրա համար մի՛ հպարտացիր, շատ մի՛ խոսիր և մի՛ մտածիր դրա մասին, այլ ավելի՝ արհամարհիր անձդ և պատկառիր շնորհից, որին անարժան ես: Շատ մի՛ կապվիր այդ զգացումին, որովհետև քիչ ժամանակ անց կարող ես հայտնվել ընդմեջ ամբողջովին հակընթաց զգացումների: Երբ վայելում ես շնորհի ներկայությունը, մտածիր, թե որքա՜ն թշվառ էիր լինելու առանց նրա: Հոգևոր կյանքում առաջադիմելը ո՛չ այնքան ստեպ մխիթարվելու, որքան մխիթարություններից զրկվելը համբերությամբ, խոնարհությամբ ու անձնուրացումով*

տանելու մեջ է կայանում, որպեսզի չթուլանաս աղոթքի և հոգևոր հրահանգների կատարման մեջ: Կարողությանդ և ընդունածդ մտային լուսավորումների համաձայն, արա՛ ինչ կարող ես, և սրտիդ ցամաքության կամ անձկության պատճառով մի՛ անտեսիր հոգիդ:

2. *Շա՜տ շատ են այնպիսիները, որոնք երբ չեն կարողանում իրենց գործերին տալ իրենց հաճելի ընթացքը, իսկույն կորցնում են համբերությունը և մատնվում անհոգության:* «Մարդ միշտ չէ, որ տերն է իր ճանապարհների» *(Եր* 10, 23*): Ասպվածային անկապտելի իրավունքս է պարգևատրելն ու մխիթարելը ե՛րբ և որքա՛ն կամենում եմ, ո՛ւմ կամենում եմ և ինչպե՛ս կամենում եմ. ո՛չ ավելի: Որոշ անխոհեմներ և խոհեմներից խորհուրդ չհարցնողներ իրենք իրենց կործանեցին հենց իրենց ստացած շնորհների պատճառով, որովհետև կամեցան անել ավելին, քան կարող էին, առանց հաշվի առնելու իրենց սահմանները, հետևելով իրենց տաքարյունությանը ավելի, քան բանականության որոշումներին: Եվ քանի որ հավակնում էին հասնել առավել մեծ գործերի, քան իմ կողմից իրենց համար սահմանվածները, շուտով կորցրեցին շնորհը: Զքավոր ու նվաստացած մնացին բոլոր նրանք, ովքեր մտովին իրենց բնակությունն արդեն իսկ հաստատել էին Երկնքում, որպեսզի իրենց խեղճության ու թշվառության մեջ սովորեն չսավառնել սեփական բգկտված թևերով, այլ՝ ապահովություն գտնեն իմ թևերի հովանու ներքո: Սկսնակները և Տիրոջ ճանապարհներին անփորձները հեշտորեն են խաբվում և անդնդակործան գահավիժում, եթե չեն կամենում հետևել խոհեմ անձանց խորհուրդներին:*

3. *Եթե կամենում են առավել իրենց սեփական կարծիքին հետևել, քան վստահել Սրբերի փորձառությանը, եթե համառում են իրենց աշխարհայացքի մեջ և տեսակետներում, միշտ ողբալի է եղել և շարունակելու է այդպիսին լինել նրանց վախճանը: Իրենք իրենց իբր իմաստուն մեծարողները քիչ անգամներ են հանդուրժում ուրիշներից կառավարվել: Գերադասելի է խոնարհ լինել սահմանափակ մտքով ու ճանաչողությամբ, քան թե գիտության մեծագույն գանձեր ունենալ ունայն անձնահաճությամբ հանդերձ: Նախընտրելի է, որ քիչ ունենաս, քան շատ, որովհետև վերջինս ստեղծում է նաև հպարտանալու վտանգ: Բավական խոհեմությամբ ու հավասարակշռությամբ չի գործում նա, ով ամբողջովին անձնատուր է լինում ուրախությանը, ով մոռացության է մատնում իր նախկին չքավորությունը, ինչպես նաև Աստծո սուրբ երկյուղը, որը վախենում է ընդունած շնորհի դեռ հնարավոր կորստից: Եվ ո՛չ իսկ առաքինության բավարար քանակ է ցուցաբերում նա, ով վհատվում է ձախորդությունների և որևիցէ վշտակրության ժամանակ, իմ մասին խորհելով ու մտածելով նվազ վստահությամբ, ինչը որ վայել չէ:*

4.*Ով խաղաղության ժամանակ իրեն չափազանց ապահով է զգում, պատերազմի օրերին սովորաբար ներկայանում է իբրև մեկը երկչոտ ու անարի: Եթե կարողանայիր ներքնապես՝ մտքերիդ մեջ խոնարհ մնալ ու համեստ, եթե կարողանայիր կարգուկանոնի բերել ու կառավարել հոգևոր ապրումներդ, այսքա՞ն հեշտորեն չէիր ընկնի վտանգի ու մեղքի մեջ: Երբ զգում ես քեզնում եռանդն իր ամբողջ լիությամբ, խոհեմ եղիր և մտածիր, թե արդյոք ի՞նչ կլինեիր առանց իմ այդ լույսի: Իսկ երբ իսկապես սկսի աղոտանալ այդ լույսը, մտածիր, որ այն կարող է դեռ վերադառնալ, մտածիր, որ ես ինքս առկախեցի նրա հոսքը դեպի հոգիդ, քո իսկ բարիքի և իմ փառքի համար:*

5. *Այս փորձությունը քեզ ավելի օգտակար է, քան եթե ամեն բան կամքիդ համաձայն ընթանար: Հոգևոր արժանիքների մակարդակը չի չափվում այն փաստով, թե մեկը որքա՞ն հաճախակի տեսիլքներ ու միստիկություններ է ընդունում ի վերուստ, կամ թե որքա՞ն հիմուր է ու մասնագիտացած Սուրբ Գրքի վերաբերյալ հարցերում, կամ թե ի՞նչ աստիճան է զբաղեցնում հասարակության մեջ կամ եկեղեցական ոլորտներում: Արժանիքները գնահատող ու որակավորող կնիքն են իրական խոնարհությունն ու Աստծո հանդեպ տածվող լիակատար սերը, միմիայն և ամբողջովին և ամենուր Աստծո փառքի փնտրտուքը, սեփական անձի շուրջ անկեղծ նվաստ կարծիքը և գիտակցությունը իր անձնական ոչնչության: Հոգևոր արժեք ունի նա, ով այլոց կողմից արհամարհված ու նվաստացած վիճակում ավելի խաղաղություն ու գոհունակություն է վայելում, քան պատիվներով ճոխացած ժամանակ:*

ԳԼՈՒԽ Ը. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՄԵՐ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ

1. *Հավատացյալը. Համարձակվում եմ խոսել Տիրոջս հետ, չնայած հող եմ միայն ու մոխիր (Ծնդ 18, 27): Եթե կարծում եմ ինձ ավելին, քան եմ իրականում, ահա ճշմարտությունդ հանդիմանում է ինձ և անցյալ մեղքերիս հիշատակը նույնպես տալիս է արդարացի վկայություն, որի դեմ չեմ կարող առարկել: Իսկ ընդհակառակն, եթե նվաստ կարծիք կազմեմ անձիս շուրջ և ինձնից մի կողմ նետեմ անձիս հանդեպ մինչև այժմ ունեցածս հարգանքը, կոչելով ինքս ինձ հողի փոշի, ինչպիսին որ եմ իրականում. եթե ժպտա ինձ Քո շնորհը և սրտիս մոտենա լույսդ, անձիս նկատմամբ ունեցածս փոքրագույն մեծարանքն անգամ կխորասուզվի ոչնչությանս գիտակցության հատակը և կչքանա ի սպառ: Հայտնի՛ր ինձ անձիս էությունը. թե ի՞նչ եմ, թե ի՞նչ էի, և թե ո՛ւր եմ հասել:* «Որովհետև ոչինչ եմ, և սակայն մինչև օրս անգիտանում էի սա» *(Սղմ 72, 22): Եթե թողնվում եմ ինքս ինձ, պարզորոշ կերպով տեսնում եմ ոչընչությունս ու ամբողջական դյուրաբեկությունս: Բայց հազիվ ես դեպի ինձ ուղղում գեթ մի ակնարկ, իսկույն դառնում եմ հզոր և լցվում նորանոր զվարթությամբ: Եվ իրողություն է սա զարմանահրաշ, որ ոտքի եմ կանգնում այսքան ակնթարթային արագությամբ և ըստ մեծ բարությանդ՝ փարումներ և գորով գտնում Քեզնից, ես, որ վրաս ծանրացած բեռների պատճառով հակված եմ միշտ դեպի վար:*

2. *Սա արդյունքն է Քո Սիրո, և շնորհում ես ինձ ամբողջովին ձրիաբար, կանխելով ինձ, և ես դեռ չինդրած՝ օգնելով այնքա՞ն ու այնքա՞ն կարիքներիս մեջ, պահելով ինձ աղետալի վտանգներից և ազատելով իսկապես անթիվ ու անհամար չարիքներից: Կորստյան էի մատնել ինքս ինձ, մոլի կրքոտությամբ սիրելով անձս: Բայց զղջալով և միմիայն Քեզ փնտրելով և Քեզ սիրելով անկեղծությամբ, վերագտա ինքս ինձ և Քեզ ի միասին: Եվ շնորհիվ այս սիրո՝ է՛լ ավելի խոր կերպով գիտակից դարձա ոչնչությանս: Որովհետև Դու, ո՜վ Քաղցրագույն, բարեգործում ես ինձ, առավել՝ քան արժանի եմ, և դե՛ռ առավել՝ քան համարձակվում եմ հուսալ կամ խնդրել:*

3. *Օրհնյա՛լ ես, Աստված իմ: Թեև անարժան եմ Քո առատազեղ բարիքներին, բայց գիտեմ, որ ըստ վեհ մեծությանդ ու անսահման բարությանդ չես դադարում բարեգործել նաև ապերախտներին և համառ ու պնդագլուխ հակառակորդներիդ, տալով նրանց կյանք և դարձի հնարավորություն: Տուր մեզ, Աստված իմ, վերադարձ դեպի Քեզ, որպեսզի լինենք*

երախտագետ, խոնարհ ու ջերմեռանդ, քանզի Դու ես մեր փրկությունը, ուժն ու զորությունը:

ԳԼՈՒԽ Թ. ԱՍՏՎԱԾ՝ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԻՄԱՍՏԸ ԱՄԵՆ ԻՆՉԻ

1.*Հիսուսը. Որդյակ, եթե իսկապես կամենում ես երջանիկ լինել, որպես կյանքիդ նպատակ ինձ պետք է ունենաս: Այսօրինակ նպատակադրմամբ կմաքրագործվեն իղձերդ ու փափաքներդ, որոնք շատ հաճախ շեղվում են և ձգտում սիրելու անձդ ու արարածներին: Որովհետև եթե որևիցէ մի բանում փնտրես քո իսկ անձը, կենսաբեր ցրամադրությունների նվազում իսկույն կզգաս քեզնում և հոգիդ կցամաքի ու կանապատանա: Հետևաբար, ամեն բան կողմնորոշիր դեպի ինձ՝ իրենց ակունքին, որովհետև ես եմ պարգևել քեզ բոլոր բարիքները: Այսպես դիտիր բոլոր իրողությունները. իբրև սերում գերագույն Բարիքից, և հետևաբար՝ ուղղիր ամեն բան դեպի ինձ, իրենց բնօրրանին:*

2.*Ինձնից՝ կենարար Աղբյուրից են կենդանարար ջրեր քաղում փոքրն ու մեծը, աղքատն ու հարուստը. և նրանք, ովքեր ազատ հոժարությամբ ծառայում են ինձ, կստանան շնորհ շնորհի վրա: Իսկ ով կկամենա փառք գտնել ինձնից դուրս, կամ ուրախություն գտնել իմ կողմից պարգևված բարիքներից բացի ուրիշ ինչ որ մի բանում, չի կարողանա խաղաղվել ընդմեջ իրական հոգեզվարթության, և ո՛չ էլ՝ ընդարձակել իր սիրտը: Այլ՝ քայլ առ քայլ ավելի կսեղմվի ու կվշտանա: Բարիքներն, ուրեմն, քեզ մի՛ վերագրիր, և ո՛չ էլ առաքինությունները՝ մի որևէ մարդու, այլ՝ ամեն բան ուղղիր առ Աստված, առանց որի մարդը չունի ոչինչ:*

Ես քեզ տվեցի ամեն բան, կամենում եմ վերստանալ ամեն բան: Տվեցի ամեն բան, պահանջում եմ երախտագիտություն դրանց փոխարեն:

3. *Սա՛ է ճշմարտությունը, որ մոխրացնելով անէացնում է սնափառության հետքերը: Եվ եթե սրան դեռ ավելանան և միջամտեն երկնային շնորհն ու իրական սերը, անձիցդ ներս այլևս տեղ չեն գտնի նախանձն ու սրտի տառապանքը, և ո՛չ էլ եսասիրությունը կգալարվի քեզնում օձապտույտ: Ատծո Սերը հաղթում է ամեն ինչի և բազմապատկում է հոգու կարողությունները: Եթե միտքդ խոհեմորեն բանեցնես, ուրախությունդ և հույսդ իմ վրա միմիայն կհիմնես, որովհետև «ո՛չ ոք բարի է, այլ միայն Աստված» (Ղկս* 18, 19*), որ պետք է գովաբանվի գերիվեր ամեն ինչից և օրհնաբանվի ամեն ինչում:*

ԳԼՈՒԽ Ժ. ՔԱՆԻՑՍ ՔԱՂՑՐ Է ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏԾՈՒՆ

1.*Հավատացյալը. Արդ խոսելու եմ կրկին, Տեր, և չեմ մնալու լուռ: Բարձունքներում բազմող Տիրոջս ու Թագավորիս ու Աստծուս կամենում եմ ասել.* «Քանիցս զեղուն է, Տեր, Անունիցըդ երկնչողներին վերապահված քաղցրությանդ առատությունը» *(Սղմ* 30, 20*): Ուրեմն, դեռ ինչե՞ր ես պատրաստել նրանց համար, ովքեր սիրում են Քեզ և Քեզ սրտանց ծառայում: Իսկապես անճառելի է քաղցրությունը, որ բխում է Դեմքիցդ շողարձակող լույսը տեսնելուց, և որ պարգևում ես Քեզ սիրողներին միայն: Ահա սրանով ցույց տվեցիր ինձ քաղցրությունը Քո սիրո. գոյություն չունեի և ստեղծեցիր ինձ: Ապա, մինչ թափառում էի*

Քեզնից հեռու, Դու վերբստին մատնանշեցիր իմ առաջ ուղիղ ճամփան և առաջնորդեցիր ինձ դեպի այն, որպեսզի կարողանամ ծառայել Քեզ: Եվ սրանցից է՛լ ավելի գերազանց, հրամայեցիր ինձ սիրել Քեզ:

2. *Ո՛վ ակունք հավիտենական Սիրո, ի՞նչ տաղերով հյուսեմ գովքդ: Ինչպե՞ս կարող եմ մոռանալ Քեզ, Քեզ, որ հաճեցիր հիշել ինձ նաև երբ ապականված էի ու կործանված: Ողորմած եղար իմ հանդեպ առավել, քան բոլոր հույսերս, և շնորհդ ու մտերմությունդ պարգևեցիր ինձ գերիվեր, քան իմ արժանիքները: Ինչո՞վ կարող եմ փոխհատուցել այս մեծագույն պարգևդ, որովհետև իրոք բոլորին տրված չէ աշխարհից հրաժարվելու, ամեն բան լքելու և վանական կյանքը ընդգրկելու շնորհը: Բայց արտասովո՞ր բան պետք է համարել Քեզ ծառայելը, երբ յուրաքանչյուր արարած պարտավոր է ծառայել Քեզ: Ո՛չ, զարմանալի իրողություն չէ Քեզ ծառայելը: Այլ ապշում եմ ու հմայվում ի տես այն փաստի, որ Դու ընդունում ես ինձ որպես Քեզ ծառա և անունս արձանագրում ես սիրելիներիդ շարքում, ինձ՝ խեղճ անարժանիս:*

3. *Ահա՛, այն ամենը, որ ունեմ և որ կարող եմ հատկացնել ծառայությանդ, Քոնն են և պատկանում են Քեզ: Եվ մանավանդ, ամբողջովին հակառակն է ճշմարիտ. ես Քեզ այնքան չեմ ծառայում, որքան Դու ինձ: Ահա՛ երկինքն ու երկիրը, որոնք ստեղծեցիր ի ծառայություն մարդկանց, պատրաստ են և ամեն օր մշտարթուն կատարում են այն, ինչ հրամայել ես իրենց: Սա դեռ քիչ է. հրեշտակներին անգամ պատվիրեցիր պահպանել և ծառայել մարդուն:*

Բայց ո՛չ մի շնորհ իր գերազանցությամբ չի կարող հավասարվել այս մեկին. Դու Ինքդ կամեցար ծառայել մարդկանց և խոստացար տալ նրանց Քո Անձը:

4. *Ինչպե՞ս կարող եմ արդյոք հատուցել այս բոլոր բարիքներիդ փոխարեն: Երանի՜ թե կարողանայի ծառայել Քեզ ամբողջ կյանքիս ընթացքում: Երանի՜ թե գեթ մի օր միայն վայել ու արժանապատշաճ կերպով կարողանայի ծառայել Քեզ: Եվ իրոք, արժանի ես ընդունելու ամեն տեսակ ծառայություն, պատիվ և փառք և հավիտենական գովաբանություն: Իրոք, Դու իմ Տերն ես, իսկ ես՝ Քո ծառան, որ պարտավոր եմ ծառայել Քեզ իմ ամբողջ կարողությամբ, որ պարտավոր եմ երբեք չհոգնել Քեզ փառաբանելուց: Սա՛ է իմ կամքը, սա՛ եմ փափաքում: Դու Ինքդ լրացրու այն, ինչ պակասում է ինձ:*

5. *Մեծ պատիվ և փառք է Քեզ ծառայելը, արհամարհելով ամեն բան ի սեր Քո: Վիթխարի շնորհ կունենան Քո առաջ բոլոր նրանք, ովքեր կամովին կնվիրվեն սրբազնասուրբ ծառայությանդ: Սուրբ Հոգու քաղցրիկ մխիթարությունը կգտնեն բոլոր նրանք, ովքեր ի սեր Քո կհրաժարվեն մարմնական ստոր հաճույքներից: Հոգու անծայրածավալ ազատություն կգտնեն բոլոր նրանք, ովքեր ի սեր Քո կընթանան մատնանշածդ նեղ ճանապարհով, մի կողմ թողնելով աշխարհային մտահոգությունները: Ո՜վ հոգեստիպ և ուրախարար ծառայություն Աստծո, որի շնորհիվ է մարդն իրական ազատ և սուրբ դառնում: Ո՜վ նվիրական վիճակ վանական կյանքի, որ մարդուն դարձնում է հրեշտակներին համահավասար, Աստծուն՝ հաճո, սատանային՝ ահազդեցիկ, և պատվելի՝ բոլոր հավատացյալների համար: Ո՜վ ծառայություն միշտ փափաքելի և ընդգրկվելու արժանի, որի միջոցով ենք շահում գերագույն Բարիքը և ձեռքբերում անվախճան երանությունը:*

ԳԼՈՒԽ ԺԱ. ՀԱՐԿԱՎՈՐ Է ՏԻՐԱՊԵՏԵԼ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԵԼ ՄԵՐ ՓԱՓԱՔՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, դեռ շատ բաներ ունես սովորելիք, որոնք մինչ այժմ լավ չես ըմբռնել:*

2. *Հավատացյալը. Որո՞նք են դրանք, Տեր:*

3. *Հիսուսը. Պետք է իմ կամքին կատարելապես կերպարանակից դարձնես բոլոր փափաքներդ: Ո՛չ թե անձդ սիրող պետք է լինես, այլ՝ հետևող իմ կամքին: Հաճախ փափաքներդ այրում են քեզ և դեպի առաջ մղում բռնությամբ: Բայց դու ուշադիր և զգույշ եղիր, որ ավելի անձնական շահիդ հետամուտ չլինես, քան իմ փառքին: Եթե ես ինքս եմ մի որևէ փափաք արթնացնում քեզնում, ի՞նչ կերպով էլ տնօրինեմ եղելությունը, դու միշտ գոհ կլինես: Բայց եթե եսիդ մոխիրների ներքո թաքնված է մի կայծ անգամ անձնական շահի, տրտմալի արգելքներ կգտնես ճանապարհիդ և միշտ ու ընկճում:*

4. *Հետևաբար, զգույշ եղիր և շատ մի՛ կապվիր այն փափաքներիդ, որոնք հղացել ես ինքնուրույն, առանց ինձնից խորհուրդ հարցնելու, որպեսզի հետագայում չզղջաս, ձանձրանալով այն բաներից, որոնք սկզբում հաճելի էին քեզ և որոնք փափաքում էիր ունենալ, մեծարելով իբր լավագույններն ընդմեջ բոլոր իրողությունների: Իսկույն մի՛ հետևիր այն ազդակներին, որոնք թվում են բարի, ինչպես նաև անմիջապես մի՛ փախիր այն զգացումներից, որոնք թվում են չար: Բարեհիմն համակրանքի և սուրբ փափաքների դաշտում նույնպես հարկավոր է երբեմն չափավորում և արգելակների միջամտություն, որպեսզի եթե այդ զգացումները դեպքերի բերումով փոխվեն հակոտնյա կարծիքների, միտքդ չբռնադատվի ցրումներով, որպեսզի չափի զգացում չունենալուդ պատճառով գայթակղության առիթ չլինես այլոց համար, և որպեսզի այս վերջինների ընդդիմության դեպքում իսկույն չվրդովվես ու ընկնես:*

5. *Երբեմն պետք է բռնություն բանեցնես և կորովի դիմադրություն ցույց տաս զգայարանների հակումներին, ուշադրություն չդարձնես մարմնի քմահաճույքներին: Ամեն ջանք պետք է գործի դնես, որպեսզի մարմինը հպատակ մնա հոգուն, կարևոր չէ, թե դժգոհելով: Պետք է պատժես մարմինդ և ստրկության մեջ պահես, որպեսզի վարժվի ամեն ինչի, գոհանա քչով, արժևորի պարզությունը և չզայրանա ընդմեջ հակառակությունների:*

ԳԼՈՒԽ ԺԲ. ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հավատացյալը. Տեր իմ Աստված, ինչպես տեսնում եմ՝ համբերությունը անհրաժեշտություն է իմ համար, որովհետև այս կյանքում պատահում են շատ հակառակություններ: Ի՞նչ էլ անեմ, հետևաբար, որքա՞ն էլ հաճելի լինի իմ համար խաղաղ վիճակը, կյանքս չի կարող զերծ լինել պայքարներից ու վշտից:*

2. *Հիսուսը. Արդարացի ես, որդյակ: Բայց կամքս այն է, որ չփնտրես խաղաղություն առանց փորձությունների կամ ընդդիմության: Ավելին. կամենում եմ, որ խաղաղությունդ գտած զգաս քեզ, երբ փորձվում ես ընդմեջ զանազան վերիվայրումների ու անհանգստության: Եթե տրտնջում ես, թե չես կարողանում տանել այսքան, ինչպե՞ս ես համբերելու ուրեմն քավարանի կրակներին: Երկու անխուսափելի չարիքների մեջ, միշտ հարկավոր է ընտրել նվազագույնը: Արդ, որպեսզի զերծ մնաս ապագա հավիտենական տվայտանքներից, ջանա՛ի սեր Աստծո հանդուրժողությամբ ու հոժարությամբ կրել ներկա փոթորիկները: Թերևս կարծում ես, որ աշխարհը վայելողները կրում են քիչ կամ ոչի՞նչ: Չես գտնի այդպիսի ոչ որի, և ո՛չ իսկ ամենաշատ փափկացածների թվում:*

3. *Հավատացյալը. Բայց նրանք ունեն հաճույքներ և գոհացնում են իրենց ցանկությունները, հետևաբար՝ շատ ավելի նվազ են զգում վշտերի ծանրությունը:*

4. *Հիսուսը. Ենթադրենք, թե այդպես է, այսինքն՝ որ ունեն այն, ինչ ցանկանում են: Բայց որքա՞ն ժամանակ է, ըստ քո կարծիքի, տևելու այդ ամենը: Ահա ծխի նման անհետ կորչելու են աշխարհը վայելողները և նրանց անցյալ հաճույքների հիշատակն անգամ չի մնալու: Իրենց կենդանության օրոք էլ չեն ճաշակում այդ հաճույքներն առանց դառնության, ձանձրույթի ու վախի: Եվ հազվադեպ չէ նաև այն, որ իրենց հաճույքի աղբյուրը հանդիսացող իրողությունն իսկ դառնում է պատուհաս ու վիշտ: Ուրեմն արդար է, որ նպատակաշեղ կերպով հետևելով հաճոյամոլությանը, ամոթով ու դառնությամբ միայն հագենան:*

5. *Քանիցս կարճատև, կեղծ ու խաբուսիկ, անօրեն ու ամոթալի են այդ հաճույքները: Եվ սակայն, իրենց կուրության ու անզգայության պատճառով՝ մարդիկ չեն տեսնում ու չեն հասկանում, այլ՝ անբանական կենդանիներին նմանվելով, այս անցողիկ կյանքում ապրվող մի կարճատև հաճույքի համար ընդառաջ են ելնում և ընդունում իրենց հոգիների մահը:*
Դու, մինչդեռ, որդյակ, «մի՛ հետևիր անխտիր բոլոր ցանկություններիդ, զսպիր ու արգելակիր ախորժակներդդ» *(Սիր* 18, 30*)*, «մխիթարությունդ Տիրոջ մեջ գտիր և Նա գոհացում կտա օրինավոր բոլոր փափաքներիդ» *(Սղմ* 36, 4*)*:

6. *Եթե կամենում ես վայելել իրական ուրախությունը, եթե կամենում ես առատ մխիթարություններ ստանալ ինձնից, իմացիր, որ աշխարհային բոլոր իրողությունների արհամարհման և ստորին հաճույքներից անջատման մեջ կգտնես օրհնություն և զեղուն ափոփանք: Եվ որքան ավելի հրաժարվես արարածների կողմից պարգևված զվարճություններից, այնքան ավելի քաղցրիկ և ուժգին մխիթարություններ կգտնես ինձնում: Բայց չես կարող սկզբից ևեթ խաղաղության մեջ ճաշակել երկնայինը, չես կարող ճանապարհ հարթել քո համար առանց որոշակի տրտմության և հոգնաջան պայքարների: Դիմադրության կհանդիպես*
հին սովորության կողմից, բայց վատ սովորությունները վերջիվերջո կհաղթվեն բարի սովորություններով: *Մարմինը կըմբոստանա, բայց կսանձահարվի հոգու եռանդով: Հին օձը կգրգռի քեզ ու կդառնացնի, բայց փախուստի կմատնվի աղոթքի միջոցով, և սրտիդ կենտրոնական շքամուտքը նրա առաջ ամուր կփակես բարի ու ապրվածահաճո զբաղումներով:*

ԳԼՈՒԽ ԺԳ. ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

1.*Հիսուսը. Որդյակ, ով ցանկանում է հեռանալ հնազանդությունից, կամովին հեռանում է շնորհից, և ով ձգտում է ունենալ սեփական ունեցվածք, կորցնում է ընդհանուրը: Ով անկեղծությամբ ու պարզությամբ չի հնազանդվում իր մեծավորին, հայտնում է, թե իր մարմինը դեռ ամբողջովին ենթակա չէ հոգուն, այլ՝ հաճախ է դիմադրում և տրտնջում: Սովորիր, ուրեմն, պատրաստակամությամբ հնազանդվել մեծավորիդ, եթե կամենում ես տիրապետել մարմնիդ: Դյուրին է հաղթել արտաքին թշնամուն, երբ ներսում բացակայում են փոթորիկները: Անձիդ ամենավատթար ու վտանգավոր թշնամին դու ինքդ ես, երբ չես ապրում հոգևոր սկզբունքների համաձայն: Անհրաժեշտություն է, որ իրական արհամարհանք ունենաս ինքդ քո հանդեպ, եթե կամենում ես ստրկացնել մարմինդ ու արյունդ: Չափազանց վատ ինքնասիրությանդ պատճառով է, որ դժվարանում ես հնազանդվել մեծավորիդ:*

2.*Մի՞թե մեծ բան է, եթե ի սեր Աստծո հնազանդվում ես մի մարդու, դու՝ հողդ ու ոչընչությունդ, մինչ ես՝ Ամենակարողս ու Բարձրյալս, որ ոչնչից ստեղծեցի ամեն բան, խոնարհաբար ենթարկվեցի մարդկանց՝ ի սեր քո: Եղա ամենահեզն ու ամենավերջինը, խոնարհությամբս հպարտությանդ հաղթելու համար: Ո՛վ հողափոշի, սովորի՛ր հնազանդվել: Ո՛վ կավ ու մոխիր, սովորի՛ր խոնարհվել ու ոտնակոխ լինել բոլորի կողմից: Սովորի՛ր կոտրել անձնական կամքդ և անձնատուր եղիր հնազանդությանը:*

3.*Ձայրույթդ թող գրգռվի քո իսկ անձի դեմ և մի՛ թույլատրիր, որ բնակվի քեզնում մեծամտությունը. եղիր այնքան հնազանդ ու փոքր, որ բոլորը կարողանան քայլել վրայովդ և կոխկոտել հրապարակների փոշու նման: Ի՞նչ ունես բողոքելու, ոչնչից ստեղծված մարդ: Գարշելի մեղավոր, ի՞նչ կարող ես պատասխանել քեզ ամբաստանողներին, դո՛ւ, որ այնքա՜ն անգամներ գործեցիր ընդդեմ Աստծո և արժանացար դժոխքին: Եվ սակայն, խնայեցի քեզ և ողորմեցի, որովհետև հոգիդ արժեքավոր է իմ համար. կամեցա, որ ըմբռնես սերս և մշտապես երախտագետ լինես շնորհածս բարիքների համար, հոժարությամբ փարվելով իրական հնազանդությանն ու խոնարհությանը, համբերությամբ կրելով արհամարհվածի պարագաղ:*

ԳԼՈՒԽ ԺԴ. ԱՍՏԾՈ ԳԱՂՏՆԱԽՈՐՀՈՒՐԴ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ

1.*Հավատացյալը. Տեր, ահա ահեղագոչ բարբառով հոչակում ես իմ դեմ դատավճիռներդ, ահով ու դողով սարսռում են ոսկորներս և հոգիս նույնպես պատվում է սարսափով: Ապշած եմ մնում, երբ խորհում եմ, որ երկնաքաղաքացիներին անգամ չես համարում մաքուր: Եթե մեղք գտար հրեշտակների մեջ և նրանց դժոխքի դատապարտեցիր՝ մերժելով ներել, ի՞նչ է լինելու ուրեմն իմ հետ: Աստղերը երկնքից ընկան, ուրեմն ես՝ կավս ինչի՞ եմ հավակնում: Դեպի անդունդների խորքերը գահավիժեցին նաև նրանք, որոնց գործերը թվում էին գովելի. և նրանք, ովքեր ուտում էին հրեշտակների հացը, նրանց տեսա խոզերին նետվող կաղինով գոհանալիս:*

2.*Չկա ուրեմն սրբություն, երբ պակասում է քո օգնությունը, Տեր: Ոչնչի չի ծառայում իմաստությունը, երբ Դու դադարում ես առաջնորդել: Ոչինչ չարժե կամքի զորությունը, երբ*

Դու մերժում ես պահպանել այն հարարև: Խարխուլ են հիմքերը կուսության, եթե Դու չես պաշտպանում այն: Անօգուտ է զգուշությունը մեղքից, եթե բացակայում է հսկողությունը Քո կողմից: Որովհետև Քեզնից լքված, կլանվում ենք ու մեռնում: Մինչդեռ երբ այցելում ես մեզ, վերստին ոտքի ենք կանգնում և ապրում: Մենք իրոք հեղհեղուկ ենք ու դյուրափոփոխ, բայց Քեզնից ստանում ենք հաստատություն: Մենք գաղջ ենք, բայց Դու հրաշունչ ես դարձնում մեր եռանդը:

3.*Ա՜հ, քանի՜ցս խոնարհ ու նվաստ կարծիք պետք է կազմեմ անձիս շուրջ, ինչպիսի՜ անարժեքություն պետք է սեպեմ այն սակավ բարին, որ կարծում եմ, թե ունեմ: Ինչպիսի՜ կքմամբ պետք է խոնարհվեմ անըմբռնելի դատաստաններիդ առաջ, Տեր, մինչ տեսնում եմ ինձ ո՛չ այլ ինչ, եթե ոչ միայն՝ ոչինչ ոչնչության մեջ: Ո՜վ վիթխարի մեծություն, ո՜վ ընդարձակություն անանցանելի, ուր անհետանում եմ ինչպես ոչնչությունը ամբողջության մեջ: Ո՞ւր է ուրեմն ապաստանելու փառասիրությունը, ո՞ւր՝ վստահությունը, որ սնում էի առաքինություններիս հանդեպ: Ամեն տեսակ սին պարծանք ընկղմվեց դեպի խոր հատակը Քո ընդդեմ իմ տրված դատավճիռների:*

4.*Ի՞նչ է արդյոք մարդը Քո գնահատմամբ: Մի՞թե կավելեն անոթը կարող է պարծենալ բրուտի առաջ: Չի կարող ունայն խոսքերի պատճառով հպարտանալ նա, ում սիրտն իրոք ենթակա է Աստծուն: Աշխարհն ամբողջ բավական չէ դեպի հպարտություն մղելու նրան, ով հպատակ է ճշմարտությանը: Եվ անհնարին է մարդկային գովասանքներով հուզել սիրտը նրա, ով իր հույսն Աստծո վրա է միայն դրել: Եվ նրանք նույնպես, ովքեր խոսում են և գովաբանում մեզ, ոչնչություն են բոլորն էլ և կանէանան իրենց խոսքերի արձագանքի*
նման, «մինչդեռ Տիրոջ ճշմարտությունը տևում է հավիտյան» *(Սղմ* 116, 2*):*

ԳԼՈՒԽ ԺԵ.
ԸՆՏՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՄԵՋ ՓԱՓԱՔՆԵՐԻ

1.*Հիսուսը. Որդյակ, ահա սրանք թող լինեն քո խոսքերը յուրաքանչյուր դեպքի առիթով. «Տեր, եթե հաճելի է Քեզ, թող այսպես լինի: Տեր, եթե սա կծառայի փառքիդ, թող կատարվի հանուն Քո: Տեր, եթե տեսնում ես, որ սա իմ բարիքի համար է և գտնում ես օգտակար, տուր, որ գործադրեմ սա պատվիդ համար: Բայց եթե համարում ես վնասակար կամ անօգուտ հոգուս փրկությանը, արմատախիլ արա ինձնից այս փափաքը»: Ո՛չ բոլոր փափաքներն են – նույնիսկ երբ թվում են ուղղամիտ ու բարի – բխում Սուրբ Հոգուց: Դժվար է ճշգրտելը, թե բարի կամ չար ոգուց մղված ես փափաքում այս իրը և ոչ մյուսը, կամ թե քո իսկ անձնական շահն ես հետապնդում: Շատերն են, որոնց վերջիվերջո տեսնում ենք խաբված, թեև սկզբում առաջնորդված էին թվում բարի դիտավորությամբ:*

2.*Այո՛, կարող ես Աստծո հանդեպ երկյուղով և սրտի խոնարհությամբ միշտ փափաքել և խնդրել որևէ շնորհ, բայց ամբողջական անջատմամբ, ամեն բան ինձ վստահելով և ասելով. «Տեր, Դու գիտես, թե ո՛րն է լավագույնը: Թող սա լինի կամ հակառակը, ինչպես հաճելի է Քեզ: Տուր ինձ այն, ի՛նչ կամենում ես, ե՛րբ կամենում ես և որքա՛ն կամենում ես: Դարձրու ինձ այնպիսին, ինչպիսին առավել հաճելի է Քեզ, Քո մեծագույն փառքի համար: Առաքիր ինձ այնտեղ, ուր կամենում ես և հանձնարարիր կատարել այն բոլոր գործերը, որոնք համաձայն են կամքիդ: Ես Քո ձեռքերի մեջ եմ. ուղղիր և վերուղղիր ինձ դեպի ա՛յս*

կամ ա՛յն կողմ, կամքիդ համաձայն: Ահա ես Քո ծառան եմ, պատրաստ ամեն ինչի, որովհետև չեմ կամենում ապրել իմ, այլ՝ Քո համար: Եվ երանի՜ թե կարողանայի ապրել Քո համար արժանավայել և կատարյալ կերպով»:

3. *Հավատացյալը. Պարգևիր ինձ, ո՜վ բարեգութ Հիսուս, Քո շնորհը,* «որպեսզի ընկերակցի ինձ և ղեկավարի գործելիս» *(Իմ* 9, 10*) և ինձնում բնակվի հավիտյան: Այնպես արա, որ միշտ կամենամ և փափաքեմ այն, ինչն առավել հաճելի է Քեզ և ինչն առավել արժեքավոր է ըստ Քո գնահատման: Թող Քո կամքը իմը լինի, իսկ իմ կամքը թող միշտ հետևի Քո կամքին և կատարյալ կերպով ներդաշնակվի նրա հետ: Թող Քո հետ մեկ կամեցողություն և մեկ մերժում ունենամ. թող կամենամ այն, ինչ կամենում ես Դու, և մերժեմ այն, ինչ մերժում ես Դու: Տուր, որ մեռնեմ աշխարհային բոլոր իրողությունների համար, տուր, որ սիրեմ այս աշխարհում արհամարհված և անտեսված լինելը ի սեր Քո: Շնորհիր, բոլոր փափաքներից գերիվեր, հանգստանալ Քեզնում և Քեզնում խաղաղեցնել սիրտս: Դու ես սրտի իրական անդորրը, Դու ես միակ հանգիստը: Քեզնից դուրս, ամեն բան ծանրություն է ու խռովք:* «Եվ ընդմեջ այս խաղաղության», *այսինքն՝ Քեզնում, որ միակ և գերագույն և հավիտենական Բարիքն ես,* «քուն կմտնեմ և կհանգստանամ» *(Սղմ* 4, 9*):*

ԳԼՈՒԽ ԺԶ. ԻՐԱԿԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ՄԵՋ Է

1. *Հավատացյալը. Ինչ որ կարող եմ փափաքել մխիթարության համար, այդ բոլորը չեմ ապասում այս աշխարհում, այլ՝ գալիք կյանքում: Նույնիսկ եթե աշխարհի բոլոր հաճույքներն ունենայի կամ կարողանայի վայելել դրանց բոլոր հեշտությունները, անկասկածելի է փաստը, որ դրանք չէին կարողանա երկար տևել:*

Հետևաբար, հոգի իմ, չես կարող լիովին սփոփված, ո՛չ էլ կատարելապես երջանիկ լինել, եթե ոչ միայն՝ Աստծուն միացած, որ մխիթարիչն է աղքատների և զորավիգը խոնարհների: Համբերիր մի քիչ, հոգի իմ, սպասիր աստվածային խոստմանը և Երկնքում կունենաս լիությունը բոլոր բարիքների: Եթե անհագ ծարավով վայելքներ փնտրես, կկորցնես հավիտենական բարիքները: Ունեցիր ժամանակավոր բարիքները գործածության համար, բայց կամքիդ մեջ վառ պահիր փափաքը հավիտենական կյանքի:

Ծարավդ չես կարող հագեցնել վաղանցուկ վայելքներով, որովհետև դրանց համար չէ, որ ստեղծվել ես:

2. *Եվ եթե նույնիսկ ունենայիր ստեղծված բոլոր բարիքները, տակավին չէիր կարողանա երջանիկ լինել ու երանելի: Միմիայն Աստծո մեջ, որ Արարիչն է ստեղծված բոլոր իրողությունների, կարող ես գտնել բացարձակ երանությունդ ու երջանկությունդ: Երջանկություն ո՛չ այնպիսի, ինչպիսին երևակայում կամ գովերգում են հիմար աշխարհասերները, այլ՝ ինչպիսին ակնկալում են Հիսուսի հավատարիմ ծառաները, ինչպիսին երբեմն նախաճաշակում են բարեպաշտ հոգիներն ու սրտով անբիծները, որոնց հայրենիքը Երկնքում է: Ունայն ու կարճատև են մարդկային մխիթարությունները: Իրական ու հարատև մխիթարությունն այն է, որն ընդունում ենք ներքսապես՝ ճշմարտությունից: Իրական աստվածասեր անձը ամենուր իր ներսում կրում է իր Մխիթարչին՝ Հիսուսին, և ասում է Նրան.* «Տեր Հիսուս, իմ հետ եղիր ամենուր և ամեն վայրկյան»*: Թող սա լինի իմ մխիթարությունը. սրտաբուխ անկեղ-*

ծությամբ զրկվել կամենալը մարդկային բոլոր զգվանքներից: Իսկ երբ կբացակայի նաև Քո մխիթարությունը, կամքիդ կատարումն ու արդար փորձությանը համբերելը թող լինեն իմ գերագույն ուրախությունը: «Որովհետև հավիտյան չեն տևում, Տեր, բարկությունդ ու սպառնալիքներդ՝ Անունիցդ երկնչողների հանդեպ» *(Սղմ* 102, 9*):*

ԳԼՈՒԽ ԺԷ. ԱՍՏԾՈՒՆ ՊԵՏՔ Է ՎՍՏԱՀԵՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀՈԳՍԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, թո՛ղ, որ ամեն ինչում կատարվի իմ կամքը. ես շատ լավ գիտեմ, թե ո՛րն է քո բարիքը: Դու խորհում ես ըստ մարդկային մտածելակերպի, մարդկային զգացումներիդ համոզումներից մեկնելով ես դատաստան կայացնում բազում իրողությունների դիմաց:*

2. *Հավատացյալը. Տեր, հանդիմանությունդ արդարացի է: Իմ հանդեպ ունեցած Քո հոգատարությունը շատ ավելի մեծ է, քան այն բոլոր խնամքները, որ ես ինքս կարող եմ ունենալ իմ հանդեպ: Ով Քեզ չի հանձնում իր անձի շուրջ ունեցած բոլոր մտահոգությունները, ընթանում է ուղղակի դեպի կործանում: Տեր, արա ի՛նչ կամենում ես, ի՛նչ հաճելի է Քեզ. բավական է, որ կամքս անշեղ ու անսասան կերպով Քեզ միացած մնա: Քո կամքդ միմիայն բարիք է ծնում: Եթե կամենում ես խավարի մեջ թողնել ինձ, օրհնյալ ես. եթե կամենաս լույսերով ողողել, գովյալ ես: Եթե կամենաս մխիթարել ինձ, բարեբանյալ ես. և եթե կամենաս տեսնել ինձ ընդմեջ փորձությունների, հավասարապես միշտ փառաբանված ես:*

3. *Հիսուսը. Որդյակ, եթե կամենում ես, որ ընկերակցեմ քեզ կյանքիդ ընթացքում, պարտավոր ես միշտ ունենալ այս նույն տրամադրությունները: Հարկ է, որ պատրաստ լինես ինչպես վշտակրությանը, այնպես էլ խաղաղության վայելքին: Հավասար հանդարտությամբ պետք է ընդունես աղքատությունն ու չքավորությունը, ինչպես հարստությունն ու առատությունը:*

4. *Հավատացյալը. Տեր, ի սեր Քո կամենում եմ հոժարությամբ կրել այն բոլոր վշտերը, որոնք կթույլատրես, որ պատահեն ինձ: Կամենում եմ ուրախությամբ ընդունել Քո ձեռքերից բարին և ոչ այնքան բարենպաստը, քաղցրն ու դառնը, հոգեստիպին ու ցավալին. և ի՛նչ էլ պատահի, կամենում եմ երախտագիտություն հայտնել Քեզ: Պահիր անձս մեղքերից և չեմ վախենա ո՛չ մահից, ո՛չ էլ դժոխքից: Նեղությունները չեն կարող վնասել ինձ. կարևորն այն է, որ Դու չմերժես ինձ հավետ և կյանքի գրքից չջնջես անունս:*

ԳԼՈՒԽ ԺԸ. ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ԿՐԵԼ ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ԽԵՂՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, ես Երկնքից իջա և քո խեղճություններն իմ վրա առա ո՛չ թե ստիպված, այլ՝ մղված սիրո ազդակներից, որպեսզի համբերության օրինակ ստանաս և առանց տհաճության կրես ժամանակավոր նեղությունները: Ծննդյանս պահից մինչև մահս խաչի վրա՝ չունեցա և ո՛չ իսկ մի պահ առանց վշտակրության: Ապրեցի կենսական*

բարիքներից զրկված, լսեցի բազում տրտունջներ իմ դեմ, հեզությամբ համբերեցի նվաստացումներին ու նախատինքներին, բարեգործություններս ապերախտությամբ վարձատրվեցին, հրաշքներս՝ ուրացումով, ուսուցումներս՝ քննադատությամբ:

2.*Հավատացյալը. Տեր, քանի որ Դու համբերատար եղար կյանքիդ ընթացքում, կատարելով Հայր Աստծո կամքը, արդար է, որ ես նույնպես, թշվառ մեղավորս, համբերությամբ կրեմ խեղճություններս և կերպարանակից լինեմ կամքիդ, և որքան ժամանակ կամենում ես Դու, փրկությանս համար կրեմ այս ապականված կյանքի բեռը: Թեև ներկա կյանքը թվում է ջախջախիչ, նրա միջոցով, սակայն, կարող եմ բազում արժանիքներ շահել շնորհիդ օգնությամբ, և Քո օրինակին հետևելով և Քո Սրբերի հետքերով քայլելով, մեզ՝ տկարներիս այն թվում է բավական տանելի ու անդորր: Ավելին. այն դարձել է ավելի մխիթարական, քան Հին Օրենքի ժամանակ, երբ Երկնքի դռները փակ էին և ճանապարհը նույնպես թվում էր ստվերապատ և շատ քչերն էին փնտրում Երկնքի Արքայությունը: Ավելին. այնժամ և ո՛չ իսկ արդարներն ու նախասահմանվածները կարող էին մուտք գործել Երկնքի Արքայություն, քանի դեռ չէիր չարչարվել և զոհաբերվել Քո քավիչ սուրբ մահվամբ:*

3.*Քանի՜ցս երախտապարտ եմ Քեզ, որ ինձ և բոլոր ծառաներիդ համար մատնանշեցիր դեպի հավիտենական Արքայությունդ տանող կարճ և ուղղաշավիղ ճանապարհը: Քո կյանքը մեր ճանապարհն է, և դեպի Քեզ՝ դեպի մեր վարձատրությունը քայլում ենք շնորհիվ սրբազան համբերության: Եթե Դու չկանխեիր մեզ և չուսուցանեիր, ո՞վ կքայլեր այս ճանապարհով: Քանի՜ քանիներ կմնային հեռվում, եթե իրենց աչքերի առաջ չունենային լուսաշող օրինակներդ: Ահա տակավին հեղգ ենք, ուսուցումներիդ և հրաշքներիդ ծանոթանալուց հետո. ի՞նչ կլինեինք արդյոք, եթե այսքա՜ն մեծ լույս չունենայինք Քեզ հետևելու համար:*

ԳԼՈՒԽ ԺԹ. ՀԱՄԲԵՐԵԼ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔԻՆ

1. *Հիսուսը. Որդյակ, մի կողմ թող տրտնջալը և խորհրդածիր իմ ու իմ բոլոր Սրբերի չարչարանքների շուրջ:* «Տակավին արյունդ հեղելու չափ չես դիմադրում» *(Եբր* 12, 4*): Քո կրածը աննշան կետ է՝ համեմատությամբ ուրիշների կրածի, որոնք ենթարկվում են կատաղի փորձությունների, ծանրակշիռ նեղությունների, բազմատեսակ աննկարագրելի վշտակրությունների ու տառապանքների: Պետք է որ մտրաբերես ուրիշների դառնակսկիծ վիշտը, մեծագույն դյուրությամբ համբերել կարողանալու համար քո փոքրիկ, մանր նեղություններին: Եվ եթե նույնիսկ չես համարում դրանք փոքր, ուշադիր եղիր, թերևս անհամբերությունդ է ուռճացնում դրանք: Բայց փոքր լինեն թե մեծ, սկսիր բոլորն էլ համբերությամբ կրել:*

2.*Որքան լավագույնս տրամադրես քեզ տառապելուն, այնքան ավելի հանդես կգաս և կգործես իբրև իմաստուն, կբազմապատկես արժանիքներդ, և պատրաստակամ ու վարժ հոգի ունենալով՝ շատ ավելի նվազ կզգաս բեռան ծանրությունը: Երբեք մի՛ ասա. «Այս մարդուն չեմ կարող համբերել: Մի՞թե ես մեկն եմ, որ արժանի է այսպիսի նախատինքների: Մեծ վնաս հասցրեց ինձ, և դեռ զրպարտում է, վերագրելով ինձ հանցանքներ, որոնք մտքովս անգամ չեն անցել: Եթե մի ուրիշը լիներ սրա փոխարեն, ավելի մեծ խաղաղությամբ կհամբերեի, գնահատելով իրավիճակը որպես տանելի»:*

Սրանք խոսքեր են, որ հարմար են հիմար մտածելակերպի, որը չի ճանաչում համբերության արժեքը, և ո՛չ էլ՝ այդ համբերությունը վարձատրողին, այլ՝ հաշվի է առնում միայն անձերը և նրանցից ստացած վիրավորանքները:

3. *Իրական համբերատար չէ նա, ով կամենում է խոնարհեցումներ ընդունել այնքան, որքան իրեն է հաճելի, և միայն նրանից, ումից իրեն է հաճելի: Իրական համբերատարը ուշադրություն չի դարձնում, թե ումից է ընդունում արհամարհանքը, թե իր մեծից կամ հավասարից կամ ստորադասից, թե բարի և սուրբ մարդուց կամ անառակ ապիրատից: Նրա համար միևնույնն է, թե ինչօրինակ արարածից են բխում հակառակությունները, որքան էլ ծանր լինեն այս վերջինները և հաճախակի: Ընդունում է ամեն բան Աստծո ձեռքերից, երախտագիտությամբ, մեծարելով որպես քանակաշատ շահ: Որովհետև Աստծո առաջ չկա մի վիշտ, որքա՛ն էլ փոքր լինի, որ ընդունվի համբերությամբ, ի սեր Իր, և մնա անվարձ:*

4. *Պատրաստ եղիր, ուրեմն, պատերազմի, եթե կամենում ես հաղթանակ տոնել: Առանց ճակատամարտի չես կարող շահել համբերության դափնեպսակը: Եթե չես կամենում ճիգ գործադրել, հրաժարվիր նաև վարձատրումից: Իսկ եթե փափաքում ես հասնել վարձատրությանը, մարտնչիր խիզախությամբ և դիմացիր համբերությամբ:* Առանց հոգնության չկա հանգիստ, և նմանապես՝ առանց պայքարի չկա հաղթանակ:

5. *Հավատացյալը. Տեր, շնորհիդ միջոցով հնարավոր դարձրու իմ համար այն, ինչն անհնարին է ըստ բնության: Դու գիտես, թե որքան անընդունակ եմ տառապելուն, և թե որքան շուտով եմ անձնատուր լինում անարիությանը, հազիվ թե ծագում է մի որևէ հակառակություն: Հանուն Քո թող այսուհետև սիրելի ու փափաքելի դառնան իմ համար բոլոր նեղությունները, որովհետև հոգուս համար փրկավետ են ի սեր Քո ստացած տառապանքն ու նախատինքը:*

ԳԼՈՒԽ Ի. ՃԱՆԱՉԵԼ ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Հավատացյալը.* «Արդ խոստովանում եմ մեղքերս և չեմ թաքցնում» *(Սղմ* 31, 5*), խոստովանում եմ, Տեր, ամբողջ տկարությունս: Այն, որ ընկճում է ինձ և տրտմեցնում, հաճախ իրողություն է չնչին ու ոչինչ: Առաջադրում եմ պայքարել քաջությամբ, բայց հազիվ է գլուխ բարձրացնում մի թեթև փորձություն, իսկույն մատնվում եմ անասելի տխրության: Երբեմն աննշան հակառակությունն անգամ առիթ է դառնում ներքին մեծ փոթորիկների: Ինչպես նաև, մինչ խաղաղ եմ կարծում ինձ ու ապահով, չնկատելով վտանգը, երբեմն քամու մի թեթև շնչից ուղղակի գետնատարած եմ գտնում ինձ:*

2. *Տե՛ս, ուրեմն, Տեր, փոքրկությունն իմ ու դյուրաբեկությունս, որ ճանաչում ես իր բոլոր մանրամասներով: Գթա՛ ինձ և* «դուրս քաշիր ինձ ճահճուտներից, որպեսզի այնտեղ չխեղդվեմ» *(Սղմ* 68, 15*) և չմնամ այնտեղ ընկղմված: Հենց սա է ինձ հաճախակի վշտացնող և Քո առջև ինձ շփոթի ու ամոթի մատնող պարագան. անկայունությունս ու տկարությունս՝ կրքերին դիմադրելու գործում: Եվ թեպետ համաձայնություն չեմ տալիս նրանց ամբողջովին, բայց միևնույնն է, նրանց դեմ մաքառելը ծանր է ու հոգնեցուցիչ, և*

հոժարությամբ չէ, որ պայքարում եմ նրանց դեմ ամեն օր: Եվ այստեղ եմ ըմբռնում լիակատար անկարողություն, որովհետև երևակայական անսուրբ պատկերներն ավելի մեծ հեշտությամբ են մուտք գործում մտքիցս ներս, քան թողնում հեռանում ինձնից:

3. *Իսրայելի ո՜վ հզոր Աստված, պաշտպան Քեզ հավատարիմ հոգիների, բարեհաճությամբ անդրադարձիր ծառայիդ պայքարներին ու վշտին և զորավիգ եղիր ինձ: Ճոխացրու ինձ երկնային զորությամբ, որպեսզի հին մարդը՝ այս քստմնելի մարմինը, որ տակավին չի հնազանդվում հոգուն, իշխանության գլուխ չանցնի: Այս ողորմելի պանդխտության ընթացքում հարկավոր է մինչև վերջին շունչը ճակատամարտել մարմնի ցանկությունների դեմ: Մի՞թե հնարավոր է կյանք կոչել այս աքսորը, ուր նեղություններն ու խեղճությունները վիստում են անհաշվելի բազմությամբ, ուր ամեն բան և ամեն վայր լի է պատրանքներով ու թշնամիներով: Եվ իրոք, հազիվ է դադարում տառապանքներից կամ փորձություններից մեկը, ահա սկսվում է մի ուրիշը. և նույնիսկ մինչ մղվում է ճակատամարտերից մեկը, ուրիշներ ևս հասնում են և միմյանց վրա կուտակվում անսպասելիորեն:*

4. *Ինչպե՞ս կարելի է սիրել մի կյանք, որ լի է այսքան դառնություններով և ենթակա է բազում ձախորդությունների ու խեղճությունների: Ավելին. ինչպե՞ս կարելի է կյանք անվանել, երբ ծնում է այսքան մահեր ու ժանտահոտություն: Եվ սակայն, սիրված է և շա՜տ շատերը նրանում են փնտրում իրենց քաղցրությունները: Հաճախ է աշխարհը հանդիմանվում իբրև խաբուսիկ և ունայն, բայց հետո չի լքվում հեշտությամբ. ա՜յս աստիճան ստրուկ ենք մարմնի ցանկություններին: Որոշ պարագաներ մղում են մեզ սիրելու աշխարհը, ուրիշ պատճառներ՝ արհամարհելու այն: Աշխարհը սիրելու են մղում* «մարմնի ցանկությունները, աչքերի ցանկությունները և աշխարհում տիրող հպարտությունը» *(1Հովհ* 2, 16*), մինչդեռ հոգնություններն ու ձանձրույթը, որ արդարացիորեն հաջորդում են մարմնի հաճույքներին, ծնում են ատելություն աշխարհի հանդեպ և անհամության զգացում:*

5. *Ապականված հաճույքները տիրում են աշխարհին նվիրված հոգուն, որն* «անուշություն է սեպում փշերի մեջ քայլելը» *(Հոբ* 30, 7*), որովհետև ո՛չ տեսնում է և ո՛չ էլ ճաշակում Աստծո քաղցրությունը և առաքինության հոգեղեն գեղեցկությունը: Մինչդեռ նրանք, ովքեր անվերապահ կերպով արհամարհում են աշխարհը և որոշում են սուրբ սկզբունքների համաձայն ապրել Աստծո համար, վայելում են աստվածային քաղցրությունը, որ խոստացված է նրանց, ովքեր արտանց հրաժարվում են աշխարհից և տեսնում, թե քանիցս չարաչար են սրիալվում աշխարհասերները և թե քանի՜ քանի՜ կերպերով են մնում խաբված:*

ԳԼՈՒԽ ԻԱ. ԻՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՍՏԾՈ ՄԵՋ Է

1. *Հավատացյալը. Ամեն ինչից վեր և ամեն ինչում մշտապես հանգիստը կարող ես Աստծո մեջ միայն գտնել, հոգի իմ, որովհետև Նա Ինքն է Սրբերի հավիտենական հանգիստը:*

Ո՜վ Հիսուս քաղցրագույն ու սիրելի, այնպես արա, որ հանգիստս միմիայն Քեզնում գտնեմ, գերիվեր՝ քան բոլոր արարածները. գերիվեր՝ քան առողջությունն ու գեղեցկությունը. գերիվեր՝ քան փառքն ու պատիվները, ուժն ու տիրապետությունը.

գերիվեր՝ քան բոլոր գիտություններն ու մտային կարողությունները. գերիվեր՝ քան բոլոր հարստություններն ու արվեստները, ուրախություններն ու վայելքները, համբավն ու գովասանքները, հաճույքներն ու միտիթարությունները. գերիվեր՝ քան բոլոր խոստումներն ու ակնկալությունները, քան բոլոր արժանիքներն ու փափաքները. գերիվեր նաև՝ քան այն բոլոր պարգևներն ու շնորհները, որ Դու կարող ես տալ ինձ և շռայլել. գերիվեր՝ քան այն բոլոր սքանչացումներն ու ցնծությունները, որ միտքը կարող է ստանալ կամ զգալ. և վերջապես, գերիվեր՝ քան Հրեշտակներն ու Հրեշտակապետները, քան բոլոր երկնային զորությունները. գերիվեր՝ քան բոլոր իրողությունները տեսանելի ու անտեսանելի, քան այն ամենը, որ Դու չես, Աստված իմ:

2. *Որովհետև Դու, Աստված, Տեր իմ, գերազանց ես, քան բոլոր գոյությունները, միայն Դու ես բարձրյալ, միայն Դու՝ ամենակարող, միայն Դու՝ ինքնաբավ ու առատաբուխ, նրբագույն ու քաղցրանույշ: Միայն Դու ես գեղեցիկ ու սիրելի, ազնվագույն ու փառահեղ, քան բոլոր իրողությունները: Քեզնում են բովանդակված բոլոր բարիքները, Քեզնում են եղել միշտ և Քեզնում միայն կարող են գտնվել: Ահա այս իսկ պատճառով, ի՞նչ էլ պարգևես ինձ՝ Քեզնից տարբեր և Քեզնից դուրս, քիչ է ու անբավարար, այնպես՝ ինչպես անկատար են այն բոլոր մտային ըմբռնումներն ու խոստումները, որ տալիս ես ինձ՝ առանց սակայն իմ Քեզ տեսնելու և լիովին ունենալու: Սիրտս չի կարողանում իրական հանգիստ, ո՛չ էլ կատարյալ գոհունակություն գտնել, եթե ոչ միայն՝ Քեզնում, բարձրանալով գերիվեր, քան բոլոր պարգևներն ու արարածները:*

3.*Ո՛վ քաղցր մտերիմ իմ Հիսուս, մաքրագույն սիրող, Տեր բոլոր արարածների, ո՞վ կըտա ինձ արդյոք թևեր իրական ազատության, ճախրելու և Քեզնում հանգչելու համար: Ե՞րբ արդյոք կկարողանամ միանալ Քեզ հավիտենական միությամբ և ճաշակն առնել հոգեզմայլ անուշությանդ, Տեր Աստված իմ: Ե՞րբ արդյոք կկարողանամ ամփոփել անձս Քեզնում, այնպես, որ սիրույդ հայեցողության հետևանքում մոռանամ ինքս ինձ, Քեզ միայն զգամ՝ գերազանցելով բոլոր զգացումներն ու չափավորումները, այն կերպ, որ շատ քչերն են ճանաչում:*

Այժմ հաճախ եմ ողբում և վշտով եմ կրում ապերջանկությանս բեռը: Որովհետև թշվառության այս հովտում պատահում են բազում չարիքներ, որոնք շատ հաճախ են ինձ խոովում, տրտմեցնում ու մթագնում, հաճախ են խոչընդոտում ընթացքս և ցրում մտքիս կենտրոնացումը, դյութում են ինձ և պարուրում, արգելելով ինձ գալ դեպի Քեզ ազատորեն, վայելելու հոգեստիպ գրկախառնումներդ, որ պատրաստված են երանյալ սուրբ հոգիներին: Թող հառաչանքներս և այստեղ՝ ներքևում կրած բազում նեղություններս հուզեն Քեզ:

4.*Ո՛վ Հիսուս,* «Ճառագայթ հավիտենական փառքի» *(Եբր* 1, 3*), պանդուխտ հոգիների ափոփանք, պապանձված կանգնած եմ Քո առջև և լռությամբս եմ միայն խոսում Քո հետ: Դեռ որքա՞ն ես հապաղելու, Տեր իմ: Ե՛կ և զվարթություն շնորհիր Քո աղքատ ծառային: Աջդ մեկնիր և ազատիր ինձ բոլոր վշտերիցս: Ե՛կ, ե՛կ, որովհետև առանց Քեզ ոչ մի օր, ոչ մի ժամ ուրախ չէ, որովհետև Դու ես քաղցրությունն իմ և առանց Քեզ անապատ են իմ համար ինչքույթի սեղանները: Խեղճ եմ ես և կարծես բանտարկված ու շղթաներով ծանրաբեռնված, քանի դեռ չես ափոփում ինձ ներկայությանդ լույսով, քանի դեռ չես վերադարձնում ինձ ազատության, և քանի դեռ չես հայտնում ինձ ընկերային մտերիմ Դեմքդ:*

5.*Թող ուրիշները Քո փոխարեն փնտրեն այն ամենն, ինչն իրենց ախորժելի է. ինչ վերաբերվում է ինձ, ոչինչ ինձ հաճելի չէ և ո՛չ էլ երբևէ կլինի, եթե ոչ միայն՝ Դու, Ասպված իմ, հույս իմ, փրկություն իմ հավիտենական: Մի ակնթարթ անգամ չեմ լռելու և չեմ դադարելու Քեզ աղերսելուց, մինչև շնորհդ կվերադառնա և սրտիս մենարանում վերստին կողողանջի քաղցրալուր ձայնդ:*

6.*Հիսուսը. Ահա՛ ես այստեղ եմ, ահա՛ քո մոտ եմ, որովհետև կանչեցիր ինձ: Արցունքներդ և հոգուդ հառաչանքը, խոնարհությունդ և սրտիդ զղջումը հուզեցին ինձ և դեպի քեզ քաշեցին:*

7.*Հավատացյալը. Տեր իմ, ես կանչեցի Քեզ, փափաքեցի վայելել Քո ներկայությունը, պատրաստ՝ մերժելու ամեն բան ի սեր Քո: Բայց նախ Դու Ինքդ արթնացրեցիր ինձնում Քեզ փնտրելու բաղձանքը: Եղիր ուրեմն օրհնյալ, ո՜վ Տեր, որ այս շնորհը պարգևեցիր ծառայիդ, ըստ առատաբուխ ողորմությանդ:*

Ուրիշ ի՞նչ կարող է անել ծառադ Քո առջև, եթե ոչ՝ խորապես խոնարհվել, հիշելով միշտ իր սեփական հանցավորությունն ու նվաստությունը: Երկնքի ու երկրի հրաշալիքների մեջ չկա Քեզ հավասարը: Քո բոլոր գործերը մեծապես բարի են, ո՜վ Տեր, արդար են դատաստաններդ, և Նախախնամությունդ ղեկավարում է բոլոր իրողությունները: Հետևաբար, Քեզ փառք և գովք, ո՜վ Դու Հոր Իմաստություն, թող օրհնաբանեն Քեզ բերանս իմ, հոգին իմ և բոլոր արարածներն ի միասին:

ԳԼՈՒԽ ԻԲ. ԱՍՏԾՈ ԱՆԹԻՎ ՈՒ ԱՆՀԱՄԱՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.*Հավատացյալը. Բա՛ց սիրտս, Տեր, օրենքներիդ առաջ և ուսուցանիր ինձ ընթանալ պատվիրաններիդ արահետներով: Տուր ինձ ըմբռնել կամքդ և շնորհիր մեծագույն մեծարանքով ու երախտագիտությամբ հիշել բարերարություններդ, լինեն դրանք ընդհանուր թե մասնավոր, որպեսզի այսուհետև կարողանամ շնորհակալությանս զգացումները հայտնել Քեզ հնարավոր լավագույն չափով: Քաջ գիտեմ և խոստովանում եմ, որ նվազագույն չափով անգամ չեմ կարող փոխհատուցել Քեզ կամ երախտագիտության արժանապատիվ գովք մատուցել: Ես ստորադաս եմ շնորհածդ բոլոր բարիքներին, և մինչ խորհրդածում եմ վիթխարի վեհանձնությանդ շուրջ, հոգիս լցվում է սրբազան երկյուղով:*

2. *Ի՞նչ էլ որ ունենք և որքա՞ն որ ունենք հոգու և մարմնի մեջ, արտաքուստ և ներքուստ, բնական և գերբնական, Քո բարերարություններն են, որ հոչակում են Քեզ գթառատ, վեհանձն ու գորովալի, բաշխող այս բոլոր բարիքների: Եվ եթե ոմանք առավել են ստանում, իսկ ոմանք՝ սակավ, բարիքները միշտ Քոնն են, և առանց Քեզ դրանց փոքրագույնն իսկ չենք կարող ունենալ: Ով առավել մեծ բարիքներ է ընդունում, չի կարող հպարտանալ, իբրև թե իր իսկ արժանիքի արդյունքն են, ո՛չ էլ կարող է վերադասել իր անձն ուրիշներից, և ո՛չ էլ արհամարհել սակավ ստացողին, քանի որ վերջինս առավել խոնարհ է ու եռանդուն՝ երախտագիտություն հայտնելիս: Ով բոլոր մարդկանց մեջ*

ամենանվաստն ու անարժանն է նկատում իրեն սրտանց, նա է առավել փրամադիրը ընդունելու միշտ մեծագույն շնորհներ:

3. *Իսկ ով սակավ է ստանում, չպետք է տրտմի, ո՛չ էլ նախանձի առավել ճոխացածին, այլ՝ պետք է ուղղվի դեպի Քեզ և գովաբանի բարությունդ, որովհետև շնորհում ես պարգևներդ առատությամբ, ձրի ու հոժարությամբ, առանց անձերի խտրության: Բոլոր բարիքները բխում են Քեզնից և գովքի ես արժանի դրանցից յուրաքանչյուրի համար: Դու քաջ գիտես, թե որքան է պատշաճ շնորհել ամեն մեկին, և մեկի շատ, իսկ մյուսի քիչ ունենալը մեր քննարկման նյութը չի կարող հանդիսանալ, այլ միայն Քո, որ շնորհում ես պարգևներդ, Նախահնամությանդ ծրագրերի համաձայն:*

4. *Այս իսկ պատճառով, Աստված իմ, ես մեծագույն բարիք եմ համարում նաև չունենալն այն բարիքների, որոնք փառահեղ լինելով ըստ մարդկանց գնահատականի, հայթայթում են գովք ու պատիվ: Եվ իրոք, ոչ ոք, երբ նկատում է իրեն աղքատ և զուրկ զանազան տաղանդներից ու ձիրքերից, չպետք է այդ պատճառով անձնատուր լինի տրտմությանը, մելամաղձոտությանը կամ հուսահատությանը, այլ ընդհակառակը՝ պետք է զգա մխիթարություն և մեծ անդորր, որովհետև Դու, Աստված, որպես Քեզ մտերիմներ ու ընկերներ ընտրեցիր աղքատներին, խոնարհներին և աշխարհի կողմից արհամարհվածներին: Վկա են սրան նաև Առաքյալներդ, որոնց «իշխանություններ կարգեցիր համայն երկրի վրա» (Սղմ 44, 17): Այսօրինակ հավիտենական պատվի բարձրանալով հանդերձ, նրանք աշխարհում ապրեցին առանց գանգատվելու, խոնարհությամբ ու պարզությամբ, առանց չարամտության կամ խարդախությունների. այնպես, որ վայելում էին Անունդ վկայելու պատճառով կրած նախատինքները և վիթխարի սիրով փարվում էին այնպիսի իրողությունների, որոնցից աշխարհը սարսափահար խորշում է:*

5. *Ոչինչ այնքան ուրախություն չպետք է պատճառի Քեզ իսկապես սիրողներին և նրանց, ովքեր ճանաչում են բարերարություններդ, որքան իրենց անձերում կամքիդ անմնացորդ կատարումը և իրագործումը Քո հավիտենական որոշումների: Կամքդ պետք է լինի նրանց բերկրանքն ու մխիթարությունը, հոժարությամբ նախընտրելով լինելն ամենափոքրը, ինչպես ուրիշը կբաղձար լինել ամենամեծը. և այսպես գրավել վերջին տեղը խաղաղությամբ ու հոգեզվարթությամբ, կարծես թե առաջինը լիներ, հաճույքով ընդունել արհամարհելի ու արհամարհված, անանուն ու անհոչակ լինելու իր պարագան, կարծես թե ամենապատվավորը լիներ ընդմեջ բոլորի և ամենահզորն աշխարհում: Հարկ է, որ կամքդ և Անվանդ փառքի նախանձախնդրությունը նրանք դասեն ամեն ինչից վեր ու առաջ, և իրենց սփոփանքն ու գոհունակությունը նույնպես կամքիդ կատարման մեջ գտնեն ավելի, քան այն բարիքների, որոնք ստացել են, կամ որ կարող են երբևէ ստանալ:*

ԳԼՈՒԽ ԻԳ. ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, այժմ քեզ կուսուցանեմ խաղաղության և իրական ազատության ճանապարհը:*

2.Հավատացյալը. Տեր, արա՛ ինչ ասում ես, որովհետև ճիշտ այդ գիտությունն է, որ փնտրում եմ:

3.Հիսուսը. Աշխատիր, որդյակ, ավելի ուրիշների կամքը կատարել, քան քոնը: Գերադասիր միշտ ավելի քիչ ունենալ, քան շատ: Փնտրիր շարունակ վերջին տեղը և ստորադասիր քեզ ուրիշներից: Նույնպես փափաքիր և աղոթիր, որ քեզնում անմնացորդ կերպով ի կատար ածվի Աստծո կամքը:

Ահա՛, եթե ապրես այս տրամադրություններով, կօթևանես խաղաղության ու անդորրի բնակավայրում:

4.Հավատացյալը. Տեր իմ, ուսուցումդ այո՛ հակիրճ է, բայց պարփակում է իրենում բազում իմաստություն ու կատարելություն: Խոսքերդ սակավ են, բայց իմաստալի ու արդյունաառատ: Եթե հավատարմորեն հետևեի խրատներիդ, դյուրին չէր լինի ինձ վրդովելը: Որովհետև ամեն անգամ, երբ զգում եմ ինձ խոովված և կարծես թե ծանր բեռով սրտիս վրա, տեսնում եմ ինձ ու խոստովանում հեռացած Քո այս ուսուցումից: Բայց Դու, որ ամեն բան կարող ես և որ մեր հոգիների բարիքն ես միայն կամենում, բազմապատկիր շնորհիդ ներգործությունն ինձնում, որպեսզի կարողանամ գործադրել խորհուրդներդ և աշխատել ի նպաստ փրկությանս գործի:

5.Տեր Աստված իմ, մի՛ հեռացիր ինձնից, Աստված իմ, «շտապիր ինձ օգնության» (Սղմ 70, 12), որովհետև արթնացան ինձնում հպարտ մտածումներ և երկյուղն ալեկոծում է հոգիս: Ինչպե՞ս կարող եմ դուրս գալ այս պայքարից ողջ ու անվնաս: Ինչպե՞ս կարող եմ պարտության մատնել սրանց:

«Ես», ասում ես Դու, «կընթանամ քո առջևից և կխորտակեմ երկրի գոռոզամիտներին» (Ես 45, 2), կբացեմ բանտի դռները և կհայտնեմ քեզ բազում ապաստարաններ:

Խոսքերիդ համաձայն վարվիր, Տեր, և թող Քո ներկայությանն անէանան մտածումներն այս ունայն: Սա՛ է հույսն իմ և միակ ապոփանքը. օգնությանդ դիմել բոլոր նեղությունների մեջ, Քեզ վստահել, Քեզ կանչել սրտանց, համբերությամբ ապասելով անպատում միսիթարությանդ:

6.Լուսավորիր ինձ, Հիսուս, մտքի լույսերով և սրտիցս դուրս վտարիր խավարն ու ստվերները: Արգելակիր բազում ցրումներս և խափանիր կամքս բռնադատող փորձությունները: Զորությամբդ պայքարիր իմ փոխարեն և հաղթիր այլանդակ գազաններին՝ խաբող ցանկություններին, որպեսզի Քեզնով վերադառնա խաղաղությունը և լիաձայն փառաբանությունդ վերստին կարկաչի սուրբ ապարանքում, որ է մաքուր խիղճը:

Հրամայի՛ր փոթորիկին ու փայլակներին, ասա՛ ծովին. «Խաղաղվի՛ր», և հողմին. «Մի՛ փչիր» (Մրկ 4, 39), և իսկույն կտիրի մեծ հանդարտություն: «Առաքիր լույսդ և ճշմարտությունդ» (Սղմ 42, 3), որպեսզի փայլեն երկրի վրա, որովհետև ես «հող եմ խոպան ու անպտուղ» (Ծնդ 1, 2), եթե Դու չես լուսավորում ինձ: Ի վերուստ հեղիր շնորհներդ, զովացրու սիրտս երկնային ցողով, ողողիր աշխարհը ապրվածապաշտության կենդանի ջրերով, որպեսզի հոգիների ճյուղերը ծանրաբեռնվեն բարի լավագույն պտուղներով: Մեղքերի

ծանրության տակ կքված հոգիս վեր բարձրացրու և բոլոր իղձերս ու փափաքներս դեպի երկնային իրողություններն ուղղիր: Որպեսզի ճաշակելով քաղցրությունը վերին երանության, ձանձրույթ զգամ երկրային իրողությունների շուրջ մտածելու դեպքում: Դուրս կորզիր ու ազատիր ինձ արարածների պարգևած վաղանցուկ մխիթարություններից, որովհետև ստեղծված ոչ մի բան չի կարող լիովին հագեցնել և սփոփել ծարավս: Շղթայիր ինձ Քեզ սիրույդ անքակտելի զոդերով, որովհետև միայն Դու բավական ես Քեզ սիրողին, մինչ առանց Քեզ անհամ են բոլոր գոյությունները:

ԳԼՈՒԽ ԻԴ. ՉՄՏԱՀՈԳՎԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՐԱՐՔՆԵՐՈՎ

1. *Հիսուսը. Որդյակ, մի՛ եղիր հետաքրքրասեր և մի՛ խառնվիր քեզ չվերաբերվող հարցերին: Ի՞նչ կարևորություն ունեն քո համար այս կամ այն իրողությունները: «Դու ինձ հետևելուդ մասին միայն մտածիր» (Հվհ* 21, 22*): Քեզ չի վերաբերվում, որ մեկն այսպես է կամ այնպես, կամ որ մի ուրիշը գործում կամ խոսում է այս կամ այն կերպ: Դու ուրիշների փոխարեն հաշիվ չես ներկայացնելու, այլ՝ պատասխան ես տալու քո՛ գործերի համար: Հետևաբար, ինչո՞ւ ես քննում ուրիշների գործերը: Ես ճանաչում եմ բոլորին և տեսնում եմ այն ամենը, որ կատարվում է աշխարհում, գիտեմ, թե ինչպիսի տրամադրություններ ունի մարդկանցից յուրաքանչյուրը, թե ինչ է խորհում, ինչ կամենում և կամ թե դեպի ուր են ուղղված իր փափաքները: Ուրեմն, ամեն բան ինձ վստահիր: Դու պահիր հոգիդ խաղաղության մեջ և թող, որ ամբարիշտն իրեն այս կամ այն պատին խփի այնքան, որքան կամենում է: Իր գլխին է բարդվելու այն ամենը, որ անում է կամ ասում, որովհետև ինձ խաբել անհնարին է:*

2. *Մի՛ վազիր այն ստվերի ետևից, որ կոչվում է «ՄԵԾ ԱՆՈՒՆ», մի՛ փափաքիր մտերիմ լինել բազմաթիվ մարդկանց, և մի՛ կամեցիր ոմանց յուրահատուկ բարեկամությունն ունենալ: Այս իրողությունները հոգում ծնում են ցրվածություն և մեծ խավար: Սիրով կպարգևեի քեզ իմ խոսքը և կհայտնեի քեզ գաղտնիքներն իմ, եթե հավատարմությամբ սպասեիր գալըստյանս և սրտիդ դռները լայն բացեիր իմ առաջ: Խոհեմ եղիր, հարատև՝ աղոթքում, և խոնարհեցրու անձդ՝ քեզ ներկայացող բոլոր առիթներում:*

ԳԼՈՒԽ ԻԵ. ԻՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՔԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հիսուսը. Որդյակ, հիշիր խոսքերս. «Ձեզ խաղաղություն եմ տալիս, ձեզ իմ խաղաղությունն եմ տալիս, բայց չեմ տալիս ձեզ այնպես« ինչպես այս աշխարհը» (Հվհ* 14, 27*): Բոլորն են փափաքում խաղաղություն, բայց ո՛չ բոլորն են հոժարությամբ ընդունում այն միջոցները, որոնք տանում են դեպի իրական խաղաղությունը: Իմ խաղաղությունը ընկերակցում է հեզերին և սրտով խոնարհներին: Խաղաղությունդ համբերության մեջ միայն կարող ես գտնել: Եթե լսես ինձ և գործես խոսքերիս համաձայն, կկարողանաս վայելել մեծ խաղաղություն:*

2. *Հավատացյալը. Ի՞նչ պետք է անեմ, Տեր:*

3. *Հիսուսը. Ամենուր և ամեն ինչում ուշադիր եղիր խոսքերիդ ու գործերիդ և ամեն բան կատարիր ի՛նձ միայն հաճույք պատճառելու դիտավորությամբ, և մի՛ կամեցիր, ո՛չ էլ*

փնտրիր ինձնից դուրս որևիցէ մի բան: Կտրուկ դատաստաններ մի՛ կայացրու այն հարցերի շուրջ, որոնց վերաբերյալ սոսկ հպանցիկ կամ մակերեսային ծանոթություն ունես, մի՛ խրցկրվիր քեզ չհանձնված գործերից ներս, այլոց խոսքերի ու գործերի մեջ, և այդպիսով քիչ ու հազվադեպ կխոռվվես:

4.*Բայց ինչ վերաբերվում է երբեք չխոռվվելուն կամ հոգևոր ու մարմնավոր նեղություններ չկրելուն, սրանք այս կյանքին հատուկ չեն, այլ՝ բնորոշ են հավիտենական անդորրին: Հետևաբար, մի՛ կարծիր, թե գտել ես իրական խաղաղությունը, որովհետև բացակայում են փորձությունները. թե ամեն բան լավ է ընթանում, որովհետև լուռ են բոլոր ընդդիմախոսները. թե արդեն իսկ հասել ես կատարելությանը, որովհետև ի կատար ածված ես տեսնում կամքդ: Քեզ ջերմեռանդ և մխիթարություններով ողողված զգալով չես դառնում մեծ մեկը, ո՛չ էլ պատկանում ես ընտրյալների դասին: Այո՛, որովհետև այս չափանիշներով չէ, որ որակավորվում է իրական առաքինասերը, և այս զգացումներում չէ, որ կայանում են հոգու առաջադիմությունն ու կատարելությունը:*

5.*Հավատացյալը. Ուրեմն ինչո՞ւմ են կայանում, Տեր:*

6.*Հիսուսը. Ամբողջ սրտով Աստծո կամքին հանձնվելու մեջ, առանց փնտրելու անձնականը, ինչպես փոքրիկ իրողություններում, այնպես էլ մեծերում, ինչպես ժամանակի, այնպես էլ հավիտենականության մեջ: Եվ ամեն ինչին միևնույն աչքով նայելով և ամեն ինչ միևնույն նժարի վրա կշռելով, մշտապես երախտագիտությունդ հայտնիր ինձ ինչպես հաջողություններում, այնպես էլ նեղությունների բովում:*

Եթե այնքան ուժեղ ու համբերատար լինես հույսի մեջ, որ կարողանաս տրամադրել սիրտդ կրելու չարաչար տառապանքներ, ներքին մխիթարություններից զրկվելու հետ մեկտեղ, եթե կարողանաս չարդարացնել անձդ, ասելով, թե անարդարացիորեն ես կրում այդօրինակ դաժան տառապանքներ, այլ ընդհակառակն՝ կարողանաս գովաբանել ինձ որպես արդար և սուրբ՝ իմ բոլոր որոշումների համար, այնժամ այո՛ կքայլես խաղաղության իրական և ուղղաշավիղ ճանապարհում և կկարողանաս հուսալ վերստին տեսնել երեսս անհուն խնդությամբ: Իսկ երբ կհասնես անձիդ լիակատար արհամարհմանը, այնժա՛մ միայն կկարողանաս վայելել խաղաղության լիությունը, որքան որ հնարավոր է երկրային քո այս աքսորում:

ԳԼՈՒԽ ԻԶ. ՍՐՏԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1.*Հավատացյալը. Տեր, միտքը երկնային իրողություններում սևեռված պահելը և բազում հոգսերի միջով անցնելն առանց դրանց պատճառով տառապելու – ո՛չ թե անհոգությամբ, այլ՝ այն առանձնաշնորհմամբ, որով հոգին ազատ է մնում արարածներին մոլի կրքոտությամբ կապվելուց – հատուկ է կատարյալ մարդուն:*

2.*Պաղատում եմ Քեզ, ողորմած Աստված իմ, ազատիր ինձ այս կյանքի մտահոգություններից, որպեսզի խրվելով չխեղդվեմ դրանց մեջ. մարմնի կարիքների չափազանց բավարարումից, որպեսզի չհաղթվեմ հաճոյամոլության ցանկություններից. հոգևոր կյանքի բոլոր արգելքներից, որպեսզի նեղությունների բովում չհուսահատվեմ: Չեմ ասում, թե ազատիր ինձ միայն այն իրողություններից, որոնց փափաքում են*

աշխարհամոլները յոթնապատիկ փոչորմամբ, այլ նաև այն խեղճություններից, որոնք մահկանացուներիս տրված ընդհանուր անեծքի հետևանքում տառապագին ծանրանում են հոգուս վրա, արգելելով նրան մուտք գործել, ե՛րբ կամենում է, դեպի հոգու ազատություն:

Աստված իմ, անասելի քաղցրություն, դառնացրու իմ համար մարմնական բոլոր մխիթարությունները, որոնք հեռացնում են ինձ երկնային իրողությունների սիրուց և խաբեությամբ ձգում են ինձ դեպի իրենք, ներկա վայելքներ խոստանալով: Թող չհաղթեն ինձ, Աստված իմ, թող չհաղթեն ինձ մարմինն ու արյունը, թող չխաբեն ինձ աշխարհն ու իր վաղանցուկ փառքը, թող թիրախ չդառնամ սատանայի չարագործությունների համար: Տուր ինձ ուժ՝ դիմադրելու, համբերություն՝ տառապելու և աննկունություն՝ հարատևելու համար: Աշխարհի բոլոր մխիթարությունների փոխարեն, տո՛ւր ինձ նրբին զմայլանքը հոգու, իսկ մարմնավոր ցանկությունների փոխարեն, լիացրո՛ւ ինձ Քո սիրով: Ուտելը, խմելը, հագնվելն ու մարմնի մյուս բոլոր կարիքները ծանր բեռ են եռանդուն հոգու համար: Այնպես արա, որ ես դրանք օգտագործեմ չափավորությամբ և դեպի դրանք չնետվեմ անզուսպ կամեցողությամբ: Լավ չէ այս բոլոր իրողությունները կտրուկ կերպով մերժելը, որովհետև պարտավոր ենք կերակրել ու խնամել մարմինը: Բայց սուրբ օրենքն արգելում է մեզ փնտրել ավելորդը և այն, որ պարզապես հաճույքին է ծառայում, այլապես մարմինը կապստամբի հոգու դեմ: Անհրաժեշտ չափավորության մեջ, աղաչում եմ Քեզ, թող առաջնորդի և ուղղի ինձ Քո աջը, չզիջելու և տեղի չտալու համար չափազանցություններին:

ԳԼՈՒԽ ԻԷ. ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

1.*Հիսուսը. Հարկ է, որդյակ, տալ ամեն բան՝ ամեն բան ունենալու համար: Իմացիր. անձնասիրությունդ վնասում է քեզ ավելի, քան ուրիշ որևիցէ մի բան աշխարհում: Արտաքին այդ առարկաներին կամ անձերին ու իրողություններին կապվում ես այն աստիճան, որքան սիրում ես կամ համակրանք տածում դրանց հանդեպ: Եթե սերդ լինի մաքուր, պարզ և լավ կառավարված, ստրուկ չես լինի ոչնչի: Մի՛ փափաքիր այն, ինչն արգելված է քեզ ունենալ, մի՛ կամեցիր ունենալ այն, ինչը կարող է խոչընդոտել ընթացքդ և զրկել քեզ ներքին ազատությունից: Տարօրինակ է, որ ամբողջ սրտով չես հանձնվում ինձ, այն ամեն ինչի հետ մեկտեղ, որ կամենում ես ունենալ:*

2.*Ինչո՞ւ ես ենթարկում քեզ ունայն տրտմությանը, ինչո՞ւ ես սպառում քեզ անօգուտ հոգնությունների մեջ: Կամքս կատարիր հնազանդության մեջ հարատևելով և ոչ մի վնաս չես կրի: Եթե այս առարկան նախընտրում ես մյուսից, եթե գերադասում ես ավելի այսինչ վայրում գտնվել, քան այն մյուս, որովհետև այսպես ավելի հարմար է քեզ և կարող ես ունենալ այն, ինչը գոհացնում է քեզ, միևնույնն է՝ հանգիստ չես գտնի երբեք և ո՛չ էլ ազատ կլինես հոգսերից, որովհետև ամեն ինչում ներկա են թերություններ և ամենուր չեն պակասի քեզ հակառակվողները:*

3.*Շահավոր է ո՛չ թե արտաքին ունեցվածքի բազմապատկումը, այլ՝ այն արհամարհելն ու արմատահիլ անելը սրտիցդ: Եվ այս խոսքս վերաբերվում է ո՛չ միայն առարկաներին ու դրամին, այլ նաև պատիվներ փնտրելուն և գովվել կամենալուն, բոլորն էլ իրողություններ՝ աշխարհի հետ անցնող:*

Վայրը չի կարող օգնել քեզ, եթե հոգուդ խորքում բացակայում է եռանդը: Արտաքին խաղաղությունը չի կարող երկար տևել, եթե իրական հիմքեր չունի սրտի անսասանության մեջ. այսինքն, եթե չես կոթնում իմ վրա, կարող ես բնակավայրդ փոխել, բայց ո՛չ երբեք բարելավվել: Որովհետև առաջին իսկ առիթի դեպքում կգտնես այն, ինչից որ փախչում էիր ... և թերևս առավել վատթարը:

4.*Հավատացյալը. Քորացրու ինձ, Ասված իմ, Սուրբ Հոգուդ շնորհներով: Տուր ինձ ուժ, որպեսզի հզորանա ինձնում ներքին մարդը և սիրտս հեռացնի իրենից բոլոր անօգուտ հոգսերն ու մելամաղձոտ տխրությունը, որպեսզի չհրապուրվեմ հարստությունների ունայն ցանկությամբ, լինեն դրանք չնչին առարկաներ, թե մեծաքանակ գանձեր, այլ՝ թող խոստովանեմ դրանք իբրև անցողիկ և դրանց հետ միասին թող ինձ նույնպես սեպեմ անցողիկ:*
Տևական ոչինչ չկա այս աշխարհում, ուր «ամեն բան ունայնություն է և հոգու տառապանք» *(Ժող* 1, 2-3*): Քանի՜ցս իմաստուն է նա, ով խորհում է այսպես:*

5. *Տուր ինձ, Տեր, երկնային իմաստությունը, որպեսզի սովորեմ ամեն ինչից գերիվեր Քեզ միայն փնտրել ու գտնել, ամեն ինչից վերադաս Քեզ միայն ճաշակել ու սիրել, և մնացած բոլոր իրողությունները գնահատել այն, ինչ որ են, Քո իմաստության համաձայն: Շնորհիր, որ խոհեմաբար խույս տամ շողոքորթներից և խաղաղությամբ համբերեմ ընդդիմախոսներին: Որովհետև մեծագույն իմաստություն է յուրաքանչյուր դատարկ խոսքի պատճառով չխոովվելը և կամավոր խուլ լինելը պատրալի հրապուրանքներին ի լուր: Այս կերպ միայն կարող եմ առաջադիմել ընտրյալ ճանապարհում:*

ԳԼՈՒԽ ԻԸ. ԸՆԴԴԵՄ ԲԱՄԲԱՍԿՈՏՆԵՐԻ

1.*Հիսուսը. Որդյակ, մի՛ տրտմիր մարդկանց քո հանդեպ վատակարծիք լինելու համար, և եթե քո մասին խոսում են բաներ, որոնք կնախընտրեիր չլսել: Ավելին. դու ինքդ քո մասին պետք է ունենաս առավել վատթար կարծիք և քեզնում համոզում ձևացնես, որ քեզնից ավելի թերի մեկը գոյություն չունի: Եթե գեթ մի քիչ առաջադիմած լինեիր ներանձնական կյանքի արահետներում, կարևորություն չէիր տա օդի մեջ նետված խոսքերին: Փոքր իմաստություն չէ ընդդիմությունների ժամանակ լռելը և ներքուստ ուղղվելը դեպի ինձ, առանց խոովվելու մարդկային կարծիքներին ի լուր:*

2.*Խաղաղությունդ չպետք է կախում ունենա մարդկանց խոսքերից. նրանց մեծարանքի կամ նվաստացման խոսքերի հետևանքում դու չես փոխվում և չես դառնում մի ուրիշ մարդ: Ո՞ւր են գտնվում իրական խաղաղությունն ու ճշմարիտ փառքը: Չէ՞ որ ինձնում:* Ով չի փափաքում հաճո լինել մարդկանց և չի վախենում նրանց երբեմն տհաճ լինելուց, մեծ անդորր կվայելի: *Ինձ որպես իր միակ նպատակ չունեցող սիրուց և ունայն ու անհիմն վախերից են ծնվում սրտի ալեկոծումներն ու զգայարանների ապստամբությունները:*

ԳԼՈՒԽ ԻԹ. ՕՐՀՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ ԸՆԴՄԵՋ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. *Հավատացյալը.* «Թող հավիտյան օրհնվի անունդ, Տեր» *(Տբթ* 3, 13*), որովհետև կամեցար, որ ենթարկվեմ այս նեղությանն ու փորձությանը: Չեմ կարող խուսափել*

սրանից, բայց կարիքն ունեմ հայցելու օգնությունդ, որպեսզի իմ համար բարի վախճան ունենա այս իրավիճակը: Տեր, գտնվում եմ նեղության մեջ և սիրտս հեռու է խաղաղ լինելուց, այո՛ շատ եմ տառապում այս փորձության պատճառով: «Այժմ, Հայր, ի՞նչ ասեմ. "Ազատի՞ր ինձ այս նեղությունից": Բայց ճիշտ սրա համար եմ եկել» *(Հվի* 12, 27*), որպեսզի Դու փառավորվես՝ փրկելով ինձ այս մեծամեծ փորձանքներից: Փրկիր ինձ, Տեր, որովհետև ես՝ թշվառս ի՞նչ կարող եմ անել կամ ո՞ւր գնալ առանց Քեզ: Տուր ինձ համբերություն այս անգամ ևս: Օգնիր ինձ, և որքան էլ խոովված լինեմ, չեմ հուսահատվի:*

2.*Իսկ այժմ, այսօրինակ փորձությունների մեջ ի՞նչ պետք է ասեմ:* «Տեր, թող Քո կամքը կատարվի» *(Մտթ* 26, 42*): Ավա՜ղ, արժանի եմ նեղություններ ու վշտեր կրելուն: Հարկ է, որ լավ տառապեմ և երանի՜ թե համբերությամբ, մինչև կանցնի փոթորիկը և կվերահաստատվի անդորրը: Քո ամենակարող Աջը կարող է ազատել ինձ այս փորձությունից և մեղմել նրա սաստկությունը, որպեսզի չընկճվեմ, այն նույն կերպ, ինչպես շատ անգամներ վարվեցիր իմ հետ անցյալում, ողորմած Աստված իմ: Այս փոփոխությունը Աջդ միայն կարող է ի կատար ածել. այն որքան դժվարին է իմ համար, նույնքան ավելի դյուրին է Քո համար:*

ԳԼՈՒԽ Լ. ԱՍՏԾՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հիսուսը. Որդյակ, ես եմ* «Տերը, որ մխիթարում է նեղության օրերում» *(Նամ* 1, 7*): Երբ նեղության մեջ ես, շտապիր իմ մոտ: Երկնային մխիթարության ընդունման մեծագույն արգելքն այն է, որ չափազանց ուշ ես դիմում աղոթքի: Այո՛, անձանձրույթ կերպով ինձնից խնդրելուց առաջ փնտրում ես զանազան ուրիշ միջոցներ, կամ էլ թափառում ես արտաքին իրողություններում: Եվ միևնույնն է, այս բոլորը վերջում գտնում ես սակավ նպաստավոր, մինչև չես ըմբռնում, որ ես եմ* «Նա, որ փրկում է Իրեն հուսացողներին» *(Սղմ* 16, 7*), որ ինձնից դուրս չկա ազդու օգնություն, ո՛չ էլ օգտակար խորհուրդ, և ո՛չ էլ հարատև դարման: Բայց այժմ, փոթորիկից հետո ուրքի կանգնելով, ստիպվիր ողորմությանս լույսով, որովհետև ես քո մոտ եմ վերանորոգելու համար ամեն բան, ո՛չ միայն ամբողջությամբ, այլ նաև առատությամբ ու առանց սահմանափակումների:*

2.*Մի՞թե կա որևէ մի գործ՝ գերազանց իմ կարողություններից: Կամ ի՞նչ է, կլինե՞մ երբևէ նման մի մարդու, որ ասում է և չի անում: Ո՞ւր է հավատքդ: Հաստատահիմն եղիր ու հարատև: Համբերատար եղիր ու կորովի. իր հարմար ժամին կցողվես երկնային մխիթարությամբ: Սպասիր ինձ, սպասիր. կգամ ու կամոքեմ վիշտդ: Իրական փորձություն է այն, որից մղված նեղարտում ես, ունայն վախ է այն, որ սարսափեցնում է քեզ: Ինչի՞ է ծառայում ապագայով մտահոգվելը, եթե ոչ միայն՝ տրտմությունն ավելացնելուն:* «Յուրաքանչյուր օրվա հոգսերը արդեն իսկ բավական են այդ օրվա համար» *(Մտթ* 6, 34*): Ունայն ու ապարդյուն է ապագա իրողություններով ուրախանալը կամ զայրանալը. ապագա, որ թերևս չես էլ ապրելու:*

3.*Բայց մարդկային է նման երևակայական պատկերներով տարվելը, և նաև տկար հոգու նշան է թշնամու թելադրանքներից այդքան դյուրավ դյութվելը: Թշնամու համար կարևորություն չունի, թե խաբում է ու պատրում իրականով կամ կեղծով, թե պարտության է մատնում ներկա իրողությունների կապվածությամբ կամ ապագայի շուրջ վախերով:*

«Թող ուրեմն չզարհուրի սիրտդ և խուճապի չմատնվի» *(Հվի* 14, 27*): Հավատա՛ ինձ և վստահիր ողորմությանս: Երբ կարծում ես, թե հեռու ես ինձնից, հաճախ սովորականից ավելի մոտ եմ լինում քեզ: Երբ կարծում ես, թե ամեն բան կորած է գրեթե անվերադարձ, հաճախ ճիշտ դա է արժանիքներ շահելու հարմարագույն առիթը: Եթե ինչ որ մի բան ձախ է ընթանում, չի նշանակում, թե ամեն ինչ կորած է: Եզրահանգումներ չպետք է կայացնես պահի ազդեցության ներքո, չրպետք է կանգ առնես խորհրդածելու ընդդիմությունների շուրջ, ո՛ր կողմից էլ հասնեն դրանք, ո՛չ էլ կարծես, թե վերստին ոտքի կանգնելու որևէ հույս անէացած է:*

4. *Մի՛ կարծիր, թե ամբողջովին լքել եմ քեզ, որովհետև մի փոքրիկ ժամանակի համար ուղարկում եմ փորձություններ և կամ որովհետև որոշ ժամանակով զրկվում ես փափաքելի մխիթարությունից. այսպես են քայլում դեպի երկնային Արքայություն առաջնորդող ճանապարհում: Եվ անկասկած, նեղություններին վարժվելը ավելի օգտակար է քեզ և իմ մյուս բոլոր ծառաներին, քան եթե ամեն բան ընթանար ձեր կամքի համաձայն: Ես ճանաչում եմ բոլոր գաղտնախորհուրդ մտածումները. գիտեմ, որ փրկությանդ համար անհրաժեշտ է մերթ ընդ մերթ զուրկ մնալը հոգևոր քաղցրություններից, որպեսզի չհպարտանաս հաջողություններիդ պատճառով, ո՛չ էլ ինքնահաճությամբ լցվես, համարելով քեզ այն, ինչ չես: Իրավունքներիս սահմանների մեջ է դադարեցնելն այն, ինչ տալիս էի, և հետո կրկին շնորհել, երբ կկամենամ ես ինքս:*

5. *Երբ կպարգևեմ, իմացիր, որ իմն են. երբ կկասեցնեմ դրանց հոսքը սրտիցդ ներս, վերցրած չեմ լինի այն, ինչ քեզ է պատկանում, որովհետև* «բոլոր շնորհներն ու կատարյալ պարգևներն ի վերուստ են տրված» *(Հկբ* 1, 17*): Եթե առաքում եմ քեզ նեղություններ ու հակառակություններ, մի՛ զայրացիր, ո՛չ էլ հուսահատվիր, որովհետև ես կարող եմ շուտով ափոփել քեզ և զվարթության փոխել որևէ վիշտ: Բայց առանց այս պատճառի իսկ, ես արդար եմ և արժանի ընդունելու փառք ու գոհություն, երբ այսպես եմ վարվում քո հետ:*

6. *Եթե ուղղամիտ դատաստաններ ես կայացնում և տեսնում ես ճշմարիտը, չպետք է խորապես տրտմես հակառակություններին ի տես, այլ ընդհակառակը՝ պետք է վայելես դրանք և երախտագիտություն հայտնես ինձ դրանց համար: Եվ ավելին. պարտավոր ես որպես իրական միակ բերկրանք նկատել այն, որ չեմ ինայում քեզ՝ առաքելով այդ վշտերը:* «Ինչպես Հայրն է ինձ սիրում, այնպես եմ սիրում ես ձեզ», *ասացի իմ նախասիրած աշակերտներին (Հվի* 15, 9*): Սակայն չուղարկեցի նրանց, անշուշտ, զվարճանալու ժամանակավոր հաճույքներով, այլ՝ նետեցի նրանց մեծ պայքարների մեջ. չուղարկեցի ճոխանալու պատիվներով, այլ՝ ընդունելու մերժում ու արհամարհանք. ո՛չ պարապության, այլ՝ ջանք ու քրտինքի. ո՛չ հանգստի, այլ՝ առատ պտղաբերելու շնորհիվ համբերության: Հիշի՛ր, որդյակ, այս խոսքերս:*

ԳԼՈՒԽ ԼԱ. ՄՈՌԱՆԱԼ ԱՐԱՐԱԾՆԵՐԻՆ՝ ԱՐԱՐՉԻՆ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. *Հավատացյալը. Տեր, դե՛ռ ավելի մեծ շնորհների կարիքն ունեմ՝ այդպիսի կատարելության հասնելու համար, ուր ո՛չ մարդիկ, ո՛չ էլ մյուս բոլոր արարածները չեն կարողանա արգելք հանդիսանալ երկնամետ ընթացքիս: Իրոք, քանի դեռ ցանկության շղթաներով կապված եմ որևիցէ մի իրողության, չեմ կարող դեպի Քեզ ճախրել*

անպարագիծ ազատությամբ: Ազատ սավառնել էր տենչում նա, ով գոչում էր. «Ո՞վ կտա ինձ աղդյոք թևեր աղավնու, որպեսզի մեկնեմ հանգիստս գտնելու» *(Սղմ* 54, 7*): Ի՞նչ կա ավելի հաղաղ, քան մաքուր ու պարզ հայացքը: Եվ ո՞վ է առավել ազատ, քան նա, ով ոչինչ չի փափաքում ունենալ երկրի վրա: Հարկ է, ուրեմն, բարձրանալ արարածներից գերիվեր, լիովին լքել սեփական անձը, և երկնային իրողությունների շուրջ մտածումներով արբեցած՝ զմայլվել Քեզնով, Արարիչ բոլոր գոյությունների, որ անհամեմատելի ես արարածների հետ: Ոչ ոք չի կարող ազատորեն նվիրվել ծառայությանդ, եթե սրտով անջատված չէ բոլոր արարածներից: Եվ սա՛ է հայեցողության բարձունքներին հասած Սրբերի սակավաքանակության պատճառը, որովհետև շա՜տ քչերն են իրենց սրտերն ամբողջությամբ շղթայազերծում մահկանացու արարածներից:*

2.*Հետևաբար, անհրաժեշտ է մի մեծագույն շնորհ, որ բարձրացնի հոգին և այն ինքն իրենից վեր հափշտակի: Եթե հոգին չի ձգտում դեպի բարձրագույնը, չի անջատվում արարածներից, կատարյալ միությամբ միանալով Աստծուն, անարժեքություններ են իր գիտությունն ու ունեցվածքները: Ընդմիշտ թշվառ կմնա և չնչին փոքրկություններում կթափառի նա, ով համոզված է, թե իսկապես մեծ ինչ որ մի բան գոյություն ունի Միակ, Անպարփակ, Հավիտենական Բարիքից դուրս: Ինչը որ Աստծուց դուրս է, ոչինչ է և պետք է որակավորվի ու գնահատվի որպես այդպիսին: Վիթխարի տարբերություն կա աստվածապաշտ և ի վերուստ լուսավորված մարդու իմաստության և բազմամյա կրթություն ստացած, նյութական սահմաններում ամենիմաց մարդու գիտության միջև: Շատ ավելի վեհ ու վսեմ է ուսմունքը, որ բիսում է ի վերուստ և աղբյուրանման հեղվում աստվածային պարգևատրմամբ, քան այն ճանաչողությունը, որ մարդկային միտքը ձեռք է բերում ջանքով ու հոգնությամբ:*

3.*Շատերն են փափաքում վայելել հայեցողական վիճակը, բայց քչերն են գործադրում նրան հասնելու միջոցները: Այս ճանապարհում ո՛չ փոքր արգելք է արտաքին զգայական հրահանգներին կառչելը և սակավ աշխատելը կատարյալ մահացուցմանը հասնելու համար: Չգիտեմ, թե ի՞նչ անվանեմ այս իրողությունը, չգիտեմ, թե ի՞նչ ոգի է մեզ առաջնորդում, թե ինչի՞ ենք հավակնում մենք, որ կույր, բայց իրականում ծածուկ հպարտությունից ծնված ինքնահաբեությամբ կոչում ենք մեզ հոգևորներ, երբ այնքա՜ն ջանք ու ճիգ, եռանդ ու խնամք ենք գործադրում նվաստ ու վաղանցուկ գործերում, մինչդեռ հազվադեպ անգամներ հազիվ ենք ամբողջական մտամիտումամբ խորհրդածում մեր ներքին հոգևոր կյանքի շուրջ:*

4.*Ցավոք, կարճ ամիտումից հետո իսկույն ցրվում ենք և խիստ քննության չենք ենթարկում մեր գործերը: Ուշադրություն չենք դարձնում, թե ինչպիսի իրողությունների ենք կապում մեր սրտերը, ո՛չ էլ ողբում ենք՝ մեզնում ամեն բան անմաքուր տեսնելով:* «Մարդկանցից յուրաքանչյուրն ապականել էր իր կյանքը երկրի վրա», *և այս իսկ պատճառով տեղի ունեցավ ջրհեղեղը (Ծնդ* 6, 12*): Հետևաբար, չափազանց ապականված լինելով մեր զգացումներն ու սկզբունքները, որոնց համաձայն ապրում ենք, դրանցից ծնունդ առնող գործերը նույնպես, բնականաբար, երևան են գալիս ապականված, բացահայտելով մեզնում ներքին եռանդի բացակայությունը:*

Մաքուր սրտից ծլարձակում են պտուղներ աստվածահաճո լավորակ կյանքի:

5.*Հիացումով ենք խոսում այս կամ այն մարդու կատարած գործերի շուրջ, բայց միևնույն ջանասիրությամբ չէ, որ կշռում ենք դիտավորությունն ու առաքինությունը,*

որոնցից մղված կատարել է այդ գործերը: Կամենում ենք իմանալ, թե այս մեկը կամ այն մյուսը հզոր է, հարուստ, գեղադեմ, ճարպիկ, ճարտար հեռատոր, հաճելի երգիչ կամ հմուտ արվեստագետ. բայց թե հոգով աղքատ է, համբերող ու հեզ, բարեպաշտ ու ներանձնացած, այս որակների կողքով անցնում ենք համր լռությամբ:

Բնությունն ուշադրություն է դարձնում մարդու արտաքինին, իսկ Շնորհն իր հայացքը հառում է ներքին իրողությունների վրա: Առաջինը հաճախ է խաբվում. երկրորդը, մինչդեռ, վստահում և հանձնում է իրեն Աստծուն, երբեք չսխալվելով:

ԳԼՈՒԽ ԼԲ. ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հիսուսը. Որդյակ, չես կարող կատարյալ ազատություն վայելել, եթե անմնացորդ չես հրաժարվում եսասիրությունից: Ծանրածանր շղթաներ են իրենց ոտքերի վրա կրում բոլոր հարստությունն դիզողներն ու ինքնահավանները, ագահներն ու հետաքրքրասերները, ծույլերն ու հաճոյամոլները, և բոլոր նրանք, ովքեր տևապես փնտրում են իրենց հարմարավետությունները և ո՛չ երբեք իմ կամքը, ովքեր հաճախ են երևակայում ու ծրագրում այնպիսի գործեր, որոնք գերազանցում են իրենց կարողություններին:*

Այն ամենը, որ չի բխում Աստծուց, սահմանված է ոչնչանալու:

Միշտ հիշիր այս փոքրիկ, բայց փորձառությամբ փաստված ասացվածքը. «Թո՛ղ ամեն բան և կգտնես ամեն բան», *հեռացրու քեզնից ցանկասիրությունդ և կգտնես հանգիստ: Լա՛վ խորհիրդածիր այս խոսքերի շուրջ. երբ սկսես գործադրել, կըմբռնես, թե արտահայտված իմաստը որքան իրական է:*

2. *Հավատացյալը. Տեր, առաջարկածդ մի օրվա գործ չէ, և ո՛չ էլ մանկական խաղ: Այդ փոքրիկ նախադասության մեջ համառոտված է վանական կյանքի երկնահաս կատարելությունը:*

3. *Հիսուսը. Որդյակ, կատարելության ուղին քո առջև մատնանշող բացատրություններդս լսելով չպետք է եր ընկրկես և ո՛չ էլ սարսափի մատնվես իսկույն: Ընդհակառակը, դեպի միշտ ավելի բարձր ու վսեմ իրողությունները պետք է ուղղվես, կամ գեթ փափաքես ու կամենաս հասնել: Երանի՜ թե ունենայիր այդքան քաջություն, և հասած լինեիր մի այնպիսի ասպիճանի, որ այլևս բռնված չլինեիր անձնասիրությանդ ախտով, այլ՝ պարզորեն հանձնեիր քեզ իմ կամքին և հրամաններին նրա, ում ես ինքս կարգել եմ Հայր միաբանության. այնժամ անսահմանորեն հաճելի կլինեիր ինձ և կյանքդ կանցներ լիակատար հոգեզվարթության ու խաղաղության մեջ:*

Շատ ու շատ բաներից դեռ պետք է անջատվես, և եթե ամբողջովին չհրաժարվես ամեն ինչից, չես ստանա ինձնից այն, ինչ խնդրում ես: «Ահա խորհուրդ եմ տալիս քեզ. ինձնից գնիր կրակի բովով անցած ու ազնվացած ոսկին» *(Հյտ* 3, 18*), այսինքն՝ երկնային իմաստությունը, որ ուրնակոխ է անում ստորին իրողությունները: Ջանա՛ ձեռք բերել այդ*

ոսկին՝ երկնաբույր խոնարհությունը, և մի կողմ՝ աղբանոց նեփրիր երկրային ու մարդկային որևէ իմաստություն կամ անձնահաճություն:

4.*Իմ դարպտև անփոփոխ ուսուցումն սա՛ է. մարդկանց գնահատմամբ թանկարժեք ու բարձր իրողությունների փոխարեն պետք է ձեռք բերես այն, ինչը նվաստ է աշխարհային որակավորմամբ: Թող մարդկանց կողմից ցածր ու մերժելի համարված և մոռացության մատնված իմ ոսկին արդարացիորեն արժևորվի քո կողմից որպես երկնային իրական միակ իմաստություն, որովհետև ինքն իր մեջ գոռոզամիտ չէ և ո՛չ էլ կամենում է գովասանքներ ընդունել երկրի վրա: Շատերն են այն խոսքերով մեծարում, մինչդեռ գործերով հեռանում են նրանցից: Սա՛ է այն «մեծարժեք գոհարը» (Մտթ* 13, 46*), որ թաքնված է շատերի տեսողությունից:*

ԳԼՈՒԽ ԼԳ. ՍՐՏԻ ԱՆՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ

1.*Հիսուսը. Որդյակ, մի՛ վստահիր զգացումներիդ, որովհետև փոփոխական են և միմյանց հաջորդում են գլխապտույտ արագությամբ: Քանի դեռ ապրում ես երկրի վրա, ենթակա ես լինելու շարունակական փոփոխման, նույնիսկ կամքիդ հակառակ. երբեմն ուրախ կզգաս քեզ, երբեմն էլ տխուր. երբեմն խաղաղ, երբեմն խռով. երբեմն եռանդուն, երբեմն ապառված. երբեմն ջանասեր, երբեմն ծույլ. երբեմն լուրջ, երբեմն ծիծաղկոտ:*

Բայց գերիվեր, քան այս փոփոխությունները, իմաստուն և հոգևոր կյանքում փորձառու եղողը մնում է անայլայլ, առանց ուշադրություն դարձնելու իր զգացումներին կամ թե ո՛ր կողմից է փչում փոփոխականության քամին, այլ միայն հոգալով, որ իր մտքի դիտավորությունը ուղղված լինի պատշաճ ու փափաքված նպատակին: Այսպիսով, դեպքերի ելևէջների մեջ, մնում է միշտ նույնը. անփոփոխ, անսասան, դիտավորության ջինջ հայացքը իմ վրա կենտրոնացրած:

2. *Որքան ավելի մաքուր է դիտավորության ակնարկը, այնքան ավելի խիզախորեն է կատարվում նավորդությունը աշխարհի զանազան ալեկոծումների վրայով: Բայց շատերի դիտավորության աչքը խավարած է, որովհետև հազիվ թե հանդիպում են հաճելի իրողության, կանգ են առնում դիտելու: Դժվար է գտնել եսասիրությունից բացարձակ կերպով ազատ գեթ մի հոգի. մինչդեռ այդպիսիներին եմ կոչում սուրբ և ինձ մտերիմ: Այդպես էր, որ Բեթանիայում հրյաները եկան ո՛չ միայն ինձ տեսնելու, այլ նաև «որպեսզի տեսնեն Ղազարոսին» (Հվի* 12, 9*): Հարկ է, ուրեմն, մաքրագործել դիտավորության կողմնորոշումները, որպեսզի լինեն պարզ և ուղիղ, սևեռված ի՛մ վրա, մոռացության մատնելով մնացած ամեն բան:*

ԳԼՈՒԽ ԼԴ. ԱՄԵՆ ԲԱՆԻՑ ԱՎԵԼԻ՝ ԱՍՏԾՈ ՍԵՐԸ

1.*Հավատացյալը. Ահա՛ Աստվածն իմ և իմ ամեն ինչը: Ավելի դեռ ի՞նչ եմ ուզում, տակավին ի՞նչ կարող եմ փափաքել, որ լինի լավագույն: Ո՜վ ախորժալուր ու քաղցրանույշ խոսք, բայց այդպիսի նրանց համար միայն, ովքեր Հիսուսին են սիրում, և ո՛չ թե աշխարհն ու աշխարհայիններին:* Աստված իմ և ամենայն ինչ իմ: *Հասկացողի համար բավական է ասվածը և հաճելի է, սիրողի համար, կրկնել այն հաճախ: Երբ Դու ներկա ես, Աստված իմ,*

ամեն բան զվարթադեմ է. երբ բացակա, ամեն բան վերածվում է ձանձրույթի: Դու հանդարտեցնում ես սիրտը, անծայրածիր խաղաղություն ես սփռում նրան մեջ և հոգեթով զվարթություն: Քեզնում է ամեն բան գտնում իր իրական իմաստը, Դու ես պարգևում ամեն ինչի համար Քեզ օրհնելու շնորհը, առանց Քեզ ոչինչ չի կարող հաճելի լինել տևական կերպով: Որպեսզի ինչ որ մի բան լինի առինքնող ու հաճելի, հարկ է, որ ներծծված լինի շնորհովդ և համեմված՝ իմաստությամբդ:

2.*Ով ճաշակում է Քեզ, զգում Քո անուշությունը, գտնում է քաղցրություն ամեն ինչում. ով չի ճաշակում Քեզ, ով համարում է Քեզ անհամաձայն իր ճաշակներին, ինչո՞ւմ արդյոք կկարողանա գտնել իր հանգիստը: Աշխարհի իմաստունները բավական հեռու են Քո իմաստությունից, ինչպես նաև նրանք, ովքեր թաղված են մարմնապաշտության ճահճուտներում: Որովհետև առաջինները լի են ունայնությամբ, իսկ երկրորդների մոտ է բնակվում մահը:*

Նրանք, ովքեր աշխարհային իրողություններն արհամարհելով և մարմնի ցանկությունները մահացնելով հետևում են Քեզ, բացահայտում են իրենց որպես իրական իմաստուններ, որովհետև ունայնություններից անցնում են ճշմարտությանը և մարմնից՝ հոգուն: Այդպիսիների համար հաճելի է միայն Աստված, իսկ այն ամենը, որ բարի են գտնում արարածների մեջ, վերագրում են Արարչի փառքին: Բայց այնուամենայնիվ, անսահմանորեն տարբեր են իրական գեղեցկությունները Արարչի ու արարածի, Հավիտենականի ու մահկանացուի, Անստեղծ Լույսի և այն լույսի, որ մասնակցում է առաջինի պայծառությանը:

3.*Ո՜վ Լույս հավիտենական, որ գերազանց ես, քան բոլոր լույսերն արարված, շողարձակիր ի վերուստ ճառագայթ մի պայծառափայլ, որ ներթափանցի մինչև սրտիս խորին ծալքերը: Մաքրագործիր, բերկրանքով պատիր, լուսավորիր ու կենսագործիր հոգիս իր ամբողջ կարողությամբ, որպեսզի միանա Քեզ սրբազան հափշտակությամբ:*

Ա՜հ, ե՞րբ է գալու այն երանելի ու սպասված ժամը, որում կհագեցնես ինձ ներկայությամբդ և կլինես իմ համար ամեն ինչ ամեն ինչում: Քանի դեռ սա չունեմ, լիովին երջանիկ չեմ: Ավա՜ղ, դեռ կենդանի է ինձնում հին մարդը, ամբողջովին խաչված չէ ու մեռած: Դեռ նյութում է հոգուն հակառակ բուռն ցանկություններ, սանձազերծում ներքին պայքարներ, խռովում անդորրը հոգու արքայության:

Բայց Դու, որ «տիրում ես ծովի զորությանը և մեղմացնում շառաչը նրա կոհակների, ե՛կ, օգնիր ինձ» *(Սղմ* 88, 10; 43, 26*)*, «կործանի՛ր հեթանոսներին, որ կամենում են պատերազմել, և ցիրուցան արա նրանց՝ զորությանդ շնորհիվ» *(Սղմ* 67, 31*): Ցույց տուր, աղաչում եմ Քեզ, մեծագործություններդ, և թող փառավորվի Աջդ: Որովհետև ա՛յլ հույս կամ ապաստան չունեմ, եթե ոչ միայն՝ Դու, Տեր Աստված իմ:*

ԳԼՈՒԽ ԼԵ. ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ ԵՐԲԵՔ

1. *Հիսուսը. Որդյակ, այս կյանքիդ ընթացքում ոչ մի վայրկյան ապահով չես, այլ՝ քանի դեռ ապրում ես, կարիքն ունես հոգևոր զենքերի: Շրջապատված ես թշնամիներով և հարձակումների ես ենթարկվում աջից ու ձախից: Եթե, հետևաբար, չորս կողմից չես պաշտպանվում համբերության վահանով, չես կարող երկար ժամանակ անխոցելի մնալ: Եթե սիրտդ անհետևսկոչելի կերպով չես հաստատում ինձնում, իմ սիրո համար ցանկացած զոհաբերություն կրելու արտաքուստ կամքով, չես կարող դիմանալ այս պայքարում և ո՛չ էլ հասնել երկնաբնակ երանելիների դափնեպսակին: Հարկ է, որ դյուցազնորեն դիմադրես փորձություններին և ժայռակործան բուռնցք գործադրես նրանց դեմ: «Հաղթողին կշնորհեմ ծածուկ մանանայից» (Հյտ 2, 17), մինչդեռ ծույլերը դատապարտված են իրենց թշվառության մեջ լքվելու:*

2. *Եթե հանգիստ ես փնտրում այս կյանքի ընթացքում, ուրեմն ինչպե՞ս ես կամենում հասնել հավիտենական հանգստին: Մի՛ տրամադրվիր հարմարավետ հանգստին, այլ՝ մեծ համբերության: Փնտրիր իրական խաղաղությունը, ո՛չ երկրի վրա, այլ՝ Երկնքում. ո՛չ մարդկանց կամ ուրիշ արարածների մեջ, այլ՝ ինձնում միայն: Աստծո սիրո համար ամեն բան պետք է կրես հոժարությամբ. հոգնություն և վիշտ, փորձություններ, նեղություններ, անձկություններ, խեղճություններ, հիվանդություններ, անարդարություններ, բամբասանքներ ու զրպարտություններ, հանդիմանություններ, նվաստացումներ, ամոթահարումներ, ուղղումներ ու արհամարհանքներ: Սրանք բոլորը բարի ներգործություն ունեն առաքինությունների զարգացման վրա, փորձում են իմ անկեղծ աշակերտներին և հյուսում երկնային դափնեպրսակը: Ես հավիտենական վարձատրությամբ եմ հատուցում նույնիսկ փոքրիկ ու կարճատև հոգնությունները, և թեթև նվաստացումների փոխարեն՝ շնորհում եմ փառք անսահման ու աննկարագրելի:*

3. *Մի՞թե կարծում ես, թե հոգևոր շարունակական մխիթարություններ ես վայելելու կամքիդ համաձայն: Սրբերս միշտ չէ, որ ունեցան սփոփումներ, ընդհակառակը՝ կրեցին բազում տրտմություններ, զանազան փորձություններ ու մեծամեծ ցամաքություններ: Բայց ամեն ինչում հարատևեցին համբերության մեջ և ավելի ինձ վստահեցին, քան իրենք իրենց, քաջ իմանալով, որ «ժամանակավոր տառապանքները անհամեմատելի են ապագա փառքի հետ» (Հռմ 8, 18): Ցանկանում ես իսկո՞ւյն ունենալ այն, ինչ շա՜տ շատերը ստացան ի գին մեծ ջանքերի, հետ բազում արցունքների ու նեղությունների: «Քաջալերվի՛ր, թող հոգիդ լինի զորեղ և վստահի ինձ» (Սղմ 26, 14), մի՛ հուսահատվիր, եւ մի՛ ընկրկիր, այլ՝ մարմնով ու հոգով ճակատամարտի նետվիր ի փառս իմ: Ես կվարձատրեմ քեզ առատորեն, ես կընկերակցեմ քեզ ընդմեջ բոլոր նեղությունների:*

ԳԼՈՒԽ ԼԶ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՆԱՅՆ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, հաստատիր սիրտդ իմ մեջ և մի՛ մտահոգվիր մարդկանց դատաստանների պատճառով, երբ խիղճդ առանց ինքնահաբության վկայում է, թե անպարտ ես և չարիք չես հասցնում ոչ ոքի: Բարի ու երանելի է տառապելն այսպես, և ծանր չէ նրա համար, ով խոնարհ է սրտով և ով ավելի Աստծուն է վստահում, քան ինքն*

իրեն: Բազմաթիվ են չարախոս շպրահոսները, պետք չէ հավատք ընծայել նրանց բամբասանքներին: Ինչպես նաև, հաշվի առ այն պարագան, որ որքան էլ գործես, անհնարին է, որ հաճելի լինես բոլորին:

2. *Պողոս Առաքյալը, ի սեր իմ խաղաղության, ջանաց հաճելի լինել բոլորին և յուրաքանչյուրի հետ հաղորդակցվել ըստ խոսակցի մտայնության: Եվ սակայն, մեծ արժեք չընծայեց մարդկային դատապարտություններին: Այլոց հոգևոր օգտի և փրկության համար՝ գործի դրեց ներքին իր բոլոր պաշարները, իր ուժերի սահմաններում, բայց չկարողացավ խուսափել այն բանից, որ ունանք երբեմն բացասական դատապարտություններ կայացնեին իր մասին և թերագնահատեին իրեն: Հետևաբար, ամեն բան ինձ վստահեց, որովհետև ինձ ամեն բան հայտնի է: Չարաբան լեզուների, անհիմն մտքերով առաջնորդվողների և նրանց դեմ, ովքեր հիմարաբար դուրս են նետում այն ամենը, որ տվյալ պահին կամենում են ասել, պաշտպանվեց համբերության ու խոնարհության վահանով: Բայց երբեմն էլ պատասխանեց, որպեսզի իր լռությունից գայթակղություն չծնվեր թուլամիտների համար:*

3. *Ինչո՞ւ ես վախենում մահկանացու մարդկանցից, որոնք այսօր կան, իսկ վաղը կանհետանան: Երկնչիր Աստծուց և չես սարսափի մարդկանց սպառնալիքներից: Ի՞նչ կարող է անել քեզ որևէ մեկը խոսքով կամ զրպարտությամբ: Ավելի իրեն է վնասում, քան քեզ, որովհետև ո՛վ էլ լինի, չի կարող փախչել աստվածային դատապարտությունից: Ինձ ունեցիր աչքերիդ առաջ և մի՛ վիճիր կամ դժգոհիր: Եթե քեզ թվում է, թե վատթար վիճակում ես գտնվում կամ կրում մի ամոթ, որին չես արժանացել, մի՛ զայրացիր և անհամբերությանդ պատճառով մի՛ գեղազրկիր հավիտենական դափնեպսակդ: Նախընտրելի է, որ հայացքդ դեպի ինձ ուղղես, ինձ, որ կարող եմ ազատել քեզ ցանկացած նվաստացումից, ինձ, որ «հատուցում եմ յուրաքանչյուրին ըստ իր գործերի» (Մտթ* 10, 27*):*

ԳԼՈՒԽ ԼԷ. ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻՑ ԿԱՏԱՐՅԱԼ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

1. *Հիսուսը. Որդյակ, լքիր անձդ և կգտնես ինձ: Մի՛ նախընտրիր ոչինչ, մի՛ կապվիր ոչնչի և կշահես միշտ: Որովհետև քեզ գերագույն աստիճանի լի ու գերագույն աստիճանի առատ շնորհ կտրվի, հազիվ թե անվերադարձ կերպով կհրաժարվես ինքդ քեզնից:*

2. *Հավատացյալը. Տեր, քանի՞ անգամ պետք է հրաժարվեմ անձիցս և ինչի՞ց անջատեմ սիրտս:*

3. *Հիսուսը. Միշտ և ամեն վայրկյան, ինչպես փոքր, այնպես էլ մեծ իրողություններում: Ոչ մի բացառություն չեմ ընդունում, կամենում եմ քեզ ազատ տեսնել ամեն ինչից: Ա՛յլ կերպ ինչպե՞ս կարող ես լինել իմը և ես քոնը, եթե չես հրաժարվում կամքիցդ ներքուստ և արտաքուստ: Որքան շուտով ի կատար ածես սա, այնքան ավելի լավ հոգեվիճակում կգտնես քեզ. և որքան ավելի լիովին ու անկեղծորեն, այնքան ավելի հաճելի կլինես ինձ և կշահես:*

4. *Ունանք հրաժարվում են, բայց որոշ վերապահումներով. ամեն բան ինձ չեն հանձնում, և հետևաբար՝ մտահոգվում են իրենց անձով: Ունանք էլ սկզբում նվիրում են ամեն բան, բայց հետո, երբ սկսվում է փորձությունը, ետ են վերցնում իրենց նվերը,*

այդպիսով չառաջադիմելով առաքինության մեջ: Այդպիսիք երբեք չեն հասնի մաքուր սրտի իրական ազատությանը և իմ քաղցրիկ մտերմության շնորհին, եթե չհրաժարվեն ամեն ինչից և եթե իրենց չմատուցեն որպես ամենօրյա զոհ. առանց այս պայմանի չկա, և ո՛չ էլ կարող է լինել հոգեպիսի միություն իմ հետ:

5.*Հաճախ եմ քեզ ասել, և այժմ կրկնում եմ նույնը. Լքիր անձդ, հրաժարվիր ինքդ քեզնից և կվայելես ներքին մեծ խաղաղություն:* Տուր ամեն բան, ամեն բան ստանալու համար: Մի՛ կամեցիր ոչինչ, մոռացիր ամեն ինչ:

Զգտիր ինձ հասնել մաքրությամբ ու հարատևությամբ, և կունենաս ինձ: Սիրտդ կլինի ազատ և ստվերները չեն ծանրանա ուսերիդ: Աշխատիր սրա՛ համար, սա՛ խնդրիր աղոթքներումդ, սա՛ փափաքիր. աղքատանալ անձնասիրությունից և որպես աղքատ հետևել աղքատ Հիսուսին. *մեռնել անձիդ համար և ապրել ինձնում հավերժ: Այդժամ միայն կանէանան ունայն մտապատկերներն ու ցնորքները, հանցապարտ խռովքները, ավելորդ մտահոգությունները: Այդժամ նաև կհեռանա քեզնից սարսափը և սատակմամբ կմեռնի նպատակաշեղ սերը:*

ԳԼՈՒԽ ԼԸ. ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ

1. *Հիսուսը. Որդյակ, պետք է մեծ ջանասիրությամբ ուշադրություն դարձնես այս հանգամանքին. ամենուր և քո բոլոր արտաքին գործերում կամ ձեռնարկներում լինել ներքուստ ազատ և տերը անձիդ, և որ ամեն բան ենթակա լինի քեզ, ո՛չ թե դու առարկաներին ու դեպքերին: Պետք է դու լինես արարքներիդ տերն ու չափավորողը, և ո՛չ թե դրանց ծառան կամ վարձկանը: Եղիր ինչպես իրական ազատ «իսրայելացի» և մասնակցիր Աստծո որդիների երանությանն ու ազատությանը, որոնք ներկա իրողություններից վեր կանգնած՝ հայում են հավիտենական իրողություններին: Նրանք ձախ աչքով են դիտում վաղանցուկ բաներին, մինչդեռ աջով՝ երկնայիններին: Նրանց չեն հրապուրում ժամանակավոր բարիքները, դրանց կապվելու համար, այլ ավելի՝ իրենք են ծառայեցնում այդ բարիքներն ըստ բանական պահանջի, Արարչի կողմից հաստատված կանոնների համաձայն. Արարչի, որ չկամեցավ Իր արարչության մեջ որևիցէ մի բան դուրս թողնել կանոններից:*

2.*Եթե դեպքերի ու պատահարների մեջ կանգ չառնես արտաքին երևույթների վրա և եթե մարմնեղեն աչքով միայն չքննես այն ամենը, որ տեսնում ես կամ լսում, այլ՝ բոլոր իրավիճակներում Մովսեսի նման իսկույն շտապես դեպի Տապանակը, խորհուրդ ստանալու համար, կունկնդրես աստվածային պատասխանս և կվերադառնաս ներկա ու ապագա բազում խորհուրդների շուրջ լուսաբանումներ ստացած: Մովսեսը միշտ դիմում էր Տապանակի Տիրոջը, լուծելու համար կասկածներն ու հարցումները, և աղոթքի միջոցով էր պաշտպանվում վտանգներից ու մարդկանց չարությունից: Դու նույնպես, պետք է փախչես սրտիդ խորքերը, մեծագույն թախանձանքով աղերսելով աստվածային օգնությունը: Եթե Հեսուն և իսրայելացիները խաբվեցին գաբավոնացիներից, դա եղավ, որովհետև «Տիրոջից խորհուրդ չհարցրեցին» (Հս* 9, 14*), այլ՝ չափազանցյալ վստահություն ընծայելով քաղցր խոսքերին, խաբվեցին կեղծ գթասրտությունից:*

ԳԼՈՒԽ ԼԹ. ՇԱՀԻՑ ԾՆՎՈՂ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.*Հիսուսը. Որդյակ, ինձ վստահիր գործերդ և ես դրանք կտնօրինեմ լավագույն կերպով: Կարգադրումներիս հետևիր և իսկույն կզգաս օգուտը:*

2.*Հավատացյալը. Այո՛, Տեր, Քեզ եմ հանձնում իմ գործերը, քանի որ իմ մտահոգությունները դատարկ են ու ապարդյուն: Երանի՜ թե միտքս ապագա հոգսերով չծանրաբեռնեի, այլ՝ պատրաստակամորեն նվիրվեի կատարելու այն, ինչ հաճելի է Քեզ:*

3.*Հիսուսը. Որդյակ իմ, մարդը հաճախ չափազանց անձկությամբ է փափաքում որոշ իրողություններ, բայց հազիվ է դրանք ձեռքբերում, սկսում է ա՛յլ կերպ գնահատել իրադրությունը, որովհետև զգացումները չեն խարսխվում միշտ միևնույն առարկայի վրա, այլ՝ քարշ են գալիս մեկից դեպի մյուսը:*
Ոչինչ արժեցող իրողություն չէ հրաժարվելը նաև ոչինչ արժեցող իրողություններից:
Մարդու հոգևոր իրական առաջադիմությունը կայանում է ինքնամերժման և անձնուրացման մեջ: Ինքն իրենից հրաժարված անձը մեծապես ազատ է ու վստահ: Բայց հին թշնամին, որ խոչնդոտներ է հարուցում բարիների ճանապարհին, երբեք չի հրաժարվում փորձելուց, նյութում է խաբեություններ, անզգույշներին որոգայթների մեջ որսալու համար: Ասացի Առաքյալներիս և նույնը կրկնում եմ բոլոր ժամանակների բոլոր մարդկանց.

«Հսկեցեք և աղոթեցեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք» *(Մտթ* 26, 41*):*

ԳԼՈՒԽ Խ. ՄԵԶՆՈՒՄ ՉՈՒՆԵՆՔ ՊԱՐԾԵՆԱԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՈՉԻՆՉ

1.*Հավատացյալը. Տեր,* «ի՞նչ է իրենից ներկայացնում մարդը, որ հիշում ես նրան, կամ ի՞նչ արժեք ունի մարդու որդին, որ հոգատարություն ես ցուցաբերում նրա հանդեպ» *(Սղմ* 8, 5*): Ի՞նչ արժանիք ունի մարդը, որ տալիս ես նրան Քո շնորհը: Տեր, ինչպե՞ս կարող եմ տրտնջալ, եթե լքես ինձ, կամ ո՞ր իրավունքներիս վրա արդարացիորեն հիմնվելով կարող եմ բողոքել, եթե մերժես գոհացում տալ խնդրանքներիս: Մի բան միայն կարող եմ խորհել և խոսել ամենայն իրավացիությամբ. «Տեր, ես ոչի՛նչ եմ, ոչի՛նչ չեմ կարող, ինքս ինձնում չունեմ բարի ոչի՛նչ: Ավելին. թերանում եմ միշտ և ամեն ինչում, շարունակ հակվելով դեպի ոչինչը: Եվ եթե չօգնես ինձ և չքաջալերես ներքուստ, կընկղմվեմ հեղգության ու սանձարձակության տիղմերի մեջ»:*

2.*Բայց Դու, Տեր, միշտ անփոփոխ ես և ապրում ես հավիտյան, միշտ բարի ես, արդար և սուրբ, ամեն բան լավ ես կատարում, արդարորեն ու սրբորեն, և ամեն բան տնօրինում ես մեծ իմաստությամբ: Մինչդեռ ես, որ հակված եմ ավելի եր ընկրկելու, քան առաջադիմելու, չեմ տևում միևնույն վիճակում և բարձրության վրա: Եվ սակայն, երբ կամենում ես և դեպի ինձ ես երկարում օգնական բազուկդ, իսկույն ամեն բան փոխվում է և ընթանում դեպի լավագույնը: Որովհետև Դու, առանց մարդկային որևէ օգնության, կարող ես զորավիգ լինել ինձ և դարձնել հաստատահիմն, այնպես, որ այլևս չտարվեմ զանազան իրողություններով, այլ՝ միայն դեպի Քեզ ուղղեմ սիրտս և միմիայն Քեզնում գտնեմ հոգուս հանգիստը:*

3.*Եթե իսկապես հրաժարվեի մարդկային բոլոր միտքերից, – լինի հոգեսիրությունից, թե Քեզ փնտրելու կարիքներից մղված, – քանի որ մարդկանցից ոչ ոք չի կարող լիացնել հոգուս պապակը, այնժամ կկարողանայի հուսալ շնորհիդ այցելությանը և ցընծալ ընդմեջ հոգևոր նորանոր միտքերի:*

4.*Երախտագիտություն եմ հայտնում Քեզ, Տեր, այն բոլոր բարիքների համար, որ պատահում են ինձ. Քեզ, որից գ են բխում բոլոր բարիքները: Քանզի ես ունայնություն և ոչինչ եմ Քո առջև, մարդ եմ դյուրատոտիտ ու դյուրաբեկ: Ինչո՞վ կարող եմ ուրեմն պարծենալ, և ինչպե՞ս կարող եմ փափաքել ընդունել պատիվ ու մեծարանք: Թերևս ոչնչությա՞նս համար: Կլիներ գագաթնակետը հիմարության: Հպարտությունը մահաբերյուր ժանտախտ է, մեծա-*
գույն ունայնություն, որովհետև հեռացնում է իրական փառքից և մերկացնում զրկում երկնային շնորհից: Մարդիկ իրենք իրենց հաճելի թվալով՝ տհաճ են դառնում Քեզ. մարդկային գովասանքներ փնտրելով՝ զուրկ են մնում իրական արժեքներից:

5.*Բայց իրական փառքը և սուրբ բերկրանքը Քո՛ Անունը հոչակելն է, և ո՛չ թե՝ ինքներըս մեր. վայելելն է հանուն Քո՛, և ո՛չ թե՝ հանուն մեր եսի. ո՛չ թե արարածներով հրճվելն է, այլ՝ Արարիչով զմայլվելը:*

Թող գովյալ լինի Քո՛ Անունը, ո՛չ իմը. թող մեծարվեն Քո՛ գործերը, ո՛չ թե իմոնք. թող օրհնվի Քո՛ սուրբ Անունը, Հիսուս, և ինձ թող չուղղվի ոչ մի գովասանք մարդկանցից: Դո՛ւ ես իմ փառքը, Դո՛ւ ես բերկրանքն իմ սրտի:

6.*Թող հրեաները փնտրեն միմյանց տրվող մարդկային փառքը, ես Քեզնից եկող փառքն եմ փնտրում միայն, Աստված իմ: Եվ իրականում, որևէ մարդկային փառք, որևէ երկրային պատիվ, աշխարհային որևէ բարձրություն միմիայն ունայնություն են ու տխմարություն, հավիտենական փառքիդ համեմատ: Աստված իմ, ո՜վ Ամենասուրբ Երրորդություն, Քեզ են միայն վայելում գովք ու պատիվ, մեծարանք ու փառք հավիտյանս հավիտենից:*

ԳԼՈՒԽ ԽԱ. ԱՆՑՈՂԻԿ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

1.*Հիսուսը. Որդյակ, չպետք է վշտանաս, երբ տեսնես, որ ուրիշները հարգանք են ընդունում և գրավում բարձր դիրքեր, մինչ դու արհամարհվում ես և նվաստացվում: Դեպի ինձ բարձրացրու սիրտդ, դեպի Երկինք, և երկրի վրա չեն տրտմեցնի քեզ մարդկանց թերի գնահատումները:*

2.*Հավատացյալը. Տեր, ես կույր եմ, և դյուրությամբ եմ խաբվում ունայնություններից: Եթե քաջ անկեղծությամբ եմ քննում ինձ, տեսնում եմ, որ ոչ ոք մեղադարտ չէ իմ հանդեպ, հետևաբար՝ դժգոհելու իրավունք չունեմ: Ավելին. հաճախ ես ինքս Քեզ ծանրորեն վշտացնելով՝ արդարացիորեն եմ կրում ընդդիմություններ արարածների կողմից: Ես արժանի եմ ընդունելու նվաստացում և արհամարհանք. Դու, մինչդեռ, արժանի ես գովքի, պատվի ու փառքի: Եվ եթե ինքս ինձ չտրամադրեմ հոժարությամբ և սիրով ընդունելու*

թերագնահատում և լքում բոլոր արարածներից, չեմ կարողանա գտնել հոգուս խաղաղությունն ու կայունությունը, չեմ կարողանա ըմբռնել հոգևոր ծածուկ իմաստները, ո՛չ էլ՝ միանալ Քեզ լիովին:

ԳԼՈՒԽ ԽԲ. ՄԵՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՋ ՉԷ

1.*Հիսուսը. Որդյակ, եթե խաղաղությունդ ցանում ես գտնել քեզ համակրելի կամ քեզ ընկերակցող անձանց մեջ, տևապես կշարունակես մնալ անկայուն և շղթայված: Մինչդեռ եթե դիմես հավիտյան կենդանի ճշմարտությանը, քեզ թանկագին որևէ մեկի մահվան համար նաև չես տրտմի: Ընկերային կամ ուրիշ որևէ սեր պետք է հիմնվի իմ վրա, և ինձ աչքերիդ առջև ունենալով պետք է սիրես նրանց, ովքեր այս կյանքում համակրելի են քեզ և թանկագին: Առանց ինձ, մտերմությունն անարժեք է և չի կարող տևել. իրական և ջինջ չէ այն ընկերությունը, որ ես չեմ օրհնում: Որպես վանական, պետք է այնքան մահացած լինես մարդկային սիրո համար, որ փափաքես, հնարավորության սահմաններում, հեռու մնալ հասարակությունից ու աղմկալի ժողովատեղիներից: Մարդն այնքան ավելի է մոտենում Աստծուն, որքան ավելի է խուսափում երկրային ափոփանքներից: Եվ այնքան ավելի է դեպի վեր, դեպի Աստված բարձրանում, որքան ավելի վար է իջնում ներքուստ, հոգով ու սրտով խոնարհվելով:*

2.*Ով իրեն է վերագրում որևէ բարիք, խոչընդոտում է աստվածային շնորհի հոսքին, որովհետև խոնարհ հոգուն է միշտ փնտրում Սուրբ Հոգու շնորհը: Եթե կարողանայիր ոչընչացնել եսապաշտությունդ և խուսափեիր արարածներին կապվելուց, շնորհներս հոգուցդ ներս առատությամբ հեղելու հնարավորությունը կտայիր ինձ: Երբ անմաքուր աչքով ես դիտում արարածներին, Արարչի դեմքը թաքնվում է հայացքիցդ: Սովորիր ի սեր Արարչի*
հաղթել անձնասիրությանդ ամեն ինչում, և այդպիսով միայն կարող կլինես հասնելու Աստ-
ծո ճանաչողությանը: Ա՛յլ բան է հավատալ Աստծո գոյությանը, ա՛յլ բան է ճանաչել Աստծուն: *Եթե նույնիսկ հարցը վերաբերվում է մի ոչինչ իրողության, եթե դրան տրվում ես չափազանցյալ «աչքով» ու «սրտով», արգելքի է վերածվում դեպի գերագույն Բարին ուղղված ընթացքիդ:*

ԳԼՈՒԽ ԽԳ. ԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՆԱՅՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

1.*Հիսուսը. Որդյակ, թող քեզ չհմայեն մարդկանց գեղեցիկ ու նրբիմաստ խոսքերը, որովհետև* «Աստծո Արքայությունը ճառախոսությունների մեջ չի կայանում, այլ՝ առաքինության» *(1Կր 4, 20): Ուշադիր եղիր խոսքերս լսելիս, որոնք բոցավառում են սրտերը, լուսավորում՝ մտքերը, մղում են զղջման և ափոում միսիթարություններ հազարատեսակ: Երբեք մի՛ կարդա ավելի գիտուն կամ ավելի հանճարեղ երևալու դիտավորությամբ. դրա փոխարեն, աշխատիր արմատախիլ անել մոլություններդ: Այս վերջինն առավել օգտակար է քեզ, քան բազում խրթին խնդիրների շուրջ ծանոթությունը:*

2.*Շատ բաներ ընթերցելուց և սովորելուց հետո էլ կարիքն ունես միշտ վերադառնալու այս միակ կարևոր սկզբունքին. Ես եմ, որ տալիս եմ մարդուն գիտություն, և խոնարհներին*

պարգևում եմ առավել լուսավոր իմացականություն, քան մարդկային բազմամյա ուսուցումները: Ում ուսուցիչը ես եմ, իմաստուն կդառնա կարճ ժամանակամիջոցում և կառաջադիմի հոգևոր ասպարեզում: Վա՜յ նրանց, ովքեր կամենում են մարդկանցից իմանալ հեփաքրքրասիրությունը գրգռող բաներ և շատ քիչ ուշադրություն են դարձնում, թե ինչպես կարող են ծառայել ինձ: Հասնելու է ժամանակը, երբ գալու եմ – ուսուցիչների Ուսուցիչս, Փրկիչս, Հրեշտակների Տերս – ունկնդրելու դասախոսությունները բոլորի, այսինքն՝ քննելու յուրաքանչյուրի խիղճը: Այնժամ «խուզարկելու եմ Երուսաղեմը լապտերը ձեռքիս» *(Սոփ* 1, 12*) և* «ամենախավար գաղտնարաններն անգամ լուսավորվելու են» *(*1*Կր* 4, 5*), և համրանալու են պատճառաբանումները մարդկային լեզուների, իրենց փաստարկումների հետ միասին:*

3.*Ես մի ակնթարթում հավիտենական ճշմարտության ճանաչողությանն եմ վերամբարձում խոնարհ միտքը, ավելի՝ քան եթե տասնյակ տարիներ սովորեր համալսարաններում: Ես ուսուցանում եմ առանց խոսքերի ժիորի, առանց կարծիքների բախման, առանց անապահաս պերճախոսության և առանց փաստարկումների պատերազմի: Ես ուսուցանում եմ արհամարհել երկրային իրողությունները, մերժել անցողիկ հաճույքները, փնտրել ու ճաշակել հավիտենական իրողությունները, խուսափել պատիվներից, համբերել նեղություններին, ամեն հույս դնել իմ վրա, ոչինչ չփափաքել ինձնից դուրս և եռանդով սիրել ինձ, բոլոր գոյություններից գերիվեր:*

4.*Ոմանք ինձ այսպես սիրելով՝ սովորեցին ասպվածային ճշմարտությունը, որի մասին, հետո՛, խոսեցին զմայլանքով: Այդպիսիք մեծապես շահեցին ամեն բան թողնելով, քան թե՝ նրբին հարցեր ուսանելով: Ոմանց ուսուցանում եմ ընդհանուր գիտելիքներ, իսկ ոմանց՝ յուրահատուկ: Ոմանց հայտնում եմ քնքշությամբ, ընդմեջ խորհրդանշանների ու պատկերների, մինչդեռ ուրիշների բացահայտում եմ խորհուրդներս մեծ շողարձակմամբ: Գրքերի լեզուն նույնն է, բայց բոլորին նույն կերպ չի կրթում, որովհետև ես եմ ճշմարտության Ուսուցիչը, քննողը սրտերի. ինձ հայտնի են բոլորի մտածումները: Ես եմ, որ մղում եմ գործի և բաշխում պարգևներս, ինչպես հարմար եմ նկատում յուրաքանչյուրի համար:*

ԳԼՈՒԽ ԽԴ. ՉԿԱՌՉԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՆ

1.*Հիսուսը. Որդյակ, հարկ է, որ շատ բաներ անգիտանաս և քեզ մեռած համարես աշխարհի համար, իսկ աշխարհը՝ մեռած քո համար: Հարկ է, որ խուլ ձևանաս ի լուր շատ բաների և ավելի այն իրողությունների մասին մտածես, որոնք նպաստավոր են հոգուդ խաղաղությանը:*

Ավելի լավ է հայացքը հեռացնել փհաճություն պատճառող իրողություններից և թողնել յուրաքանչյուրին իր կարծիքի մեջ, քան վեճի բռնվել: Եթե հաշտ լինես իմ հետ և մտաբերես հավիտենական դատաստանը, առավել դյուրությամբ կընդունես պարտված լինելուդ պարագան:

2.*Հավատացյալը. Տեր, այս ո՞ւր ենք հասել մարդիկս: Ահա ողբում ենք ժամանակավոր վնասի պատճառով, չնչին շահի համար քրտինք ենք թափում ու վազվզում*

այս ու այն կողմ, մոռացության մատնելով հոգևոր վնասը, կամ էլ անդրադառնում ենք շատ ուշ:

Տրվում ենք իրողությունների, որոնք քիչ կամ ոչինչ արժեն, մինչդեռ անհունորեն արժեքավորը անհոգության է մատնվում ապշեցուցիչ ծուլությամբ, որովհետև մարդիկ ամբողջովին են նվիրվում արտաքին գործերին, և եթե երկար ժամանակ չեն ուղղում իրենց ընթացքը, հարմարվում են և հիմարաբար գոհանում իրենց հոգևոր սնանկ վիճակով:

ԳԼՈՒԽ ԽԵ. ՀԱՎԱՏՔ ՉՊԵՏՔ Է ԸՆԾԱՅԵԼ ԲՈԼՈՐԻՆ ԱՆԽՏԻՐ

1. *Հավատացյալը.* «Օգնիր ինձ, Տեր, նեղության օրում, որովհետև ունայն է մարդկային օգնությունը» *(Սղմ* 59, 13*): Քանի՞ անգամներ չգտա հավատարմություն այնտեղ, ուր հույսն ունեի գտնելու, և ընդհակառակն՝ գտա այնտեղ, ուր չէի սպասում երբեք: Հետևաբար, ունայն է մարդկանց հուսալը, մինչդեռ* «արդարների փրկությունը Քեզնում է, Աստված» *(Սղմ* 36, 39*): Օրհնյալ եղիր, Տեր, այն ամենի համար, որ պատահում է մեզ: Տկար ենք ու դյուրափոփոխ, հեշտությամբ ենք սխալվում և միշտ պատրաստ ենք փոխելու մեր կարծիքները:*

2. *Կա՞ արդյոք մի մարդ այնքա՞ն զգույշ ու շրջահայաց, մինչև իսկ փոքրիկ սխալների ու տատամսումների չենթարկվելու ասրիճան: Եվ սակայն, Քեզ հուսացողները, Տեր, և պարզ սրտով Քեզ փնտրողները դյուրությամբ չեն ընկնում: Իսկ եթե նույնիսկ մատնվում են որոշ նեղությունների, որքան էլ դրանք ծանրանան իրենց վրա, շուտով ազատվում են կամ միխթարվում Քեզնից, որովհետև Դու մինչև վերջ չես լքում Քեզ հուսացողներին: Հազվագյուտ է հավատարիմ բարեկամը, որ աներկմիտ ու անսասան է մնում ընկերոջ նեղություններում:*
Տեր, միայն Դու ես միշտ հավատարիմ, և ուրիշ ոչ ոք Քեզ նման չէ:

3. *Քանիցս գիտակից են սրբակյաց հոգիներից մեկի հետևյալ խոսքերը.* «Հոգուս հիմքն ու կայունությունը Հիսուսն Ինքն է»*: Եթե նույնպիսին լիներ նաև իմ պարագան, դյուրությամբ չէի խոովվի մարդկային երկյուղների պատճառով, և ո՛չ էլ կզայրանայի մարդկանց խոսքերին ի լուր: Ո՞վ կարող է նախատեսել ամեն բան: Ո՞վ կարող է պատսպարվել ընդդեմ գալիք չարիքների: Սպասված ծանոթ չարիքներն անգամ հաճախ վնասում են մեզ. ի՞նչ կանեն ուրեմն չսպասված չարիքները: Բայց ինչո՞ւ ե՛ս, խեղճ անմիտս, կանխապես չնախատեսեցի, ինչո՞ւ այսքան հեշտորեն հավատք ընծայեցի ուրիշներին: Թեև վանական ենք, բայց միշտ մարդ ենք, տկար մարդիկ, թեև շատերը կարծում են և անվանում են մեզ հրեշտակներ: Ո՞ւմ հավատամ, Տեր, ո՞ւմ, եթե ոչ միայն՝ Քեզ: Դու ես ճշմարտությունը, որ ո՛չ խաբում ես և ո՛չ էլ խաբվում: Ընդհակառակն,* «ամեն մարդ ստախոս է» *(Սղմ* 115, 2*), դյուրասասան, անկայուն ու դյուրաբեկ, հատկապես՝ խոսքերում. այն ասրիճան, որ իսկույն չպետք է հավատալ այն ամենին, որ ճշմարիտ է թվում իր պատճառաբանումներում:*

4. *Մեծագույն կանխիմացությամբ խորհուրդ տվեցիր մեզ զգուշանալ մարդկանցից, ասելով.* «Մարդու թշնամին իր ընտանիքն է» *(Մտթ* 10, 36*), և որ չպետք է հավատանք, երբ*

ասեն. «Ահա այստեղ է Քրիստոսը, կամ թե՝ ահա այնտեղ է» (Մտթ 24, 23): Վշտակիր փորձառությամբ սովորեցի սա և երանի՜ թե այսուհետև կարողանամ ավելի զգույշ լինել և չհամառեմ անմտությանս մեջ: «Ուշադիր եղիր», ասում է ինձ մեկը, «և գաղտնի պահիր այն, ինչ ասում եմ»: Եվ մինչ ես փակ եմ պահում բերանս, կարծելով, որ ասվածը գաղտնիք է, ինքը չի կարողանում լռել, հայտնում է այն, ինչը կամենում էր, որ ես գաղտնի պահեի, հանկարծակի մատնում է և՛ ինձ, և՛ իրեն, ապա լքում ինձ ու անհետանում: Հեռու պահիր ինձ, Տեր, այդպիսիներից, որպեսզի նմանների ձեռքը չընկնեմ, և ո՛չ էլ ես ինքս վարվեմ այդպես: Հավատարիմ ու մնայուն խոսքեր դիր շուրթերիս վրա, և հեռացրու ինձնից չարախոս լեզուներին: Չպետք է անեմ այն, ինչ ես ինքս չեմ կամենում կրել:

5.*Քանի՜ցս գեղեցիկ և խաղաղության պահպանման համար նպաստավոր է ուրիշների մասին չխոսելը, ամեն ինչին անխուրիր չհավատալը, լսածը դյուրությամբ չհաղորդելը, մեր հոգևոր ներքին տրամադրությունները շատ քչերին հայտնելը, միշտ Քեզ փնտրելը, որ ընթերցում ես սրտի մեջ, չտարուբերվելը խոսքերի քամիներից, և ընդհակառակն՝ կամենալը, որ ներքին կամ արտաքին ամեն բան կատարվի կամքիդ համաձայն: Երկնային շնորհը պահպանելու համար քանի՜ցս ապահով է մարդկային պերճանքից խուսափելը և հիացում ու ծափահարություններ ընդունել չփափաքելը, այլ ընդհակառակն՝ եռանդով նվիրվելն այն ամենին, որն հայթայթում է մեր համար բարեպաշտություն և վարքի ու բարքի բարելավում: Շա՜տ շատերի համար կործանարար եղավ իրենց առաքինությունների բեմ ելնելն ու ժամանակից շուտ գովասանք ընդունելը: Մինչ որքա՜ն օգտակար եղավ այս կյանքի ընթացքում գաղտնի պահված շնորհը. մի կյանք, որ շարունակական փորձություն է ու պայքար:*

ԳԼՈՒԽ ԽԶ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԹՈՒՆԱԽԱՅԹ ԽՈՍՔԵՐԸ

1.*Հիսուսը. Որդյակ, հարատև եղիր և հույսդ իմ վրա դիր: Իրականում, խոսքերն ա՛յլ բան չեն, եթե ոչ միայն՝ խոսքեր: Թռչում են օդի մեջ, բայց չեն կարողանում ճեղքել քարը: Եթե հանցավոր ես, պատրաստ եղիր նորոգվել բարի կամքով, իսկ եթե խիղճդ ոչինչ չի վրկայում քո դեմ, հոժարությամբ կրիր այդ փոքրիկ նեղությունն ի սեր Աստծո: Դեռևս անբավարար է, որ երբեմն համբերում ես չնչին հակաճառումներին, բայց տակավին ունակ չես կրելու ծանր ընդդիմություններ: Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչու են այդօրինակ ոչնչություններն անգամ հոշոտում սիրտդ: Որովհետև դեռ մարմնավոր ես և մարդկանց ուշադրություն ես դարձնում ավելի, քան հարկավոր է: Եվ քանի որ սարսափում ես արհամարհված լինելուց, չես կամենում հանդիմանվել թերություններիդ համար, այլ՝ ջանում ես ծածկել դրանք չքմեղանքներով:*

2. *Բայց քնքիր քեզ է՛լ ավելի լավ, և կտեսնես, թե ինչպես աշխարհի ոգին դեռ կենդանի է քեզնում, մարդկանց հաճո լինելու ունայն փափաքի մեջ իտրանալով: Երբ խուսափում ես թերություններիդ համար նվաստացված ու արհամարհված լինելուց, հստակ է, որ իսկապես խոնարհ չես, ո՛չ էլ մեռած՝ աշխարհին, և ո՛չ էլ «աշխարհն է խաչված քո համար» (Գաղ 6, 14): Լսիր խոսքս և կարևորություն չես ընծայի մարդկանց տասնյակ հազարավոր խոսքերին: Նույնիսկ եթե հնարավոր ամենաչարաղետ բամբասանքներն ուղղեն քո դեմ, ինչո՞վ կկարողանան վընասել քեզ: Մի մազ անգամ կկարողանա՞ն խլել գլխիցդ:*

3. *Կծու խոսքերին ի լուր խոովվում է սիրտը նրա, ով չի պահում իր սիրտը ամփոփության մեջ և ինձ նույնպես տևապես չունի իր աչքերի առաջ: Մինչդեռ ով վստահում է ինձ, չգործելով իր սեփական կարծիքների համաձայն, չի սարսափում մարդկանցից: Ես եմ դատավորը և ինձ հայտնի են բոլոր գաղտնիքները, ճանաչում եմ գործի ընթացքը, գիտեմ, թե ո՛վ կատարեց անթույլատրելի արարքը և թե ո՛վ կրեց պատիժը: Քո դեմ հնչած խոսքերը գալիս են ինձնից, դեպքերը պատահում են իմ թույլտվությամբ, որպեսզի* «հայտնի դառնան խորհուրդները բազում սրտերի» *(Ղկս* 2, 35*): Ես կդատեմ անօրենին ու անմեղին, բայց նախևառաջ կամենում եմ ծածուկ դատաստանով փորձել և՛ մեկին, և՛ մյուսին:*

4. *Մարդկանց վկայությունը հաճախ չի համապատասխանում իրականությանն ու ճշմարտությանը, մինչդեռ իմ դատաստանը ճշմարիտ է, անխափոխ ու անհետևսկոչելի: Բայց այն նաև ծածուկ է և շատ քչերին է հայտնվում, այն էլ՝ բացառիկ դեպքերում: Սակայն չի սրխալվում երբեք, – դա անհնարին է, – նույնիսկ երբ այդպիսին է թվում որոշ հիմարների: Հարկ է, ուրեմն, որ իմ վճիռներին դիմես և չհիմնվես սեփական կարծիքներիդ վրա: Արդարը չի կորցնում իր հոգու խաղաղությունը, ի՞նչ էլ պատահի իրեն: Եվ թեև պատահում են ի՞նչ ի՞նչ անարդարություններ, շատ ուշադրություն չի դարձնում դրանց: Բայց և ո՛չ իսկ ուրախանում է ունայնամտորեն, եթե իրական փաստերի հիման վրա արդարացվում է այլոց կողմից: Որովհետև խորհում է, որ* «ես եմ քննում սրտերն ու երիկամները» *(Սղմ* 7, 10*), որ չեմ դատում ըստ մարդկային արտաքին երևույթների: Եվ հաճախ հանցավոր եմ նկատում մեկին, ով մարդկանց համաձայն արժանի է գովասանքի:*

5. *Հավատացյալը. Տեր Աստված իմ,* «դատավոր արդար, զորեղ ու երկայնամիտ» *(Սղմ* 7, 12*), որ ճանաչում ես մարդկանց տկարությունն ու հակումը դեպի չարը: Դու եղիր իմ ուժն ու վստահությունը, որովհետև ինձ բավական չէ վկայությունն իմ խղճի: Հայտնի է Քեզ ամեն բան, մինչդեռ իմ ճանաչողական հորիզոնը սահմանափակ է: Այս իսկ պատճառով, պարտավոր եմ խոնարհվել հանդիմանություններին ի լուր և համբերել հեգությամբ: Ներիր ինձ գթությամբ, այն բոլոր անգամների համար, որ չվարվեցի այսպես, և պարգևիր ինձ շնորհը մեծագույն համբերության: Այո՛, այս ներումդ ստանալու համար կարիքն ունեմ ավելի Քո մեծ ողորմության, քան իմ հավակնոտ արդարամտության, որով փորձում եմ պաշտպանել խղճիս վկայությունները, խիղճ, որը սակայն այնքան էլ հստակ տեսանելի չէ իմ համար: Քանի որ* «եթե նույնիսկ խիղճս ոչինչ չվկայի իմ դեմ, դրանով չեմ կարող արդար նկատել անձս» *(*1Կր 4, 4*), որովհետև առանց ողորմությանդ ոչ ոք չի կարող արդարանալ Քո առաջ:*

ԳԼՈՒԽ ԽԷ. ԿՐԵԼ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

1. *Հիսուսը. Որդյակ, եր մի՛ ընկրկիր հոգնությունների առաջ, որոնք հանձն ես առել սիրույս համար, և մի՛ հուսալքվիր ընդմեջ նեղությունների, այլ՝ ի՞նչ էլ պատահի, քաջալերվիր ու միսիթարվիր խոստմանս ակնկալությամբ: Ես միայն կարող եմ վարձատրել քեզ գերիվեր, քան բոլոր կերպերն ու չափերը: Միշտ չէ, որ ճնշված ես մնալու փորձությունների բեռան տակ, և միշտ չէ, որ կրելու ես վշտեր: Սպասիր մի քիչ և կտեսնես*

ավարտը բոլոր չարիքների: Կգա այն պահը, երբ կվերջանան բոլոր հոգնություններն ու մտահոգությունները:

Հավատա՛, չնչին ու ոչինչ է այն ամենը, որ անցնում է ժամանակի հետ:

2. *Ինչ անում ես, արա՛ լավագույն կերպով, հավատարմությամբ աշխատիր այգուս մեջ. ե՛ս կլինեմ քո վարձը: Գրի՛ր, կարդա՛, երգի՛ր, հառաչի՛ր, լռի՛ր, աղոթի՛ր, քաջությամբ կրի՛ր հակառակությունները. հավիտենական կյանքն անկասկած արժանի է այսպիսի և դե՛ռ ավելի ծանր պայքարների: Խաղաղությունը կգա այն օրը, որն ինձ է միայն հայտնի: Եվ այնժամ չի լինի այլևս օր ու գիշեր, ինչպես ներկա ժամանակում, այլ՝ անմայրամուտ լույս, անվերջ ճաճանչ, կայուն խաղաղություն և ապահով հանգիստ: Այնժամ այլևս չես ասի. «Ո՞վ կազատի ինձ այս մահկանացու վիճակից» (Հռմ* 7, 24*), և ո՛չ էլ կաղաղակես. «Ավա՜ղ,* երկարում է աքսորս երկրի վրա» *(Սղմ* 119, 5*), որովհետև «մահը կկործանվի» (Ես* 25, 8*) և փրկությունն անթերի կլինի. ոչ մի տառապանք, այլ՝ կատարյալ զվարթություն և քաղցր ու գեղեցիկ ընկերություն Սրբերի հետ:*

3. *Եթե տեսնեիր Սրբերի փառքը Երկնքում, և թե ինչպիսի հանգստի մեջ են այժմ հրճվում նրանք, ովքեր մի ժամանակ արհամարհանքներ էին միայն ընդունում և անարժան համարվում ապրելու, անկասկած կխոնարհվեիր մինչև հնարավոր վերջին սահմանը, կնախընտրեիր ենթակա լինել բոլորին, քան գերադաս նույնիսկ մի հոգու: Ինչպես նաև չէիր տենչա վայելելու երջանիկ օրեր այս կյանքում, այլ՝ կփափաքեիր տառապել ի սեր Աստծո, և շահ կնկատեիր մարդկանց մեջ ոչինչ համարվելդ:*

4. *Եթե ճաշակեիր այս ճշմարտությունները և սրանք արմատանային սրտիդ խորքում, ինչպե՞ս կկարողանայիր տակավին դժգոհել: Մի՞թե արդար ու վայել չէ, որ հավիտենական կյանքի համար կրես ծանր նեղություններ:*

Չնչին ու անհիշարժան իրողություն չէ Աստծո Արքայությունը ստանալ կամ կորցնելը:

Դեպի վեր, դեպի Երկինք բարձրացրու հայացքդ. տե՛ս ինձ և իմ բոլոր Սրբերին, որ իմ հետ են: Երկրի վրա մղեցին դառն ու դաժան պայքարներ, մինչ այժմ վայելում են, այժմ մխիթարված են, այժմ հանգստանում են և իմ հետ հավիտյան մնալու են Հորս Արքայությունում:

ԳԼՈՒԽ ԽԸ.
ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ԽԵՂՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Հավատացյալը. Ո՜վ երանավետ բնակավայր վերին Արքայության, ո՜վ շողարձակ օր հավիտենության, անմայրամուտ, գերագույն ճշմարտությունից ճառագայթված. օր հարազըվարթ, միշտ ապահով ու անփոփոխ: Երանի՜ արդեն իսկ ծագած լիներ այդ օրը, և այս բոլոր վաղանցուկ իրողությունները մայր մտած լինեին: Այդ գեղեցիկ օրն արդեն փայլում է Սրբերի համար հավիտենական պայծառությամբ: Երկրաբնակ*

աքսորականներս ենք միայն, որ նշմարում ենք այն հեռվից, հայելային ցոլացմամբ կարծես:

2. *Երկնաքաղաքացիները ճաշակում են քաղցրությունն այդ օրվա, մինչ Եվայի աքսորական որդիները հառաչում են, թե ներկա այս կյանքը դառն է ու դաժանալի:* «Ներկա կյանքի օրերը սակավաթիվ են, լի տրտմությամբ, վշտերով ու անձկությամբ» *(Ծնդ* 47, 9; *Ժող* 2, 23*), որոնցում մարդն ապականվում է բազում մեղքերով, շղթայված է բազում կրքերով, ճնշված՝ վախերով, անթիվ մտահոգությունների մեջ կորած, ո՛չ սակավ հետաքրքրություններում ցրված, բազում ունայնությունների մեջ ընկղմված, ամեն քայլափոխի սխալներով շրջապատված, անհամար հոգնությունների մեջ սպառված, փորձությունների բեռան ներքո կքված, զգայարանների հաճոյամոլությունից չարչարված և անվերջանալի կարիքներից դանջված:*

3. *Ա՜հ, ե՞րբ են վերջանալու այս չարիքները, ե՞րբ եմ ազատվելու կրքերի թշվառ ստրկությունից. ե՞րբ եմ, Տեր, հիշելու միայն Քեզ. ե՞րբ եմ կատարելապես երջանիկ լինելու Քեզնում. ե՞րբ է ընթացքս մաքրվելու հոգևոր ու մարմնավոր բոլոր խոչընդոտներից. ե՞րբ եմ ունենալու խաղաղություն կայուն, անխոով ու ապահով, խաղաղություն ներքուստ և արտաքուստ. ե՞րբ վերջիվերջո կտեսնեմ Քեզ, Հիսո՜ւս, և ե՞րբ կհիանամ Արքայությանդ փառքով. ե՞րբ կլինես իմ համար ամեն ինչ ամեն ինչում. ե՞րբ կլինեմ Քո հետ Արքայությանդ մեջ, որն* «ընտրյալներիդ համար պատրաստել ես աշխարհի արարումից ի վեր» *(Մտթ* 25, 34*): Ես լքված եմ այստեղ, խեղճ ու թափառական եմ այս օտար երկրում, ուր օր ու գիշեր հառնում են իմ դեմ մեծամեծ մարտեր ու հակառակություններ:*

4. *Միսիթարիր աքսորս, դարմանիր վիշտս, որովհետև բոլոր փափաքներս դեպի Քեզ են ուղղված միայն: Ինչ այս աշխարհը նվիրում է իբրև սփոփանք, բեռ է իմ համար ու ծանրություն: Կամենում եմ տեսնել Քեզ, բայց չեմ կարողանում. կամենում եմ ընկղմվել երկնային իրողությունների մեջ, բայց շղթայում են ինձ երկրայինն ու չսանձված կրքերը. կամենում եմ ամեն ինչից գերիվեր բարձրանալ հոգիով, բայց մարմինը կամքիս հակառակ հարկադրում է ինձ ենթակա մնալ իր կարիքներին: Այսպիսով ես՝ խեղճ թշվառս, պայքարում եմ ինքս իմ դեմ, ծանրածանր բեռ եմ ինքս իմ համար, որովհետև հոգիով կամենում եմ վեր համբառնալ, մինչ մարմինը քաշում է ինձ դեպի ներքև:*

5. *Ա՜հ, որքան եմ տառապում, երբ խորհրդածում եմ երկնային իրողությունների շուրջ և իսկույն մարմնավոր մտքերը ծառանում են աղոթող մտքիս առաջ: Ասված իմ,* «մի՛ հեռացիր ինձնից» *(Սղմ* 70, 12*) և* «բարկանալով մի՛ լքիր ինձ՝ ծառայիդ» *(Սղմ* 26, 9*):* «Թող ահեղագոչ մտրակեն փայլակներդ և ցիրուցան անեն այս երևակայական պատկերները. նիզակներովդ հարվածիր ու շանթահար կործանիր թշնամու հարուցած պատրանքները» *(Սղմ* 143, 6*): Քեզնում ամփոփիր բոլոր զգացումներս, այնպես արա, որ մոռացության մատնեմ երկրային իրողությունները, տուր ինձ զորություն արհամարհելու, անմիջապես հակահարված տալու և ինձնից դուրս նետելու կրքերի հանդուգն պարտադրումները: Զորավիգ եղիր ինձ, Ճշմարտություն հավիտենական, որպեսզի ոչ մի ունայնություն չկարողանա հմայել ինձ կամ հրապուրել: Ե՛կ, երկնային Քաղցրություն, և թող որ հայացքիդ առաջ անէանան անմաքրությունները: Ներիր ինձ և գթառատ եղիր իմ հանդեպ, եթե աղոթքների պահին միտքս տարվում է ա՛յլ իրողություններով: Խոստովանում եմ անկեղծորեն, որ իմ համար այլևս սովորություն է դարձել ցրված*

աղոթելը: Շատ անգամներ այնտեղ չեմ, ուր մարմնով գտնվում եմ, ոտքի կանգնած կամ նստած, այլ՝ ավելի այնտեղ, ուր թափառում են մտքերս: Այնտեղ եմ, ուր մտքերս են, իսկ միտքս այնտեղ է, ուր ինձ սիրելի առարկան է կամ անձը: Եվ իսկույն մտքիս ներկայանում է այն, ինչը ձգում է ինձ կամ ինչը հաճելի է ինձ ըստ բնության և ըստ սովորության:

6. *Այս իսկ պատճառով, ո՜վ Ճշմարտություն, ասացիր բացահայտ.* «Ուր ձեր գանձն է, այնտեղ կլինի նաև ձեր սիրտը» *(Մտթ* 6, 21*): Եթե սիրում եմ Երկինքը, սիրով ու հոժարությամբ մտածում եմ երկնային իրողությունների շուրջ. եթե սիրում եմ աշխարհը, համ եմ առնում աշխարհային վայելքներից միայն և տրտմում եմ աշխարհային անհաջողությունների համար. եթե նախընտրում եմ մարմինը, հաճախ երևակայում եմ բաներ, որ վերաբերվում են մարմնին. եթե գերադասում եմ հոգին, հմայքով եմ խորհրդածում հոգևոր իրողությունների շուրջ. եթե սիրում եմ ինչ որ մի բան, հաճույքով եմ խոսում նրա շուրջ և լսում ուրիշների խոսքերը միևնույն նյութի մասին. նաև տուն եմ տանում իմ հետ նրա հիշատակը: Բայց երանելի է այն մարդը, Տեր, որն ի սեր Քո հրաժարվում է արարածներից, սանձահարում է բնությունը և հոգու եռանդով կործանում մարմնի ցանկասիրությունները, հստակ մտքով մաքրափայլ աղոթք Քեզ ընծայել կարողանալու և հրեշտակային օրհներգող խմբերին միանալուն արժանի գտնվելու համար, ներքուստ ու արտաքուստ հեռանալով երկրային հաճոյամոլություններից:*

ԳԼՈՒԽ ԽԹ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՓԱՓԱՔԸ

1. *Հիսուսը. Որդյակ իմ, երբ քեզնում զգում ես ի վերուստ արծարծվելը հավիտենական երանության փափաքի և անփոփոխ ու աննվազ փառքիս ճառագայթումով հագենալու համար կամենում ես ազատվել այս մահկանացու վիճակից, ընդլայնիր սիրտդ և վառ կարոտով ընդունիր այս սուրբ ներշնչումը: Երախտագիտությունդ հայտնիր գերագույն Բարությանը, որ այսքա՜ն գթությամբ է վարվում քո հետ, այցելում է քեզ կարեկցանքով, խրախուսում, օգնում, որպեսզի տկարությանդ պատճառով չհակվես դեպի երկրային իրողությունները: Այս շնորհը չես ստանում որպես վարձատրություն մտածումներիցդ կամ ջանքերիցդ մեկի փոխարեն, այլ՝ տրվում է քեզ իբրև ձրի պարգև, ասպվածային նախախնամության կողմից, որպեսզի առաջադիմես առաքինության ասպարեզում, մեծագույն խոնարհությամբ պատրաստվես գալիք պայքարներին, ինձ ապավինես սրտիդ ամբողջ գորովով և վճռորոշ կամքով ծառայես ինձ:*

2. *Որդյակ, կրակն այրում է, բայց բոցը չի բարձրանում առանց ծխի: Նմանօրինակ կերպով, ոմանք վառվում են երկնային իրողությունների փափաքով, այնուամենայնիվ ազատ չեն մարմնի փորձություններից: Հետևանքում, իմ փառքի համար չէ միայն, որ կատարում են իրենց աղոթքները: Այսպիսին է նաև քո պարագան, որ ծանր է կշռում ուսերիդ: Այո՛, որովհետև մաքուր ու կատարյալ չէ այն, որին խառնված են անձնական շահն ու եսասիրությունը:*

3. *Երբեք մի՛ խնդրիր այն, ինչ հաճելի է քեզ ու հարմարավետ, այլ այն, ինչ համապատասխանում է կամքիս և ուղղված է փառքիս մեծվայելչությանը, որովհետև եթե իմաստությամբ մտածես, բոլոր փափաքներդ և փափաքելի ամեն բան կստորադասես*

կամքիս վճիռներին: Հայտնի են ինձ փափաքներդ, լսում եմ հաճախակի հառաչանքներդ: Կամենում ես արդեն իսկ լինել «Աստծո որդիների փառքի ազատության մեջ» *(Հռմ* 8, 21*): Արդեն համբերում ես հավիտենական բնակավայրի և հարազվարթ երկնային հայրենիքի նախաճաշակները, բայց ժամը դեռ չի հնչել: Տակավին ժամն է պայքարի, հոգնության ու փորձությունների: Բաղձանքն ունես գերագույն Բարիքով հագենալու, բայց առայժմ պատրաստ չես Լույսին միանալու: Ես եմ գերագույն Բարիքը,* «սպասիր ինձ, մինչև գա թագավորությունս» *(Սոփ* 3, 8; *Ղկս* 22, 18*):*

4. *Դու դեռ պարտավոր ես փորձվել երկրի վրա և կրթվել զանազան եղանակներով: Ժամանակ առ ժամանակ կստանաս նաև մխիթարություններ, բայց երանության լիությունը, այն էլ հագենալու աստիճան, ո՛չ:* «Ջորավոր եղիր ու քաջարի» *(2Օր* 31, 7*), ինչպես աշխատանքի մեջ, այնպես էլ բնությանը հակառակ իրողություններում: Հարկ է, որ* «նոր մարդով զգեստավորվես» *(Եփս* 4, 24*) և ուրիշ մարդ դառնաս: Հարկ է, որ հաճախ զբաղվես գործերով, որոնք չէիր կամենա կատարել. հարկ է, որ հրաժարվես կամքիցդ: Այն, ինչ հաճելի է ուրիշներին, կգտնի հաջողություն. ինչը հաճո է քեզ, առաջ չի քայլի: Ինչ որ կասեն ուրիշները, կգտնի ընդունելություն. ինչ որ դու կարտահայտես իբրև կարծիք, կարհամարհվի: Ուրիշները կխրնդրեն ու կստանան. դու կհայցես, չընդունելով սակայն ոչինչ: Ուրիշները կմեծարվեն մարդկանց շուրթերում, քո մասին չի խոսվի անգամ: Ուրիշները կզբաղեցնեն աթոռներ ու պաշտոններ, դու մինչդեռ կհամարվես անպիտան ողորմելի:*

5. *Այս ամենի համար բնությունդ երբեմն կվշտանա և ուսերիդ ծանր կկշռի այս ամենը լռության մեջ կրելը: Ահա այսպես և նմանօրինակ ուրիշ միջոցներով են փորձվում իմ հավատարիմ ծառաները, որպեսզի բացահայտվի, թե արդյոք կարողանո՞ւմ են մերժել իրենց անձնականը և ինքնատիրապետել որևէ իրավիճակում: Մի՞թե երբեմն չեն պատահում դեպքեր, որոնցում նախընտրում ես ավելի մեռնել, քան կամքիդ հակառակ իրողություններ տեսնել և դրանց համբերել, մանավանդ երբ հրամայվում է քեզ կատարել գործեր, որոնք թվում են քեզ անիմաստ ու անօգուտ: Եվ քանի որ, ենթակա լինելով, չես համարձակվում ընդդիմանալ հեղինակությանը, այս իսկ պատճառով քեզ դժվարին է թվում հնազանդության կյանքը և անձնական բոլոր հակումներդ ու ձգտումներդ մի կողմ թողնելը:*

6. *Բայց մի պահ խորհիր, որդյակ, այս բոլոր հոգնություններիդ պտուղի, ամեն ինչի շուտափույթ վախճանի և այսքա՜ն մեծ վարձատրության մասին: Այսպես վարվելով՝ չես զգա բեռան ծանրությունը և հզոր ստիպանք կստանաս համբերությանդ համար: Երկրի վրա կամքիցդ հրաժարվելով՝ կկարողանաս կամքդ հավիտյան Երկնքում կատարել: Այնտեղ կըգտնես այն ամենը, որ կկամենաս, այն ամենը, որ կկարողանաս փափաքել: Այնտեղ կտրվի քեզ ամեն բարիք առատությամբ, առանց կորցնելու վախի:* Այնտեղ, ինձ մեկընդմիշտ միանալով, կամքդ երբեք չի ունենա օտար կամ եսապաշտ ցանկություններ: *Այնտեղ ոչ ոք չի ընդդիմանա քեզ, ոչ ոք չի տրտնջա քո դեմ, ոչ ոք չի խոչընդոտի ընթացքդ, ոչ ոք արգելք չի հանդիսանա ճանապարհիդ: Այլ՝ փափաքելի ամեն բան կներկայանա քեզ ի միասին և կհագեցնի ծարավդ լիովին. և դե՛ռ ավելի՝ զեղմամբ: Այստեղ կրածդ արհամարհանքը այնտեղ կփոխհատուցեմ փառքով, տառապանքդ՝ հոգեզվարթության պատմուճանով, երկրի վրա վերջին տեղը սիրով զբաղեցնելուդ փոխարեն արքայական գահ ու գահիսոն կունենաս հավետ: Այնտեղ կհոչակվի հնազանդությանդ արժեքը, խիստ ապաշխարանքը կվայելի և խոնարհ ենթակայությունը կպսակվի փառքով:*

7. *Այժմ, հեւրևաբար, հեզությամբ խոնարհվիր բոլորի ձեռքի տակ և ուշադրություն մի՛ դարձրու, թե ո՛վ է քեզ խոսողը կամ հրամայողը: Բայց ամենից ավելի՝ ուշադիր եղիր, որ ո՛վ էլ քեզնից ինչ որ մի բան խնդրի կամ պահանջի, – լինի քեզ մեծավոր, հավասար կամ ստորադաս, – ամեն ինչ բարի մտքով ընդունես և կատարես հոժար կամքով: Թող մեկն այս առարկան փնտրի, մի ուրիշն՝ այն մյուսը. մեկը թող իր փառքն այս իրողությանը կապի, երկրորդը՝ մի ա՛յլ իրողության. թող գովվեն մարդիկ մարդկանցից: Ինչ վերաբերվում է քեզ, մի՛ ուրախացիր ոչ մի բանի համար, միայն ինքնաարհամարհմամբդ հրճվիր, նաև իմ կամքով ու փառքով: Ահա՛ այն, ինչ պարտավոր ես փափաքել. որ Աստված փառավորվի քեզնում միշտ, կյանքիդ ընթացքում և մահվանդ պահին:*

ԳԼՈՒԽ Ժ. ՎՇՏԱԿԻՐ ՀՈԳՈՒ ԱՂՈԹՔԸ

1. *Հավատացյալը. Տեր Աստված, Սուրբ Հայր, օրհնյալ եղիր այժմ և հավիտյան, որովհետև ինչպես կամեցար, այնպես եղավ, և ինչ որ կամեցար, բարի է: Թող ծառադ միայն Քեզնում գտնի իր ուրախությունը, ո՛չ թե իր անձում, և ո՛չ էլ ուրիշ որևէ իրողության մեջ: Որովհետև միայն Դու ես իրական խնդությունը, հույսն իմ ու իմ դափնեպսակը, իմ բերկրանքն ու փառքը: Ի՞նչ ունեմ, եթե ոչ՝ այն, որ ստացել եմ Քեզնից, և այն էլ՝ առանց արժանի լինելու: Ամեն բան Քոնն է, ինչ տվեցիր և ինչ կատարեցիր:* «Խեղճ աղքատ եմ ես, և մանկությունից ի վեր նեղություններով հեղեղված» *(Սղմ* 87, 16*), և երբեմն հոգիս տրտմում է արցունքներ հեղելու ասփիճան, կամ ներքուստ վրդովվում՝ վերահաս նեղությունների պատճառով:*

2. *Կամենում եմ վայելել խաղաղություն, հայցում եմ Քեզնից խաղաղությունը Քո որդիների, որոնց սնում ես մխիթարությունների լույսով: Եթե տաս ինձ խաղաղությունդ, եթե լիացնես ինձ սրբաբույր հոգեզվարթությամբ, հոգիս ամբողջովին փառաբանական գովերգի կվերածվի, ողորմությանդ ուղղված: Մինչ եթե հեռանաս ինձնից, ինչպես վարվում ես հաճախ, չեմ կարողանա անարգելք սլանալ պատվիրաններիդ ճանապարհով, ծնկներս կծալվեն և ողբալով կուրծքս ծեծել կմնա ինձ միայն: Որովհետև* «այսօր այլևս երեկվա պես չէ, կանթեղդ չի փայլում գլխիս վերևում» *(Հոբ* 29, 3*), և թևերիդ հովանու ներքո չլինելով՝ անպաշտպան եմ տեսնում ինձ փորձությունների դեմ:*

3. *Հայր արդար և միշտ արժանի գովքի, հասել է ծառայիդ փորձության մատնելու ժամը: Հայր սիրելի, լավ է ու բարի, որ այս պահիս ծառադ մի քիչ նեղություն կրի ի սեր Քո: Հայր հավետ երկրպագելի, հասել է ի հավիտենից Քեզ հայտնի ժամը, որ ծառադ որոշ ժամանակով արտաքուստ կքվի ու ընկճվի, ներքուստ Քեզ միացած ապրել շարունակելով հանդերձ: Հարկ է, որ մի փոքրիկ ժամանակամիջոցի համար նա արհամարհվի, նվաստացվի ու անշքանա մարդկանց առաջ, չարչարվի կրքերի բովում ու հիվանդություններում, Քեզ հետ նոր լույսի արևածագին հարություն առնել և երկնաբնակ ընտրյալների հետ փառավորվել կարողանալու համար: Սուրբ Հայր, Դու այսպես կարգադրեցիր ու կամեցար, և ինչ որ հրամայեցիր, կատարվեց:*

4. *Այո՛, սա՛ է այն շնորհը, որ պարգևում ես ամենասիրելի որդիներիդ. վիշտ կրել և նեղությունների ենթարկվել այս աշխարհում, ե՛րբ և ո՛ւմ միջոցով կկամենաս: Երկրի վրա ոչինչ չի պատահում առանց Քո կամքի, առանց նախախնամությանդ և առանց որևէ իմաստի:* «Լավ է, Տեր, որ խոնարհեցնում ես ինձ, որպեսզի սովորեմ կատարել կամքդ» *(Սղմ* 118,

71), և որպեսզի անէանան ինձնում սրտի հպարտությունն ու հավակնոտությունը: Օգտակար է ինձ, որ «երեսս երբեմն ամոթով ծածկվի» (Սղմ 68, 11), որպեսզի միմիթարությանս համար Քեզ միայն փնտրեմ, և ո՛չ թե ոմանց մարդկանցից: Այսպես սովորեցի պատկառել անքննելի դատաստանիցդ, որովհետև Դու տառապանքի ես ենթարկում արդարին մեղավորի հետ, բայց ո՛չ առանց իրավացիության ու արդարության:

5. Երախտագիտությունս եմ հայտնում Քեզ, որովհետև պատժում ես մեղքերս, մտրակում ես անխնա հարվածներով, առաքում ես վշտեր, ծանրաբեռնում ներքին և արտաքին անձկություններով: Քեզնից բացի, ուրիշ ոչ ոք և ոչինչ ինձ չի միմիթարում, Տեր Աստված իմ, որ «հասցնում ես մեզ մինչև գերեզման, ապա ազատում» (Տբթ 13, 2): Կամքդ թող կատարվի ինձնում և մտրակդ թող օգնի ինձ:

6. Ահա՛, Հայր Ամենասիրելի, ես ձեռքերիդ մեջ եմ և խոնարհվում եմ ուղղումներիդ խարազանի առաջ. մտրակիր թիկունքս ու պարանոցս, որպեսզի անօրեն հակումներս ենթարկվեն ամենասուրբ կամքիդ: Դարձրու ինձ աշակերտ հեզ և խոնարհ, ինչպես վարվում ես նախասիրյալ ծառաներիդ հետ, որպեսզի հավատարիմ լինեմ կամքիդ ամենաթեթև արտահայտումներին անգամ: Քո սրբագրմանն եմ հանձնում ինձ և ինձ վերաբերվող ամեն բան: Գիտես բոլորն ի միասին և նրանցից յուրաքանչյուրը, Քեզ ոչինչ անծանոթ չէ մարդկանց խրոցներում: Ինչ պատահելու է ապագայում, կատարվելուց առաջ արդեն հայտնի է Քեզ, և կարիքը չունես, որ մեկն ուսուցանի Քեզ կամ տեղյակ պահի երկրի վրա կատարվող դեպքերի շուրջ: Դու քաջ գիտես, թե ի՞նչն է օգտակար հոգևոր առաջադիմությանս և թե քանի՛ցս նպաստավոր են նեղությունները մոլությունների ժանգից մաքրվելու գործում: Ինձնում նույնպես կատարիր կամքդ լիովին, մեղքերիս տգեղությունից զզվելով մի՛ հեռացիր ինձնից. մեղքեր, որոնք ոչ ոք չի ճանաչում այնքան խոր ու հստակ գիտությամբ, որքան միայն Դու:

7. Տեր իմ, տուր ինձ իմանալ այն, ինչը լավ է իմանալ. սիրել այն, ինչն իսկապես արժանի է սիրո. փնտրել այն, ինչը հաճելի է Քեզ ամեն ինչից ավելի. գնահատել այն, ինչն արժեքավոր է Քո որակավորմամբ. մերժել այն, ինչն անարգ է Քո համար: Մի՛ թող, որ դատեմ «երևույթների համաձայն» (Ես 11, 3), և ո՛չ էլ՝ որ մտածեմ ըստ անմիտ անձանց սկզբունքների, այլ՝ այնպես արա, որ իրական իմաստությամբ ընտրությունս կարողանամ կատարել ընդմեջ տեսանելի ու հոգևոր իրողությունների, և հատկապես, որ կամքդ փնտրեմ միշտ ու անդադար: Հաճախ են սխալվում ըստ զգայարանների դատող մարդիկ: Այդպիսիք են աշխարհասերները, որ սիրում են միայն այն, ինչ տեսնում են: Մի՞թե մեկն ավելի է արժեանում, երբ մի ուրիշը մեծարում է նրան որպես այդպիսին: Երբ հպարտը մեծարում է հպարտին, ստահոս է և խաբում է մի ա՛յլ ստահոսի, ունայնամիտը՝ ունայնամտին, կույրը՝ կույրին, թերամիտը՝ թերամտին: Եվ իրականում ծաղրում է, որովհետև նրան վերագրում է գոյություն չունեցող հատկություններ: Որովհետև մարդկանցից յուրաքանչյուրն ա՛յն է միայն, ինչ որ է Քո գնահատմամբ, ոչի՛նչ ավելի:

ԳԼՈՒԽ ԾԱ. ՀԱՐՄԱՐՎԵԼ ԽՈՆԱՐՀ ԳՈՐԾԵՐԻՆ

1. *Հիսուսը. Որդյակ, չես կարող առաքինության հանդեպ վառ փափաքդ միշտ ունենալ, և ո՛չ էլ սավառնել հայեցողության վերամբարձ գագաթներում, այլ՝ սկզբնական ապականության պատճառով երբեմն պարտավոր ես զբաղվել առավել խոնարհ գործերով և նույնիսկ կամքիդ հակառակ ու տաղտկությամբ՝ կրել այս ապականյալ կյանքի ծանր բեռը: Քանի դեռ մարմինդ մահկանացու է, քանի դեռ չի նորոգվել հարությանս փառքով, կզգաս ձանձրույթ ու հոգնություն: Հարկ է, որ կրես մեղքերիդ դառն հետևանքները, որովհետև այլևս չես կարող հարատևել հոգևոր իրողությունների և աստվածային հայեցողության միևնույն մակարդակում:*

2. *Այսպիսի դեպքերում, պետք է դիմես արտաքին վայելուչ գործերի օգնությանը, պետք է մխիթարվես բարի գործերով, հաստատուն վստահությամբ սպասելով այցելությանս: Պարտավոր ես համբերությամբ կրել աքսորդ ու հոգևոր ցամաքություններդ, մինչև որ կրկին այցելեմ քեզ և ազատեմ բոլոր անձկություններից: Այնժամ մոռացնել կտամ քեզ բոլոր նեղություններդ և վայելել ներքին անդորրն ու խաղաղությունը: Առջևդ կդարաձեմ հովիտներն Աստվածաշնչի, որպեսզի ընդարձակված սրտով սկսես սլանալ պատվիրաններիս ճանապարհով: Այնժամ կասես. «Ներկա տառապանքներն անհամեմատելի են գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզնում» (Հռմ 8, 18):*

ԳԼՈՒԽ ԾԲ. ԱՎԵԼԻ ՊԱՏԺԻ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ, ՔԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. *Հավատացյալը. Տեր, արժանի չեմ մխիթարություններիդ ու հոգևոր այցելություններիդ, հետևաբար՝ արդարությամբ ես վարվում, երբ թողնում ես ինձ տխուր ու ձանձրացած: Եթե նույնիսկ ծով մի ամբողջ արցունքներ հեղեի, տակավին արժանի չէի լինի մխիթարությանդ: Մտրակվելու և պատժվելու եմ միայն արժանի, որովհետև հաճախ վշտացրեցի Քեզ և շատ մեղանչեցի ծանրորեն: Այս իսկ պատճառով, արժանի չեմ և ո՛չ իսկ փոքրագույն սփոփանքի: Բայց Դու, Աստված բարեգութ ու ողորմած, որ չես փափաքում մահն արարածներիդ, որ կամենում ես բարությանդ հարստությունները շռայլել մեզ՝ «ողորմության անոթներիս» (Հռմ 9, 23), Դու ծառաներիդ մխիթարում ես գերմարդկային կերպով, առանց մեր որևէ արժանիքի:*

Մխիթարություններդ, իրոք, ոչնչով նման չեն մարդկանց դատարկ շատախոսություններին:

2. *Ի՞նչ բարեգործություն եմ կատարել, որի փոխարեն կարողանամ հուսալ երկնային մխիթարություններդ: Ես չեմ հիշում ոչինչ. ավելին՝ միշտ հակված եղա դեպի մոլությունները և ծույլ եղա հոգևոր նորոգմանս գործում: Սա ճիշտ է, չեմ կարող մերժել: Եթե փորձեմ պաշտպանել ինձ, իմ դեմ դուրս կգաս ու կհանդիմանես, և ոչ ոք հանձն չի առնի պաշտպա-*
նելու դատս: Ինչի՞ արժանացա մեղքերովս, եթե ոչ միայն՝ դժոխքի հավիտենական կրակներին: Խոստովանում եմ, որ իրականում արժանի եմ ամեն տեսակ նվաստացման

ու արհամարհանքի, և հավատարիմ ծառաներիդ շարքում կանգնելու իրավունքը չունեմ: Եվ թեև ծանր է կշռում սա իմ ուսերին, սակայն ի սեր ճշմարտության դատապարտելու եմ ինքս ինձ մեղքերիս համար, որպեսզի սիրալի ողորմությանդ հույսն ունենամ առավել մեծ վստահությամբ:

3.*Ի՞նչ կարող եմ արդյոք ասել ես՝ ամոթահար մեղավորս: Շրթունքներս այս խոսքերն ասելու համար են միայն բացվում. «Մեղանչեցի, Տեր իմ, մեղանչեցի, ողորմիր ինձ, ներիր»:*
Թող վիշտս մի քիչ մեղմեմ արցունքներով, «ստվերներով ու մահվան մշուշով ծածկված բնակավայր փոխադրվելուցս առաջ» *(Հոբ* 10, 20-21*): Ի՞նչ ես Դու պահանջում հանցապարտ ու խեղճ մեղավորներիցս, եթե ոչ միայն՝ զղջում, վերադարձ և խոնարհություն: Սրտի իրական զղջման ու խոնարհության մեջ է ծնվում ներման հույսը, խաղաղվում ապականյալ խիղճը, վերստին ձեռքբերվում կորցված շնորհը, ազատվում գալիք բարկությունից, և այս միևնույն ժամադրավայրում են սրբազնասուրբ գրկախառնմամբ հաշտվում Աստված և ապաշխարող հոգին:*

4.*Մեղքերի համար զղջումը և դրանցից հեռանալը, Տեր, Քեզ ընդունելի զոհ է, բուրմունք է Քո համար ավելի քաղցր ու հաճելի, քան ամպակուտակ վերամբարձումը ամենաբնտիր խնկի: Սա՛ է այն հոտավետ յուղը, որով թույլատրեցիր օծել պաշտելի ոտքերդ, որովհետև Դու, Տեր,* «չես արհամարհում զղջացած սիրտն ու խոնարհ հոգին» *(Սղմ* 50, 19*): Այստեղ է ապաստարանը թշնամու խարդախություններից, այստեղ է հոգին սրբվում ու մաքրվում այն բոլոր աղտերից, որոնցով ծածկվել էր այլուր:*

ԳԼՈՒԽ ԾԳ. ԱՇԽԱՐՀԱՍԵՐՆԵՐԸ ՉԵՆ ՃԱՇԱԿՈՒՄ ՇՆՈՐՀԻ ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆԸ

1.*Հիսուսը. Որդյակ, շնորհս շատ թանկագին է և չի խառնվում կամ հաշտվում օտար իրողությունների ու երկրային մխիթարությունների հետ: Հարկ է, որ շնորհի ճանապարհը մաքրես բոլոր խոչընդոտներից, եթե կամենում ես վայելել այն: Սիրիր միայնությունը, լռությունը, մի՛ փնտրիր զրույցներ ոչ ոքի հետ: Այլ՝ նվիրիր Աստծուն աղոթքներ միշտ ավելի հրաշունչ, հարատև պահպանելու համար հոգուդ զղջումն ու խղճիդ մաքրությունը: Համարիր աշխարհն իբրև ոչինչ, և արտաքին բոլոր իրողություններից ավելի գերադասիր նվիրումդ Աստծուն: Անհնարին է ծառայել ինձ և միաժամանակ վայելել երկրի անցողիկ հաճույքները: Անհրաժեշտություն է ծանոթներից ու բարեկամներից հեռանալը և միտքն անջատ պահելը երկրային վայելքներից: Պետրոս Առաքյալը քրիստոնյաներին հորդորում է* «այս աշխարհում ապրել որպես ճամփորդներ ու օտարներ» *(1Պտր* 2, 11*):*

2.*Ա՜հ, որքան վստահ կլինի մահվան ժամին նա, ով ոչնչով շղթայված չէ երկրի վրա: Բայց հոգեպես տկար անձը չի կարող հասկանալ, թե ինչպես կարելի է սիրտն անջատ պահել ամեն ինչից, և միայն մարմնով ապրող մարդուն ծանոթ չէ ներքին մարդու ազատությունը: Եվ սակայն, եթե որևէ մեկը կամենում է իսկապես հոգևոր լինել, հարկ է, որ հրաժարվի ինչպես հեռավորներից, այնպես էլ մերձավորներից, և ամեն ինչից ավելի՝ ստրկության մեջ պետք է պահի իր իսկ անձը: Եթե հաղթես քեզ լիովին, մյուս բոլոր*

իրողությունները կնվաճես մեծագույն դյուրությամբ: Կատարյալ հաղթանակը ինքն իրեն պարտության մատնելն է: Ով հպատակ է պահում իր իսկ անձը, այնպես, որ զգայարանները հնազանդվեն մտքին, իսկ միտքը՝ ինձ, ամե՛ն ինչում և ամբողջովի՛ն, ահա այսպիսի անձն է հաղթական և տեր աշխարհի:

3. *Եթե կամենում ես բարձրանալ այս լեռան գագաթը, հարկ է, որ սկսես արիությամբ, կացինն արմատին դնես, արմատախիլ կործանես ու անէացնես այն անօրեն գաղտնի հակումը, որ ունես անձիդ, եսասիրությանդ և նյութական ամեն տեսակ բարիքների հանդեպ: Եսասիրությունից են ծնվում բոլոր չարիքները: Եթե հաղթես ու գերազանցես այս ախտին, իսկույն կվայելես խաղաղություն ու անդորր: Բայց քանի որ քչերն են կամենում հաղթել իրենց անձնասիրությանը և շղթայազերծվել անմնացորդ կերպով, հետևանքում՝ մնում են իրենք իրենց մեջ արգելափակված և չեն կարողանում վերամբառնալ իրենցից ավելի վեր: Ով, մինչդեռ, կամենում է ազատորեն ընթանալ իմ հետ, հարկ է, որ սանձի իր չար ու անօրեն ցանկությունները և տիրելու տենչով չկապվի արարածներից ոչ մեկին:*

ԳԼՈՒԽ ԾԴ.
ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, խնամքով քննիր բնության ու շնորհի շարժումները, որովհետև հակոտնյա են միմյանց, բայց տարբերությունն այնքան նրբին է, որ հոգևոր և ի ներքուստ լուսավորված մարդու համար անգամ դժվար է նկատել ու զանազանել: Բոլորն էլ անկասկած ձգտում են բարիքի, և իրենց խոսքերում ու գործերում իրոք հանդես են բերում բարու մի չնչին քանակություն. հետևանքում, շատերն են խաբվում այս երևութական բարիքից:*

2. *Բնությունը խարդախ է ու նենգ, շատերին է հմայում, ծուղակի մեջ գցում, խաբում: Միշտ ինքն իրեն ունի որպես նպատակ: Մինչդեռ շնորհն «ընթանում է պարզությամբ» (Առակ* 10, 9*), «խուսափում է չարի տեսքից անգամ» (1Թղ* 5, 22*), որոգայթներ չի լարում ու չի դարանակալում: Ամեն բան կատարում է միմիայն Աստծո՝ իր նպատակի համար, որի մեջ է գտնում իր հանգիստը:*

3. *Բնությունը չի ցանկանում սանձվել, ճնշվել, գերազանցվել, ենթարկվել. երբեք չի հնազանդվում հոժարությամբ: Շնորհը, մինչդեռ, ապրում է ժուժկալությամբ, դիմադրում է զգացմունքայնությանը, ենթարկվում է սիրով, ընդունում է պարտվածի իր պարագան, չի կամենում վայելել իր սեփական ազատությունը. սիրում է կարգուկանոնը, օրենքների պահպանումը, չի ցանկանում տիրել ոչ ոքի. ծարավի է Աստծո հետ ապրելուն, կամենում է միշտ լինել ու մնալ Աստծուն ենթակա, և ի սեր Աստծո՝ պատրաստ է խոնարհվելու մեծավորների հրահանգների առաջ: Բնությունը հետաքրքրվում է իրեն հարմար իրողություններով միայն և ուշադրություն է դարձնում ուրիշներից ստանալիք շահին: Շնորհն, ընդհակառակը, փընտրում է ո՛չ թե այն, ինչը հարմար ու նպաստավոր է իրեն, այլ այն, ինչն օգտակար է շատերին: Բնությունը հաճույքով է ընդունում իրեն ընծայված պատիվն ու մեծարանքը: Շնորհը, մինչդեռ, ամեն պատիվ ու փառք վերագրում է միմիայն Աստծուն:*

4. *Բնությունը սարսափում է խոնարհեցումներից ու արհամարհանքից: Շնորհն, ընդհակառակն, վայելում է «Հիսուսի անվան համար ընդունած նախատինքները» (Գործք* 5, 41*): Բնությանը սիրելի են պարապությունն ու մարմնի հանգիստը: Շնորհը, մինչդեռ, չի կարող անգործ մընալ և սիրով է փարվում հոգևորություններին: Բնությունը փնտրում է հազվագյուտ ու գեղեցիկ իրերը, և խուսափում է պարզ ու հասարակ առարկաներից: Այդպիսին չէ շնորհը, այլ՝ հոժարությամբ է գործածում արհամարհված ու հին առարկաները, չի մերժում կոպիտ ու անարվեստ իրերը, չի զայրանում կամ տրտմում, երբ ստիպված է լինում հագնել հնամաշ զգեստներ: Բնությունն անհագ տենչ ունի երկրային հարստությունների, որպես միակ արժեք ճանաչում է դրամական շահը, տրտմում է կորուստների համար, և չի կարողանում համբերությամբ կրել և ո՛չ իսկ փոքրիկ ընդդիմությունները: Ընդհակառակն, շնորհը նվիրվում է հավիտենական իրողություններին, չի վրդովվում կորուստների համար, չի զայրանում վիրավորանքներին ի լուր, որովհետև իր գանձն ու բերկրանքը Երկնքում են, ուր ոչինչ չի կորում:*

5. *Բնությունն ագահ է, առավել մեծ հոժարությամբ ընդունում է, քան տալիս, սիրում է այն, ինչն իր սեփականն է ու անձնականը: Շնորհը, մինչդեռ, գթառատ է, նվիրվում է բոլորին, չի փնտրում ունենալ անձնական տիրույթներ, գոհանում է քչով, և իրեն ավելի երանելի է զգում երբ տալիս է, քան երբ վերցնում: Բնությունը հակված է դեպի արարածները, մարմինը, ունայնություններն ու ցանկասիրությունը: Շնորհն այդպիսին չէ, այլ՝ ձգտում է դեպի Աստված և առաքինությունները, հրաժարվում է արարածներից, փախչում աշխարհի ժխորից, ատում է մարմնի այլանդակ ցանկությունները, չափավորում է օրինավոր հաճույքներն ու սթափումները, և խուսափում է մարդկանց ուշադրությունն իր վրա հրավիրելուց: Բնությունը ծարավով է նետվում արտաքին զվարճությունների մեջ, որոնցով կարծում է հագեցնել զգայարանները: Ընդհակառակն, շնորհն Աստծո մեջ է միայն գտնում իր մխիթարությունը, և վայելում է գերագույն Բարիքը, արժեք չընծայելով տեսանելի բարիքներին:*

6. *Բնությունն ամեն բան կատարում է սեփական շահի համար, կամ որովհետև այդպես հարմար է իրեն: Բնությունն ուղղակի անկարող է որևէ բան ձրի կատարելու, այլ՝ իր պարգևների համար հատուցում ստանալու հույսն ունի. կա՛մ գովք, կա՛մ կաշառված ծառայություն: Ուզում է, որ իր հարգանքն ու նվերները գնահատվեն ու մեծարվեն: Շնորհը, մինչդեռ, հետաքրքրված չէ ժամանակի հետ անցնող իրողություններով, իր բարեգործությունների փոխարեն չի խնդրում մի ա՛յլ վարձատրություն, եթե ոչ՝ Աստծուն միայն: Երկրային բարիքները շնորհը գործածում է այն քանակությամբ, որքանով դրանք կարող են օգնել իրեն հավիտենական բարիքների ձեռքբերման գործում:*

7.*Բնությանը հաճելի են բազում ծանոթություններն ու ընկերությունները, հպարտանում է իր ծննդավայրով, նշանավոր նախահայրերով. քծնում է հզորներին, շողոքորթում՝ հարուստներին, և ծափահարում՝ իրեն նմաններին միայն: Մինչդեռ շնորհը սիրում է թշնամիներին անգամ, չի հպարտանում ընկերների բազմությամբ և ո՛չ էլ ծննդյան վայրով կամ ընտանիքով, բացառությամբ՝ եթե փայլում են աստվածսիրությամբ ու առաքինություններով: Շնորհը նախընտրում է աղքատներին, քան հարուստներին, կարեկցում է անմեղին ավելի, քան մեղսակցում հզորին, ուրախանում է ճշմարտասերների հետ, ո՛չ թե ստախոսների: Բարիներին քաջալերում է ձգտելու միշտ ավելի լավագույն առաքինությունների, որպեսզի քայլ առ քայլ առավել նմանվեն Աստծո Որդուն:*

8. *Բնությունն իսկույն փրփնջում է, եթե զրկվում է ինչ որ մի բանից, կամ եթե ներկայացվում է իրեն տհաճ մի բան: Շնորհը կրում է աղքատությունը անվեհերությամբ: Բնությունն ամեն ինչ դեպի իր օգուտն է ուղղում, պայքարում է ու վիճում իր շահի համար: Շնորհն ամեն բան ուղղում է առ Աստված, որից են բխում բոլոր բարիքները: Ոչ մի բարեգործություն շնորհը չի վերագրում սեփական անձին, շնորհն ինքնահավան չէ, չի վիճաբանում և իր կարծիքը չի թելադրում ուրիշների, այլ՝ այն ամեն ինչում, որ խորհում է կամ խոսում, ենթարկվում է հավիտենական իմաստությանը և որպես դատավոր ճանաչում Աստծուն: Բնությունը ծարավի է ճանաչելու գաղտնիքներ և տեղեկանալու նորությունների, կամենում է տեսնել և զգայական փորձառությունն ունենալ շատ բաների. ցանկանում է ճանաչվել և հիացում շահող գործեր կատարել: Շնորհը, մինչդեռ, չի կամենում իմանալ ո՛չ նորություններ, և ո՛չ էլ հետաքրքրությունը գրգռող իրողություններ, որովհետև այդ նորություններն ա՛յլ բան չեն, եթե ոչ՝ մոռացումը հին հուշերի, որովհետև աշխարհիս վրա ոչինչ նոր չէ, ոչինչ՝ տևական: Այս իսկ պատճառով, շնորհն ուսուցանում է արգելակել զգայարանները, խուսափել ունայն ցուցամոլությունից, խոնարհությամբ թաքցնել այն, ինչն իրենում արժանի է գովքի ու հիացման, ամեն ինչում և յուրաքանչյուր գիտության մեջ փնտրել օգտակար պտուղներ և փառքն ու պատիվը Աստծո: Չի կամենում, որ ծափահարվեն ո՛չ ինքը, ո՛չ իր գործերը, այլ՝ փափաքում է, որ միայն Աստված օրհնվի Իր պարգևների համար, որոնք շնորհում է ձրիաբար, զուտ սիրուց մղված:*

9. *Այս Շնորհը գերբնական լույս է, յուրահատուկ պարգև է Աստծո, որոշիչ նշան է ընտրյալների, և գրավականն է հավիտենական փրկության: Բարձրացնում է մարդուն գերիվեր, քան երկրային իրողությունները, սովորեցնում է սիրել երկնայինները: Մարմնի համաձայն ապրված կյանքը գոյատևում է հոգևորի: Որքան ավելի է շղթայվում ու հպատակեցվում բնությունը, այնքան ավելի առատ շնորհ է տարածվում հոգուց ներս: Եվ օրեցօր, աստվածային շնորհի նորանոր այցելությունների հետևանքում, ներքին մարդն ավելի ու ավելի է նմանվում Աստծո պատկերին:*

ԳԼՈՒԽ ԾԵ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հավատացյալը. Տեր Աստված իմ, որ ստեղծեցիր ինձ ըստ Քո պատկերի ու նմանության, տուր ինձ շնորհդ, որն հայտնեցիր այսքան մեծ և անհրաժեշտ փրկությանս համար, որպեսզի կարողանամ հաղթել անկյալ բնությանս, որ քաշում է ինձ դեպի մեղքերն ու հավիտենական կորուստը: Մարմնիս մեջ զգում եմ ներկայությունը մեղքի օրենքի, որ հակոտնյա է հոգուս օրենքին, և որ բռնանում է վրաս ինչպես ստրուկի, ստիպում է ենթարկվել զգացմունքայնությանը բազմաթիվ անգամներ: Եվ չեմ կարող դիմադրել նրա կրքերին, եթե ինձ թիկունք չկանգնի սրտիս մեջ բորբոք հեղված ամենասուրբ շնորհդ:*

2. *Կարիքն ունեմ շնորհիդ, և առատագե՛ղ շնորհիդ, հաղթելու համար բնությանս, որ դեպի ապականությունն է հակված պատանեկությունիցս ի վեր: Ընկնելով հանձինս առաջին մարդ Ադամի և մեղքի հետևանքում խավարելով, մարդկանցից յուրաքանչյուրն այժմ կրում է այդ ճակատագրական սխալի արդյունքները, այնպես, որ Քո կողմից բարի ու կատարյալ ստեղծված բնությունն այժմ հոմանիշն է սխալների ու խեղճության, որովհետև նրա մղումներն ու ազդակները, անդեկ թողնված, ձգտում են դեպի չարն ու ստորինը: Իսկ կորովի այն չնչին քանակը, որ տակավին կենդանի է մեզնում, նման է*

մոխրի տակ թաքնված կայծին: Փոքրիկ այդ առկայծումը մարդկային միտքն է, որ թեպետ շրջապատված է խիտ մշուշով, բայց այնուամենայնիվ դեռևս ունակ է դատաստաններ կնքելու չարի և բարու միջև, տեսնելու այն անդնդային տարածքը, որ բաժանում է ճշմարտությունը կեղծիքից: Ցավոք, չի կարողանում այլևս հասնել այն ամենին, ինչը ճանաչում է իբրև բարի, չունի այլևս ճշմարտության լույսն ամբողջովին, ինչպես նաև փափաքների կատարելությունը:

3. *Այս իսկ պատճառով, պատահում է, Ասված իմ, որ* «ըստ հոգևոր մարդու՝ տալիս եմ իմ հավանությունը պատվիրաններիդ» *(Հռմ* 7, 22*), ըմբռնելով, որ* «օրենքներդ բարի են, արդար և սուրբ» *(Հռմ* 7, 12*), ինչպես նաև հասկանում եմ, որ հարկ է փախչել չարից ու մեղքերից. բայց հետո,* «ըստ մարմնի՝ ծառայում եմ մեղքի օրենքին» *(Հռմ* 7, 25*), և հնազանդվում եմ զգայարաններին ավելի, քան բանականությանս: Հետևաբար,* «բարու հանդեպ կամք կա ինձնում, բայց չունեմ այն իրագործելու ուժը» *(Հռմ* 7, 18*): Հետևանքում, հաճախ առաջադրում եմ գործադրել շատ բարիք, բայց որովհետև բացակայում է հիվանդությունս դարմանող շնորհը, փոքրագույն արգելքների առաջ անգամ ետ եմ ընկրկում ու նվաղում: Ճանաչում եմ դեպի կատարելություն առաջնորդող ուղին, և հստակ կերպով տեսնում եմ, թե ինչպես պետք է վարվեմ. բայց ապականությանս բեռան տակ կքված, չեմ կարողանում ոտքի կանգնել և բարձրանալ դեպի կատարյալը:*

4. *Տեր, քանի՜ցս անհրաժեշտ է ինձ շնորհդ, բարին սկսելու, շարունակելու և մինչև վերջ կատարելու համար: Որովհետև առանց շնորհիդ չեմ կարող անել ոչինչ, մինչ ամեն բան կարող եմ Քեզնում, շնորհիդ օգնությամբ: Ո՜վ շնորհ իրոք երկնային, առանց որի մեր արժանիքները ոչինչ են, և բնական ձիրքերը նույնպես՝ անարժեք: Առանց շնորհի, Տեր, ոչինչ են Քո համար արվեստը, հարստությունները, գեղեցկությունը, ուժը, տաղանդն ու պերճախոսությունը: Որովհետև բնական ձիրքերը տրված են և՛ բարիներին, և՛ չարերին. մինչդեռ ընտրյալներիդ յուրահատուկ ունակությունը շնորհն է, այսինքն՝ գերմարդկային, աստվածային սերը, և նրանք, ովքեր զարդարվում են այս պարգևով, արժանի են նկատվում հավիտենական կյանքին: Այնքա՜ն գերազանց է շնորհը, որ ո՛չ մարգարեության, ո՛չ հրաշագործելու, և ո՛չ էլ ամենավերասլաց հայեցողության պարգևներն ինչ որ մի բան արժեն առանց նրա: Եվ նմանապես հավատքը, հույսը և մյուս բոլոր առաքինությունները ընդունելի չեն Քեզ առանց սիրո և շնորհի:*

5. *Ո՜վ սրբաոծ շնորհ, որ առաքինություններով հարստացնում ես հոգով աղքատին և երկնային բազում բարիքներով լիացնում ես սիրտը խոնարհի: Ե՛կ, հեղվիր նաև իմ վրա, հագեցրու ինձ Քո մխիթարություններով, որպեսզի հոգիս չնվաղի՝ հոգնությունից ու ցամաքությունից սպառված: Տեր իմ, թող ծառադ շնորհի գտնի Քո առաջ.* «շնորհիդ բավական է ինձ» *(2Կր* 12, 9*), եթե նույնիսկ բնությունս գոհացնող ոչինչ էլ չպտանամ: Եթե փորձվեմ և տառապեմ ընդմեջ զանազան նեղությունների, չեմ սարսափի ոչ մի չարիքից, երբ գինակիցս շնորհիդ է: Նա՛ է իմ զորությունը, նա՛ է տալիս ինձ խորհուրդ և օգնություն. ավելի հզոր է, քան բոլոր թշնամիները, և առավել իմաստուն, քան գիտունները բոլոր: Նա՛ է ճշմարտությունն ուսուցանողը, կանոնապահության կրթողը, սրտի լույսը, նեղություններում մխիթարողը, տրտմությունը հալածողը, երկյուղներում խաղաղեցնողը, բարեպաշտությունը սնուցողը և սրտահոս արցունքների ակունքը: Եվ ի՞նչ եմ ես առանց շնորհի, եթե ոչ միայն՝ ցամաք փայտ և տարտասկ անպիտան, կրակ նետվելիք: Թող ուրեմն*

շնորհդ, Տեր, միշտ զորակցի ինձ և օգնի, մղի կատարելու գործեր բարի, շնորհիվ Հիսուս Փրկչի՝ Որդուդ արժանիքների. ամեն:

ԳԼՈՒԽ ԾԶ. ՆՄԱՆՎԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ ԽԱՉԱԿՐՈՒԹՅԱՄԲ

1. *Հիսուսը. Որդյակ, որքան ավելի անջատվես ինքդ քեզնից, այնքան ավելի կմիանաս ինձ: Ինչպես որ արտաքին ոչինչ չփափաքելով է պահպանվում ներքին խաղաղությունը, այնպես էլ ներքուստ սեփական անձն ամբողջովին թողլքելով է կառուցվում Աստծո հետ միությունը: Կամենում եմ սովորեցնել քեզ անձիցդ կատարյալ անջատումը՝ համակամվելով կամքիս, առանց ըմբոստության ու տրտունջի: «Հետևիր ինձ» (Մտթ* 9, 9*), «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (Հվի* 14, 6*): Առանց ճանապարհի չես կարող անմոլոր քայլել, առանց ճշմարտության չես կարող ճանաչել, առանց կյանքի չես կարող գոյություն ունենալ: Ես եմ ճանապարհը, որին պետք է հետևես. ճշմարտությունը, որին պետք է հավատաս. կյանքը, որին պետք է հուսաս: Ես եմ ապահով ճանապարհը, անսխալական ճշմարտությունը, անվախճան կյանքը: Ես եմ ուղղաշավիղ ճանապարհը, գերագույն ճշմարտությունը, իրական, երանավետ, անստեղծ կյանքը: Եթե հետևես իմ ճանապարհին, «կճանաչես Ճշմարտությունը, և Ճշմարտությունը կազատի քեզ» (Հվի* 8, 32*), և կհասնես հավիտենական կյանքին:*

2. «Եթե կամենում ես հավիտենական կյանքը ժառանգել, պահիր պատվիրանները» *(Մտթ* 19, 17*): Եթե կամենում ես ճանաչել ճշմարտությունը, հավատա՛ ինձ:* «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա՛, վաճառիր ինչ ունես» *(Մտթ* 19, 21*):* «Եթե կամենում ես աշակերտել ինձ, հրաժարվիր անձիցդ» *(Ղկս* 9, 23*): Եթե կամենում ես երանելի կյանքն ընդունել, արհամարհիր ներկան: Եթե կամենում ես փառավորվել Երկնքում, խոնարհվիր երկրի վրա: Եթե կամենում ես թագավորել իմ հետ, կրիր իմ հետ Խաչը: Որովհետև Խաչի ծառաներն են միայն գտնում երանության և իրական լույսի արահետը:*

3. *Հավատացյալը. Հիսուս, Տեր իմ, կյանքդ աղքատ և հալածված եղավ աշխարհում: Տուր, որ նմանվեմ Քեզ, համբերությամբ կրելով աշխարհի արհամարհանքը: Իրոք,* «ծառան տիրոջից ավելին չէ, և ո՛չ էլ աշակերտը՝ ուսուցչից» *(Մտթ* 10, 24*): Թող որ կյանքս հարևնման լինի Քո կյանքին, որովհետև Քո հետ ունեցած նմանության մեջ է միայն կայանում փրկությունս և իրական սրբությունը: Ի՛նչ էլ կարդամ և ունկնդրեմ սրանից դուրս, ի զորու չի լինի մխիթարելու ինձ, և ո՛չ էլ կատարելապես հագեցնելու:*

4. *Հիսուսը. Որդյակ, քանի որ ընթերցել ես և գիտես այս բաները,* երանելի կլինես, եթե գործադրես: *Ով ճանաչում է պատվիրաններս և գործադրում է դրանք, նա է, որ սիրում է ինձ: Եվ ինձ նույնպես՝ այդպիսին է սիրելի, այդպիսի մարդուն կհայտնեմ անձս, այդպիսի մարդուն իմ աջ կողմում կբազմեցնեմ Հորս Արքայության մեջ:*

5. *Հավատացյալը. Տեր իմ Հիսուս, ինչպես խոստացել էիր, այնպես է կատարվում իրոք, և երանի թե արժանի լինեի խոստումներիդ: Քո ձեռքերից ընդունեցի խաչը, այն ընդունեցի և կկրեմ այն, մինչ ի մահ կկրեմ, այնպես՝ ինչպես դրեցիր ուսերիս: Իրականում, լավ վանականի կյանքը խաչ է, բայց առաջնորդում է դեպի Երկինք: Սկսել եմ. չեմ կամենում ետ դառնալ. կանգ առնելը նույնպես բացառված է:*

Հետևաբար, եղբայրներ, առաջ ընթանանք միասին. Հիսուսը մեր հետ է: Հիսուսի սիրո համար հանձն առանք այս խաչը, Հիսուսի սիրո համար էլ հարատևենք այն կրելու մեջ: Մեզ օգնության կհասնի Նա, որ մեր առաջնորդն է, և որ կանխում է մեզ: Ահա՛, մեր Թագավորն ընթանում է մեզ գլուխ անցած, Նա կպատերազմի մեր համար: «Հետևենք Նրան արիությամբ, ոչ ոք թող ետ չընկրկի սարսափահար. պատրաստ լինենք մեռնելու ճակատամարտի դաշտում, քաջերի նման» (1Մկ 9, 10): Զբծավորենք մեր փառքը, խաչից խուսափելով:

ԳԼՈՒԽ ԾԷ.
ՉՀՈՒՍԱՀԱՏՎԵԼ ՍԱՅԹԱՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

1. *Հիսուսը. Որդյակ, ինձ ավելի հաճելի են համբերությունն ու խոնարհությունը, երբ ամեն բան ձախ է ընթանում, քան բազում մխիթարություններն ու ջերմ եռանդը խաղաղության օրերում: Ինչո՞ւ ես այդքան վշտանում քո դեմ ասված կամ արված փոքրիկ ընդդիմությունների պատճառով: Եթե նույնիսկ է՛լ ավելի ծանր կերպով դուրս գային քո դեմ, չպետք է վրդովվեիր: Շատ կարևորություն մի՛ ընծայիր. առաջին անգամը չէ, նորություն չէ, և վստահ՝ չի լինելու նաև վերջինը, եթե երկար ապրես: Քաջարի ես, երբ խոչնդոտները բացակայում են: Ինչպես նաև լավորակ խորհրդատու ես և մխիթարության հարմար խոսքեր ես արտասանում ուրիշների համար: Մինչ հազիվ մի անակնկալ նեղություն բախում է դուռը դ, «մնաք բարով» ես ասում իմաստությանն ու զորությանը: Տե՛ս, թե քանի՜ցս մեծ է տկարությունդ և թե քանի՜ցս հաճախ հնարավորությունն ունես զգալու այն, ոչինչ ընդդիմությունների դեպքում: Եվ այնուամենայնիվ, եթե այսպիսի կամ նման դեպքեր են պատահում, քո իսկ բարիքի համար են:*

2. *Ջանա՛ մոռանալ, որքան լավ որ կարող ես, և եթե ենթարկվում ես նեղությունների, ո՛չ հուսահատվիր, և ո՛չ էլ մտահոգվիր երկար ժամանակ: Գեթ համբերությամբ տառապիր, եթե չես կարողանում ուրախությամբ: Եվ եթե նույնիսկ չես կարողանում հոժարությամբ լրսել որոշ կարծիքներ, և դրանց պատճառով խռովվում ես, տիրապետիր քեզ, զսպիր, և թող բերանիցդ դուրս չգան անվայել խոսքեր, որոնք կարող են գայթակղեցնել պարզամիտներին: Շուտով փոթորիկը կհանդարտվի և վշտիդ կհաջորդի խաղաղությունը, շնորհի այցելության հետևանքում: «Ես ողջ եմ» (Ես 49, 18), պատրաստ օգնելու քեզ և մխիթարելու սովորականից է՛լ ավելի, եթե հավատաս ինձ և կանչես եռանդով:*

3. *Հոգիդ անդորրի մեջ պահիր և պատրաստվիր դե՛ռ ավելի մեծ պայքարների: Իրականում, անօգուտ բան չէ հաճախ տառապելն ու փորձվելը: Մարդ ես, ո՛չ Աստված. մարմնեղեն ես, և ո՛չ հրեշտակ: Ինչպե՞ս կարող ես հարատևել առաքինության միևնույն աստիճանում, երբ նույնը չկարողացան առաջին հրեշտակը երկնքում և առաջին մարդը դրախտում: Ես Նա Եմ, ով փրկություն է շնորհում վշտահարներին, մինչև ստվածությունս բարձրացնելով նրանց, ովքեր խոնարհվելով ընդունում են իրենց տկարությունը:*

4. *Հավատացյալը. Տեր, թող օրհնյալ լինի խոսքդ. այն «լեզվիս վրա ավելի քաղցր է, քան մեղրի խորիսխը» (Սղմ 18, 11): Արդյոք ի՞նչ էի անելու նեղությունների ու անձկությունների մեջ ընկրղմված, եթե չմխիթարեիր ինձ Քո սուրբ խոսքերով: Որպեսզի վերջիվերջո հասնեմ*

փրրկության նավահանգիստ, ի՞նչ կարևորություն ունի, թե ինչպիսի կամ քանի նեղություններ եմ պարտավոր կրելու: Տուր ինձ բարի վախճան և երջանիկ խաղաղ մեկնում այս աշխարհից: Գթությամբդ հիշիր ինձ, Աստված իմ, և ուղղաշավիղ արահետով առաջնորդիր դեպի Արքայությունդ. ամեն:

ԳԼՈՒԽ ԾԸ. ՉՓՈՐՁԵԼ ՔՆՆԵԼ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. *Հիսուսը. Որդյակ, մի՛ պատճառաբանիր չափազանց բարձր իրողությունների և աստվածային գաղտնի խորհուրդների շուրջ. թե ինչո՛ւ է մեկը լքված, մինչ մի ուրիշը վայելքների մեջ է, ինչո՛ւ է մեկը վշտացած, մինչ մյուսը ողողված է մխիթարություններով: Սրանք հարցեր են, որ գերազանցում են մարդկային մտքի ըմբռնողական հնարավորություններին, և չկա ճառախոսություն կամ վիճաբանություն, որ ի զորու լինի քողազերծելու աստվածային դատաստանները: Հետևաբար, երբ թշնամին մտքումդ արթնացնում է որոշ հարցադրումներ, կամ երբ հետաքրքրասերները պահանջում են լուսաբանումներ, բոլորին պատասխանիր Մարգարեի խոսքերով. «Տեր, Դու արդար ես և ուղիղ են Քո դատաստանները» (Սղմ 118, 137), և կամ այս մյուս խոսքերով. «Տերունական դատաստանները ճշմարիտ են և բոլորն էլ արդար» (Սղմ 18, 10): Որդյակ, վճիռներս հարկավոր է հարգել, ո՛չ թե քննել, որովհետև գերիվեր են, քան մարդկային իմացականությունը:*

2. *Հետազոտություններ մի՛ ծավալիր և ո՛չ էլ վիճաբանիր Սրբոց արժանիքների շուրջ. թե որն է մյուսից ավելի մեծ, և կամ թե ով է առավել փառավորված Երկնքում: Այսպիսի տրրամադրություններից ծնվում են վեճեր ու անօգուտ լեզվակռիվներ, ուռճանում են հպարտությունն ու սնափառությունը, որոնցից էլ բխում են նախանձ ու տարաձայնություններ, որովհետև մեկն ունայնամտությամբ նախընտրում է այսինչ Սրբին, իսկ մյուսը՝ մի ուրիշին: Որոշ բաներ իմանալ և քննել կամենալը ապարդյուն է, ինչպես նաև տհաճ՝ Սրբերին, որովհետև ես երկպառակության Աստվածը չեմ, այլ՝ Աստվածը խաղաղության: Իսկ այդ խաղաղությունն ավելի իրական խոնարհության մեջ է կայանում, քան անձնական հոչակման:*

3. *Ոմանք բարեպաշտ եռանդով առավել համակրանք են զգում որոշ Սրբերի հանդեպ, բայց այս զգացումն ավելի մարդկային է, քան աստվածային: Ե՛ս կատարելության հասցրեցի Սրբերին, ե՛ս նրանց պարգևեցի շնորհը, ե՛ս նրանց հաղորդակից դարձրեցի փառքիս: Հայտնի են ինձ նրանցից յուրաքանչյուրի արժանիքները, որովհետև ե՛ս նրանց կանխեցի քաղցրությունիցս բխող օրհնություններով: Ե՛ս նախասահմանեցի իմ ընտրյալներին հավիտենությունից էլ առաջ, ե՛ս նրանց ընտրեցի աշխարհից, ո՛չ թե նրանք ինձ: Ե՛ս նրանց կանչեցի շնորհով, ձգեցի ողորմությամբ, ընկերակցեցի ընդմեջ զանազան փորձությունների: Ե՛ս նրանց վրա հեղեցի ստվարաբար մխիթարություններ, ե՛ս նրանց շնորհեցի հարատևություն, ե՛ս վարձատրեցի նրանց համբերությունը:*

4. *Ես գիտեմ, թե նրանցից ով է առաջինը և ով վերջինը, և բոլորին էլ սիրում եմ հավասարապես անհուն սիրով: Ե՛ս պետք է փառավորվեմ բոլոր Սրբերի մեջ, ե՛ս պետք է օրհնվեմ ամեն ինչից ավելի և մեծարվեմ նրանցից յուրաքանչյուրի մեջ, որոնց մեծվայելչությամբ բարձրացրեցի ու նախասահմանեցի, առանց նախապես պահանջելու նրանցից որևէ արժանիք: Ով, հետևաբար, արհամարհում է իմ այս Սրբերից*

փոքրագույնին, չի հարգում նաև մեծին, որովհետև մեծ թե փոքր, բոլորին էլ ես ստեղծեցի: Եվ ով ոչինչ է համարում Սրբերիցս որևէ մեկին, նվաստացնում է ինձ և նրանց բոլորին, որ իմ հետ Երկնքում են: Այնտեղ բոլորը մեկ միասնություն են ասպվածային սիրո մեջ, ունեն միևնույն զգացումներն ու կամքը, և որպես միևնույն Հոր որդիներ, սիրում են միմյանց եղբայրական փոխադարձ սիրով:

5. *Եվ – ինչն ավելի վեհ է ու գերազանց – սիրում են ո՛չ թե իրենք իրենց կամ իրենց արժանիքները, այլ՝ ինձ միայն: Հափշտակված իրենցից վեր և ձերբազատված իրենց անձնասիրությունից, բոլորն էլ ընկղմված են սիրույս մեջ, ուր վայելում են քաղցրիկ հանգիստ: Ոչինչ չի կարող շեղել նրանց կամ դեպի վար քաշել, որովհետև զեղման չափ լի են հավիտենական ճշմարտությամբ, որովհետև բոցավառված են ասպվածային անմար սիրո կրակներով: Ուրեմն, թող ըստ մարմնի և ըստ աշխարհի մտածող մարդիկ չասպիճանավորեն իմ Սրբերին. մարդիկ, որ իրենց անձնական հաճույքները միայն գիտեն սիրել, որ կտրում կամ ավելացնում են ըստ իրենց քմահաճույքի, և ո՛չ թե ըստ հավիտենական ճշմարտության կամքի:*

6. *Այսպիսի մարդկանց մեծամասնության մեջ գործում է անգիտությունը, հատկապես նրանց մեջ, ովքեր ասպվածային շնորհներով քիչ լուսավորված լինելով՝ հազվադեպ են կարողանում սիրել որևէ մեկին հոգևոր մաքուր սիրով: Ինչպես նաև, բնական զգացումներից և զուտ մարդկային համակրանքից մղված հակվելով դեպի այս մեկը կամ այն մյուսը, ինչպես վարվում են երկրային իրավիճակներում, կարծում են, թե երկնայիններում նույնպես պատահում է այդպես: Անհնարին է նկարագրել այն տարածքը, որ բաժանում է թերի հոգիների կարծիքներն այն սկզբունքներից ու գաղափարներից, որոնցով սնվում են երկնային հայտնությամբ լուսավորված հոգիները:*

7. *Հետևաբար, որդյակ, պահարակելի հետաքրքրությամբ միջամուտ մի՛ եղիր այսպիսի իրողություններ մեջ, որոնք գերազանցում են իմացականությանդ սահմանները, այլ՝ ավելի աշխատիր, որ գեթ վերջինը լինես Երկնքի Արքայությունում: Եթե մեկն իմանար, թե ով է ամենասուրբը կամ ամենամեծը Երկնքում, ի՞նչ օգուտ կունենար իր համար այս գիտությունը, եթե առիթ չհանդիսանար խոնարհության և ինձ է՛լ ավելի փառավորելու: Ով խորհում է իր մեղքերի մեծության ու առաքինությունների սակավության շուրջ, և թե որքա՞ն հեռու է Սրբերի կատարելությունից, ինձ ավելի հաճելի գործ է կատարում, քան Սրբերի մեծության ու փոքրության շուրջ պատճառաբանողը: Նախընտրելի է Սրբերի բարեխոսությունը հայցել բարեպաշտ աղոթքներով ու արցունքներով, և խոնարհ սրտով խնդրել նրանց փառահեղ օգնությունը, քան պարապ փնտրտուքով փորձել քննել երկնային խորհուրդները:*

8. *Սրբերն ավելի գոհ կլինեին, եթե մարդիկ մի կողմ թողնեին ավելորդ շատախոսությունները, որովհետև իրենք չեն պարծենում իրենց արժանիքներով, որովհետև իրենց չեն վերագրում ոչ մի բարիք, այլ՝ միայն ինձ, որովհետև ե՛ս իրենց շնորհեցի ամեն բան ըստ իմ անհուն սիրո: Սրբերն այնքան լի են ասպվածային սիրով ու երանությամբ, որ ոչինչ չի պակասում իրենց փառքին և ոչինչ չի կարող պակասել իրենց վայելած բերկրանքին: Բոլոր Սրբերն առանց բացառության, որքան ավելի բարձր են փառքի մեջ, այնքան ավելի խոնարհ են, միացած ինձ և ինձ հաճելի: Այս իսկ պատճառով,*

գրված է. «Իրենց պսակները դնում էին Աստծո գահի առաջ, գետնատարած երկրպագում էին Գառանը, և պաշտում էին ի հավիտյանս հավիտենից Կենդանի եղողին» *(Հյտ* 4, 10; 5, 13-14*):*

9. *Շատերը կամենում են իմանալ, թե ով է ամենամեծը Երկնքում, և սակայն անգիտանում են, թե իրենք արժանի՞ են լինելու դասվելու գեթ ամենափոքրերի մեջ: Մեծագույն իրողություն է Երկնքում նույնիսկ ամենափոքրը լինելը, ուր բոլորն էլ մեծ են, որովհետև բոլորն էլ կոչվելու և իսկապես լինելու են Աստծո որդիներ:* «Ամենափոքրը բարձրացվելու է ավելի վեր, քան բյուրավոր հազարները», *մինչդեռ մեղավորը հարյուր տարի ապրելուց հետո մեռնելու է (Ես* 60, 22; 65, 20*): Երբ Առաքյալները հարցրեցին ինձ, թե ով է ամենամեծը Երկնքի Արքայությունում, ստացան ահա այս պատասխանը.* «Եթե հոգեպես չնորոգվեք և չլինեք ինչպես այս մանուկները, Երկնքի Արքայություն չեք մտնի: Ով խոնարհվում է ինչպես այս մանուկը, նա է ամենամեծը Երկնքի Արքայությունում» *(Մտթ* 18, 3-4*):*

10. *Վա՜յ նրանց, ովքեր չեն կամենում հոժարությամբ խոնարհվել մանուկների նման, որովհետև Երկնքի Արքայության դուռը ցածր է ու նեղ, և անհնարին է նրանից ներս մտնել վեր ցցված քթով:* «Վա՜յ հարուստներին, որովհետև երկրի վրա են գտնում իրենց մխիթարությունը» *(Ղկս* 6, 24*), և մինչ աղքատները կմտնեն Աստծո Արքայություն, իրենք դրսում մնացած կողբան ու կիեկեկան: Ցնծացե՛ք, խոնարհներ, և ուրա՛խ եղեք, աղքատներ, որովհետև ձերն է Աստծո Արքայությունը, եթե հարատև հավատարիմ մնաք Ճշմարտությանը:*

ԳԼՈՒԽ ԾԹ. ՀՈՒՅՍ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԱՌ ԱՍՏՎԱԾ

1. *Հավատացյալը. Տեր, այս կյանքիս ընթացքում դեպի ո՞ւր ուղղեմ վստահությունս, կամ ո՞ւր գտնեմ մխիթարությունս այս աշխարհում: Մի՞թե Դու չես, Աստված իմ, անթիվ ու անքանակ ողորմությունների Տերը: Ո՞ւր կարողացա ապահով լինել առանց Քեզ, և ընդհակառակն՝ ո՞ւր ապերջանիկ եղա Քո հետ: Նախընտրում եմ աղքատ լինել ի սեր Քո, քան հարուստ առանց Քեզ: Նախընտրում եմ պանդուխտ լինել Քո հետ երկրի վրա, քան դրախտը վայելել առանց Քեզ: Ուր Դու ներկա ես, այնտեղ է Երկինքը, մինչ ուր բացակա ես, մահն է տիրում ու դժոխքը: Դու ես փափաքներիս միակ առարկան, և այս իսկ պատճառով՝ չեմ կարող չհետևել Քեզ արտասվելով, աղաղակելով ու աղաչելով: Ոչ ոք չի կարող կարիքներիս մեջ ավելի լավագույն օգնություն ընծայել ինձ, քան միայն Դու, Աստված իմ:* «Դու ես իմ հույսը» *(Սղմ* 141, 6*), իմ վստահությունը, մխիթարիչս ու ամեն ինչում հավատարիմ ընկերս:*

2. «Բոլորն իրենց շահն են փնտրում» *(Փլպ* 2, 21*): Դու ես միայն, որ մտածում ես փրկությանս ու օգուտիս մասին, և որ ամեն բան ծառայեցնում ես իմ բարիքին: Եթե նույնիսկ ենթարկում ես զանազան փորձությունների ու նեղությունների, ամեն բան տնօրինում ես իմ օգուտի համար, որովհետև սովոր ես հազարավոր կերպերով փորձել նրանց, որոնց սիրում ես: Փորձությունների մեջ չպետք է սակավ փառաբանվես, սիրվես ու օրհնություն ընդունես, քան երբ լիացնում ես ինձ երկնային մխիթարություններովդ:*

3. *Դու ես, ուրեմն, Տեր, իմ հույսն ու ապավենը. Քեզ եմ վստահում իմ բոլոր նեղություններն ու տրտմությունը, որովհետև Քեզնից դուրս ամեն բան տեսնում եմ*

սասանելի ու անհասկանալի: Չեն կարող օգնել բազում ընկերները, չեն կարող պաշտպանել հզոր թիկնապահները, չեն կարող գործնական պատասխան տալ խորագետ խորհրդականները, չեն կարող ափոփել իմաստունների գրությունները, չեն կարող ազատել թանկարժեք առարկաները, և ո՛չ էլ գաղտնածածուկ անձավները կարող են ապահովություն խոստանալ, եթե Դու զորավիգ չլինես, չօգնես, չմխիթարես, չափոփես, չուսուցանես ու չպաշտպանես: Այն բոլոր իրողությունները, որ թվում է թե հայթայթում են մեզ անդորր ու երջանկություն, ոչինչ են առանց Քեզ, և ոչնչով չեն ծառայում խաղաղությանը: Դու Ինքդ ես, հետևաբար, նպատակակետը բոլոր բարիքների, լիությունը կյանքի և խոսքի խորքը: Եվ ծառաներիդ միակ վիթխարի մխիթարությունը ամեն ինչից վեր Քեզ հուսալու մեջ է կայանում:

4. «Աչքերս դեպի Քեզ են սևեռված, Քեզ եմ վստահում, Աստված իմ, Հայր գթությանց» *(Սղմ* 140, 8; 23, 2; 2*Կր* 1, 3*): Երկնային օրհնությամբդ օրհնիր և սրբիր հոգիս, որպեսզի սուրբ բնակավայր դառնա Քո համար և գահ հավիտենական փառքիդ: Եվ թող ոչինչ չգտնվի լույսիդ տաճարում, որ կարող լինի տհաճություն պատճառել վեհությանդ հայացքին: Դեպի ինձ հայիր* «ըստ Քո բազում գթության և ըստ Քո մեծ ողորմության» *(Սղմ* 50, 3*): Ընդունիր ծառայիդ աղոթքը, որ արտաքսված նետված է մահվան ստվերներով ծածկված այս հովտի մեջ: Այս անցողիկ կյանքի անդնդային վտանգների մեջ պաշտպանիր և փրկիր փոքրիկ ծառայիդ հոգին, և շնորհիդ գավազանով առաջնորդիր ինձ խաղաղության արահետներով, դեպի հայրենիքն անմայրամուտ լույսի. ամեն:*

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԻՍՈՒՍԻ ԽՈՍՔԵՐԸ

«Իմ մոտ եկեք, վշտահարներ ու ծանրաբեռնվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»: (Մտթ 11, 28*)*

«Այն հացը, որ տալու եմ, իմ մարմինն է, ի փրկություն աշխարհի»: (Հվհ 6, 52*)*

«Առեք, կերեք, սա իմ մարմինն է, ձեր համար զոհաբերված. արեք սա իմ հիշատակի համար»: (Մտթ 26, 26; *Ղկս* 22, 19*)*

«Ով կճաշակի մարմինս և կըմպի արյունս, նա իմ մեջ կբնակվի և ես՝ իր մեջ»: (Հվհ 6, 57*)*

«Խոսքերը, որ ասացի ձեզ, հոգի են և կյանք»: (Հվհ 6, 64*)*

ԳԼՈՒԽ Ա. ՄԵԾԱՐԱՆՔ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

1. *Հավատացյալը. Սրանք Քո խոսքերն են, Հիսուս, ճշմարտություն հավիտենական: Նույնիսկ եթե արտասանված չեն միաժամանակ, և ո՛չ էլ թղթին են հանձնվել միևնույն տեղում, բայց քանի որ Քոնն են, ճշմարիտ են, և հետևաբար՝ բոլորն էլ պետք է ընդունվեն իմ կողմից երախտագիտությամբ ու հավատքով: Քոնն են, Քո իսկ բերանից բխեցին դրանք. բայց նաև իմն են, որովհետև իմ փրկության համար են արտասանված: Հոժարությամբ եմ ընդունում դրանք շուրթերիցդ, որպեսզի առավել զորությամբ արմատներ արձակեն սրտիս հողերում: Գթառատ, քաղցրությամբ ու սիրով լի այս խոսքերը քաջալերում են ինձ. բայց ... մեղքերս սարսափեցնում են և արատներով բծավորված խիղճս տարհամոզում է ինձ այս վեհ խորհուրդն ընդունելուց: Խոսքերիդ քաղցրությունը կանչում է ինձ, մինչդեռ ախտերիս բազմությունը, որով շղթայված եմ, ստիպում է դեպի ետ ընկրկել:*

2. *Դու հրամայում ես վստահությամբ մոտենալ Քեզ, եթե կամենում եմ Քեզ ժառանգակից լինել, և պատվիրում ես անմահության հացը ճաշակել, եթե փափաքում եմ հասնել հավիտենական կյանքին ու փառքին:* «Իմ մոտ եկեք», *ասում ես,* «դուք բոլորդ, որ

հոգնած եք և ուժասպառ, և ես կհանգստացնեմ ձեզ» *(Մտթ* 11, 28*): Ո՜վ հուզիչ խոսք, քաղցր՝ մեղավորների ականջին, որով Դու, իմ Տեր և Աստված, աղքատ մուրացկանիս հրավիրում ես հաղորդվելու Սրբազնասուրբ Մարմնիդ: Բայց ո՞վ եմ ես, Տեր, որ համարձակվեմ մերձենալ Քեզ: Ահա* «երկինքն անգամ բավական չէ Քեզ բովանդակելու համար» *(1Թգ* 8, 27*), և սակայն Դու ասում ես.* «Իմ մոտ եկեք»*:*

3.*Ի՞նչ է նշանակում արդյոք այս բարեգութ ներողամտությունդ և հրավերդ այսքա՜ն սիրալի: Ինչպե՞ս համարձակվեմ մերձենալ, երբ գիտակից եմ, որ չեմ կատարել և ո՛չ իսկ մի բարեգործություն, որով կարող եմ անուցել վստահությունս: Ինչպե՞ս ներս մտցնեմ Քեզ հոգուս հարկերից ներս, ես, որ այնքա՜ն հաճախ մեղանչեցի ներկայությանդ: Ահա Հրեշտակներն ու Հրեշտակապետները երկրպագում են Քեզ, Սրբերն ու Արդարները՝ պաշտում երկյուղով, և այնուամենայնիվ Դու կրկնում ես.* «Իմ մոտ եկեք բոլորդ»*: Եթե Դու Ինքդ ասած չլինեիր, Տեր, ո՞վ կհավատար, թե իրական են այս խոսքերը: Եթե Դու Ինքդ չհրամայեիր մեզ, ո՞վ կըհանդգներ մերձենալ:*

4.*Նոյը, այդ մարդն արդար, հարյուր տարի աշխատեց տապանը կառուցելու և քչերի հետ նրանով փրկվելու համար: Իսկ ես ինչպե՞ս կարող եմ մի ժամվա մեջ պատրաստվել աշխարհի Արարչին պատվով ընդունելուն: Մովսեսը, մեծագույն ծառադ ու մտերիմդ, Ուխտի Տապանակը շինեց անփուտ փայտից, օծեց մաքրագույն ոսկիով, և ապա միայն տեղադրեց դրա մեջ օրենքի տախտակները: Իսկ ես, ապականյալ արարածս, պիտի հանդգնեմ այսքան դյուրությա՞մբ ընդունել Քեզ, որ հեղինակն ես օրենքի և պարգևողը կյանքի: Սողոմոնը, Իսրայելի թագավորներից ամենահմաստունը, յոթ տարվա ընթացքում կառուցեց Երուսաղեմի վսեմ տաճարն ի փառս Քո Անվան, ութ օր շարունակ տոնեց նավակատիքը, ընծայեց հազար խաղաղական զոհեր, և ապա միայն իր համար պատրաստված տեղում տեղադրեց Ուխտի Տապանակը մեծ հանդիսությամբ, շեփորների ու ցնծության աղաղակների ընկերակցությամբ: Իսկ ես, տարաբախտս և աղքատագույնս մարդկանց մեջ, ինչպե՞ս կարող եմ հրավիրել Քեզ հոգուս հարկերից ներս, երբ կես ժամ հազիվ եմ անցկացնում աղոթքով, և երանի՜ թե գեթ մի անգամ արժանապես անցկացնեի կես ժամից սակավ անգամ:*

5.*Աստված իմ, Քեզ հաճո լինելու համար որքա՜ն աշխատեցին այդ անձերը: Մինչ քանի՜ցս թերի է այն, ինչ անում եմ ես, քանի՜ցս կարճ է այն ժամանակամիջոցը, որ տրամադրում եմ Հաղորդությանը պատրաստվելու համար: Հազվադեպ եմ ամփոփ, և շատ հազվադեպ՝ մտացրումներից ազատ: Եվ սակայն, ոչ մի անվայել միտք չպետք է գրավեր ինձ Աստվածությանդ փրկարար ներկայությանը, և ո՛չ էլ ես ինքս մտովին զբաղվեի որևէ արարածով, որովհետև պատրաստվում եմ ո՛չ թե հրեշտակ հյուրընկալելու, այլ՝ հրեշտակների Տիրոջը:*
Ինչպես նաև, վիթխարի տարբերություն կա Ուխտի Տապանակի և Քո սրբազնագույն Մարմնի միջև. օրենքի կողմից հրամայված, ապագա պատարագումդ խորհրդանշող զոհաբերումների և Մարմնիդ իրական զոհընծայման միջև, որ լրումն է Հին Ուխտի բոլոր զոհերի:

6.*Ինչո՞ւ, ուրեմն, Աստված իմ, ներկայությանդ զգացումով չեմ բոցավառվում է՛լ ավելի: Ինչո՞ւ դե՛ռ ավելի մեծ ջանքով չեմ պատրաստվում խորհրդիդ ընդունմանը, երբ այդ սուրբ նահապետներն ու մարգարեները, թագավորներն ու իշխանները, իրենց հպատակների*

հետ մեկտեղ, այդօրինակ եռանդ ու խանդավառություն էին ցուցաբերում աստվածպաշտության գործում: Բարեպաշտ Դավիթ թագավորը, հիշելով իր նախահայրերին շնորհածդ բարիքները, մինչև ուժերի սպառվելը պարեց Ուխտի Տապանակի առաջ, քնարի վրա նվագեց, սաղմոսներ շարադրեց և պատվիրեց եղանակել դրանք զվարթությամբ: Եվ ինքը նույնպես, Սուրբ Հոգուց ներշնչված, հաճախ նվագեց տավիղի վրա: Իսրայելացիներին սովորեցրեց օրհներգել Քեզ ամբողջ սրտով, գովել և փառաբանել ամեն օր: Եթե այն ժամանակներում այդքան բարեպաշտ էին և հաճախակի էին օրհնություններ երգում աստվածային Խոսքման Տապանակի առաջ, ինչպիսի՜ մեծարանք ու եռանդ պետք է այժմ ներկա լինի ինձնում և քրիստոնյա ամբողջ ժողովրդի մեջ՝ Սուրբ Խորհրդի առաջ, սրբազան Մարմնիդ հաղորդվելիս:

7.Շատերն ուխտագնացություններ են կատարում դեպի այստեղ կամ այնտեղ, իրենց հարգանքը մատուցելու համար Սրբերի մասունքներին, ապշում են նրանց հերոսական առաքինությունների պատմությունը լսելիս, հիանում են նրանց անվամբ կառուցված եկեղեցիների գեղակերտ շինություններով և համբուրում են մետաքսով ու ոսկիով պատված նրանց սրբազան մասունքները: Եվ սակայն, ահա Դու Ինքդ, Աստված իմ, Սուրբդ սրբերի, Արարիչդ ու Տերդ մարդկանց և հրեշտակների, ահա ներկա ես այստեղ՝ խորանի վրա, ո՛չ հեռու ինձնից: Հաճախ ուխտագնացությունների նպատակի մեջ խառնվում է զուտ մարդկային հետաքրքրասիրությունը, տեսնելիք վայրերի ու իրողությունների նորությունը. և հետևանքում՝ ուխտագնացությունը լինում է նվազ պտղաբեր, նվազ նորոգիչ, հատկապես երբ կատարվում է մակերեսայնությամբ, առանց իրական զղջման: Մինչ այստեղ, խորանի Ամենասուրբ Խորհրդում, Դու իսկապես ներկա ես, Աստված իմ և միաժամանակ նաև կատարյալ մարդ Հիսուս Քրիստոս: Եվ այստեղ է առատությամբ հավաքվում պտուղը հավիտենական փրկության, այն ամեն անգամ, որ ընդունվում ես արժանավորապես և ջերմ բարեպաշտությամբ:
Այս Խորհրդին վայել չեն թեթևամտությունները, հետաքրքրությունն ու զգայական հաճույքները, այլ՝ հաստատուն հավատքը, երկյուղած հույսը և անկեղծ սերը:

8.Ո՛վ Աստված անտեսանելի, Արարիչ տիեզերքի, ինչպիսի՜ հրաշալի կերպով ես վարվում մեր հետ, ինչպիսի՜ քաղցրություն ու գթություն ես ցուցաբերում ընտրյալներիդ հանդեպ, որոնց նվիրվում ես ընդմեջ Ամենասուրբ Հաղորդության: Ինչը գերազանցում է, իրականում, մարդկային հասկացողության հնարավորություններին. ինչը յուրահատուկ կերպով դյութում է սրտերն երկյուղածների և բոցավառում է դրանք սիրով: Իրական հավատացյալներդ, որոնք իրենց ամբողջ կյանքը սպառում են սրբության ասպարեզում առաջադիմելու ջանքերի մեջ, այս վեհագույն Խորհրդից են ստանում բարեպաշտության ու առաքինասիրության մեծագույն շնորհները:

9.Ո՛վ հմայիչ ծածուկ շնորհ Հաղորդության Խորհրդի, ճանաչված՝ քրիստոնյա հավատացյալներից միայն, և անհայտ՝ անհավատներին, այլահավատներին ու մեղքի ստրուկներին, որոնք չեն կարող ունենալ այս շնորհի փորձառությունը: Այս Խորհրդի միջոցով է տրվում հոգևոր շնորհը, սրա միջոցով են հոգուն վերադարձվում իր կործանված կարողությունները, և սրանով է նորոգվում մեղքով այլանդակված գեղեցկությունը: Եվ երբեմն, հեղյալ ջերմեռանդության լիության հետևանքում, այս շնորհն այնքան առատահոս է լինում, որ ո՛չ միայն հոգին, այլ՝ մինչև իսկ տկար մարմինը զգում է իր ուժերի կատարացումը:

10. *Իրոք ցավալի և դատապարտելի են մեր անհոգությունն ու ծուլությունը, որ խանգարում են Քեզ միշտ ավելի վառ սիրով ընդունելու: Քեզնում են պարփակված փրկվողների ամբողջ հույսն ու արժանիքը: Դու ես մեր սրբությունն ու փրկությունը, երկրի վրա պանդուխտների մխիթարությունն ու Սրբերի հավիտենական փառքը: Իրոք տխուր իրականություն է, որ բազմաթիվ անձինք սակավագույն չափով են մտածում փրկության այս Խորհրդի շուրջ, որն հանդիսանում է բերկրանքը Երկնքի և փրկությունն աշխարհի: Վա՜յ մարդկային սրտի կուրությանն ու կարծրությանը, որ հարկ եղած կարևորությունը չի ընծայում այս անհուն բարիքին: Ավելին. վարժվելով և սովորություն դարձնելով, հասնում է մինչև անտարբերություն: Եթե այս Սրբազնասուրբ Խորհուրդը մատուցվեր միայն մի վայրում, և եթե ամբողջ աշխարհում այն նվիրագործող միայն մի քահանա լիներ, ինչպիսի՜ բուռն եռանդով կշտապեին մարդիկ դեպի այդ վայրը, Աստծո այդ քահանայի մոտ, մասնակցելու համար աստվածային Խորհրդի կատարմանը: Մինչդեռ այժմ, բազմաթիվ են ձեռնադրված քահանաները և բազում վայրերում ես նորոգում Գողգոթայի զոհաբերումդ, որպեսզի մարդկանց հանդեպ ունեցածդ սերն ու առատաձեռնությունը այնքան ավելի ցայտուն երևան, որքան ավելի տարածված է Ամենասուրբ Հաղորդությունը երկրի վրա:*

Երախտագիտություն եմ հայտնում Քեզ, Հիսուս բարի, Հովիվ հավիտենական, որ մեզ՝ աղքատ պանդուխտներիս սնում ես անապական Մարմնովդ և սուրբ Արյամբդ: Խոնարհ երախտիքս եմ մատուցում Քեզ, Հիսուս, որ շուրթերիցդ բխած խոսքերով հրավիրում ես մեզ ընդունելու այս Խորհուրդը, երբ ասում ես. «Իմ մոտ եկեք, դուք բոլորդ, որ հոգնած եք ու սպառված, և ես ձեզ կատարյալ հանգիստ կտամ»*:*

ԳԼՈՒԽ Բ. ԱՍՏԾՈ ԱՆՍԱՀՄԱՆ ՍԵՐԸ

1.*Հավատացյալը. Բարությանդ ու մեծ ողորմությանդ վստահելով, Տեր, մոտենում եմ Քեզ, հիվանդս՝ Փրկչիդ, քաղցածս ու պապակս՝ կյանքի աղբյուրիդ, մուրացիկս՝ երկնքի Թագավորիդ, ծառաս՝ Տիրոջդ, արարածս՝ Արարչիդ, վշտահարս՝ գթառատ Մխիթարչիդ: Որտեղի՞ց է ինձ այս երանությունը, որ Դու գալիս ես դեպի ինձ: Ո՞վ եմ ես, որ նվիրվում ես ինձ:*
Ինչպե՞ս կարող եմ ես՝ մեղավորս ներկայանալ Քեզ: Իսկ Դու, ինչպե՞ս կարող ես բարեհաճել հյուրընկալվել ինձնից: Դու ճանաչում ես ծառայիդ, և գիտես, որ նրանում չկա բարի ոչինչ, որով արժանի լինի այս շնորհիդ: Այս իսկ պատճառով, չեմ կարողանում ուրիշ ոչինչ անել, եթե ոչ միայն՝ խոստովանել անարժանությունս, ճանաչել բարությունդ, փառաբանել ողորմածությունդ և երախտագիտությունս հայտնել Քեզ այսքա՜ն վիթխարի սիրույդ համար: Այս բոլորը կատարում ես զուտ գթությունիցդ մղված, առանց ուշադրություն դարձնելու գոյություն չունեցող արժանիքներիս, որպեսզի բարությունդ առավել հայտնի լինի, առավել ընդարձակորեն սերը գրավի էությունս, և որպեսզի միշտ ավելի հոգեհարազատ դառնա ինձ խոնարհությունը: Եվ քանի որ Դու այսպես ես կամենում, և այսպես պատվիրեցիր, որ կատարվի, ինձ նույնպես հաճելի է կամքդ, և երանի՜ թե անօրենություններս արգելք չհանդիսանային:

2.*Ո՜վ քաղցրագույն ու ամենաբարի Հիսուս, ինչպիսի՜ մեծարանք, երախտագիտություն և անդադար փառաբրություն ենք պարտական Քեզ, Ամենասուրբ Մարմնիդ հաղորդվելու համար, որի մեծվայելչությունը բացատրելու կարող մարդ չկա:*

Բայց արդյոք ինչպիսի՞ խորհրդածումներով մուրենամ այս Հաղորդությանը, մերձենամ Տիրոջս, որին չեմ կարողանում արժանապես պաշտել, թեև փափաքում եմ վայել կերպով ընդունել Խորհուրդը: Ի՞նչ լավագույն ու փրկարար զգացում սնուցեմ ինձնում, քան Քո առջև լիովին խոնարհվելն ու փառավորելը Քո անսահման բարությունն իմ հանդեպ: Օրհնում եմ Քեզ, Ասված իմ, և գովում հավիտյան: Արհամարհում եմ ինձ և հպատակեցնում անձս Քեզ, չնայած հույժ անարժան եմ: Ահա Դու Սրբությունն ես Սրբերի, իսկ ես վատթարագույնն եմ ընդմեջ մեղավորների: Ահա Դու երկնքից խոնարհվում ես դեպի ինձ, որ արժանի չեմ աչքերս վրադ սևեռելու: Ահա Դու ընդառաջ ես ելնում ինձ, հրավիրում ես ինձ ճաշկերույթիդ: Փափաքում ես կերակրել ինձ երկնային սննդով, «հրեշտակների հացով» *(Սղմ* 77, 25*), ուրիշ ոչնչով, եթե ոչ՝ Քեզնով միայն,* «Հաց կենդանի, երկնքից իջած, կյանք աշխարհի» *(Հվի* 6, 33. 51-52*):*

3. *Ահա թե որքան բարություն է շողարձակվում այնտեղ, ուր բիսում է Սերը: Այս բոլորի համար երախտագիտության ինչպիսի վա՜ռ զգացումներ, ի՜նչ գոհություններ ենք պարտական Քեզ: Քանի՜ցս փրկարար ու հոգեշահ տրամադրվածությամբ հաստատեցիր այս Խորհուրդը: Քանի՜ցս քաղցր ու ստոփիչ է այն Ընթրիքը, ուր որպես կերակուր նվիրում ես Ինքդ Քեզ: Այս ի՜նչ հրաշք գործեցիր, Տեր: Քանի՜ցս անսահման է զորությունդ, քանի՜ցս աննկարագրելի՝ Քո ճշմարտությունը: Միայն մի խոսք արտասանեցիր և արարվեցին բոլոր գոյությունները. կատարվեց այն, ինչ հրամայեցիր: Հիրավի, մարդկային իմացականությանը գերազանցող, հավատքին միայն հասու հրաշք է, որ Դու, Տեր իմ, ճշմարիտ Ասված և ճշմարիտ մարդ, էությանդ ամբողջականությամբ բովանդակվում ես հացի ու գինու մեջ և ճաշակվում մարդկանցից, առանց այս վերջիններիս մոխրացնելու: Դու, Տեր բոլոր գոյությունների, որ ոչ որի կարիքը չունես, բայց որ այնուամենայնիվ կամեցար մեր մեջ բնակվել շնորհիվ այս Խորհրդի, անարատ պահիր սիրտս ու մարմինս, որպեսզի ջինջ ու հստակ խղճով հաճախ կարողանամ մասնակցել Պատարագիդ, և փրկությանս համար ընդունել այն, ինչ նախապես հրամայեցիր ու հաստատեցիր հավիտենական փառքիդ ու հիշատակիդ համար:*

4. *Ցնծա՛, հոգի իմ, և երախտագիտությունդ հայտնիր Ասծուն այս վեհ պարգևի և այս եզակի մխիթարության համար, որ տրված է քեզ արցունքների այս հովտում: Որովհետև այն ամեն անգամ, որ մատուցվում է այս Խորհուրդը և ճաշակում ես Հիսուսի Մարմինը, նորոգ կատարվում է քեզնում փրկությանդ գործը, և այսպիսով մասնակից ես դառնում Փրկչի արժանիքներին: Իրոք, Հիսուսի սերը չի նվազում երբեք, և Նրա քավիչ ներգործության լայնածավալությունը նույնպես՝ անհնարին է սպառել: Այս իսկ պատճառով, պարտավոր ես տրամադրվել հոգու շարունակական նորոգմամբ, և մեծագույն ուշադրությամբ պետք է խորհրդածես փրկության այս վեհ Խորհրդի շուրջ: Պատարագելդ կամ Պատարագին մասնակցելդ քեզ մի այնպիսի մեծ նորություն և ուրախ իրականություն թող թվա, որ կարծես Ասված այդ օրն առաջին անգամ լինելով է իջնում մարդանալու, և կամ՝ մարդկության փրկության համար ճիշտ այդ պահին է գամվում Խաչին, չարչարվում ու մահանում:*

ԳԼՈՒԽ Գ. ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՂՈՐԴՎԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հավատացյալը. Ահա գալիս եմ Քո մոտ, Տեր, գովյալ բարությունիցդ բիսող պարգևներդ ընդունելու և երկրաբնակ աղքատներիս համար պատրաստածդ սուրբ խրախճանքին մասնակցելու: Ահա Քեզնում գտնում եմ այն ամենը, որ կարող եմ և*

պարտավոր եմ փափաքել, որովհետև Դու Ինքդ ես իմ կյանքն ու փրկությունը, հույսն ու զորությունը, պատիվն ու փառքը: «Ուրախացրու ծառայիդ հոգին, Տեր, որովհետև այն դեպի Քեզ է ձգտում» *(Սղմ* 85, 4*): Ես, ահա այս պահիս, կամենում եմ ընդունել Քեզ բարեպաշտությամբ ու մեծարանքով, փափաքում եմ հյուրընկալել Քեզ հարկիցս ներս: Օրհնիր ինձ, Հիսուս, և ընտրյալներիդ շարքերում դասիր անարժանիս: Հոգուս բաղձանքը Քեզ միանալն է, և սիրտս սիրովդ լցվել է փափաքում:*

2. *Իմ հետ եղիր, Հիսուս, և Դու միայն բավական ես ինձ, որովհետև Քեզնից դուրս ուրիշ ոչ մի մխիթարություն չի ափոփում ինձ: Գոյություն չունեմ առանց Քեզ, կյանքս կորցնում է իր շուքն ու երանությունը, երբ չես այցելում ինձ: Այս իսկ պատճառով, պետք է հաճախակի հաղորդվեմ և ընդունեմ Քեզ որպես հոգուս առողջության դեղ, որպեսզի երկնային սննդից զրկվելով՝ ուժասպառ չլինեմ պանդխտությանս ճանապարհին: Դու Ինքդ, Հիսուս բարեգութ, ժողովրդին քարոզելիս և զանազան հիվանդություններ բուժելիս ասացիր.* «Չեմ կամենում քաղցած արձակել նրանց դեպի իրենց տները, որպեսզի չնվաղեն ճանապարհին» *(Մտթ* 15, 32*): Այս նույն կերպ ես վարվում, ուրեմն, նաև իմ հետ, հավատացյալներիդ մխիթարության համար մնալով Սուրբ Խորհրդի մեջ: Դու ես, հիրավի, հոգիների քաղցրիկ սնունդը, և ով արժանավորապես սնվում է Քեզնով, մասնակից ու ժառանգորդ է լինելու հավիտենական փառքին: Իմ համար նույնպես, որ այսքան հաճախ եմ մեղանչում և այսքան դյուրավ ուժասպառվում և նվաղում, անհրաժեշտություն է նորոգվելը, մաքրվելն ու բոցավառվելը հաճախակի աղոթքներով ու խոստովանանքներով և Ամենասուրբ Մարմնիդ հաղորդությամբ, որպեսզի նրանից երկար ժամանակ հեռու մնալով՝ չթերանամ սուրբ առաջադրանքներիս մեջ:*

3. «Մարդկային սրտի մտածումներն ի ծնե հակված են դեպի չարը» *(Ծնդ* 8, 21*), և եթե երկնային դեղորայքը օգնության չի հասնում, մարդն է՛լ ավելի է չարանում զգալի կերպով: Բայց Սուրբ Հաղորդությունը հեռացնում է մեղքից և զորացնում է հոգին՝ կատարելու բարին: Եթե այժմ, որ հաճախ եմ հաղորդվում կամ պատարագում, տակավին այսքան ծույլ եմ ու գաղջ, ի՞նչ կլինեի, եթե դարմանը չընդունեի և չփնտրեի այս մեծ օգնությունը: Հետևաբար, եթե նույնիսկ ամեն օր լավ պատրաստված կամ տրամադրված չլինեմ պատարագելու, պետք է ջանամ գեթ երբեմն երբեմն հաղորդվել եռանդով, այսպիսով մասնակից դառնալով շնորհներիդ: Որովհետև հավատացյալ հոգու մեծագույն ափոփանքը, մինչ Քեզնից հեռու քայլում է այս մահկանացու երկրում իբրև պանդուխտ, այն է, որ մտովին հաճախակի միանա իր Ստեղծուն և ջերմ սրտով ընդունի իր Սիրեցյալին:*

4. *Ինչպիսի՜ բարություն մեր հանդեպ, Տեր իմ, որ Դու՝ Արարիչն ու Կենսատուդ բոլոր գոյությունների, այցելում ես խեղճ հոգուս և Ստվածությամբդ ու մարդկությամբդ հագեցնում ես նրա քաղցը: Երջանիկ է այն սիրտը և երանելի է այն հոգին, որ եռանդով է ընդունում Քեզ, իր Ստեղծուն, և որ արժանի է լինում հոգևոր բերկրանքով լցվելու՝ Քեզ ընդունելիս: Ա՜հ, ինչ մեծանուն Տեր է ընդունում, ինչ հազվադեպ հյուր ընկալում, ինչ ուրախարար ընկեր ստանում, ինչ հավատարիմ բարեկամ շահում, ինչ գեղեցիկ ու ազնվատոհմ փեսա ժառանգում, որն արժանի է սիրվելու առավել, քան ամենասիրելի անձերն ու ամենափափաքելի իրողությունները: Հոգուս Սիրեցյալ, թող Քո առջև համբանան երկինքն ու երկիրը և նրանց բոլոր զարդերը, որովհետև ի՛նչ էլ ունեն գովելի ու*

գեղեցիկ, ամբողջը պարգևն է Քո վեհանձնության. նրանցից ոչ մեկը երբևէ չի հասնի Անվանդ լուսափայլմանը. «Քո իմաստությունն անքանակ է» *(Սղմ* 146, 5*):*

ԳԼՈՒԽ Դ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀՆԵՐԸ

1. *Հավատացյալը. Տեր Աստված իմ,* «քաղցրությունիցդ բխող օրհնություններով ընդառաջ ելիր ծառայիդ» *(Սղմ* 20, 4*), որպեսզի կարողանամ պատշաճորեն ու բարեպաշտորեն մերձենալ օգոստափառ Խորհրդիդ: Զգիր սիրտս դեպի Քեզ, և արթնացրու ինձ այս հոգետանջ թմրությունից:* «Այցելիր ինձ փրկությամբդ» *(Սղմ* 105, 4*), որպեսզի հոգեպես ճաշակեմ անուշությունդ, որ այս Խորհրդում ներկա է առատաբուխ, իբրև ակնաղբյուր: Լուսավորիր աչքերս, որպեսզի հայել կարողանամ Խորհուրդն այս մեծաշուք, և տուր ինձ հաստատուն հավատքով հավատալու ուժ: Սա Քո՛ գործն է, ո՛չ մարդկային զորության. Քո՛ սրբազան տնօրինումն է, ո՛չ մարդկային հորինվածք: Այս իսկ պատճառով, ոչ ոք չի կարողանում իր ուժերով ընկալել ու ըմբռնել այս Խորհուրդը, որ գերազանցում է հրեշտակային բանականությանն անգամ: Ես՝ անարժան մեղավորս, հողս ու մոխիրս, ինչպե՞ս կարող եմ, ուրեմն, քննել ու հասկանալ այս ծածուկ գաղտնիքը:*

2. *Տեր,* «սրտի պարզությամբ» *(1Մն* 29, 17*), բարի ու անսասան հավատքով, հրամանդ կատարելով, մոտենում եմ Քեզ վստահությամբ ու ակնածանքով: Հավատում եմ, որ Դու, Աստված և մարդ, իսկապես ներկա ես այստեղ՝ Սուրբ Հաղորդության մեջ: Դու կամենում ես, որ ընդունեմ Քեզ և Քեզ միանամ սիրով: Եվ արդ, աղաչում եմ Քեզ տալ ինձ մի հատուկ շնորհ, որպեսզի ընկղմվեմ լույսիդ մեջ և զեղման ապրիճան լցվեմ սիրովդ, և այլևս երբեք չմտահոգվեմ ուրիշ մխիթարությամբ: Այս բարձրագույն ու վեհ Խորհուրդը փրկությունն է մարմնի ու հոգու, հոգևոր հիվանդությունների դեմ միակ դարմանն է: Սրանով են սպիանում մոլությունների արյունահոս վերքերը, սրանով են սանձահարվում կրքերը, սրանով են հաղթվում կամ մեղմացվում փորձությունները. սրանով է տրվում շնորհը, նորածին առաքինությունները սրա միջոցով են աճում, հավատքը՝ փարթամանում, հույսը՝ վերակենդանանում, սերը՝ հրաբորբոք տարածվում ու ընդարձակվում:*

3. *Շա՜տ ու շա՜տ բարիքներ շնորհեցիր մարդկությանը այս Խորհրդի միջոցով, և դեռ շարունակում ես շնորհել ընտրյալներիդ, Աստված իմ,* «պաշտպան հոգվույս» *(Սղմ* 53, 6*), բժիշկ մարդկային հիվանդությունների և պարգևիչ հավիտենական մխիթարության: Իրոք, բազում ստիպանքներով ես ճոխացնում մեզ ընդդեմ փորձությունների, և վհատության վիհերից վերամբարձում ես մեզ մինչև հույսը Քո իսկ պաշտպանության, նորանոր շնորհների զորությամբ մխիթարում ես ու լուսավորում ներքսապես: Այս իրականության հետևանքում, նրանք, ովքեր նախապես խոովված էին և Հաղորդությունից առաջ չէին զգում ոչ մի հրապուրանք, երկնային սննդով ու ըմպելիով կերակրվելուց հետո փոխվում են դեպի լավագույնը: Անքննելի Նախախնամությանդ համաձայն, այսպես ես վարվում ընտրյալներիդ հետ, որպեսզի ճանաչեն և փորձառություն ունենան իրենց ոչնչության, և թե ինչպիսի բարություն ու շնորհ են ստանում Քեզնից: Իրենք ըստ ինքյանց ցուրտ են, կոշտ հոգի ու կարծրասիրտ. Քեզնով դառնում են եռանդուն, բարեպաշտ ու առաքինի: Որովհետև ո՞վ է խոնարհաբար մոտենում քաղցրության ակունքին և մնում առանց գեթ մի քանի կաթիլի, կամ ո՞վ է մոտենում խարույկին՝ առանց զգալու նրա ջերմությունը: Եվ ահա Դու Ինքդ ես, Հիսուս, մշտառատ ու զեղուն ջրանցքը, մշտավառ ու անմար հուրը:*

4. *Իսկ եթե առայժմ աղբյուրի առատությունից չեմ կարող ծարավս հագեցնելու չափ խմել, միևնույնն է, բերանս կմոտեցնեմ՝ պապակս զովացնող գեթ մի քանի կաթիլ ստանալու և ամբողջովին չչորանալու համար: Եթե առայժմ չեմ կարող ամբողջովին երկնային լինել և սիրավառ ինչպես քերովբեներն ու սերովբեները, կաշխատեմ ուժերիս սահմաններում կրկին ու կրկին բորբոքել եռանդիս ջերմությունը, ինչպես նաև՝ պատրաստել սիրտս, որպեսզի աստվածային սիրո հրդեհի գեթ մի կայծ ստանամ կենարար Խորհրդի հետ այս խոնարհ հաղորդությանս միջոցով: Իսկ Դու, Հիսուս իմ բարի, Փրկիչ սրբազնագույն, ներողամտաբար ու առատաձեռնությամբ լրացրու այն, ինչ պակասում է ինձ, Դու, որ դեպի Քեզ կանչեցիր բոլորին ասելով.* «Դեպի ինձ եկեք, դուք բոլորդ, հոգնաբեկ ծանրաբեռնվածներ, և ես ձեզ կատարյալ հանգիստ կշնորհեմ» *(Մտթ* 11, 28*):*

5. *Ես տանջվում եմ քրտինք թափելով, սիրտս տիսուր է, ճնշված եմ մեղքերից, չարչարված՝ փորձություններից, շրջապատված ու սեղմված՝ բազում չարամետ կրքերից: Եվ մեկը չկա, որ օգնի ինձ, որ ազատի ինձ ու փրկի, եթե ոչ միայն՝ Դու, Տեր Ասված Փրկիչ իմ: Քեզ եմ վստահում անձս և ինձ վերաբերվող ամեն բան, որպեսզի պաշտպանես ինձ մեղքից և առաջնորդես դեպի հավիտենական կյանք: Ընդունիր ինձ ի գովեստ և ի փառաբանություն Քո ամենասուրբ Անվան, Դու, որ Մարմինդ ու Արյունդ պատրաստեցիր որպես հոգևոր սնունդ և ըմպելի: Տուր ինձ, Տեր, որ հաղորդություններիս հետևանքում միշտ ավելի աճի ինձնում բարեպաշտությունը:*

ԳԼՈՒԽ Ե.
ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՀՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հիսուսը. Եթե հրեշտակային մաքրություն անգամ ունենայիր և Հովհաննես Մկրտչի սրբությունը, տակավին անարժան կլինեիր ընդունելու կամ մատուցելու այս Խորհուրդը: Անշուշտ մարդկային արժանիքներիդ շնորհիվ չէ, որ նվիրագործում ես և որպես սնունդ ընդունում հրեշտակների Հացը: Ապշեցուցի՜չ խորհուրդ և գերազա՜նց վայելչություն քահանայության, որովհետև քահանաներին է տրված այն, ինչից վերապահված են նույնիսկ հրեշտակները: Որովհետև Եկեղեցու կողմից կանոնապես ձեռնադրված ու օծված քահանաները միայն ունեն Մարմինս սրբագործելու իրավունքը: Քահանան է իմ իրական ներկայացուցիչն ու երեսփոխանը, որ գործածում է խոսքս իմ իսկ հրամանով ու տնօրինությամբ: Անշուշտ միշտ ես եմ մնում առաջնային հեղինակն ու անտեսանելի ներգործողը, ինձ է հպատակվում ու հնազանդվում ամեն բան:*

2. *Պարտավոր ես, հետևաբար, այս գերազանց Խորհրդում ավելի ամենակարողությանս հավատալ, քան զգայարաններիդ կամ տեսանելի որևէ նշանի: Հարկ է, որ այս սրբազան գործը կատարես երկյուղով ու խոնարհությամբ: Մտովին անդրադարձիր և տես, թե ինչպիսի պարտականություն ես հանձն առել Եպիսկոպոսից ստացած ձեռնադրությամբդ: Ահա դարձել ես քահանա և օծյալ՝ պատարագելու համար: Մատուցիր այն իր ժամանակին անհապաղ, հավատարմորեն ու բարեպաշտությամբ: Քահանայությամբ չթեթևացրեցիր բեռդ, այլ ավելին՝ ուսերիդ առար լուծը է՛լ ավելի խղճամիտ կարգապահության, պարտավորվելով սրբության մարզում դե՛ռ ավելի մեծ կատարելության: Քահանան պարտավոր է զարդարված լինել բոլո՛ր առաքինություններով, պարտավոր է բարի կյանքի օրինակ տալ այլոց: Չպետք է հետևի ժողովրդի սովորական*

ընդհանուր կենսաձևին, այլ՝ իր ապրելակերպը կա՛մ երկնային Հրեշտակների նման պետք է լինի, կա՛մ էլ երկրային կատարյալ Սրբերի:

3. *Սրբազան զգեստներով հանդերձավորված քահանան ներկայացնում է իմ անձը և աղաչանքով խոնարհաբար աղոթում է իր և ժողովրդի համար: Կրծքին և թիկունքին կրում է Խաչի նշանը, մշտապես հիշելու համար չարչարանքներս: Կրծքի վրա կրում է Խաչը, որպեսզի անշեղ հետևի հետքերիս: Թիկունքին ունի Խաչի նշանը, որպեսզի այլաբանորեն արտահայտի իր պատրաստակամությունը՝ ի սեր իմ կրելու այն բոլոր չարիքները, որ կարող են պատահել իրեն կյանքի ընթացքում: Խաչը կրում է կրծքին՝ լալու համար իր մեղքերը, իսկ թիկունքին՝ ողբալու համար նաև ուրիշների մեղքերը, կարեկցանքից մղվելով, միշտ հիշելով, որ միջնորդ է իմ և մեղավորի միջև: Աղոթքից ու պատարագելուց չպետք է հոգնի կամ ձանձրանա, որպեսզի ստանա շնորհ և ողորմություն: Երբ քահանան պատարագում է, մեծարում է ինձ, բերկրանք է պատճառում հրեշտակներին, ամրացնում է Եկեղեցին, օգնում է ողջերին, հանգիստ է ստանում ննջեցյալների համար, և ինքը նույնպես մասնակցում է հոգևոր բոլոր բարիքներին:*

ԳԼՈՒԽ Զ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հավատացյալը. Երբ նկատի եմ առնում, Տեր, Քո արժանապատվությունն ու իմ անարգությունը, դողում եմ և շփոթության եմ մատնվում: Որովհետև եթե մերժեմ հաղորդվել, կհեռանամ կյանքից, իսկ եթե անարժանաբար մերձենամ, կվշտացնեմ Քեզ: Արդ, ինչպե՞ս վարվեմ, Ասված իմ, օգնական իմ և խորհրդատու: Սովորեցրու ինձ մի ուղիղ ճանապարհ, առաջարկիր Սուրբ Հաղորդությանը պատրաստվելու մի կարճ ու պատշաճ կերպ: Հիրավի օգտակար է իմանալը, թե ինչպե՛ս կարող եմ պատրաստել սիրտս՝ ընդունելու Սուրբ Խորհուրդը:*

ԳԼՈՒԽ Է. ԽՂՃԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՓԱՓԱՔ

1. *Հիսուսը. Նախևառաջ հարկ է, որ քահանան պատրաստվի պատարագելու, մատուցի և ընդունի Սուրբ Խորհուրդը սրտի կատարյալ խոնարհությամբ, երկյուղած պաշտամունքով ու երկրպագությամբ, լի հավատքով, և ինձ փառավորելու առաքինի դիտավորությամբ: Խնամքով քննիր սիրտդ և, որքան կարող ես, մաքրիր այն և լուսավորիր անկեղծ զղջմամբ ու խոնարհ խոստովանանքով, որպեսզի դեպի իորան ազատ ընթացքդ խոչընդոտող ոչինչ չունենաս և չզգաս քեզնում: Հոգուդ խորքում ատելություն արթնացրու մեղքի հանդեպ, և հատկապես՝ ամենօրյա հանցանքներիդ ու թերություններիդ վրա արտասվիր ու ողբա: Իսկ եթե դեռ բավական ժամանակ ունես տրամադրությանդ ներքո, սրտիդ խորքում ցավիր ծուլությամբ չսանձված կրքերի հետևանքը հանդիսացող թշվառությանդ համար:*

2. *Զղջումով արտասվիր, որովհետև դեռ այսքան մարմնական ես ու աշխարհամետ, այսքան քիչ սանձված կրքերով. այսքան զգայուն ես ցանկասիրության հանդեպ, այսքան ծույլ՝ զգայարանների պահպանման մեջ, այսքան հաճախ տարված՝ երևակայական ցնորքներով. այսքան ջանասեր՝ արտաքին գործերում, և անհոգ՝ հոգևորի մեջ. այսքան*

դյուրավ մղված՝ դեպի ծիծաղն ու ցրումը, և այքան անտրամադիր՝ զղջման և խոնարհվելու. այքան պատրաստական՝ ընդունելու հաճելին և մարմնի հարմարավետությունները, և այքան ցուրտ՝ խստակրոն ապաշխարության և եռանդի մարզում. այքան ծարավի՝ լսելու նորություններ և տեսնելու գեղեցիկ առարկաներ, և այքան լի հակակրանքով՝ խոնարհ ու անհրապույր իրողությունների հանդեպ. այքան տենչացող՝ շատ ունենալու, և այքան ագահ՝ տալու դեպքում. այքան կորովի ես սեփականդ պաշտպանելու գործում, այքան անիսորհուրդ՝ խոսելիս, այքան անկարող՝ լռելու, այքան իառնակ ու անպատշաճ՝ վարվելակերպիդ մեջ, այքան անվայել և ո՛չ քաղցրաբարո. այքան անչափավոր՝ կերակուրի հարցում, այքան խուլ՝ պատվիրաններիս ի լուր, այքան արագավազ՝ դեպի քուն և հանգիստ, և այքան հապաղող՝ աշխատանք սկսելիս. այքան արթուն՝ շատախոսություններում, և այքան թմրած՝ սուրբ հսկումների ժամին. այքան շտապ՝ ավարտելու աղոթքները, այքան ցրված՝ դրանք արտասանելիս, այքան թուլակամ՝ մասնակցելու ժամերգությանը, այքան տկար և ուժասպառ՝ պատարագելիս, այքան ցամաք՝ հաղորդվելիս. այքան հեշտորեն՝ մտացիր, և այքան հազվադեպ՝ ամփոփ ու ներանձնացած. այքան զայրացկոտ ու դյուրագրգիռ, այքան կոշտ ու կոպիտ և նվազ հեզ. այքան մշտարթուն՝ դատելու և քեզ չվերաբերվող գործերին խառնվելու. այքան փքուն ու ինքնագոհ՝ հանդիմանելիս. այքան ուրախ, երբ ամեն բան լավ է ընթանում, և այքան վհատ՝ նեղություններում. այքան ճկուն և աճապարանքով լի՝ հոգուցդ ներս բարի փափաքներ սնուցելիս, և սակայն նաև այքան հեղգ ու վատասիրտ՝ դրանք գործի վերածելիս:

3.*Խոստովանիր և արտասվիր, ցավով և բոլոր թերություններիդ հանդեպ տիհաճություն զգալով՝ առաջադրիր բարենորոգել կյանքդ և միշտ լավագույնին ձգտել: Ապա, հոժար համակամությամբ և կատարյալ կամքով, ձոնի՛ր անձդ, ո՜վ քահանա, Անվանս փառքին, իբրև մշտնջենավոր զոհ՝ սրտիդ խորանի վրա, հավատարմորեն ինձ հանձնելով և ինձ վստահելով մարմնիդ ու հոգիդ, որպեսզի արժանի լինես մատուցելու Խաչի Սուրբ Զոհը և սրբորեն ընդունելու Մարմնիս Խորհուրդը:*

4.*Մեղքերը ջնջելու առավել պատշաճ և գոհացուցիչ ընծա չկա, քան սեփական անձի նվիրումը ինձ, մաքրությամբ և անմնացորդ կերպով միանալով Մարմնիս զոհաբերմանը Սուրբ Պատարագի և Հաղորդության ժամանակ: Եթե որևէ մեկը,* իսկապես զղջացած, *անի այն ամենը, որ կարող էր, յուրաքանչյուր անգամ, որ ինձ կմոտենա՝ ստանալու ներում և շնորհ,* «այլևս չեմ հիշի նրա մեղքերի բազմությունը» *(Ես* 43, 25*), այլ՝ թողություն կշնորհեմ դրանց բոլորին, որովհետև* «ես ապրում եմ, և չեմ կամենում մահ մեղավորներին, այլ որ դարձի գան և ապրեն» *(Եզկ* 33, 11*):*

ԳԼՈՒԽ Ը. ՀԻՍՈՒՍԻ ՋՈՀԱԲԵՐՈՒՄԸ ԽԱՉԻ ՎՐԱ

1. *Հիսուսը. Ինչպես ես ձեռքերս Խաչի վրա տարածած, բացարձակ աղքատության մեջ, մեղքերիդ քավության համար անձս կամովին զոհաբերեցի Հայր Աստծուն, այնպես, որ ինձնում չմնաց ոչինչ, որ ընծայած չլինեի որպես զոհ՝ քեզ աստվածային արդարության հետ հաշտեցնելու համար, այնպես էլ դու պարտավոր ես կամովին նվիրվել ինձ ամեն օր, Պատարագի ընթացքում, որպես սուրբ և մաքուր զոհ, բոլոր կարողություններիդ և զգացումներիդ հետ միասին, որքան կարող ես սրտանց, սիրով: Ուրիշ ի՞նչ եմ պահանջում*

քեզնից, եթե ոչ միայն՝ անձիդ նվիրումը: Ի՞նչ էլ տաս ինձ առանց քեզ, անարժեք է իմ համար, որովհետև ընծաներդ չէ, որ կամենում եմ, այլ միայն քեզ:

2.*Ինչպես քեզ ոչինչ չի գոհացնում առանց ինձ, այնպես էլ ինձ հաճելի չեն ընծաներդ, երբ չես նվիրում անձդ: Նվիրվիր ինձ և նվիրվիր ամբողջովին. այդպիսի դեպքում միայն ընծադ ընդունելի կլինի: Ահավասիկ ես ամբողջովին նվիրվեցի Հորը քո համար, և Արյունս ու Մարմինս տվեցի որպես հոգեղեն սնունդ, որպեսզի ամբողջովին քոնը լինեմ, և դու՝ իմը ընդմիշտ: Բայց եթե կամենաս ինքդ քեզ պատկանել, և արտաքց չնվիրվես ու չհանձնվես կամքիս, զոհդ կատարյալ չի լինի և լիովին միացած չես լինի ինձ: Արտաքին ու ներքին ձեռնարկներիցդ յուրաքանչյուրից առաջ պետք է կամովին և սիրով հանձնվես կամքիս, եթե կամենում ես ստանալ շնորհ և ազատություն: Քչերն են ներքուստ լուսավորվում և հոգևոր ազատ վիճակ վայելում, հենց որովհետև քչերն են կատարյալ կերպով հրաժարվում իրենց անձից: Վճիռս միշտ անփոփոխ է.* «Չի կարող աշակերտել ինձ մեկը, որ չի ուրանում իր անձը» *(Ղկս* 14, 33*): Եթե, հետևաբար, փափաքում ես աշակերտել ինձ, ինձ նվիրիր սրտիդ ամբողջ զորովը:*

ԳԼՈՒԽ Թ. ԻՆՔՆԱՆՎԻՐՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ, ԱՂՈԹՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

1.*Հավատացյալը.* «Տեր, ամեն բան – լինի երկնքում, թե երկրի վրա – Քոնն է» *(1Մն* 29, 11*): Կամենում եմ անձս նույնպես Քեզ նվիրել, որպես կամավոր զոհ, և ընդմիշտ ապրել Քո հետ: Տեր, սրտի պարզությամբ այսօր Քեզ եմ նվիրվում որպես ծառա մշտնջենավոր, ի պատիվ և ի հարգանս հավիտենական փառքիդ: Ընդունիր ինձ անարատ Մարմնիդ սրբազան Զոհի հետ, որ ահա մատուցում եմ աներևութապես շուրջբոլորս խմբված հրեշտակների ներկայության, որպեսզի լինի իմ և ամբողջ ժողովրդիդ փրկության համար:*

2.*Տեր, այստեղ՝ խաղաղարար խորանիդ վրա ներկայացնում եմ Քեզ իմ բոլոր մեղքերն ու անօրենությունները, որ գործեցի Քո և սուրբ հրեշտակներիդ առաջ այն օրից ի վեր, երբ առաջին անգամ լինելով մեղանչեցի մինչև այսօր, որպեսզի սիրույդ հրով այրես ու մոխրացնես դրանք, հոգիս սրբես մեղքերի բծերից և խիղճս մաքրես հանցանքներից. որպեսզի վերըստին պարգևես ինձ շնորհդ, որը կորցրեցի մեղանչելով, որպեսզի լիակատար ներում տաս և հաշտության ողորմած գրկախառնմամբ ընդունես ինձ:*

3. *Ի՞նչ կարող եմ անել մեղքերս քավելու համար, եթե ոչ միայն՝ խոնարհությամբ խոստովանել, ցավել և Քեզնից թողություն հայցել: Աղաչում եմ, ընդունիր աղոթքս: Տհաճ են ինձ անիսրիր բոլոր հանցանքներս և չեմ կամենում այլևս երբեք մեղանչել: Զղջում եմ, և կզղջամ քանի դեռ ողջ եմ: Պատրաստ եմ ապաշխարելու և ուժերիս ներածի չափ հատուցելու:* «Ներիր ինձ, Աստված իմ, ներիր Անվանդ փառքի համար» *(Սղմ* 24, 11*), սրբիր հոգիս, որ* «թանկագին Արյամբդ փրկագնեցիր» *(1Պտ* 1, 18-19*): Ահա հանձնում եմ ինձ ողորմությանդ և վստահում եմ ինձ բազուկներիդ: Բարությանդ համաձայն վարվիր իմ հետ, և ո՛չ թե ըստ իմ չարության ու մեղքերի: Քեզ եմ նվիրում նաև բարի հատկություններս, թեև սակավ են ու անկատար, որպեսզի մաքրագործես դրանք, հաճույքով ընդունես և միշտ ավելի կատարելագործես. որպեսզի առաջնորդես ինձ դեպի երանավետ վախճանը:*

4. *Քեզ եմ նվիրում բարի փափաքները առաքինասեր անձանց, և բոլոր կարողությունները ազգականներիս, բարեկամներիս ու ընկերներիս, եղբայրներիս ու քույրերիս, բոլոր ինձ թանկագին հոգիների, և նրանց, ովքեր բարեգործում են ի սեր Քո: Ինչպես նաև հայցվածքները նրանց, ովքեր աղոթք և Պատարագներ խնդրեցին ինձնից իրենց և իրենց ողջ կամ նընջեցյալ սիրելիների համար: Թող բոլորն էլ ստանան շնորհիդ օգնությունը, միսիթարությանդ սփոփանքը: Տուր նրանց պաշտպանություն վտանգներում և վշտակրություններից ազատում, որպեսզի զերծ մնալով չարիքներից՝ երախտագիտության բերկրալի աղոթքներ առաքեն առ Քեզ:*

5. *Աղոթքներս դեպի Քեզ եմ բարձրացնում, Աստված իմ, հատկապես նրանց համար, ովքեր ինչ որ կերպ վշտացրեցին ինձ, տրտմեցրին կամ նախատեցին, մնաս հասցրեցին և չարչարեցին: Բայց նաև նրանց համար, որոնց ես ինքս տրտմեցրի, խռովեցի, վշտացրեցի և գայթակղություն պատճառեցի խոսքով ու գործով, գիտակցաբար կամ ակամա, որպեսզի հավասարապես բոլորիս էլ ներես մեր մեղքերն ու փոխադարձ թշնամությունները: Մեր սրտերից արմատախիլ արա, Տեր, կասկածն ու արհամարհանքը, զայրույթն ու վեճը, և իրողություններն այն բոլոր, որ որևիցէ կերպ կարող են մնասել առաքինությանը, նվազեցնելով եղբայրսիրությունը մեզնում: Ողորմիր, Տեր, բոլոր նրանց, ովքեր հայցում են Քեզնից ողորմություն. տուր շնորհդ՝ նրանից զուրկ եղողներին: Եվ այնպես արա, որ մեր կյանքն արժանի լինի շնորհիդ վայելքին, և դեպի հավիտենական կյանքն ուղղված ճանապարհ լինի. ամեն:*

ԳԼՈՒԽ Ժ. ԱՌԱՆՑ ԼՈՒՐՋ ՊԱՏՃԱՌԻ ՁԱՆՑ ՉԱՌՆԵԼ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հիսուսը. Հարկ է, որ հաճախ մերձենաս աստվածային շնորհի ու ողորմության, բարության ու սրբության աղբյուրին, եթե կամենում ես բուժվել կրքերիցդ ու մոլություններիցդ, եթե կամենում ես արժանանալ սատանայի խաբեությունների և փորձությունների դեմ միշտ ավելի զորեղ ու արթուն լինելու շնորհին: Թշնամին, որ շատ լավ գիտի Սուրբ Հաղորդության արդյունքներն ու ներգործիչ ազդու դարմանը, որքան կարող է՝ անում է ամեն բան և մի առիթ անգամ չի կորցնում հեռացնելու համար հավատացյալ աստվածասերներին այս Խորհրդից, կամ առնվազն՝ խոչընդոտներ հարուցելու համար:*

2. *Ոմանք սատանայի վատթարագույն փորձություններին ենթարկվում են հենց Սուրբ Հաղորդությանը պատրաստվելիս: Պիղծ ոգին, ինչպես գրված է Հոբի գրքում, շրջում է Աստծո որդիների մեջ, նրանց իր սովորական չարությամբ խռովելու, չափազանց երկյուղներ ներշնչելով տրտմեցնելու համար, որպեսզի կարողանա սառեցնել նրանց եռանդը, կտրել նրանցից հավատքը, կասկածներ արթնացնել նրանց մտքերում, հեռացնել նրանց Հաղորդությունից կամ առնվազն՝ խլել նրանց սիրո ջերմությունը: Բայց կարևորություն ընծայել պետք չէ այդ եղկելու խարդախություններին ու թելադրանքներին, և ո՛չ իսկ նվազագույն չափով, որքան էլ դրանք զզվելի լինեն ու գարշելի. ավելին, իր իսկ գլխին պետք է թափել իր կեղծիքով լի հնարամտությունները: Այդ ողորմելի թշվառականին պետք է արհամարհես ու ծաղրես, և որքան էլ ընդդիմանա ու պայքարի, չեմ թույլատրում քեզ զանց առնել Հաղորդությունը:*

3. *Զգայական բարեպաշտություն ձեռքբերելու չափազանց մտրահոգությունն ու մանրամասն խուզարկությունք կատարելու փափաքն են հաճախ, որ խոչընդոտ են հանդիսանում հաղորդվելուն: Փորձառու անձանց խորհուրդներին հետևելով՝ չափավորիր քեզ, և մի կողմ թող անձկությունն ու խղճահարությունը, որովհետև դրանք խանգարում են հոգու մեջ շնորհի ներգործությանը և իրական բարեպաշտությանը: Անհաշտ խոովքի կամ հոգևոր հոգնածության պատճառով մի՛ հեռացիր Հաղորդությունից: Գնա՛ խուզարկությամբ շուտով, և սրտանց ներիր քեզ վշտացնողներին: Իսկ եթե դու ինքդ ես որևէ մեկին տրտմեցրել, խոնարհաբար ներում հայցիր նրանից, և Աստված հոժարությամբ կների քեզ:*

4. *Ի՞նչ օգուտ ունի խուզարկությունը հետաձգելը և Սուրբ Հաղորդությունը վաղվան թողնելը: Մաքրվիր որքան կարող ես շուտով, դուրս թքիր թույնը, իսկույն ընդունիր փրկարար դեղը. այսպես շատ ավելի լավ կզգաս քեզ, քան եթե ուշանայիր օրեցօր: Եթե այսօր հեռու ես մնում մի որևիցէ պատճառով, վաղը կարող է պատահել է՛լ ավելի լուրջ մի բան, և այսպիսով բավական ժամանակ կարող ես առանց Հաղորդության մնալ, միշտ ավելի անպատրաստ ու անտրամադիր դառնալով: Որքան կարող ես շուտով վրայիցդ մի կողմ նետիր ծանրությունն ու ծուլությունը, որովհետև լավ չէ խոովքի մեջ երկար ժամանակ մնալը, կյանքի ուղիում տրտում քայլելը և ամենօրյա դժվարությունների պատճառով հեռանալը աստվածային խորհուրդներից: Ավելին. չափազանց վնասակար է Սուրբ Հաղորդությունից երկար ժամանակ հեռու մնալը, որովհետև այս զրկման պատճառով սկսում է խոր թմրություն տիրել հոգու վրա: Ավա՜ղ, շատ ու շատ անեռանդ և ցրված հոգիներ գոհ են՝ խուզարկությանից փախչելու պատճառներ գտնելու և հետևանքում Հաղորդությունը զանց առնելու համար, որպեսզի պարտավորված չզգան է՛լ ավելի կատարելագործվելու սրբության արահետում:*

5. *Քանի՜ցս սակավ է սերը և տկար է եռանդը նրանց, ովքեր ապշեցուցիչ դյուրությամբ զանց են առնում Սուրբ Հաղորդությունը: Որքա՜ն հաճելի է Աստծուն նա, ով այնպես է ապրում և մաքուր պահում իր խիղճը, որ պատրաստ է լինում և փափաքում է հաղորդվել նույնիսկ ամեն օր, եթե դա թույլատրված է իրեն և եթե կարող է կատարել դա առանց մարդկանց աչքին երևալու: Եթե որևէ մեկը Հաղորդությունից երբեմն հեռու է մնում խոնարհության կամ ինչ որ մի արգելք ունենալու օրինավոր պատճառով, գովելի է իր երկյուղած մեծարանքը, որ սնում է Սուրբ Խորհրդի հանդեպ: Բայց եթե ներս է թափանցում ծուլությունը, պարտավոր է մերժել փորձությանը և անել այն ամենը, որ կարող է, և ես թիկունք կլինեմ իր փափաքներին՝ հաշվի առնելով բարի կամքը, որովհետև հատկապես սա է կարևոր իմ համար:*

6. *Ինչպես նաև պետք է հիշես, որ եթե հեռու է մնում օրինավոր պատճառից մղված, բայց միշտ պահպանելով բարի կամքը և հաղորդվելու առաքինի փափաքը, զուրկ չի մնում Խորհրդի պտուղներից: Յուրաքանչյուր բարեպաշտ հոգի ամեն օր և ամեն վայրկյան կարող է հոգեպես հաղորդվել իմ հետ, ընդունելով փրկություն իր անձին: Որոշակի օրերի և սահմանված ժամանակներում յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է իսկապես մերձենալ Հաղորդությանը և սիրալի մեծարանքով ընդունել իր Փրկչի Մարմինը, փնտրելով ավելի իմ փառքը, քան իր անձնական միսիթարությունը: Ճիշտ է նաև այն, որ երբ մեկը բարեպաշտությամբ խորհրդածում է Մարդեղությանս ու Չարչարանքներիս շուրջ և բոցավառվում է սիրույս հրով, այդպիսին խորհրդավոր կերպով հաղորդվում է ու սնվում:*

7.*Ով հաղորդվում է պարզապես որովհետև տոնական օր է կամ որովհետև սովորությունն ունի, շատ հաճախ անպատրաստ կգտնվի: Երանի՜ նրան, ով ամեն անգամ պատարագելիս կամ հաղորդվելիս որպես զոհ նվիրվում է ինձ: Պատարագելիս քահանան չպետք է չափազանց դանդաղ լինի, սակայն ո՛չ էլ սրընթաց, այլ՝ պարտավոր է պահպանել բարի ավանդույթներն այնտեղի, ուր ապրում է: Պարտավոր է խուսափել այլոց ձանձրույթ կամ տաղտուկ պատճառելուց, պարտավոր է ըստ ավանդական ուսուցման հետևել ընդհանուր ճանապարհին, և ավելի այլոց հոգևոր օգուտի համար պետք է մատուցի, քան իր անձնական զգացումների:*

ԳԼՈՒԽ ԺԱ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

1.*Հավատացյալը. Ո՜վ քաղցրագույն Տեր իմ Հիսուս, քանիցս մեծ է քաղցրությունը, որ վայելում է արքայական ընթրիքիդ մասնակցող հոգին, ուր Դու Ինքդ ես որպես կերակուր նվիրվում նրան, Դու՝ իր միակ սիրելին, իր սրտի միակ գերագույն փափաքը: Իմ համար ևս թովիչ իրողություն կլիներ սրտաբուխ սիրո արցունքներ հեղել ներկայությանդ, Մագդաղենացու նման արտասուքով ողողելով պաշտելի ոտքերդ: Բայց ո՞ւր է այս եռանդը, ո՞ւր՝ հեղումը սուրբ արցունքների: Քո առջև և սուրբ հրեշտակներիդ ներկայության սիրտս պետք է ամբողջովին բոցավառվեր և պետք է արտասվեի ուրախությունից, որովհետև Դու իսկապես ներկա ես Սրբազնասուրբ Խորհրդում, թեև ծածկված ես հացի կերպարանքի ներքո:*

2. *Աչքերս չէին կարողանա դիմանալ ասպվածային շողարձակ լույսիդ հայեցողությանը և աշխարհն ամբողջ սոսկումով կպատվեր վեհությանդ ի տես: Ամենասուրբ Հաղորդության մեջ թաքնվելով, հոգածությունդ ես ցուցաբերում տկարությանս հանդեպ: Ես իսկապես ունեմ և երկրպագում եմ Նրան, ում հրեշտակները պաշտում են Երկնքում. միայն թե այն տարբերությամբ, որ ես տակավին հավատքի մեջ եմ, մինչ նրանք՝ անքող տեսության: Հարկ է, որ բավարարվեմ ճշմարտուսույց հավատքովս և նրանով առաջնորդվեմ, մինչև որ կծագի օրը հավիտենական հստակ գիտության և կցրվեն ստվերները: «Երբ կգա այն, ինչ կատարյալ է» (1Կր 13, 10), խորհուրդների գործածումը կդադարի, որովհետև երկնային փառքով պրսակվածները խորհուրդների կողմից մատուցված դեղորայքի կարիքը չունեն: Վայելում են Աստծո ներկայությունը, դեմ առ դեմ ընկղմված են Նրա փառքի հայեցողության մեջ: Եվ Աստվածության Լույսից լույսի վերափոխված՝ մասնակցում են Աստծո մարդացած Բանի երանությանը, ինչպես էր Նա ի հավիտենից և ինչպես լինելու ու տևելու է հավիտյան:*

3.*Երբ մտածում եմ այս հրաշալիքների մասին, բոլոր մխիթարությունները, նույնիսկ հոգևոր, վերածվում են ձանձրույթի, որովհետև քանի դեռ չեմ տեսնում Տիրոջս Իր փառքի մեջ, ոչինչ եմ սեպում այն ամենը, որ տեսնում կամ լսում եմ երկրի վրա: Դու, Աստված իմ, վկա ես ինձ, որ ոչինչ չի կարող մխիթարել հոգիս, ոչ մի արարած չի կարող քաղցրացնել վշտերս, եթե ոչ միայն՝ Դու. Քո Դեմքի հայեցողության մեջ եմ փափաքում ընկղմվել հավիտենության մեջ: Ինչը, սակայն, անհնարին է այս մահկանացու կյանքի ընթացքում: Հարկ է, որ տրամադրվեմ մեծ համբերության, և բոլոր փափաքներս ենթարկեմ կամքիդ: Սրբերիցդ յուրաքանչյուրը, Տեր, որ այժմ բերկրում է Երկնքի Արքայությունում, առանց բացառության բոլորն էլ հավատքով ու վիթխարի համբերությամբ սպասում էին փառքիդ հայտնությանը: Ինչին նրանք հավատացին, ես նույնպես հավատում եմ. ինչին նրանք*

հուսացին, ես նույնպես հույսն ունեմ դրա. ուր նրանք հասան, ես նույնպես վստահ եմ, թե կհասնեմ շնորհիվ Քո մեծ ողորմության: Իսկ մինչ այդ, կընթանամ հավատքով, Սրբերի օրինակներից իրախուսվելով: Եվ Աստվածաշունչը նույնպես կունենամ որպես ափոփանք և կյանքի հայելի: Բայց գերիվեր, քան ամեն բան, կզորանամ Սրբազնագույն Մարմնիդ ճաշակմամբ, որ իմ միակ դարմանն է ու ապավենը:

4. *Երկու բան եմ անփոխարինելիորեն անհրաժեշտ տեսնում այս կյանքում, առանց որոնց այն անտանելի կլիներ իմ համար իր բոլոր խեղճություններով: Մահկանացու վիճակիս բեռան տակ կքված, խոստովանում եմ, որ կարիքն ունեմ երկու բանի. կերակուր և լույս: Ահա այս պատճառով է, որ հիվանդներիս շնորհեցիր Մարմնիդ, հոգու և մարմնի սնուցման համար, և դրեցիր «խոսքդ իբրև ճանապարհիս լուսատու» (Սղմ* 118, 105*): Առանց այս երկուսի չէի կարողանա լավ ապրել: Եվ իրոք, խոսքդ լույս է հոգուս համար, իսկ Խորհուրդդ՝ կյանքի հաց: Կարելի է նաև այլաբանորեն Սուրբ Եկեղեցու գանձատանը կազմակերպված երկու ինչոյքներ անվանել սրանք: Մեկը ինչոյքն է սրբազան խորանի, ուր կենարար Հացն է, Սրբագույն Մարմինդ: Իսկ մյուսը ինչոյքն է աստվածային օրենքի, որն իրենում պարունակում է սրբազան վարդապետությունը, ուսուցանում է ճշմարիտ հավատքը և առաջնորդում դեպի Սրբերի Սրբությունը:*

5. *Երախտագիտությունս եմ հայտնում Քեզ, Հիսուս, Լույս հավիտենական, ծառաներիդ՝ մարգարեների, առաքյալների ու հայրապետների շնորհիվ ճշմարտուսույց վարդապետությանդ ինչոյքը մեր համար պատրաստած լինելուդ համար: Շնորհակալ եմ Քեզ, մարդկության Արարիչ և Փրկիչ, որ թշվառներիս հանդեպ ունեցած սերդ հայտնելու համար՝ պատրաստեցիր այս հոյակապ Ընթրիքը, ուր այլևս չենք ճաշակում ապագան խորհրդանշող գառը, այլ՝ Սուրբ Մարմինդ ու Արյունդ: Ահա այս հրավերով Դու զվարթացնում ես հավատացյալներիդ հոգիները, և նրանց տալիս ես փրկարար բաժակը, ուր ամփոփված են դրախտի բոլոր քաղցրությունները: Սուրբ հրեշտակները նույնպես հագենում են մեր հետ, միայն թե՝ ավելի երանելի անուշությամբ:*

6. *Քանի՜ցս վեհ ու վսեմ է քահանաների կոչումը, որոնց իշխանություն է տրված սրբազան խոսքերով նվիրագործել փառքի Տիրոջը, շրթունքներով օրհնել Նրան, հպվել, ճաշակել և բաշխել ուրիշներին: Ա՜հ, որքան անարատ պետք է լինեն քահանայի ձեռքերը, մաքուր՝ բերանը, սուրբ՝ մարմինը, և անբիծ՝ սիրտը, որովհետև ծառան է սրբության Տիրոջ: Ոչ մի պիղծ ու անվայել, հայհոյիչ ու գայթակղեցուցիչ խոսք չպետք է դուրս գա քահանայի բերանից, որ հաճախ է կատարում փրկարար Խորհուրդը: Պարզ ու անարատ պետք է լինեն քահանայի աչքերը, որ հաճախ են սևեռվում աստվածային Խորհրդի վրա: Սուրբ և դեպի Երկինք վերամբարձյալ պետք է լինեն քահանայի ձեռքերը, որ հաճախ են հպվում երկնքի ու երկրի Արարչին: Հատկապես քահանաների համար է գրված Օրենքի հրամանը.* «Սուրբ եղեք, որովհետև ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ» *(Ղևտ* 19, 2*):*

7. *Թող որ շնորհդ, Աստված մեր ամենակարող, օգնության հասնի բոլոր նրանց, ովքեր հանձն են առել քահանայական պաշտոնը. թող կարող լինեն արժանապես ու եռանդով ծառայելու Քեզ, ջինջ մաքրությամբ ու անստգտանելի խղճով: Իսկ եթե ոմանք չեն կարողանում ապրել այն կատարյալ անմեղությամբ, որով պարտ էր, շնորհիր նրանց գեթ զղջում և ցավալի արտասուք՝ գործված թերությունների համար, որպեսզի շարունակ*

նորոգվելով՝ կարողանան այդուհետև առավել բուռն եռանդով ծառայել Քեզ, առաջ ընթանալով խոնարհության հոգու և բարի կամքի առաջադրանքների մեջ:

ԳԼՈՒԽ ԺԲ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆԸ

1. *Հիսուսը. Ինձ հաճելի է մաքրությունը, և ես եմ սրբություն շնորհում մարդկանց: Որպես հանգստիս վայր, փնտրում եմ մաքուր սրտերը: Պատրաստիր իմ համար «մեծ ու զարդարուն վերնատուն» (Մրկ* 14, 15*), և աշակերտներիս հետ քո տանը կկատարեմ Զատիկը: Եթե կամենում ես, որ քեզ գամ և օթևանեմ քեզնում, «մաքրվիր հին խմորից» (*1*Կր* 5, 7*), և ի ներքուստ մաքրիր սիրտդ: Դուրս նետիր այնտեղից այն ամենը, որ աշխարհային է ու մոլի, եղիր «ինչպես տանիքի վրայի միայնակ ճնճղուկը» (Սղմ* 101, 8*), և հոգուդ դառնության մեջ խորհրդածիր խեղճություններիդ մասին: Ով սիրում է, գեղեցկություններ է միայն պատրաստում իր սիրեցյալի համար, որովհետև իր եռանդից է ճանաչվում այն քաղցրիկ զգացումը, որ տածում է սիրելի անձի նկատմամբ:*

2. *Իմացիր, սակայն, որ չես կարող արժանապես տրամադրվել շնորհիվ առաքինի գործերիդ, նույնիսկ եթե մի ամբողջ տարի պատրաստվես և մտքիդ մեջ էլ չունենաս ուրիշ ոչինչ: Գթությանս պարգևով է միայն, որ թույլատրված է քեզ մասնակցել Սուրբ Ընթրիքին: Հրավիրված ես ինչպես մի մուրացիկ՝ հարուստի կողմից, և չես կարող փոխհատուցել սույն բարեգործությանը, եթե ոչ միայն՝ խոնարհվելով ու երախտագիտություն հայտնելով: Դու արա՛ այն, ինչ կարող ես, ջանասեր խնամքով. ո՛չ սովորությունից մղված, և ո՛չ էլ ստիպված, այլ՝ երկյուղով, մեծարանքով ու սիրով ընդունիր սիրեցյալ Տեր Աստծուդ Մարմինը: Ես ինքս կանչեցի քեզ և ես ինքս պատվիրեցի քեզ կատարել սա. ես ինքս կլրացնեմ այն, ինչ պակասում է քեզ: Ե՛կ, ընդունիր ինձ:*

3. *Երբ շնորհեմ քեզ եռանդ ու միսիթարություն, շնորհակալ եղիր. արժանի չէիր, բայց ես «գթացի քեզ» (Մտթ* 18, 33*): Իսկ երբ զգաս քեզ չոր ու ցամաք, հավասարապես հարատևիր աղոթքի մեջ, հառաչիր ու բախիր, մինչև փրկարար շնորհի գեթ մի փշրանք կընդունես կամ մի կաթիլ: Դո՛ւ իմ կարիքն ունես, ո՛չ թե ես՝ քո: Դու չես, որ սրբացնելու ես ինձ, այլ՝ ես եմ, որ գալիս եմ քեզ սրբացնելու ու կատարելագործելու: Դու գալիս ես իմ մոտ՝ ինձ միանալով սրբանալու, նորանոր շնորհներ ստանալու և եռանդդ կրկին բորբոքելու համար, որպեսզի կարող լինես բարելավելու վարքդ: «Մի՛ մերժիր այս շնորհս» (*1*Տմ* 4, 14*): Պատրաստիր սիրտդ ուժերիդ ներածի չափով, և առանց վարանումի սրտիցդ ներս հյուրընկալիր Արարչիդ:*

4. *Անհրաժեշտ է նաև, որ բարեպաշտության տրամադրվես ո՛չ միայն հաղորդվելուց առաջ, այլ՝ Խորհուրդն ընդունելուց հետո ևս հոգատարությամբ հարատևես նրանում: Եթե հարկավոր է ջերմ նախապատրաստություն, պահանջված է նաև եռանդի ո՛չ սակավ պահպանում հետագա ժամանակներում: Հաղորդվելուց հետո առաքինասեր եռանդի պահպանումը լավագույն պատրաստությունն է է՛լ ավելի մեծ շնորհներ ստանալու: Ոմանք կորցնում են իրենց բարի տրամադրությունները, որովհետև աղոթքից անմիջապես հետո տրվում են արտաքին ցրումների: Խուսափիր շատախոսությունից, ամփոփ մնա և վայելիր Աստծուդ: Կրում ես քեզնում Նրան, ում ամբողջ աշխարհը չի կարող իլել քեզնից: Ես եմ*

Նա, ում պետք է տաս ամեն բան, այնպես, որ այլևս քեզնում չապրես, այլ՝ ինձնում, զերծ՝ տառապանքներից:

ԳԼՈՒԽ ԺԳ. ՀԻՍՈՒՍԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՓԱՓԱՔ

1. *Հավատացյալը. Ասված իմ, ո՜ւր է թե միայն Քեզ փնտրեի, Քո առաջ բացեի սիրտս և վայելեի Քեզ այնպես, ինչպես փափաքում է հոգիս: Ո՜ւր է թե ոչ ոք չզբաղվեր ինձնով, արարածների հայացքները չհուզեին ինձ, և միայն Դու խոսեիր իմ հետ, և ես՝ Քո հետ, ինչպես սիրեցյալն է զրուցում սիրելիի հետ, և ինչպես ընկերներն են միմյանց ընթրիքի հրավիրում: Սա եմ միայն հայցում, սա եմ միայն փափաքում. միանալ Քեզ, սիրտս անջատել ստեղծված բոլոր իրողություններից, սովորել համտեսել երկնային հավիտենական քաղցրությունները, Սուրբ Հաղորդության և Պատարագի հաճախ մատուցման շնորհիվ: Ա՜հ, Ասված իմ, արդյոք ե՞րբ եմ լիովին միանալու Քեզ, ընկղմվելու Քո մեջ և մոռանալու իմ անձը: Դու իմ մեջ և ես Քեզնում. այնպես արա, որ լինենք ու մնանք որպես մեկ միասնություն:*

2. «Դու ես հազարների մեջ ընտրված իմ սիրելին» *(Երգ* 5, 10*), Դու ես իմ խաղաղարարը, Քեզնում եմ գտնում կատարյալ անդորրն ու հանգիստը. Քեզնից դուրս ամեն բան հոգնություն է, վիշտ ու անսահման թշվառություն:* «Դու իսկապես ծածկյալ Աստված ես» *(Ես* 45, 15*), չես հաղորդակցվում ամբարիշտների հետ, այլ՝ խոնարհների և պարզ սիրտ ունեցողների հետ է Քո խոսակցությունը: Քանի՜ցս քաղցր է հոգիդ, Տեր, որ որդիներիդ հանդեպ սերդ արտահայտելու համար՝ երկնքից իջած քաղցրագույն հացով կամեցար կերակրել մեզ: Հիրավի, չկա ուրիշ ոչ մի ժողովուրդ այնքան մեծանուն, որի կեղծ աստվածություններն այնպես մտերիմ լինեն իր հետ, ինչպես Դու, Ասված մեր միակ ճշմարիտ, մոտ ես Քո հավատացյալներին, որոնց կերակրում ես Քո իսկ էությամբ, որպեսզի ամենօրյա հոգևոր սնունդ ունենան և դեպի երկինք վերամբարձեն իրենց սրտերը:*

3. *Ո՞ր ժողովուրդն է ավելի ազնվատոհմ, քան քրիստոնյաների ազգը: Կամ ո՞ր արարածն է երկնքի տակ Աստծուց ավելի սիրված, քան բարեպաշտ հոգին, որին Աստված Ինքն է սնուցում Իր փառահեղ Մարմնով: Ո՜վ անճառելի շնորհ: Ո՜վ հիացմունք պատճառող բարեհաճություն: Ո՜վ անհուն սեր, պարգևված՝ միայն մարդուն: Այսօրինակ շնորհի, այսքան վեհաշուք սիրո փոխարեն արդյոք ինչպե՞ս կարող եմ հատուցել, եթե ոչ միայն՝ Տիրոջը ներկայացնելով սիրտս և այն հավիտյան Իրեն միացնելով: Այնժամ միայն կցնծա ամբողջ էությունս, երբ հոգիս կատարյալ կերպով միացած կլինի Աստծուն: Այդժամ Նա կասի. «Եթե դու կամենում ես ապրել իմ հետ, ես կամենում եմ ապրել քո հետ»: Եվ ես կպատասխանեմ. «Տեր իմ, իմ հետ եղիր հավիտյան, որովհետև ես Քեզ եմ միայն կամենում միանալ»: Սա է իմ միակ փափաքը. որ սիրտս միացած լինի Քեզ:*

ԳԼՈՒԽ ԺԴ. ԱՌԱՔԻՆԱՍԵՐՆԵՐԻ ՎԱՌ ԲԱՂՁԱՆՔԸ

1. *Հավատացյալը.* «Քանի՜ցս մեծ է, Տեր, քաղցրությանդ առատությունը, որ վերապահել ես երկյուղածներիդ համար» *(Սղմ* 30, 20*): Երբ մտաբերում եմ որոշ բարեպաշտներ, որոնք ջերմ եռանդով ու սիրով են մոտենում Սուրբ Խորհրդիդ, այնժամ խոնարհվում եմ ու ամոթից կարմրում, որովհետև ես սառնությամբ եմ մոտենում խորանին և Սուրբ Հաղորդությանը.*

որովհետև այսքան ցամաք եմ ու անսեր. որովհետև ներկայությանդ ամբողջովին բոցավառ չեմ, Ասրված իմ, և հափշտակված ու հուզված չեմ սրտի այն սլացքից, որից մղված շատ հոգիներ այնպես էին բռնկվում Հաղորդության փափաքով, որ չէին կարողանում զսպել արցունքների հեղումը: Նրանք իրենց սրտի բերանով – ո՛չ նվազ, քան մարմնի բերանով – կամենում են իրենց ծարավը Քեզնով հագեցնել, Ասրված իմ, աղբյո՛ւր կենդանի, չկարողանալով ուրիշ տեղ մեղմել, ո՛չ էլ լիովին հագեցնել իրենց քաղցը, եթե ոչ միայն՝ հաղորդվելով Քեզ քաղցրիկ բերկրանքով և հոգևոր սուրբ տենչով:

2.*Այդ հոգիների վառ հավատքն է Քո իրական ներկայության փաստն ու գրավականը: Նրանք հացը բեկանելիս ճանաչում են իրենց Տիրոջը և նրանց սրտերը ճմլվում են, մինչ Դու խոսում ես: Ես բավական հեռու եմ նմանօրինակ զգացումներից ու եռանդից, այդքան ջերմ սիրուց: Ներողամիտ եղիր իմ հանդեպ, Հիսուս իմ, քաղցր ու գթալի. աղքատ մուրացկանիս շնորհիր Սուրբ Հաղորդության մեջ գեթ երբեմն համտեսել սիրույդ զգացումը, որպեսզի հավատքս ավելի ամրապնդվի, հույսս՝ աճի ու զորանա, և սերս, երկնային մանանայի ճաշակմամբ մի անգամ կատարյալ կերպով բոցավառվելով, չհանգչի բնավ:*

3.*Որորմությունդ ամենակարող է, Տեր, և կարող է շնորհել ինձ այս պարգևը, կարող է անհուն գթությամբ այցելել ինձ եռանդի հոգիով, երբ հասնի որոշածդ օրը: Թեև հրդեհված չեմ այնքան եռանդով, որքան վերոհիշյալ բարեպաշտները, սակայն Քո իսկ օգնությամբ կամենո՛ւմ եմ ունենալ նրանց վառ փափաքը, հայցելով Քեզնից դասել ինձ եռանդուն ծառաներիդ շարքերում և մասնակից դարձնել ինձ նրանց սուրբ ընկերությանը:*

ԳԼՈՒԽ ԺԵ. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁԱՏՈՒՄ

1.*Հիսուսը. Հարկ է, որդյակ, որ անդադար փափաքես ունենալ ջերմեռանդության շնորհը, հայցես մեծ կարոտով, սպասես համբերությամբ ու վստահությամբ, ընդունես երախտագիտությամբ, պահպանես խոնարհությամբ, գործակցես նրան նախանձախնդրությամբ, ինձ թողնելով երկնային այցելության ժամն ու կերպը: Բայց հատկապես խոնարհվիր, երբ սակավ կամ ոչինչ եռանդ զգաս քեզնում, առանց սակայն վհատվելու, ո՛չ էլ չափազանց տրտմելով: Հաճախ եմ մի ակնթարթում շնորհում այն, ինչ մերժում էի երկար ժամանակ. աղոթքի ավարտին տալիս եմ այն, ինչ ուշացնում էի սկզբում:*

2.*Եթե ամեն անգամ շնորհը իսկույն տրվեր և կամքիդ տրամադրության տակ լիներ, մարդկային տկարությունը ի զորու չէր լինի այն կրելու: Ջերմեռանդության շնորհին հարկ է սպասել բարի հույսով և խոնարհ համբերությամբ: Իսկ եթե չի տրվում քեզ կամ եր է վերցվում անհայտ պատճառով, հանցանքը քեզ վերագրիր և քո մեղքերին: Երբեմն մի չնչին իրողություն է, որ արգելում է շնորհի հոսքը սրտիցդ ներս, եթե անշուշտ կարելի է չնչին անվանել և ո՛չ թե մեծ չարիք այն, որ խոչընդոտում է այսքան անհուն բարիքին: Եթե այդ արգելքը, ինչպիսին էլ լինի, հեռացնես և կատարելապես հաղթես, կստանաս այն, ինչ փափաքում էիր:*

3.*Հազիվ նվիրվես ինձ ամբողջ սրտով, չնախընտրես այս առարկան ավելի, քան մյուսը, ըստ քո կամքի ու քմահաճույքի, այլ՝ լիովին հանձնվես ինձ, իսկույն կզգաս քեզ ամփոփ ու խաղաղ: Ոչինչ քեզ ավելի լավ ու հաճելի չի թվա, քան աստվածային կամքիս վճիռները: Ով, հետևաբար, սրտի պարզությամբ դեպի ինձ է բարձրացնում իր դիտավորությունը և ազատվում է ապօրինի ցանկություններից ու արարածների կապվածությունից, այդպիսին տրամադիր է շնորհին և արժանի է ընդունելու ջերմեռանդության պարգևը: Օրհնություններս հեղում եմ այնտեղ, ուր գտնում եմ դատարկ անոթներ: Եվ որքան ավելի է մեկն անջատվում ստորին իրողություններից և արհամարհում իր անձը, այնքան ավելի շուտով է գալիս շնորհը, առատությամբ ներթափանցում և դեպի վեր բարձրացնում ազատ սիրտը:*

4.«Այնժամ նա հիացումով կտեսնի, ինչ չէր տեսել երբեք, կցնծա, կսքանչանա, և կընդարձակվի նրա սիրտը» *(Ես* 60, 5*), որովհետև* «Տիրոջ զորությունն իր հետ կլինի» *(Գործք* 11, 21*), և ինքն Աստծո ձեռքերին է հանձնվել ընդմիշտ:* «Ահա այսպես կօրհնվի այն մարդը, որ փնտրում է Աստծուն» *ամբողջ սրտով (Սղմ* 127, 4*), եթե հոգու հայացքը չուղղի դեպի ունայնությունները: Հոգևոր այսպիսի տրամադրություններով հաղորդվողը արժանի է Աստծո հետ միության վեհագույն շնորհին, որովհետև ուշադրություն չի դարձնում իր անձնական եռանդին ու մխիթարությանը, այլ՝ որևէ եռանդից ու մխիթարությունից վեր, փնտրում է Աստծո փառքն ու սերը:*

ԳԼՈՒԽ ԺԶ. ՄԵՐ ԿԱՐՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.*Հավատացյալը. Ո՜վ քաղցրագույն և սիրելի Տեր, որիդ կամենում եմ այժմ միանալ, Դու ճանաչում ես իմ տկարությունը. գիտես, թե ինչպիսի՛ կարոտությունների մեջ եմ չարչարվում. գիտես, թե քանի՛ կրքերի ու մոլությունների մեջ եմ խրվել. թե ինչպիսի՛ հանցանքներով եմ ճնշված, փորձված ու ապականված: Քեզ եմ դիմում դարմանի համար, հայցում եմ Քեզնից սփոփանք ու մխիթարություն: Դու ամեն բան գիտես, հստակ տեսնում ես ամբողջ ներաշխարհս: Միայն Դու կարող ես իսկապես մխիթարել ինձ: Դու չես անգիտանում, թե ի՛նչ կարիքներ ունեմ, և թե որքա՛ն զուրկ եմ առաքինություններից:*

2.*Ահա առջևդ կանգնած եմ խեղճ ու աղքատ, շնորհ խնդրելով և հայցելով ողորմություն: Հագեցրու քաղցյալ մուրացկանիս, սիրույդ կրակներով ջերմացրու սառնությունս, ներկայությանդ շողարձակ լույսով լուսավորիր կուրությունս: Իմ համար դառնության վերածիր աշխարհային բոլոր իրողությունները, ծանր ընդդիմությունները՝ համբերության, ստորին վայելքները՝ արհամարհման ու մոռացության: Դեպի Երկինք, դեպի Քեզ ձգիր սիրտը, և մի՛ թույլատրիր, որ թափառի երկրի վրա: Այսուհետև իմ համար Դու միայն եղիր քաղցր, ընդմիշտ, որովհետև Դու ես իմ միակ հոգևոր սնունդը, իմ սերն ու ուրախությունը, քաղցրությունն ու բարիքը, իմ ամեն ինչը:*

3.*Երանի՜ թե լիովին հրդեհեիր ինձ ներկայությամբդ, սպառեիր և վերափոխեիր Քեզ, այնպես, որ միայն մեկ հոգի լինեինք, գերբնական միության և վառ սիրո շնորհիվ: Մի՛ թող, որ սովից լլկված հեռանամ Քեզնից: Գործիր ինձնում ըստ Քո մեծ ողորմության, ինչպես հաճախ վարվեցիր Սրբերիդ հետ: Զարմանալի չէ, եթե բռնկվեմ Քեզնով ու բոցավառվեմ, որովհետև Դու Ինքդ ես այն հուրը, որ մշտավառ է ու անսպառ. այն սերը, որ մաքրում է սրտերը և լուսավորում մտքերը:*

ԳԼՈՒԽ ԺԷ. ԻՂՁ ԵՎ ՍԵՐ

1. *Հավատացյալը. Ջերմ եռանդով և սրտի սիրավառ տրոփմամբ փափաքում եմ, Տեր իմ, միանալ Քեզ, ինչպես կամենում էին հաղորդվել Սրբերն ու առաքինի անձերը, որոնք մեծապես հաճո եղան Քեզ իրենց կյանքի սրբությամբ ու բարեպաշտությամբ: Ո՜վ Աստված իմ, Սեր հավիտենական, իմ միակ բարիք, անսպառ երանություն, կամենում եմ ընդունել Քեզ այնպիսի փափաքով ու մեծարանքով, ինչպիսին Սրբերից ոչ մեկը չունեցավ և չկարողացավ զգալ:*

2. *Եվ թեպետ անարժան եմ աստվածսիրության այսօրինակ զգացումներ ունենալուն, այնուամենայնիվ ընծայում եմ Քեզ սրտիս բովանդակ սերը, այնպես, որ կարծես թե միայն ես եմ այրվում Քեզ հաճո փափաքներով: Այն ամենը, որ բարեպաշտ հոգին կարող է ըմբռնել ու փափաքել, ներկայացնում և նվիրում եմ Քեզ երկյուղած եռանդուն երկրպագությամբ: Ոչինչ չեմ ցանկանում վերապահել ինձ, այլ՝ սրտաբուխ մղմամբ կամենում եմ զոհաբերել ինձ և ինձ պատկանող ամեն բան: Տեր իմ և Աստված իմ, Արարիչ և Փրկիչ, կամենում եմ այսօր ընդունել Քեզ այն նույն սիրով ու մեծարանքով, փառաբանությամբ ու օրհներգներով, այն նույն երախտագիտությամբ, հավատքով, հույսով ու սրբությամբ, որով փափաքեց և ընդունեց Քեզ սրբազնասուրբ Մայրդ, փառահեղ Կույս Մարիամը, երբ Մարդեղությանդ հրեշտակաբարոզ ավետիսին խոնարհաբար պատասխանեց.* «Ահա Տիրոջ աղախինն եմ, թող լինի ինձ խոսքիդ համաձայն» *(Ղկս* 1, 38*):*

3. *Եվ ինչպես Հովհաննես Մկրտիչը, մարգարեների մեջ մեծագույնը, երբ տակավին մոր որովայնում էր, Սուրբ Հոգու ցնծությամբ խայտաց ներկայությանդ. և ապա, տարիներ անց, ամբոխի մեջ տեսնելով Քեզ, մեծ խոնարհությամբ ասաց.* «Փեսայի բարեկամն ուրախանում է նրա ձայնը լսելիս» *(Հվհ* 3, 29*). այսպես և ես փափաքում եմ բռնկվել սուրբ իղձերով և սիրավառ սրտով ներկայանալ Քեզ: Եվ այս իսկ պատճառով, իմ և իմ աղոթքներին ապավինողների համար՝ Քեզ եմ ներկայացնում և ընծայում բոլոր հոգեափոփ մղումները, զգացումները, հոգևոր հափշտակումները, գերբնական լույսերն ու երկնային տեսիլքները բոլոր սուրբ հոգիների. ինչպես նաև՝ առաքինություններն ու աղոթքները բոլոր արարածների, որ կատարվել կամ կատարվելու են Երկնքում ու երկրի վրա, որպեսզի բոլորի կողմից արժանապես գովվես և առհավետ փառաբանվես:*

4. *Ընդունիր, Տեր Աստված իմ, անսահման գովքի ու անծայրածիր օրհնության մաղթանքներս ու փափաքս, որոնց արդարացիորեն արժանի ես աննկարագրելի մեծությանդ ու վեհությանդ համար: Ահա այս փափաքս եմ ընծայում Քեզ, և կամենում եմ այն ընծայել Քեզ ամեն օր ու ամեն վայրկյան: Եվ իմ հետ Քեզ երախտիք ու փառք մատուցելու եմ կանչում նաև բոլոր երկնաբնակներին ու հավատացյալներիդ:*

5. «Թող օրհնեն Քեզ բոլոր ժողովուրդները, ազգերն ու լեզուները» *(Դան* 7, 14*), և թող լիակատար հոգեզվարթությամբ ու ջերմ բարեպաշտությամբ մեծարեն սուրբ և քաղցրագույն Անունդ, Հիսուս: Եվ ովքեր երկյուղով ու երկրպագությամբ են մատուցում ահեղ Խորհուրդդ, ինչպես նաև նրանք, ովքեր լի հավատքով են ընդունում այն, թող արժանի լինեն Քո առաջ շնորհ և ողորմություն գտնելու: Իսկ երբ Քեզնից կստանան այնքա՜ն փափաքելի ջերմեռանդության և Քո հետ գերբնական հոգեղեն միության շնորհը,*

երկնային սրբազան ինչույքից մխիթարություններով հագեցած հեռանալիս՝ թող հիշեն նաև ինձ, և թող աղոթեն նաև իմ համար:

ԳԼՈՒԽ ԺԸ. ՀՊԱՏԱԿԵՑՆԵԼ ՄԻՏՔԸ ՀԱՎԱՏՔԻՆ

1.*Հիսուսը. Հարկ է, որդյակ, որ զգուշանաս այս խորին Խորհուրդն ունայն հետաքրքրությամբ քննելուց, եթե չես կամենում թաղվել կասկածների մեջ: Եթե ցանկանաս մտքով զննել ամենակարողությանս ծածուկ խորհուրդը, կջախջախվես փառքիս ծանրության ներքո: Առավել զորեղ եմ գործելու մեջ, քան մարդը՝ ըմբռնելու մեջ: Թույլատրում եմ ճշմարտության առաքինի խոնարհ փնտրտուքը, բայց միայն մի պայմանով. եթե տվյալ հոգին շարունակ տրամադիր է հավատքի կողմից ուսուցանվածն ընդունելու, և եթե առաջադիմում է Հայրերի սուրբ վարդապետության ուղիով:*

2. *Երանելի՜ պարզություն, որ լքում է դժվարիմաց խնդիրների անմատչելի ճանապարհները և հետևում է Աստծո պատվիրանների հարթ ու ապահով արահետներին: Շատերը կորցրեցին աստվածսիրությունը,* «որովհետև ցանկացան զննել իրենց ուժերից գերազանց որոշ իրողություններ» *(Սիր* 3, 22*): Քեզնից պահանջվում է հավատք և անմեղ կյանք, և ո՛չ թե մտքի կորով, ո՛չ էլ խոր ըմբռնում աստվածային խորհուրդների: Եթե չես կարողանում լիովին հասկանալ և ըմբռնել այն իրողությունները, որոնք ստորադաս են քեզ, ինչպե՞ս ուրեմն կկարողանաս ընկալել այնպիսիք, որոնք վերադաս են: Ենթարկվիր աստվածային ուսուցումներիս, հպատակեցրու զգայարաններդ հավատքին, և քեզ կտրվի իմաստության ու գիտության լույսը, այնքան, որքան կարող է օգտակար լինել քեզ ու անհրաժեշտ:*

3.*Ոմանք չարաչար կերպով փորձվում են հավատքի և սուրբ Խորհրդի դեմ, բայց այսօրինակ ալեկոծումներն իրենց չէ, որ պետք է վերագրել, այլ՝ մարդատյաց թշնամուն: Ուշադրություն մի՛ դարձրու, մի՛ վիճիր մտածումների հետ, մի՛ պատասխանիր կասկածներին, որ սատանան հրահրում է քեզնում, այլ ընդհակառակն՝ անսասանորեն հավատա՛ խոսքերիս, հավատա՛ Սրբերին ու մարգարեներին, և եղեռնական թշնամին կփախչի քեզնից: Հաճախ օգտակար է, որ Աստծո ծառան կրի նման փորձեր: Սատանան չի փորձում անհավատներին ու մեղավորներին, որովհետև արդեն իսկ իր ստրուկներն են, այլ՝ հազար ու մի կերպով փորձում ու չարչարում է աստվածասեր հավատացյալներին:*

4.*Պարզ, բայց հաստատահիմն հավատքով շարունակիր առաջ ընթանալ և աղաչական մեծարանքով մոտեցիր Հաղորդությանը: Իսկ այն ամենը, որ չես կարողանում ըմբռնել, խաղաղ հոգիով վստահիր ամենակարողությանս: Աստված չի խաբվում. խաբվում և սխալվում է նա, ով չափազանցյալ վստահությամբ ապավինում է իր կարողություններին: Աստված ճանապարհորդակից է լինում պարզ հոգիներին, հայտնվում է խոնարհներին, իմաստուն դարձնում՝ փոքրերին, ընդարձակում է միտքը սրբակյացների, մինչ թաքցնում է շնորհը հետաքրքրասերներից ու հպարտներից: Մարդկային իմացականությունը սահմանափակ է և կարող է սխալվել: Հավատքը, մինչդեռ, երբեք չի սխալվում:*

5. *Մարդկային մտքի պրպտումները պետք է հետևեն հավատքին, ո՛չ թե կանխեն նրան կամ լռեցնեն, որովհետև հավատքն ու սերը ցայտուն կերպով արտահայտվում և խորհրդավոր կերպով ներգործում են հատկապես այս սրբազնագույն և մյուս բոլորից առավել վեհագույն Խորհրդում: Հավիտենական, անսահմանափակ և ամենակարողն Աստված «մեծ ու անքննելի գործեր է գործում» երկնքում և երկրի վրա (Հոբ* 5, 9*), և չկա մեկը, որ ի զորու լինի հետազոտելու Իր հրաշքները: Եվ եթե աստվածային գործերը դյուրըմբռնելի լինեին մարդկային մտքի համար, էլ ինչպե՞ս կսահմանվեին դրանք իբրև հրաշալի ու անպատում:*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ 8

ԽՐԱՏՆԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ 8

ԳԼՈՒԽ Ա. ԱՇԽԱՐՀԻ ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ԳԼՈՒԽ Բ. ԽՈՆԱՐՀ ԿԱՐԾԻՔ ՄԵՐ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ 9

ԳԼՈՒԽ Գ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ 9

ԳԼՈՒԽ Դ. ԽՈՀԵՄՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ 11

ԳԼՈՒԽ Ե. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ 11

ԳԼՈՒԽ Զ. ԱՆԿԱՐԳ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12

ԳԼՈՒԽ Է. ՓԱԽՉԵԼ Է ՊԵՏՔ ՍԻՆ ՀՈՒՅՍԵՐԻՑ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ 12

ԳԼՈՒԽ Ը. ՋԳՈՒՇԱՆԱԼ Է ՊԵՏՔ ՉԱՓԱՋԱՆՑ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ 13

ԳԼՈՒԽ Թ. ՀՆԱՋԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ 13

ԳԼՈՒԽ Ժ. ԽՈՒՍԱՓԵԼ Է ՊԵՏՔ ԱՆՕԳՈՒՏ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ 14

ԳԼՈՒԽ ԺԱ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ 14

ԳԼՈՒԽ ԺԲ. ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ԳԼՈՒԽ ԺԳ. ԴԻՄԱԴՐԵԼ Է ՊԵՏՔ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 16

ԳԼՈՒԽ ԺԴ. ՋԳՈՒՇԱՆԱԼ Է ՊԵՏՔ ՀԱՆԴՈՒԳՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ 17

ԳԼՈՒԽ ԺԵ. ՀԱՆՈՒՆ ՍԻՐՈ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԸ 18

ԳԼՈՒԽ ԺԶ. ՀԱՄԲԵՐԵԼ Է ՊԵՏՔ ԱՅԼՈՑ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 18

ԳԼՈՒԽ ԺԷ. ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 19

ԳԼՈՒԽ ԺԸ. ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ 20

ԳԼՈՒԽ ԺԹ. ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ 21

ԳԼՈՒԽ Ի. ԼՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ 22

ԳԼՈՒԽ ԻԱ. ՍՐՏԻ ԶՂՋՈՒՄ 24

ԳԼՈՒԽ ԻԲ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒՄՆԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԵՂՃՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 25

ԳԼՈՒԽ ԻԳ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒՄՆԵՐ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ 27

ԳԼՈՒԽ ԻԴ. ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ 28

ԳԼՈՒԽ ԻԵ. ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԲԱՐԵՆՈՐՈԳԵԼ ՄԵՐ ՎԱՐՔԸ 30

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ **33**

ՀՐԱՎԵՐՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ 33

ԳԼՈՒԽ Ա. ՆԵՐԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 33

ԳԼՈՒԽ Գ. ԲԱՐԻ ՈՒ ԽԱՂԱՂԱՍԵՐ ՄԱՐԴԸ 35

ԳԼՈՒԽ Դ. ՀՈԳՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ 36

ԳԼՈՒԽ Ե. ՃԱՆԱՉԵՆՔ ԻՆՔՆԵՐՍ ՄԵՋ 36

ԳԼՈՒԽ Զ. ՄԱՔՈՒՐ ԽՂՃԻ ԲԵՐԿՐԱՆՔԸ 37

ԳԼՈՒԽ Է. ՍԻՐԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ ԱՎԵԼԻ 38

ԳԼՈՒԽ Ը. ՀՈԳԵՎՈՐ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՀԵՏ 39

ԳԼՈՒԽ Թ. ՀՐԱԺԱՐՈՒՄ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ 40

ԳԼՈՒԽ Ժ. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՐ 41
ԳԼՈՒԽ ԺԱ. ՔՉԵՐՆ ԵՆ ՍԻՐՈՒՄ ՀԻՍՈՒՍԻ ԽԱՉԸ 42
ԳԼՈՒԽ ԺԲ. ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՈՒՂԻՆ 43
ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ **47**
ՆԵՐՔԻՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 47
ԳԼՈՒԽ Ա. ՀԻՍՈՒՍԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒ ՀԵՏ 47
ԳԼՈՒԽ Բ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՈՒՄ Է ԱՌԱՆՑ ԽՈՍՔԵՐԻ ԺԽՈՐԻ 47
ԳԼՈՒԽ Գ. ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՀԱՐԿ Է ՈՒՆԿՆԴՐԵԼ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ 48
ԳԼՈՒԽ Դ. ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԱՊՐԵԼ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆԸ 50
ԳԼՈՒԽ Ե. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԻՐՈ ՋԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 51
ԳԼՈՒԽ Զ. ԻՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ 53
ԳԼՈՒԽ Է. ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՆԵՐԸ 54
ԳԼՈՒԽ Ը. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՄԵՐ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ 56
ԳԼՈՒԽ Թ. ԱՍՏՎԱԾ՝ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԻՄԱՍՏԸ ԱՄԵՆ ԻՆՉԻ 57
ԳԼՈՒԽ Ժ. ՔԱՆԻՑՍ ՔԱՂՑՐ Է ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏԾՈՒՆ 57
ԳԼՈՒԽ ԺԱ. ՀԱՐԿԱՎՈՐ Է ՏԻՐԱՊԵՏԵԼ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԵԼ ՄԵՐ ՓԱՓԱՔՆԵՐԸ 59
ԳԼՈՒԽ ԺԲ. ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 59
ԳԼՈՒԽ ԺԳ. ՀՆԱՋԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ 61
ԳԼՈՒԽ ԺԴ. ԱՍՏԾՈ ԳԱՂՏՆԱԽՈՐՀՈՒՐԴ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ 61
ԳԼՈՒԽ ԺԶ. ԻՐԱԿԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ՄԵՋ Է 63
ԳԼՈՒԽ ԺԷ. ԱՍՏԾՈՒՆ ՊԵՏՔ Է ՎԱՍՏԱՀԵՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀՈԳՄԵՐԸ 64
ԳԼՈՒԽ ԺԸ. ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ԿՐԵԼ ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ԽԵՂՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 64
ԳԼՈՒԽ ԺԹ. ՀԱՄԲԵՐԵԼ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔԻՆ 65
ԳԼՈՒԽ Ի. ՃԱՆԱՉԵԼ ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 66
ԳԼՈՒԽ ԻԱ. ԻՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՍՏԾՈ ՄԵՋ Է 67
ԳԼՈՒԽ ԻԲ. ԱՍՏԾՈ ԱՆԹԻՎ ՈՒ ԱՆՀԱՄԱՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 69
ԳԼՈՒԽ ԻԳ. ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 70
ԳԼՈՒԽ ԻԴ. ՉՄՏԱՀՈԳՎԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՐԱՐՔՆԵՐՈՎ 72
ԳԼՈՒԽ ԻԵ. ԻՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ 72
ԳԼՈՒԽ ԻԶ. ՍՐՏԻ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆԸ 73
ԳԼՈՒԽ ԻԷ. ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ 74
ԳԼՈՒԽ ԻԸ. ԸՆԴԴԵՄ ԲԱՄԲԱՍԿՈՏՆԵՐԻ 75
ԳԼՈՒԽ ԻԹ. ՕՐՀՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ ԸՆԴՄԵՋ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 75
ԳԼՈՒԽ Լ. ԱՍՏԾՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ 76
ԳԼՈՒԽ ԼԱ. ՄՈՌԱՆԱԼ ԱՐԱՐԱԾՆԵՐԻՆ՝ ԱՐԱՐՉԻՆ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 77
ԳԼՈՒԽ ԼԲ. ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ 79
ԳԼՈՒԽ ԼԳ. ՍՐՏԻ ԱՆՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ 80
ԳԼՈՒԽ ԼԴ. ԱՄԵՆ ԲԱՆԻՑ ԱՎԵԼԻ՝ ԱՍՏԾՈ ՍԵՐԸ 80
ԳԼՈՒԽ ԼԵ. ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ ԵՐԲԵՔ 82

ԳԼՈՒԽ ԼԶ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՆԱՅՆ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ 82
ԳԼՈՒԽ ԼԷ. ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻՑ ԿԱՏԱՐՅԱԼ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ 83
ԳԼՈՒԽ ԼԸ. ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ 84
ԳԼՈՒԽ ԼԹ. ՇԱՀԻՑ Ծ'ՆՎՈՂ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 85
ԳԼՈՒԽ Խ. ՄԵՋՆՈՒՄ ՉՈՒՆԵՆՔ ՊԱՐԾԵՆԱԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՈՉԻՆՉ 85
ԳԼՈՒԽ ԽԱ. ԱՆՑՈՂԻԿ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ 86
ԳԼՈՒԽ ԽԲ. ՄԵՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՋ ՉԷ 87
ԳԼՈՒԽ ԽԳ. ԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՆԱՅՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 87
ԳԼՈՒԽ ԽԴ. ՉԿԱՌՉԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՆ 88
ԳԼՈՒԽ ԽԵ. ՀԱՎԱՏՔ ՉՊԵՏՔ Է ԸՆԾԱՅԵԼ ԲՈԼՈՐԻՆ ԱՆԽՏԻՐ 89
ԳԼՈՒԽ ԽԶ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԹՈՒՆԱԽԱՅԹ ԽՈՍՔԵՐԸ 90
ԳԼՈՒԽ ԽԷ. ԿՐԵԼ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ 91
ԳԼՈՒԽ ԽԹ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՓԱՓԱՔԸ 94
ԳԼՈՒԽ Ծ. ՎՇՏԱԿԻՐ ՀՈԳՈՒ ԱՂՈԹՔԸ 96
ԳԼՈՒԽ ԾԱ. ՀԱՐՄԱՐՎԵԼ ԽՈՆԱՐՀ ԳՈՐԾԵՐԻՆ 98
ԳԼՈՒԽ ԾԲ. ԱՎԵԼԻ ՊԱՏԺԻ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ, ՔԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 98
ԳԼՈՒԽ ԾԳ. ԱՇԽԱՐՀԱՍԵՐՆԵՐԸ ՉԵՆ ՃԱՇԱԿՈՒՄ ՇՆՈՐՀԻ ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆԸ 99
ԳԼՈՒԽ ԾԵ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 102
ԳԼՈՒԽ ԾԶ. ՆՄԱՆՎԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ ԽԱՉԱԿՐՈՒԹՅԱՄԲ 104
ՉՀՈՒՍԱՀԱՏՎԵԼ ՍԱՅԹԱՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ 105
ԳԼՈՒԽ ԾԸ. ՉՓՈՐՁԵԼ ՔՆՆԵԼ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 106
ԳԼՈՒԽ ԾԹ. ՀՈՒՅՍ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԱՌ ԱՍՏՎԱԾ 108
ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ 110
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 110
ԳԼՈՒԽ Ա. ՄԵԾԱՐԱՆՔ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ 110
ԳԼՈՒԽ Բ. ԱՍՏԾՈ ԱՆՍԱՀՄԱՆ ՍԵՐԸ 113
ԳԼՈՒԽ Գ. ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՂՈՐԴՎԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 114
ԳԼՈՒԽ Դ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀՆԵՐԸ 116
ԳԼՈՒԽ Զ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ 118
ԳԼՈՒԽ Ը. ՀԻՍՈՒՍԻ ՋՈՀԱԲԵՐՈՒՄԸ ԽԱՉԻ ՎՐԱ 119
ԳԼՈՒԽ Թ. ԻՆՔՆԱՆՎԻՐՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ, ԱՂՈԹՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 120
ԳԼՈՒԽ Ժ. ԱՌԱՆՑ ԼՈՒՐՋ ՊԱՏՃԱՌԻ ՋԱՆՑ ՉԱՌՆԵԼ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 121
ԳԼՈՒԽ ԺԲ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆԸ 125
ԳԼՈՒԽ ԺԳ. ՀԻՍՈՒՍԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՓԱՓԱՔ 126
ԳԼՈՒԽ ԺԴ. ԱՌԱՔԻՆԱՍԵՐՆԵՐԻ ՎԱՌ ԲԱՂՁԱՆՔԸ 126
ԳԼՈՒԽ ԺԵ. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՋԱՏՈՒՄ 127
ԳԼՈՒԽ ԺԶ. ՄԵՐ ԿԱՐՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 128
ԳԼՈՒԽ ԺԷ. ԻՂՁ ԵՎ ՍԵՐ 129
ԳԼՈՒԽ ԺԸ. ՀՊԱՏԱԿԵՑՆԵԼ ՄԻՏՔԸ ՀԱՎԱՏՔԻՆ 130

* * * * * * *

Սիրելի ընթերցող, հոգու մեծ գոհունակությամբ՝ անվճար տրամադրեցինք այս գիրքը քեզ և մեր բոլոր հոգեսեր ու ընթերցասեր ազգակիցներին: Հուսով ենք այն օգտակար եղավ քեզ: www.mashtoz.org կայքը և նրան զուգահեռ գործող Ընդհանրական Հրատարակչատունը, լավագույն կերպով շարունակելու համար իրենց ծառայությունը, կարիքն ունեն նաև քո գիտակից մասնակցությանը:

Ըստ քո կարողության (այս գրքի 1 օրինակի գինը 1.800 դրամ է), նպաստի՛ր հոգեշահ նոր գրքերի հայացմանն ու տարածմանը: Եթե հնարավորություններիդ սահմաններում է, վճարի՛ր 1, 5, 10, 20, 50, 100 կամ ավելի օրինակների տպագրության համար անհրաժեշտ գումարը և այդպիսով օգնի՛ր հոգեշահ գրքերի հրատարակմանն ու անվճար տարածմանը: Քո այդ նվիրատվության շնորհիվ այս հատորները կհասնեն նաև նրանց, ովքեր դրանք գնելու կամ համացանցում ընթերցելու հնարավորությունն իրոք չունեն:

Մեր հաշվեհամարն է.

«Կոնվերս Բանկ»

h՝h 19300 340285 90100 *Ստացող՝ Ընդհանրական ՍՊԸ*
Նպատակ՝ Հրատարակչություն

Փոխանցումներ հնարավոր է կատարել հայաստանյան որևէ դրամատան որևէ մասնաճյուղից:

Ստիյուդքից փոխանցումներ հնարավոր է կատարել նաև PayPal *համակարգի միջոցով: Դրա համար խնդրում ենք այցելել մեր www.mashtoz.org կայքի «Մեր մասին» բաժինը:*

Շնորհակալություն առ Աստված, և ամենայն բարիք Քեզ:

www.mashtoz.org
կայքի խմբագրակազմ

* * * * * * *